ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920-1922 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԵՐԵՎԱՆ 2007

Նվիրվում է Հայաստանի
Արդյունաբերողների և գործարարների
(գործատուների) միության՝ ՀԱԳ(Գ)Մ
տասնամյակին

Հովանավոր՝ «ԱՊԱՎԵՆ» ՍՊԸ

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Խ 282

Աշխատությունը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ.Ա. Ավետիսյան

Գրախոս՝ պատմագիտության դոկտոր Ա.Ս. Վիրաբյան

Խաչատրյան Կ.Հ.
Խ 282
Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., - Եր.: ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2007. - 260 էջ:

Մենագրության մեջ արխիվային բազմաբնույթ փաստաթղթերի և վավերագրերի, մամուլի հրապարակումների, թեմային առնչվող պատմագիտական գրականության լայն հենքի վրա ուսումնասիրվել և նորովի լուսաբանված են Հայաստանի խորհրդայնացման, Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի ռազմաքաղաքական, միջպետական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության հիմնախնդիրները: Դրանք ներկայացվում են տարածաշրջանի, Հայաստանի և Ռուսաստանի 1920-1922 թթ. պատմության ընդհանուր հենքի վրա:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, միջազգայնագետների, քաղաքագետների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ISBN 978-99941-73-06-8

ԳՄԴ 63.3 (2Հ)
ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2007

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումով 1991 թ., Խորհրդային Միության փլուզումից հետո սկսվեց հայոց պետականության նոր փուլը, միջազգային նոր պայմաններում հայ ժողովուրդը ձեռնամուխ դարձավ Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմության կերտմանը: Ազգային անկախության պայմաններում նոր հնարավորություններ բացվեցին նաև հայ պատմագիտության առջև, ժողովրդավարության և բազմակարծության պայմաններում պատմաբանները հնարավորություն ստացան կատարելու օբյեկտիվ և անաչառ ուսումնասիրություններ, միակ չափանիշը համարելով պատմականությունը և պատմական ճշմարտությունը: Խիստ արդիական և հրատապ խնդիր դարձավ հատկապես Հայաստանի Առաջին և Երկրորդ՝ խորհրդային, հանրապետությունների պատմության վերաիմաստավորումը և ուսումնասիրումը: Եթե Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության ուսումնասիրությունն անկախության առաջին տարիներին անմիջապես հայտնվեց պատմաբանների համակ ուշադրության կենտրոնում, ինչը միանգամայն հասկանալի է., ապա Հայաստանի խորհրդային հանրապետության պատմության ուսումնասիրումը կարծես հետին պլան մղվեց: Սակայն դա ժամանակավոր երևույթ է.ր, և շուտով պարզվեց, որ Խորհրդային Հայաստանի պատմության բազմաբիվ հիմնահարցեր նույնպես կարոտ են անկողմնակալ և քննախույզ ուսումնասիրության, նորովի մեկնաբանությունների: Ազգային պետականության զարգացման արդի շրջանում հայ ժողովրդի շահերը պահանջում են, որպեսզի Հայոց պատմությունն ուսումնասիրվի ոչ թե այս կամ այն գաղափարախոսության՝ այլ միայն հայ ժողովրդի և հայկական պետության ազգային ու ռազմավարական շահերի տեսանկյունից: Ուստի սույն աշխատությունում փորձել ենք Հայաստանի 1920-1922 թվականների բարդ և հակասական ժամանակաշրջանի պատմությունը, մասնավորապես, Խորհրդային Ռուսաստանի հետ նրա հարաբերությունները ներկայացնել ճշմարիտ և անկողմնակալ:

Խորհրդային Հայաստանը (ինչպես նաև խորհրդային մյուս հանրապետությունները) թեև Խորհրդային Ռուսաստանի «ծնունդ էր» և, ինչպես իրավացիորեն նշում է. բոլշևիկյան հայտնի գործիչ Գրիգորի (Սերգո) Օրջոնիկիձեն. «Եթե չլիներ Խորհրդային Ռուսաստանը՝ չէր լինի Խորհրդային Ադրբեջանը, Խորհրդային Վրաստանը, Խորհրդա-

յին Հայաստանը»,[1] այնուհանդերձ՝ Հայաստանի խորհրդային հանրապետության տեղն ու դերը Հայոց պետականության պատմության մեջ թերագնահատել չի կարելի, այն հանդիսացավ Առաջին հանրապետության իրավահաջորդը, կոմունիստական կուսակցության ամենատիրության պայմաններում Հայաստանին ընձեռնված հնարավորությունների չափով 70 տարիների ընթացքում պահպանեց և զարգացրեց հայոց պետականությունը, այդ ժամանակաշրջանում ստեղծվեցին արտադրողական վիթխարի ուժեր, աննախադեպ զարգացում ապրեց երկրի տնտեսությունը: ԽՍՀՄ կազմում հայ ժողովուրդը պաշտպանված էր արտաքին վտանգներից, ունեցավ ստեղծագործելու և զարգանալու ապահով պայմաններ: Սխալված չենք լինի, եթե նշենք, որ չլիներ Խորհրդային Հայաստանը՝ չէր լինի Հայաստանի Երրորդ Հանրապետությունը:

Հետազոտության ժամանակագրական շրջանակը պատահական չէ ընտրված. Խորհրդային Հայաստանը 1920-1922 թթ. թե ներքին և թե արտաքին քաղաքականության հիմնահարցերում թեև հիմնականում առաջնորդվում էր ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշումներով և հրահանգներով, այնուհանդերձ՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո մինչև Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ-ի կազմավորումը Խորհրդային Հայաստանն ուներ ինքնիշխան կարգավիճակ, պետականությունն արտահայտող բոլոր խորհրդանիշները, միջպետական պայմանագրային հարաբերություններ էր հաստատել ինչպես խորհրդային հանրապետությունների, այնպես էլ արտասահմանյան մի քանի պետությունների հետ, միջազգային իրավական ճանաչում ստացել նրանց կողմից, Խորհրդային Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունները գործում էին մի շարք երկրներում: Վերջապես, Խորհրդային Հայաստանն էր, որ Հայոց պետականության պատմության մեջ առաջինն ունեցավ իր Սահմանադրությունը (Հիմնական օրենքը):

Աշխատության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել ինչպես նորահայտ, այնպես էլ նոր մեկնաբանություններ պահանջող արխիվային բազմաթիվ վավերագրերը ու փաստաթղթերը, սկզբնաղբյուրների և վիճակագրական բազմաբնույթ նյութերի տպագիր ժողովածուները, ժամանակի կուսակցական և պետական գործիչների հուշագրությունները և աշխատությունները, թեմային առնչվող պատմագիտական հարուստ գրականությունը: Աշխատությունում առաջադրված հիմնախնդիրներն ուսումնասիրվել են նշված պատմագիտական նյու-

[1] Օրջոնիկիձե Գ.Կ., Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 111:

բերի համադրման և ընդհանրացումների, պատմաքննական վերլուծությունների միջոցով:

Օգտագործված նյութերը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբերի:

Առաջին խմբում են արխիվային սկզբնաղբյուրները. փաստաթղթերը, վավերագրերը, այլ նյութերը, որոնց զգալի մասը գիտական շրջանառության մեջ մտցվում են առաջին անգամ, ուսումնասիրվող ժամանակաշրջանի պարբերական մամուլի հրապարակումները:

Երկրորդ խումբը կազմում են հրատարակված տպագիր սկզբնաղբյուրները. դեկրետների և հրամանների, փաստագրական և վիճակագրական նյութերի ժողովածուները,[2] ՀԱԽՀ և ՌՍՖԽՀ կառավարությունների, առանձին ժողկոմատների տարեկան հաշվետվությունները,[3] կուսակցական և խորհուրդների համագումարների սղագրությունները:[4]

---

[2] ՀԱԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին և 2-րդ, Էջմիածին, 1921: Հեղափոխական կոմիտեները Հայաստանում (1920 թ. նոյեմբեր – 1922 թ. հունվար), Երևան, 1974: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Երևան, 1960: Խորհրդային Հայաստան, եռից տարի (1920-1925), Երևան, 1926: Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), կազմողներ՝ Ջ.Ս. Կիրակոսյան, Ռ.Գ. Սահակյան, Երևան, 1972: Բ. Լեգրանի միսիան (փաստաթղթեր), «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետ՝ «ԲՀԱ»), Երևան, 1967, թիվ 3: II-րդ Կարմիր բանակի ազատագրական միսիան (փաստաթղթեր), «ԲՀԱ», Երևան, 1980, թիվ 2: Документы внешней политики СССР, тт. II-VI, Москва, 1958-1962. Восстановление народного хозяйства Арм. ССР (1921-1929), Ереван, 1958. Советское содружество народов, объединительное движение и образование СССР (1917-1922), Москва, 1977. Из истории образования СССР, "Известия ЦК КПСС", Москва, 1989, № 9. Нагорный Карабах в 1918-1923 гг., Ереван, 1992. Из новых документов 1922 г. по истории образования СССР. Отечественная история, Москва, 1992, № 4. Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества (Документы и комментарий), отв. ред. Ю.Г. Барсегов, тт. 1-2, Москва, 2002, 2005. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.: Քաղաքական պատմություն (Փաստաթղթերի ժողովածու), կազմողներ՝ Գ. Գաբայան, Վ. Ղազարյան, Վ. Մելիքյան, Ս. Միրզոյան, Ա. Վիրաբյան, Երևան, 2000:

[3] ՀԱԽՀ կառավարության հաշվետվության նյութեր (1920-1922), Երևան, 1923: ՀԱԽՀ արագործժողկոմատ, բյուլետեն Ա, Երևան, 1921-1922: Шесть лет национальной политики Советской власти и Наркомнац (1917-1923), Москва, 1963.

[4] ՀԱԽՀ խորհուրդների Ա համագումար, Երևան, 1922: Восьмой, Девятый, Десятый Всероссийские съезды Советов..., Москва, 1921-1923. Десятый съезд РКП(б), Москва, 1963.

Նյութերի երրորդ խումբը կազմում են Հայաստանի Առաջին Հանրապետության և Խորհրդային Հայաստանի ու Ռուսաստանի պետական և կուսակցական հայտնի գործիչների հուշագրությունները ու աշխատությունները, նամակների և զեկուցումների ժողովածուները,[5] որոնք պարունակում են փաստացի հարուստ նյութ, տալիս են մի շարք հիմնահարցերի պատասխանները:

Չորրորդ խումբը կազմում են հրատարակված պատմագիտական ուսումնասիրությունները: Աշխատության թեմայով պատմագրության մեջ թեև չկա առանձին ամփոփ ուսումնասիրություն, սակայն հրապարակի վրա են բազմաթիվ արժեքավոր մենագրություններ և աշխատություններ, որոնցում ուսումնասիրված և ներկայացված են աշխատությունում լուսաբանված հիմնախնդիրների մի մասը:

Աշխատությունում քննարկվող հիմնախնդիրները խորհրդային ժամանակաշրջանում առավել հանգամանալից ուսումնասիրել են Բ. Բորյանը, Ա. Խեյֆեցը, Ծ. Աղայանը, Ս. Ալիխանյանը, Մ. Արզումանյանը, Ա. Եսայանը, Ս. Խարմանդարյանը, Ա. Վարդապետյանը, Գ. Գալոյանը, Հ. Ավետիսյանը, Է. Զոհրաբյանը, Գ. Գեղամյանը և այլք:[6]

---

[5] Լենին Վ.Ի., ԵԼԺ, հհ. 41-45, 51, 52: Սաալին Ի.Վ., Երկեր, հհ. 4-6: Օրջոնիկիձե Գ.Կ., Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950: Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, Երևան, 1957: Կասյան Ս., Ընտիր երկեր, Երևան, 1974: Մռավյան Ա., Հոդվածներ և ճառեր, Երևան, 1961: Բեկզադյան Ալ., Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, Երևան, 1981: Լուկաշին (Սրապիոնյան) Ս., Հոդվածներ, զեկուցումներ, ճառեր, Երևան, 1986: Տեր-Գաբրիելյան Ս., Հոդվածներ, ճառեր, փաստաթղթեր, Երևան, 1979: Чичерин Г.В., Статьи и речи по вопросам международной политики, Москва, 1961. Киров С.М., Статьи, речи, документы, Москва, 1936.

[6] Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, часть II, Москва-Ленинград, 1929. Хейфец А.Н., Советская дипломатия и народы Востока (1921-1927), Москва, 1968. Աղայան Ծ., Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1982: Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921), Երևան, 1958: Նույնի Գ.Կ. Օրջոնիկիձեն և խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում, Երևան, 1974: Արզումանյան Մ., Արևավիրքից վերածնունդ, Երևան, 1973: Եսայան Ա., Հայաստանի միջազգային իրավական դրությունը 1920-1922 թթ., Երևան, 1974: Хармандарян С., Армянская ССР в I-ый год НЭП-а (1921-1922), Ереван, 1955. Նույնի Ленин и становление Закавказской федерации (1921-1923), Ереван, 1974. Վարդապետյան Ա., Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանին (1920-1925), Երևան, 1959: Գարբյան Գ., Պատմության բատուղիներում, Երևան, 1982: Аветисян Г., Под знаменем пролетарского интернационализма, Ереван, 1982. Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920-1922), Երևան 1979: Գեղամյան Գ., Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում ՆԷՊ-ի տարիներին (1921-1936), Երևան, 1978:

Հետխորհրդային շրջանում թեմայի հետ առնչվող խնդիրները նորովի լուսաբանել են Հ. Ավետիսյանը, Գ. Գալոյանը, Հր. Սիմոնյանը, Ե. Սարգսյանը, Է. Զոհրաբյանը, Լ. Խուրշուդյանը, Վ. Ղազախեցյանը, Ռ. Ղազանչյանը և այլք:[7]

Աշխատության մեջ քննարկվող հիմնախնդիրների պատմագրությունն այնքան բազմաբնույթ և արժեքավոր է, որ դրա ամբողջական ուսումնասիրումը և քննախույզ վերլուծությունը, անշուշտ, մի քանի ուսումնասիրությունների նյութ կարող է դառնալ:

---

[7] Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991: Սարգսյան Ե., Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Երևան, 1995: Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Երևան, 1995: Նույնի՝ Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002: Զոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տեղությունները, Երևան, 1997: Ղազախեցյան Վ.Ն., Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006: Казанджян Р., К вопросу об оценке московского русско-турецкого договора 1921 г., "Страны и народы Ближнего и Среднего Востока", Ереван, 2001, Вып. 20. Նույնի՝ Советско-кемалистские отношения в 1920 г. и вопрос Армении в свете секретных документов московских архивов, "Страны и народы Ближнего и Среднего Востока", Ереван, 2002, Вып. 21.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

Ռուսաստանում 1917 թվականին միապետության անկումից հետո կայսրության փլուզման գործընթացը չավարտվեց, այն շարունակվեց նաև բոլշևիկների կողմից երկրում խորհրդային կարգեր հաստատելուց հետո: 1918 թ. ապրիլի 9(22)-ին Անդրկովկասյան Սեյմը երկրամասը հայտարարեց Խորհրդային Ռուսաստանից անկախ դաշնային հանրապետություն, մեկ ամիս անց՝ մայիսի վերջերին, այն հաջորդաբար տրոհվեց երեք՝ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի, անկախ հանրապետությունների: Անջատվելով Ռուսաստանից վերջիններս աստիճանաբար ներքաշվեցին Թուրքիայի և Արևմուտքի ազդեցության վիճաբանության ոլորտը:

Բայց Ռուսաստանը, ցարական թե խորհրդային, չէր կարող հաշտվել իր համար ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող անդրկովկասյան տարածաշրջանի կորստի հետ, մի տարածաշրջանի, որին տիրապետելու համար դեռևս 18-րդ դարից սկսած Ռուսաստանը վճռական քայլեր էր գործադրել: 1917-1920 թվականներին Խորհրդային Ռուսաստանի համար միջազգային անբարենպաստ իրադրության պայմաններում Անդրկովկասը կորցնելու դեպքում, Ռուսաստանը վտանգում էր իր իսկ գոյությունը: Պանթուրքիզմի գաղափարախոսները աչալուրջ էին, նրանք գտնում էին, որ Անդրկովկասը Ռուսաստանից վերջնականապես անջատելու դեպքում, նոր հեռանկարներ կբացվեն «Մեծ Թուրանի» գաղափարը գործնականում իրականացնելու համար: Վերջինիս մեջ նախատեսվում էր ընդգրկել մահմեդական բնակչությամբ բնակեցված Ռուսաստանի մի շարք տարածքները: Կասկածից վեր է, որ ծրագրի իրականացումը կործանարար հետևանքներ կունենար ռուսական պետության համար, իսկ հայկական պետությունը, որ ճակատագրի բերումով սեպով մխրճված է «արյունակից քոչվոր ցեղերի» երազելիք թուրանական պետության ճանապարհին, վերանալու էր՝ այդպես էին ծրագրել պանթուրքիզմի տեսաբանները: Իրադարձությունների բերումով, պատմական տվյալ ժամանակահատվածում միայն Ռուսաստանի «վերադարձը» Անդր-

կովկաս և նրա դիրքերի ամրապնդումը տարածաշրջանում կարող էր խափանել պանթուրքական ծրագրերի իրականացումը:

«Հայաստանի ճակատագիրը պետք է կապված լինի Ռուսաստանի հետ...: - Իրատեսորեն նշում է ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը, - Պանթուրքիզմի դեմ մղվող գոյատևման պայքարում հայ ժողովրդի բնական դաշնակիցը կարող է լինել միայն Ռուսաստանը, որովհետև պանթուրքիզմի հաղթանակը, Մեծ Թուրանի ստեղծումը անխուսափելիորեն հանգեցնելու է մի կողմից Հայաստանի կործանմանը, մյուս կողմից՝ Ռուսաստանի մասնատմանը»:[8]

Ռուսաստանի կենտրոնական մասերում խորհրդային իշխանությունը ամրապնդելուց հետո բոլշևիկյան վարչակարգը ձեռնամուխ եղավ նախկին կայսրության տարածքները, այդ թվում Անդրկովկասը, սեփական ազդեցության ոլորտը վերադարձնելու գործին: Հյուսիսային Կովկասը սպիտակգվարդիական զորքերից մաքրելուց հետո Խորհրդային Կարմիր բանակը 1920 թ. գարնանն ընդհուպ մոտեցավ Անդրկովկասի սահմաններին և նախապատրաստվում էր խորհրդային ազդեցության տարածմանը տարածաշրջանի վրա: Համաձայն բոլշևիկյան գաղափարախոսների, եթե նախկինում այստեղ պայքար է ընթացել ցարական Ռուսաստանի և Անգլիայի միջև՝ «Արևելքի ժողովուրդներին տիրելու և շահագործելու իրավունքի համար», ապա խորհրդային իշխանության օրոք՝ պայքար է գնալու «արևելյան ժողովուրդների վրա ազդեցություն գործելու համար, պայքար՝ հեղափոխության և հակահեղափոխության միջև»:[9] Այդ «պայքարում չեն կարող չեզոք դիրք գրավող պետություններ լինել... նաև Ռուսական կայսրության նախկին տարածքում», - հայտարարում էր Գ. Օրջոնիկիձեն:[10]

Անդրկովկասի ազգային անկախ հանրապետություններից առաջինը 1920 թ. ապրիլի 28-ին խորհրդային հռչակվեց Աղրբեջանը: Դրանում Խորհրդային Ռուսաստանին մեծ աջակցություն էր ցուցաբերել Մուստաֆա Քեմալ փաշայի գլխավորած Թուրքիայի նորաստեղծ Ազգային մեծ ժողովի կառավարությունը: Վերջինիս անունից Քեմալը 1920 թ. ապրիլի 26-ին նամակով դիմեց ՌՍՖԽՀ ժողկոմխորհի նախագահ Վլադիմիր Լենինին: Ծայրահեղ ազգայնամոլական այդ փաս-

---

[8] Խուրշուդյան Լ.Ա., Հայոց ցեղասպանության պատճառները և պատմական դասերը, «Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ)», Եր., 2001, էջ 29, 34:
[9] Օրջոնիկիձե Գ.Կ., Ընտիր հոդվածներ և ճառեր,Եր., 1950, էջ 71:
[10] Տե՛ս նույն տեղում, էջ 68:

տաքդքում շարադրված էին քեմալականների արտաքին քաղաքականության որոշ դրույթները, առաջարկվում էր դիվանագիտական սերտ հարաբերություններ հաստատել երկու երկրների միջև և ռազմական դաշինք կնքել ընդդեմ իմպերիալիզմի՝ կապիտալիստական Արևմուտքի: Նամակում խորամանկորեն նշվում է նաև, որ անհրաժեշտության դեպքում, Թուրքիան պատրաստ է ռազմական գործողություններ ծավալել «իմպերիալիստական Հայաստանի դեմ»:[11]

Ինչպես հայտնի է՝ քեմալականների գաղափարախոսությունը և ծրագրային նպատակները պաշտոնական ձևակերպումներ ստացան 1919 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին Էրզրումում և Սվազում հաջորդաբար տեղի ունեցած «Արևելյան նահանգների իրավունքների պաշտպանության կազմակերպության», «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության կազմակերպությունների» համաժողովներին: Այստեղ հնչած ելույթները և ընդունված որոշումները կասկած չէին հարուցում, որ քեմալականները ոչ միայն չեն հրաժարվելու սուլթանական և երիտթուրքերի կառավարությունների հայաջինջ քաղաքականությունից, այլև հանդիսանալու են դրա անմիջական շարունակողը: Քեմալը և նրա համախոհները քարոզում էին, որ Առաջին աշխարհամարտի տարիներին «հալածանքների ենթարկելով մուսուլմաններին, հայերը կոպիտ վիրավորել են թուրք ժողովրդի արժանապատվությունը»: Այսպիսի զրպարտանքներով թուրք հասարակության մեջ հայատյաց տրամադրությունները բորբոքելով, քեմալականները կոչ արեցին ամեն գնով Թուրքիայի կազմում պահել Արևմտյան Հայաստանը: Քեմալը հայտարարեց, որ ոչ միայն գեթ մի քիզ հող անգամ չեն զիջելու հայերին, այլև կգործադրեն հնարավոր բոլոր միջոցները՝ հայկական անկախ պետականության կայացումը կանխելու համար:

Հետազոտող պատմաբանների կարծիքով, եթե «թուրքական Անատոլիայի» արևմուտքում քեմալական շարժման սկիզբը պայմանավորված էր հակահունական պայքար ծավալելու անհրաժեշտությամբ (հատկապես 1919 թ. մայիսին հույների կողմից Իզմիրը գրավելուց հետո), ապա արևելքում (Արևմտյան Հայաստանում)՝ հայերին բնաջնջելու միջոցով «Մեծ Հայաստանի» ծրագիրը կանխելու, փոխարենը՝ «Մեծ Թուրանը» իրականացնելու համար:

Դեռևս 1919 թվականին իր «Մեծ ոճիրը» գրքում Արամ Անտոնյանը հեռատեսորեն նկատեց. Քեմալ փաշայի «Ազգային շար-

---

[11] Документы внешней политики СССР (այսուհետև՝ ДВП СССР), т. II, Москва, 1958, с. 725-729.

ժում»-ը ապստամբական շարժում չէ, այս «երեսույթին տակ, նպատակի ու միջոցներու նույնություն մը գոյություն ունի» Թուրքիայի նախկին և ներկա վարիչների միջև, «Ազգային շարժում»-ը «ներքնապես ուրիշ բան չէ՝ այլ միայն «Հայասպան շարժում» մը... Այդ շարժումը, ձեռք ձեռքի տված Կովկասի բոլոր ոճրագործ իսլամ տարրերու հետ, կը միտի խեղդել Կովկասի հայությունը»:[12] Հայ մեծանուն հեղինակի կանխագուշակումները մարգարեական էին:

Էրզրումի և Սվազի համաժողովներին քեմալականների կողմից հնչեցված ծրագրային նպատակները բանաձևվեցին 1920 թ. հունվարի 28-ին Կ. Պոլսում հրավիրված թուրքական խորհրդարանի աշխատանքների ընթացքում: Այստեղ մշակվեց և ընդունվեց «Թուրքական ազգային ուխտ» կոչվող ծայրահեղ ազգայնամոլական մի օրենքփաստաթուղթ, որով մասնավորապես հռչակվում է, որ հայկական կազմակերպված համայնքի ստեղծումը (Արևմտյան Հայաստանում – Կ.Խ.) կանխելը պետք է լինի յուրաքանչյուր թուրքի սրբազան գործը, իսկ Հայաստանի ոչնչացումը՝ առաջնահերթ խնդիրը:

1920 թ. ապրիլի 23-ին Անկարայում բացվեց թուրքական նոր խորհրդարանը՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը: Ստանձնելով վերջինիս նախագահի, և Ազգային մեծ ժողովի կողմից մայիսի 3-ին կազմավորված կառավարության ղեկավարի պաշտոնը, առաջնորդվելով՝ իր իսկ կողմից հնչեցված՝ «Մենք կապրենք կամ կկործանվենք Ազգային ուխտի հետ միասին» կարգախոսով, Քեմալը կանգնեց կայսրության ոչ թուրք ժողովուրդների բռնաձուլման կամ բնաջնջման ուղու վրա: Այսպիսով անցնում էին տարիներ, փոխվում էին կառավարություններ, փոխվում էր միջազգային իրադրությունը, բայց անփոփոխ էր մնում թուրքերի և նրանց առաջնորդների հայատյացությունը, ընդահակառակը՝ ավելի էր սաստկանում:

Չնավորման իսկ պահից թուրք-ազգայնական շարժումը չէր էլ փորձում թաքցնել իր հայատյաց վարքագիծը, այն նկատելի էր ամենուրեք և բոլորին: Ահա թե ինչպես է դա ներկայացնում Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի գերատեսչության ղեկավարի տեղակալ հայազգի Լևոն Կարախանին ուղղված իր գաղտնի զեկուցագրերից մեկում Անգորայում Ռուսաստանի դեսպանության առաջին քարտուղար Ն. Ումպալը. «Հպատակների նկատմամբ կիրառվում են մշտական հալածանքներ, որոնցից առավել շատ տուժում են հայերը:

---

[12] Անասնյան Ա., Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Եր., 1990, էջ 259-261:

Հայերի նկատմամբ նախկինի պես կիրառվում են հետապնդումներ: Թշնամությունը ավելի ուժեղ է զգացվում սահմանամերձ գոտում, նախկին պատերազմների և կոտորածների շրջանում: Անցյալը մոռացված չէ, քանի որ ոչ անհայտ խմբերի կողմից թշնամությունը մշտապես բորբոքվում է:... Արևմտյան ռազմաճակատում ռազմական գործողությունների պատճառով հույների նկատմամբ նույնպես թշնամական և անվստահելի վերաբերմունք գոյություն ունի, սակայն ոչ այնքան սուր որքան հայերի խնդրում»:[13] Ընութագրելով շարժման ղեկավարին, Ումպալը շեշտում է, որ քաղաքականության մեջ Քեմալն իրեն դրսևորում է որպես անսկզբունքային անձնավորություն:

Իրենց նախորդների՝ օսմանյան և երիտթուրքերի կառավարությունների՝ հայերի ցեղասպանության քաղաքականությունը շարունակելու և ավարտին հասցնելու մոլուցքով տարված, քեմալականները ոչ միայն շարունակեցին հայերի մնացորդների բնաջնջումը Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում, կայսրության այլ տարածքներում, այլև նպատակադրվեցին արևելահայության ոչնչացմանը և Արևելյան Հայաստանի տարածքների բռնազավթմանը: Եվ բնավ պատահական չէր, որ 1920 թ. գարնանը քեմալականների անմիջական աջակցությամբ ադրբեջանցիների հրոսակախմբերը իրականացրեցին Շուշիի և մերձակա հայկական բնակավայրերի տասնյակ հազար հայերի սպանդը: Լինելով պանթուրքիզմի գաղափարախոսության եռանդուն ջատագովը, ձգտելով իրականացնել «Մեծ Թուրանի» գաղափարը և դառնալ նրա միանձնյա ղեկավարը, Քեմալն անկասկած մտադրվել էր, եթե միջազգային իրադրությունը թույլ տար, վերջնականապես վերացնել դրա ճանապարհին մխրճված հայկական սեպը:

Քեմալի ստորագրությամբ 1920 թ. ապրիլի 26-ի վերը նշված փաստաթուղթը, որը հանդիսացավ աշխարհի և ոչ մի պետության կողմից չճանաչված քեմալական կառավարության արտաքին քաղաքական առաջին ակտը, հենց դրա ապացույցն է: Իսկ նրանում նշված «անկեղծ» մտադրությունները գործնականում ապացուցելու համար քեմալականները նպաստեցին Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատմանը:

Ադրբեջանի խաղաղ խորհրդայնացումից մի քանի օր անց, 1920 թ. մայիսի 4-ին Մոսկվա՝ Վ. Լենինին ուղղված զեկուցագրում Կովկասյան ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի ան-

---

[13] Տե՛ս АВП РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52993, 1921, л. 16.

դամներ Ս.Մ. Կիրովը և Գ.Կ. Օրջոնիկիձեն տեղեկացնում էին. «Բաքվում հեղափոխության օգտին բավականին ակտիվ դեր խաղացին բուրջ ասկյարները և սպաները...»:[14] Այդ մասին է նշվում նաև ՌՍՖԽՀ արտաքին գործերի ժողկոմիսարիատի 1919-1920 թթ. տարեկան հաշվետվության մեջ. «Քեմալականները մեզ հետ կապի մեջ մտան Ադրբեջանի միջոցով, որտեղ նրանց համախոհների խումբն օժանդակել էր հեղաշրջմանը և այն բանին, որպեսզի ադրբեջանական հեղափոխական կառավարությունը հրավիրեր կարմիր զորքերին»:[15]

Այսպիսով, քեմալաբոլշևիկյան համագործակցության առաջին լուրջ արդյունքը հանդիսացավ Ադրբեջանի խորհրդայնացումը: Խորհրդային Ադրբեջանը Մոսկվայի կողմից հայտարարվեց Արևելքում «հեղափոխության առաջամարտիկ», որտեղից բոլշևիկները պետք է «գրոհեին մենշևիկների և դաշնակցականների ազգային բուրժուական հակահեղափոխական կառավարությունների վրա»:[16] Եվ իրոք, դժվար չէ կռահել, որ «Ադրբեջանում հաստատվելուց հետո, բոլշևիկների հետևյալ քայլը պիտի լիներ՝ մտնել նաև Վրաստան ու Հայաստան: - Նշում է հայ ազգային և պետական գործիչ Հովհաննես Քաջազնունին, - Ժամանակի խնդիր էր սա»:[17]

Հայաստանը խորհրդայնացնելու հրատապ խնդիրը Մոսկվան առաջին հերթին կարևորում էր քեմալական Թուրքիայի հետ անմիջական հաղորդակցության ցամաքային կապ հաստատելու անհրաժեշտությամբ: Ըստ բոլշևիկների՝ իմպերիալիստական Արևմուտքի դեմ պայքարում մեծ էր լինելու մուսուլմանական Արևելքի դերը, իսկ այստեղ արդեն, «առաջամարտիկը» պետք է դառնար տարածաշրջանի «ամենազարգացած պետականությունը կրող» քեմալական Թուրքիան:

Այսպիսով համագործակցության առաջին փուլում բոլշևիկա-քեմալական հարաբերությունները պայմանավորվելու էին «հակաիմպերիալիստական պայքարի նշանաբանով»: Սակայն, եթե քեմալական Թուրքիայի հետ դաշինքը բոլշևիկներին անհրաժեշտ էր տարածաշրջանում սեփական ազդեցությունը տարածելու, համաշխարհային

---

[14] Хейфец А.Н., Влияние СССР на угнетенные народы Востока (Сб. Великий Октябрь и народы Востока), Москва, 1957, с. 56.

[15] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), (այսուհետ՝ Հայաստանը... փաստաթղթերում), Եր., 1972, էջ 478:

[16] Орджоникидзе Г.К., Избранные статьи, Москва, 1957, с. 56.

[17] Քաջազնունի Հ., Հ.Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Եր., 1994, էջ 35:

հեղափոխությունը դեպի Արևելք զարգացնելու, մուսուլմանական աշխարհը Արևմուտքի դեմ հանելու համար, ապա քեմալականներին այլ բան էր հարկավոր՝ բոլշևիկներից քաղաքական աջակցություն և նյութական օժանդակություն ստանալով, ամրապնդել սեփական իշխանությունը Թուրքիայում, փրկել կայսրությունը անխուսափելի թվացող կործանումից, իսկ այնուհետև՝ անցնել «պանթուրքական» զավթողական ծրագրերի իրականացմանը: Անդրկովկասով միանալ «արյունակից եղբայրներին» Կովկասում և Միջին Ասիայում, անցնել Ուրալյան լեռնաշղթան: Պատահական չէ, որ Ադրբեջանի խորհրդայնացման գործում քեմալականները թեև աջակցեցին Ռուսաստանին, սակայն դա դիտում էին որպես «ժամանակավոր զիջում բոլշևիկներին»: Իրադարձությունների նման զարգացումը, իհարկե, կործանարար կլիներ Ռուսաստանի համար, ուստի ռուս-թուրքական ռազմավարական շահերը չէին կարող համընկնել: Սակայն մյուս կողմից՝ միջազգային ոչ նպաստավոր իրադրությունը և՛ Խորհրդային Ռուսաստանին, և՛ քեմալական Թուրքիային ստիպում էր գնալ «միասնական» հակաիմպերիալիստական ճակատի ստեղծմանը: Ուստի քեմալաբոլշևիկյան հարաբերությունները «դատապարտված էին» կրելու երկակի բնույթ:

Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև ցամաքային կապը պետք է հաստատվեր Հայաստանի տարածքով՝ հարկավոր էր համաշխարհային հեղափոխության գաղափարները Կարմիր բանակի սվինների վրա տարածել դեպի «նիրհից արթնացող Արևելք»: Ադրբեջանի խորհրդայնացումից անմիջապես հետո 11-րդ Կարմիր բանակի ղեկավարությունը, հաշվի նստելով Ադրբեջանի «արդար պահանջների» հետ, շտապում է վերջնագրեր ներկայացնել Հայաստանի կառավարությանը՝ Ղարաբաղից և Զանգեզուրից հայկական զորամիավորումները դուրսբերելու պահանջով: Հակառակ դեպքում՝ բոլշևիկները սպառնում էին դրանք գրավել Կարմիր զորքերի ուժերով: Նման բովանդակություն ուներ նաև Կովկասյան ռազմաճակատի և 11-րդ Կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհուրդների (Օրջոնիկիձե, Կիրով, Մեխոնոշին, Լևանդովսկի) կողմից 1920 թ. մայիսի 1-ին Հայաստանի կառավարությանը ներկայացված վերջնագիրը:[18]

Տարածաշրջանում գործող բոլշևիկ գործիչները՝ Օրջոնիկիձեն, Նարիմանովը, Մղիվանին և այլք, Մոսկվայից պահանջում էին անհապաղ թույլատրել ռազմական միջոցներով խորհրդայնացնել Վրաս-

[18] Տե՛ս ՀԱԱ. ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 274:

տանը և Հայաստանը: Սակայն հարցի վերաբերյալ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի մայիսի 25-ի որոշման մեջ նշվեց տրամագծորեն հակառակի մասին. «Շարունակել բանակցությունները Հայաստանի կառավարության հետ, մեզ վրա չվերցնելով ռուսական զորքերի օգնությամբ (Հայաստանը - Կ.Խ.) անմիջապես խորհրդայնացնելու նախաձեռնությունը»:[19]

Սակայն դա բնավ չէր վերաբերվում բոլշևիկների համար ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Ղարաբաղ - Զանգեզուր - Նախիջևան գծին: 1920 թ. ամռանը խորհրդային զորքերը զինագրավեցին հայկական այդ տարածքները, հակառակ իր կամքին Հայաստանը ներքաշվում է Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի հետ չհայտարարված պատերազմի մեջ: Եթե նկատի ունենանք, որ նման իրավիճակ էր հաստատվում նաև Թուրքիայի հետ, որն իր ռազմական ներխուժման սպառնալիքի տակ էր պահում Հայաստանի արևմտյան սահմանները, ապա պարզ է դառնում, որ 1920 թ. ամռանը Հայաստանի Հանրապետությունը հայտնվել էր օրհասական դրության մեջ, վտանգված էին նրա անկախությունն ու անվտանգությունը:

Խորհրդային Ռուսաստանի նախաձեռնությամբ Մոսկվայում 1920 թ. մայիսից սկսված հայ-ռուսական բանակցություններում խորհրդային պատվիրակությունը, հանձին ՌՍՖԽՀ արտաքին գործերի ժողկոմ Գեորգի Չիչերինի և նրա տեղակալ Լևոն Կարախանի, պատրաստակամություն է հայտնում կնքել պայմանագիր և բարեկամական ամուր հարաբերություններ հաստատել երկու պետությունների միջև: Լևոն Շանթի գլխավորած հայկական պատվիրակությունն իր հերթին ընդգծում է Ռուսաստանի կողմից Հայաստանի անկախությունը ճանաչելու անհրաժեշտությունը, առաջ քաշում նրա ներքին գործերին չմիջամտելու և այլ պահանջներ:

Ռուս-հայկական բանակցությունների հաջող ընթացքի և ավարտի վրա բացասական ազդեցություն էին գործում Բաքվից և Թուրքիայից, և դա բնական էր. չէ՞ որ որոշվում էր Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի հարցը: Ինչպես Լ. Շանթն է հաղորդում Հայաստանի կառավարությանը 1920 թ. հուլիսի 1-ին, բանակցությունների դժվարությունը կապված է հենց հայ-ադրբեջանական սահմանի որոշման հարցի հետ:[20]

---

[19] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 2, թ. 43:

[20] Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, отв. ред. В.А. Микаелян, Ер., 1992, էջ 519:

Բանակցությունների ընթացքում Բաքվի վարած բացահայտ հակահայկական քաղաքականության մասին տեղեկանում ենք Աղրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանի 1920 թ. հուլիսի 31-ի՝ Հայաստանի արտգործնախարարին ուղղված զեկուցագրից. «Աղրբեջանի ներկայիս քաղաքականության գլխավոր ուշադրությունն ուղղված է այն թույլ և հեռավոր հնարավորության վրա, որ հայ-ռուսական բանակցությունների արդյունքում Զանգեզուրը և Ղարաբաղը կարող են անցնել Հայաստանին: Այդ պատճառով են ոտքի հանվում ամբողջ հեղկոմը, թաթար ակտիվիստները, հայ կոմունիստների մեծ մասը, որոնք գնդակոծում են Մոսկվան հատուկ պատվիրակություններով, հայտագրերով և այլն: Այս դիվանագիտությունն էլ ստիպեց արագացնել Զանգեզուրի գրավումը (խորհրդային զորքերի կողմից - Կ.Խ.)»:[21]

1920 թ. հունիսի վերջերին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ուղղված զեկուցագրում Բաքվի հակահայկական քաղաքականության մասին վրդովմունքով արտահայտվում է նաև Գ. Չիչերինը. «Բաքվի ընկերներն իրենց գործողություններով խափանում են փոխզիջումները, մերժում են Հայաստանի հետ համաձայնություն կնքելու Կենտկոմի պահանջը»: Չիչերինը միաժամանակ հուշում է նաև, որ «Մենք պետք է, վերջապես, արագացնենք մեր ծրագրերի իրականացումը Թուրքիայում: Այսպես հապաղել և ձգձգել գործը, ինչպես մենք ենք ձգձգում, չի կարելի»:[22]

Բաքուն Խորհրդային Ռուսաստանի իշխանություններից պահանջում էր գրավել Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը, Շարուր - Դարալագյազը, Օրդուբադը և Ջուլֆան՝ Աղրբեջանին «նվիրաբերելու համար»: 1920 թ. հունիսի 29-ի նամակում տեղեկացնելով Վ. Լենինին Բաքվի նման ակնկալիքների մասին, Գ. Չիչերինը տալիս է իր արդարացի գնահատականները. «նշված գործողությունների իրականացումը ռուսական զորամիավորումների միջոցով հնարավոր չէ», «Արևելքում մեր ամբողջ քաղաքականության համար ճակատագրական սխալ կլիներ, եթե մենք սկսենք հենվել մեկ ազգային տարրի վրա՝ ընդդեմ մյուս ազգային տարրի»:[23]

Ռուս-հայկական բանակցությունները Մոսկվայում որևէ արդյունք չտալով ընդհատվեցին: Հայաստանի իշխանությունների հետ

---

[21] Նույն տեղում, էջ 557:
[22] Նույն տեղում, էջ 509:
[23] Նույն տեղում, էջ 515-518:

կապեր հաստատելու նպատակով տարածաշրջան էր ժամանելու Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի կառավարության լիազոր ներկայացուցիչ նշանակված Բորիս Լեգրանը: 1920 թ. հուլիսի 19-ին տեղեկացնելով այդ մասին Հայաստանի արտգործնախարարին, Չիչերինը միաժամանակ նրան հուշում է, որ «Բացառապես խորհրդային կառավարության խաղաղասիրական ձգտումների ազդեցության տակ թուրք ազգայնականները դադարեցրին իրենց սկսած գործակոչը, որը նպատակ ուներ նոր հարված հասցնել հայ ժողովրդին»:[24] Եվ դա իրոք այդպես էր, Թուրքիայի Ազգային մեծ ժողովում 1920 թ. օգոստոսի 14-ին ունեցած ելույթում անդրադառնալով քեմալականների արտաքին դրության հիմնահարցերին, Մ. Քեմալը թուրք պատգամավորներին հուշում է, որ Հայաստանի դեմ հունիսին նախատեսված թուրքական հարձակումը կասեցվեց խորհրդային կառավարության դիվանագիտական միջամտության միջոցով:[25]

ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի անդամ Օրջոնիկիձեի կողմից 1920 թ. հուլիսի 16-ին Լենինին, Չիչերինին և Ստալինին ուղղված հեռագրից տեղեկանում ենք նաև, որ քեմալականները ծրագրել էին ամռանը ներխուժել և հայկական ջարդեր իրականացնել Նախիջևանում, սակայն ստանալ Խորհրդային Ռուսաստանի իշխանությունների համաձայնությունը նրանց չհաջողվեց:

Բորիս Լեգրանին Հայաստան գործուղելու հետ կապված հետաքրքիր մանրամասների ենք ծանոթանում ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար և քաղբյուրոյի անդամ Ն. Կրեստինսկու կողմից 1920 թ. հուլիսի 11-ին Վ. Լենինին ուղղված երկտողից: Նրանում Կրեստինսկին հուշում է, որ խնդրել է Չիչերինին չուղարկել Լեգրանին Հայաստան, այլ Ծ. Էլիավայի փոխարեն նրան գործուղել Թուրքիա, քեմալականների մոտ: Սակայն Չիչերինը Կրեստինսկուն տեղեկացրել է, որ արդեն մի քանի օր է, ինչ Լեգրանը ուղևորվել է դեպի Երևան, և միաժամանակ հուշում, որ «անկախ դրանից, դեմ է Լեգրանին ավելի «փոքր տրամաչափի» մարդով փոխարինելուն: ՌՍՖՍՀ արտգործժողկոմը դա բացատրում է նրանով, որ չափազանց կարևոր նշանակություն է տալիս «Հայաստանի, որպես դեպի Թուրքիա ռազմական և ոչ ռազմական

---

[24] Հայաստանը... փաստաթղթերում, էջ 453-454:

[25] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.: Քաղաքական պատմություն (Փաստաթղթերի ժողովածու), Եր., 2000, էջ 250-251:

փոխադրումներ իրականացնելու համար միակ ճանապարհը ունեցողի, հետ բարեկամական հարաբերություններին»:[26]

Այսպիսով պատմական տվյալ ժամանակաշրջանում Հայաստանը Ռուսաստանի կողմից հիմնականում կարևորվում էր որպես մի տարածք, որով հնարավոր էր կապվել քեմալականների հետ՝ նրանց սպառազինություն մատակարարելու նպատակով: Ուստի որքան ձգձգվում և ոչ արդյունավետ էին դառնում ռուս-հայկական բանակցությունները, այնքան ակտիվանում էին խորհրդաքեմալական շփումները:

Մ. Քեմալի ապրիլի 26-ի նամակին ի պատասխան, հետևում է ՌՍՖԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինի 1920 թ. հունիսի 3-ի նամակը: Ողջունելով քեմալականների՝ Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու և իմպերիալիզմի դեմ ընդհանուր պայքար ծավալելու առաջարկությունը, Չիչերինը նամակում արծարծում է նաև թուրք-հայկական հարաբերությունների հարցը, նա հուշում է, որ Թուրքիայի և Հայաստանի միջև պետք է «հաստատել այնպիսի ճշտորոշ սահմանազծեր, որպիսիք պահանջում են արդարությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը»:[27]

Թուրքական կողմի պատասխանը չի հապաղում. Քեմալի և Ազգային մեծ ժողովի արտաքին գործերի գործադիր կոմիտեի անդամ Բեքիր Սամի բեյի կողմից Չիչերինին ուղղված նամակներում վերջիններս տեղեկացնում են, որ քեմալական կառավարությունը «ընդունում է Ռուսական Խորհրդային Հանրապետության միջնորդությունը և հետաձգում նախատեսված ռազմական գործողությունների սկիզբը Կարսի, Արդահանի և Բաթումի շրջաններում»:[28] Թուրքական կողմը տեղեկացնում է նաև, որ ռուս-թուրքական բանակցությունները շարունակելու նպատակով Մոսկվա է գործուղում թուրքական պատվիրակություն:[29]

Խորհրդաքեմալական բանակցությունները Մոսկվայում սկզբնական շրջանում անարդյունք էին. քեմալականների՝ Հայաստանի վրայով Ռուսաստանի հետ հաղորդակցության ուղիղ կապ հաստատե-

---

[26] Ленин В.И., Неизвестные документы. 1891-1922 гг., Москва, 1999, док. 235, с. 352.

[27] Հայաստանը... փաստաթղթերում, էջ 447-448:

[28] Տե՛ս Гарибджанян Г., Саркисян Е., К вопросу о характере национально-освободительной войны в Турции в 1919-1922 гг., «Բանբեր Հայաստանի արխիվների» (ԲՀԱ), Երևան, 1982, թիվ 3, էջ 163:

[29] Հայաստանը... փաստաթղթերում, էջ 449:

լու անհրաժեշտության պահանջին, խորհրդային պատվիրակությունը, հանձին Գ. Չիչերինի և Լ. Կարախանի, դնում է Վանը, Բիթլիսը, Մուշը Հայաստանին վերադարձնելու հարցը:

Այսպիսով 1920 թ. ամռան սկզբին ոչ հայ-ռուսական, և ոչ էլ թուրք-ռուսական բանակցություններում կողմերի անզիջում դիրքորոշումների պատճառով առաջընթաց չէր արձանագրվում: Սակայն դա չէր կարող անվերջ շարունակվել, բանակցությունների ձգձգումը և փոխհամաձայնության չհասնելը ծանր էր անդրադառնում բոլշևիկների արտաքին քաղաքական նպատակների վրա, ուստի խորհրդային կողմը պետք է կողմնորոշվեր, վերջապես ընտրություն կատարեր «իմպերիալիստական» Հայաստանի, Խորհրդային Ադրբեջանի և «հեղափոխական» Թուրքիայի միջև: Իրադարձությունների հետագա զարգացումը ցույց տվեց, որ այդ ընտրությունը կատարվեց հօգուտ վերջինների:

Հայաստանի հետ տարածքային վեճերում Ադրբեջանին և Թուրքիային պաշտպանելու պահանջով հանդես եկան ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն և 11-րդ Կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդի առանձին անդամներ: Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի հետ համատեղ 1920 թ. հուլիսի 10-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած նրանց նամակում պահանջվում է Ղարաբաղը և Զանգեզուրը հանձնել Ադրբեջանին: Դա հիմնավորվում է նրանով, որ հակառակ դեպքում, «կխափանվի հեղափոխության զարգացումը Թուրքիայում»:[30] Ավելի վաղ, հուլիսի 8-ին, ՌՍՖԽՀ ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար Ի. Ստալինը Օրջոնիկիձեին հուշում է. «Իմ կարծիքն այն է, որ չի կարելի անվերջ լարախաղացություն անել կողմերի միջև, պետք է պաշտպանել կողմերից մեկին, որոշակիորեն, ներկա դեպքում (խոսքը Ղարաբաղի մասին է - Կ.Խ.), իհարկե՝ Ադրբեջանին, Թուրքիայի հետ միասին: Ես խոսել եմ Լենինի հետ, նա չի առարկում»:[31]

Նման պայմաններում Հայաստանի նկատմամբ իր մեղմ դիրքորոշումը կտրուկ փոխում է նաև Խորհրդային Ռուսաստանի կառավարության արտգործժողկոմ Գ. Չիչերինը՝ խորհրդային ազդեցիկ ղեկավար գործիչներից թերևս միակը, որ փորձում էր զսպել Հայաստանի նկատմամբ Թուրքիայի, Ադրբեջանի և խորհրդային ազդեցիկ մի շարք գործիչների «հարձակվողական քաղաքականությունը»: 1920 թ. հուլի-

[30] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 529-531.
[31] Նույն տեղում, էջ 524:

սի 30-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրո ուղղված «Հատկապես գաղտնի» գեկուցագրում Չիչերինը նշում է. «Անհրաժեշտ է օգտվել ընկ. Սերգոյի (Գ. Օրջոնիկիձեի - Կ.Խ.) ներկայությունից, որպեսզի լուծվի Հայաստանի հարցը՝ կապված քեմալականների դրության հետ: Վերջիններս սպառազինության պակասի պատճառով մոտ են վախճանի:... Նրանց սպառազինություն հնարավոր է ուղարկել միայն տարանցիկ ճանապարհով Հայաստանի վրայով: Հիմա հայերը խփում են թուրքերին և խիստ լկտիացել են:... Ընկ. Սերգոյի խոսքերով՝ փորձել դաշնակներից ստանալ Հայաստանի վրայով տարանցիկ ճանապարհի իրավունք առանց որևէ վերահսկողության, ներկայումս անհնար է.: Ընկ. Սերգոն պնդում է, որ *Հայաստանի խորհրդայնացման համար պահանջվում են ոչ այնքան շատ զորքեր:... Այդ դեպքում՝ Հայաստանի խորհրդայնացումը հույժ անհրաժեշտ է: Առանց դրա մենք չունենք իսկական շփում Թուրքիայի հետ: Քեմալականների վախճանը մեզ ուժգին հարված կհասցներ Արևելքում* (ընդգծումը մերն է - Կ.Խ.)»: Հաջորդ օրը, 1920 թ. հուլիսի 31-ին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն քննարկում է Հայաստանի վերաբերյալ Չիչերինի այս առաջարկությունը և որոշում ընդունել այն:[32]

Այսպիսով ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն վերջապես հաստատում է Հայաստանը խորհրդայնացնելու որոշումը, կարևորելով այն Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև «իրական շփում» հաստատելու անհրաժեշտությամբ: Սակայն Ռուսաստանի արտաքին դրությունը 1920 թ. ամռանն այնքան արագ էր փոփոխվում, որ Հայաստանը խորհրդայնացնելու որոշումը շուտով չեղյալ է համարվում: Օգոստոսի առաջին օրերին պատասխանելով Լենինին, վերջինիս կողմից իրեն հասցեագրված հետևյալ երկտողին. «Ձե՞ր կարծիքը: *Հետաձգել* (ընգծված է Լենինի կողմից - Կ.Խ.) Հայաստանի խորհրդայնացումը», Ն. Կրեստինսկին հուշում է, որ «Հայաստանի խորհրդայնացումը մենք արդեն հետաձգել ենք, հարկավոր է հետաձգել նաև Վրաստանի խորհրդայնացումը»:[33]

1920 թ. օգոստոսի սկզբին Թիֆլիսում վերսկսված խորհրդահայկական բանակցություններն ավարտվում են ՌՍՖՍՀ կառավարության և Հայաստանի հանրապետության միջև օգոստոսի 10-ին ստորագրված համաձայնագրով: Նրանով Ռուսաստանը «ճանաչում է Հայաստանի հանրապետության անկախությունն ու լիակատար

---

[32] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 2, թթ. 74-75:

[33] Ленин В.И., Неизвестные документы. 1891-1922 гг., док. 241, с. 359.

ինքնուրույնությունը» և վերջինիս իրավասությանը վերապահում Շախբախ-Ջուլֆա երկաթգիծը շահագործելու իրավունքը:

Խորհրդային իշխանությունների համար համաձայնագիրն առավել կարևորվում էր նրանով, որ իրավական ձևակերպում էր ստանում խորհրդային զորքերի կողմից Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի «ժամանակավոր» զինագրավումը:[34]

Համաձայնագրի ստորագրման կապակցությամբ 1920 թ. օգոստոսի 22-ին Գ. Չիչերինը հեռագրում է Անդրկովկասում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչներին. «Օգոստոսի 10-ի պայմանագիրը պետք է պարտադիր կերպով ճշտորեն կատարվի: Հայաստանի հետ հարաբերությունների խզում և ռազմական որևէ բարդություններ անթույլատրելի են: Դա կառավարության տեսակետն է, վճռականապես հաստատված կուսակցության Կենտկոմի կողմից»:[35]

Հաջորդ օրը հետևում է Չիչերինի հեռագիրը Գ. Օրջոնիկիձեին. «Հաղորդում եմ Ձեզ ճշտորեն և անվերապահ ղեկավարվելու համար Հայաստանի վերաբերյալ Կենտկոմի հրահանգները. խորհրդայնացման որոշումը (նկատի ունի ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի 1920 թ. հուլիսի 31-ի որոշումը - Կ.Խ.) չեղյալ է հայտարարվել, անհրաժեշտ է խստորեն խուսափել Հայաստանի հետ ամեն տեսակի ռազմական ընդհարումներից»:[36]

Այսպիսով Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները թեև «չեղյալ էին հայտարարում» Հայաստանը խորհրդայնացնելու քաղբյուրոյի հուլիսի 31-ի որոշումը, սակայն իրադարձությունների հետագա զարգացումը ցույց տվեց, որ գործնականում նրանք ամենևին էլ չէին հրաժարվել Հայաստանը խորհրդայնացնելու մտքից, այլ միայն հետաձգում էին այդ «գործողության» իրականացումը:

Եթե Խորհրդային Ռուսաստանը Հայաստանի հետ կնքած Թիֆլիսի օգոստոսի 10-ի համաձայնագիրը դիտում էր որպես հակաբայլ նույն օրը Սևրում Անտանտի ու նրա դաշնակիցների (այդ թվում Հայաստանի) և սուլթանական Թուրքիայի միջև կնքված հաշտության պայմանագրին, ապա Հայաստանի իշխանությունները համաձայնագրին մեծ նշանակություն չէին տալիս, այն «ժամանակավոր» համաձայնություն էին համարում:

---

[34] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 574-575.

[35] Տե՛ս Казанджян Р., К предыстории самоопределения Нагорного Карабаха (с приложением новых документов), Москва, 1997, с. 39, примечание № 3:

[36] Տե՛ս նույն տեղում, էջ 38, ծանոթագրություն № 8:

Նշված ժամանակաշրջանում Հայաստանի իշխանությունները իրենց արտաքին քաղաքական բոլոր նպատակները կապում էին Սևրի պայմանագրի հետ, համոզված էին, որ եվրոպական հզոր պետությունների ջանքերով այն անպայման իրականանալու է: Եվ դա բնական ու հասկանալի է. չէ՛ որ Սևրի պայմանագիրն ավելի «ծանրակշիռ» էր, քան հայ-ռուսական համաձայնագիրը, չէ՛ որ նրանով «Անտանտը հայերին ցնում էր այնպիսի մի բարձրության վրա, ուր նրանք երբեք չէին եղել»:[37]

Դրանով է պայմանավորված, որ Անտանտի երկրներում, պրոբուրքական և հակահայկական ճամբարներում իրարանցում առաջացրած Թիֆլիսի ռուս-հայկական համաձայնագիրը Հայաստանի իշխանությունները որակում էին «ձևական», և, կարծես արդարանալով՝ վստահեցնում էին Արևմուտքին, որ իրենք «շարունակում են մնալ հակաբոլշևիկ»:[38] Իրավացի է Հովհաննես Քաջազնունին, երբ խոստովանում է, որ «Սևրի դաշնագիրը շլացրել էր բոլորիս աչքերը, կաշկանդել միտքը, մթնեցրել իրականության գիտակցությունը»:[39]

Իսկ իրականում, անգամ Սևրի պայմանագրի «ճարտարապետներից» մեկը՝ Ֆրանսիայի նախագահ Պուանկարեն, խորհուրդ է տալիս «զգույշ լինել» և «չդիպչել» Սևրի պայմանագրին, քանզի այն «փխրուն առարկա է, զուցե ջարդված ծաղկաման»:[40]

«Սևրի պայմանագրի նկատմամբ ունեցած «խանդավառ ոգևորությունը», - իրավացիորեն նշում է ակադեմիկոս Գ. Գալոյանը, - Հայաստանի կառավարողներին մղել էր Ռուսաստանի դերի թերագնահատմանը Հայ դատի լուծման խնդրում»:[41]

Իր հուշերում Հ. Տերտերյանը վկայում է, որ «Սևրի առաջացրած խանդավառ ոգևորության հետևանքով մեր պետական ու կուսակցական գործիչներից շատերը, թերագնահատելով Խորհրդային Ռուսաստանի դերը Հայ դատի լուծման մեջ, անտեսել էին կարմիր զորամասերի ներկայությունը Հայաստանի սահմաններում և չափազանց մեծ հույսեր էին կապել դաշնակից պետությունների հետ՝ գերագնահատելով նրանց ուժերն ու հնարավորությունները: Հայաստանի պատվիրակությունն այն կարծիքին էր, որ դաշնակիցները, ինչքան էլ բար-

---

[37] Լևոն. Անցյալից (Հուշեր. թղթեր. դատումներ), Թիֆլիս, 1925, էջ 472:
[38] Բ. Լեգրանի մեջբան, փաստաթղթեր, ԲՀԱ, Երևան, 1967, թիվ 3, էջ 51-56:
[39] Քաջազնունի Հ., նշվ.աշխ., էջ 33:
[40] Севр и Лозанна, Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, Москва, 1927, с. 18.
[41] Գալոյան Գ.Ա., Հայաստանը և Մեծ տերությունները (1917-1923), Եր., 1999, էջ 286:

յացական լինեն Միացյալ և Անկախ Հայաստանի դատի նկատմամբ, իսկ խորհրդային իշխանությունն էլ՝ ոչ բարյացակամ, ամենից առաջ նկատի պետք է առնվեր մերկ ու դառն իրականությունը: Մեր բարեկամ «Ալյանսը» (նկատի ունի Անտանտը – Կ.Խ.) շատ հեռու էր մեր երկրի սահմաններից, իսկ Խորհրդային Ռուսաստանի զորամասերն արդեն իսկ գտնվում էին Հայաստանի սահմանների մոտ և իրական սպառնալիք էին ներկայացնում Հայաստանի անկախության համար: Ուստի մեր պատվիրակությունն առաջարկում էր մեր կառավարությանը ամեն գնով ու զիջումներով լեզու գտնել խորհրդային կառավարության հետ, անգամ Սևրից հրաժարվելու պայմանով, որպեսզի կարողանանք արագացնել կարմիր զորամասերի հեռացումը մեր անվիճելի հողամասերից:

Բացի այդ, միանգամայն սխալ մտայնություն գոյություն ուներ քեմալական շարժման ու Քեմալի գինվորական ուժերի կարողության մասին: Անգլիացիների կողմից մեր հանրապետությանը տրամադրված ռազմամթերքի ու հագուստեղենի ստացումից հետո, մեր պետական ու կուսակցական որոշ շրջանակներում այն կարծիքն էր տիրում, որ քեմալական ուժերի հետ բախման պարագային հայկական զորամասերը հեշտությամբ կարող են գրավել Էրզրումը և Էրզրումի բարձրավանդակը»:[42]

Մոսկվայում հայ-ռուսական բանակցությունների ժամանակ Լ. Կարախանի հետ զրույցում Հ. Տերտերյանը, անդրադառնալով Սևրի պայմանագրին, նշել է. «Առանձնապես այն համոզումը չունեմ, որ դաշնակից պետությունները զինու զորությամբ Տաճկաստանը պիտի գրավեն և սկուտեղի վրա դրած մատուցեն մեզ: Ես այն համոզումն էլ չունեմ, որ ներկա Հայաստանը այսօր ի վիճակի պիտի լինի զինվորական իր միջոցներով տեր դառնալու տաճկահայկական նահանգներին: Բայց և այնպես, չենք կարող հրաժարվել դարավոր մեր արդարացի իրավունքներից»:[43]

Եվ իրոք, ինչպես Սևրի պայմանագիրը, այնպես էլ նրանից բխող ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22-ի իրավարար որոշումը հայ-թուրքական սահմանի վերաբերյալ թեև չիրագործվեցին, այնուհանդերձ, դա Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների միջազգային ճանաչումն էր, փաստ, որն անհնար է ջնջել պատմության էջերից:

---

[42] Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1954, թիվ 5, էջ 6:
[43] Տե՛ս նույն տեղում, 1954, թիվ 2, էջ 21:

Սակայն մյուս կողմից՝ Սևրի պայմանագիրը մարտահրավեր էր և՛ քեմալական Թուրքիային, որ զենքի տակ ուներ ավելի քան 150 հազարանոց մարտունակ բանակ, և՛ Խորհրդային Ռուսաստանին: 1920 թ. օգոստոսի կեսերին Քեմալը հայտարարեց, որ թուրքական զորքերը գրավելու են Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերով Թուրքիային անցած տարածքները: Արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ Թուրքիայում Խորհրդային Ռուսաստանի դեսպանության հավաստի տվյալներով՝ 1920 թ. օգոստոսին քեմալական կառավարությունը հայտարարել է 20-40 տարեկան բոլոր քրիստոնյաների զինակոչ, «նրանք ուղարկվում են հայկական ռազմաճակատի ամենաձյունառատ շրջանները: Քանի որ կասկածից վեր է, որ այդ մարդիկ զանգվածաբար վախճանվում են Կովկասի լեռներում, ապա, ակնհայտ է, որ Մուստաֆա Քեմալի այդ նոր միջոցառումներն Անատոլիայի քրիստոնյա արական սեռի բնակչության հանդեպ պատժամիջոցի բնույթ են կրում»:[44]

«Խորհրդային Ռուսաստանը վճռականապես հանդես եկավ Սևրի պայմանագրի դեմ: Եվ դա ոչ թե այն պատճառով, որ պայմանագիրն ուղղված էր Թուրքիայի շահերի դեմ, այլ այն, որ արմատապես հակասում էր իր շահերին», և ոչ միայն Հայկական հարցում: Ռուսաստանը չէր կարող հանդուրժել, որ «հայերն իրենց անկախությունը ստանային Անտանտի տերությունների օգնությամբ և դրանով իսկ ընդմիշտ կախված լինեին նրանցից: Այդ Հայաստանը, - իրավացիորեն եզրակացնում է ակադեմիկոս Գալոյանը, - կխանգարեր «համաշխարհային հեղափոխության» ալիքների տարածմանը Արևելքում և Խորհրդային Ռուսաստանին ու «հեղափոխական» Թուրքիային կբաժաներ միմյանցից»:[45]

Սակայն Հայաստանի իշխանություններն այդ իրականությունը չէին ցանկանում ընդունել, շարունակում էին հավատարիմ մնալ արևմտյան դաշնակիցներին, մինչդեռ նույն ժամանակ և՛ քեմալականները, և՛ աղրբեջանցի բոլշևիկներն ու ազգայնական գործիչները միանգամայն ճիշտ էին կողմնորոշվել: Նրանք համատեղ ջանքերով Ռուսաստանի մայրաքաղաքում ակտիվ բանակցություններ էին վարում խորհրդային ազդեցիկ ղեկավար գործիչների հետ, և վաղօրոք մշակված հակահայկական ծրագրերի համաձայն՝ Հայաստանին մե-

---

[44] АВП РФ, ф. 132, Референтура по Турции, оп. 3, папка 2, д. 18, л. 75.

[45] Տե՛ս Գալոյան Գ.Ա., Հայաստանը և Մեծ տերությունները (1917-1923), էջ 283, 287:

դաղրում էին «միջազգային իմպերիալիզմին դաշնակից լինելու մեջ», խորհրդային կառավարությանը դրդում համատեղ պայքարի Հայաստանի դեմ: Թիֆլիսի և Սևրի օգոստոսի 10-ի պայմանագրերի ստորագրումից հետո այդ քաղաքականությունն ավելի հետևողական և ագրեսիվ դարձավ:

1920 թ. օգոստոսի 14-ին Բեքիր Սամի բեյի գլխավորած թուրքական պատվիրակությունը Մոսկվայում հանդիպում է Վ. Լենինի հետ, բողոքում Թիֆլիսի ռուս-հայկական համաձայնագրից, մասնավորապես, Նախիջևան-Շախտախտ երկաթուղու շահագործումը Հայաստանին թողնելու դրույթից: Թուրքերը հուշում են, որ դա է «միակ հուսալի ճանապարհը», որով Ռուսաստանը կարող է զենք և զինամթերք տեղափոխել քեմալականներին, հակառակ դեպքում՝ իրենք կուլ կգնան Արևմուտքին: Խորհրդային կառավարությունից թուրքերը պահանջում են «զոնե բանավոր» համաձայնություն տալ Շախտախտ - Սարիղամիշ գիծն իրենց կողմից գրավելու համար՝ ռուսական և քեմալական բանակների միջև անմիջական շփում հաստատելու նպատակով: Թուրքական դիվանագիտական ճնշումներն ի վերջո ցանկալի արդյունք են ապահովում. Գ. Օրջոնիկիձեի հետ հարցի վերաբերյալ խորհրդակցելուց հետո, արտգործժողկոմ Գ. Չիչերինը խորհրդային կառավարության անունից դրական է արձագանքում թուրքերի պահանջին՝ պայմանով, որ թուրքերը չանցնեն նշված գիծը:[46] Որոշմանը կողմ է արտահայտվում նաև Վրաստանում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Ս.Կիրովը՝ օգոստոսի 23-ին Չիչերինին ուղղված նամակում:[47]

Թուրքական կողմի նկրտումներն իրենց ձևակերպումներն են ստանում օգոստոսի 24-ին Մոսկվայում նախաստորագրած ռուս-թուրքական «Արտագին և անկեղծ բարեկամության» պայմանագրի նախագծում: Դրա տարբերակներից մեկի համաձայն՝ կողմերը պարտավորվում են «փոխադարձ համաձայնությամբ և կարճ ժամանակում ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև հաղորդակցության ճանապարհները բացելու համար»:[48]

Քեմալաբոլշևիկյան մերձեցումը, որ Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայի մոտ Կարմիր բանակի խայտառակ պարտությունից և օգոստոսի 24-ի ռուս-թուրքական համաձայնություններից հետո նոր

---

[46] Армянский вопрос. Энциклопедия, Ереван, 1991, с. 231-232.
[47] Տե՛ս Хейфец А.Н., Советская Россия и сопредельные страны Востока в годы гражданской войны (1918-1920), Москва, 1964, с. 131.
[48] Армянский вопрос. Энциклопедия, с. 232.

փուլ էր թևակոխել, առավել ամրապնդվեց Կոմինտերնի Գործկոմի կողմից 1920 թ. սեպտեմբերի 1-8-ը Բաքվում հրավիրված Արևելքի ժողովուրդների Առաջին համագումարին: Ավելին, թուրք-աղրբեջանական քարոզչական մեքենան այնտեղ «գաղափարական ռազմաշավ» ծավալեց «իմպերիալիստական Հայաստանի» դեմ: Համագումարի կողմից ընդունված փաստաթղթերում Հայաստանը ներկայացվում է որպես «միջազգային իմպերիալիզմին դաշնակից պետություն» և կոչ է արվում «արբազան պատերազմով» ելնել նրա դեմ:[49] Իսկ համագումարին մասնակցող կոմունիստ հայ պատվիրակները հանդես եկան խորհրդային հանրապետությունների օգնությամբ Հայաստանը խորհրդայնացնելու կոչով: Նրանք համոզված էին, որ դա է «փրկության միակ ուղին», այլապես՝ դաշնակցական Հայաստանը վերջնականապես կգլորվի Արևմուտքի գիրկը և կդառնա «հեղափոխական Արևելքի վրա իմպերիալիստական Արևմուտքի հարձակման հենադաշտ», ինչը «կխայտառակի մեզ ամբողջ աշխարհի հեղափոխության առջև»:[50]

Համագումարի կողմից ընտրված Քարոզչության և գործողության խորհրդի նախագահությունը սեպտեմբերի 18-ին հավանություն է տալիս խորհրդի կողմից սեպտեմբերի 17-ին ներկայացված «Մերձավոր Արևելքի քաղաքական ներկա պահի մասին» զեկուցագրին, որը մշակվել էր հակահայկական գործունեությամբ հայտնի ՌՍՖԽՀ արտգործժողկոմատի պատասխանատու աշխատակից Ա. Սկաչկույի կողմից: Փաստաթղթում առաջին հերթին խիստ քննադատվում է 1920 թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագիրը, այն դիտվում է որպես Ռուսաստանի «թուլության» նշան, ինչը կարող է ուժգին հարված հասցնել թուրք-ազգայնական (քեմալական - Կ.Խ.) շարժմանը և խափանել Արևելքում համաշխարհային հեղափոխության զարգացումը: Դրանից խուսափելու համար փաստաթղթում առաջարկվում է գործողությունների հետևյալ ծրագիրը. հնարավոր բոլոր միջոցներով օգնել քեմալականներին, որպեսզի Հայաստանի վրա նրանց ռազմաշավի միջոցով լուծվի Հայաստանի խորհրդայնացման հարցը: Համաձայն ծրագրի՝ հաջորդ փուլում Ռուսաստանը պետք է քարոզչական «ահավոր աղմուկ բարձրացներ Եվրոպայում», և «թուրք-հայկական

---

[49] Первый съезд народов Востока. Стенографический отчет, Баку, 1920.

[50] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Եր., 1960, էջ 374, 377:

նոր կոտորածները» կանխելու անհրաժեշտությունից ելնելով, որպես փրկարար ու հաշտարար մտներ Հայաստան և այնտեղ հաստատեր խորհրդային վարչակարգ, դրանով իսկ «փրկեր հայ ժողովրդին»: Դավադիր այս փաստաթուղթը, որպես Քարոզչության և գործողության խորհրդի նախագահության «Եզրակացություն», սեպտեմբերի 19-ին ուղարկվում է Կոմինտերնի Գործկոմի նախագահություն և ՌԿ(բ)Կ Կենտկոմ, պատճենը՝ Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմատ:[51]

Պետք է ենթադրել, որ «Եզրակացությունն» արժանացել է խորհրդային ամենաբարձր ղեկավարության հավանությանը, այլապես ինչով բացատրել, որ նրա երևան գաղուց ընդամենը մի քանի օր անց քեմալական Թուրքիան դավադրաբար, առանց պատերազմ հայտարարելու, լայնածավալ ռազմական գործողություններ սկսեց Հայաստանի դեմ: Զարմանալի զուգադիպությամբ՝ 1920 թ. սեպտեմբերի 29-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը որոշում է «Փողով և զենքով փաստացի օգնություն ցույց տալ քեմալականներին»:[52]

Այսպես, միայն 1920 թ. սեպտեմբերի ընթացքում Էրզրումում քեմալական կառավարության և ռազմական հրամանատարության ներկայացուցիչներին Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները փոխանցեցին 200,6 կգ. ոսկի:[53]

Պետք է նշել, որ խորհրդային կողմը քեմալականների առջև թեև պայման էր դնում, որ տրամադրվող օգնությունը պետք է օգտագործվի բացառապես Անտանտի դեմ պայքարում, արևմտյան ճակատում, սակայն պարզ է, որ վերահսկել դա գրեթե անհնար էր: Մյուս կողմից՝ խորհրդային օգնության շնորհիվ էր նաև, որ հասնելով հաջողությունների արևմտյան ճակատում, քեմալականներն իրենց առավել վստահ էին զգում Հայաստանի դեմ արևելյան ճակատում: Այսպիսով, եթե չլիներ Խորհրդային Ռուսաստանի քաղաքական աջակցությունը և նյութական օգնությունը քեմալականներին, վերջիններս չէին համարձակվի պատերազմել Հայաստանի հետ, ինչպես չհամարձակվեցին 1920 թ. ամռանը՝ հարցը կապելով «Բոլշևիկյան կառավարության և Թուրքիայի ընդհանուր փոխհարաբերությունների հետ»:[54]

---

[51] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թթ. 1-3:
[52] ՀԱԱ. հավաքածու 1, գ. 2, թ. 106:
[53] ДВП СССР, т. 3, Москва, 1959, с. 675.
[54] Տե՛ս Աղայան Ծ.Պ., Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Եր., 1982, էջ 321:

Նման եզրակացությանը հանգելու հիմք են տալիս նաև հետևյալ փաստերը: 1920 թ. հոկտեմբերի սկզբին Լենինին ուղղված նամակում Ստալինը նշում է. «Գտնում եմ, որ թուրքերի առաջխաղացումը (Հայաստանի տարածքում – Կ.Խ.) ջուր է լցնում մեր ջրաղացին»:[55] Իսկ նույն թվականի նոյեմբերի վերջերին Մոսկվա՝ Գ. Չիչերինին (պատճենը՝ Վ. Լենինին) ուղղված հեռագրում մտորելով Վրաստանի հնարավոր խորհրդայնացման հարցի շուրջ, Ստալինը միանշանակ նշում է. «Տարբերակներից լավագույնը՝ Թուրքիայի հաջող պատերազմն է Վրաստանի հետ, ինչը Ռուսաստանին հնարավորություն կտա միջամտելու միջնորդի և փրկարարի կեցվածքով»:[56] Այս «տարբերակի» մասին Ստալինը հուշում է նաև Օրջոնիկիձեին՝ վերջինիս նոյեմբերի 28-ին ուղղված նամակում նա նշում է. «Պետք է նրանց (քեմալականներին – Կ.Խ.) հրահրել Վրաստանի դեմ, և փորձել, կգնան նրանք, արդյո՞ք, Վրաստանի դեմ»:[57] Ամենևին չի բացառվում, իսկ իրադարձությունների հետագա զարգացումն էլ հուշում է, որ նշված «տարբերակը» խորհրդային ղեկավարության կողմից լավագույնը ճանաչվեց Հայաստանի նկատմամբ քաղաքականության համար:

Ինչպես խոստովանում է Մուստաֆա Քեմալը, թուրք-հայկական պատերազմում Թուրքիայի նպատակն էր՝ «ոչնչացնել հայկական բանակն ու հայկական պետությունը»:[58] Բացի այդ, թուրքական բանակի Արևմտյան ռազմաճակատի հրամանատար Ալի Ֆուաադ Ջերեսոյին 1920 թ. սեպտեմբերի 14-ին ուղղված հեռագրում Քեմալը հուշում է, որ առաջիկա պատերազմում «պետք չէ հրաժարվել նաև Այրքեջանը Թուրքիային միացնելու մտքից»:[59] Սա արդեն վկայում է քեմալականների հեռու գնացող ծրագրերի մասին: Ինչպես իրավացիորեն նկատում է ակադեմիկոս Հր. Սիմոնյանը, «քեմալականների թուրքիզմը չէր սահմանափակվում «Նոր Թուրքիայի» շրջանակներով, այն պետք է վերաճեր և, իրոք, վերաճեց պանթուրքիզմի»:[60]

---

[55] Տե՛ս Казанджян Р., Советско-кемалистские отношения в 1920 г. и вопрос Армении в свете секретных документов московских архивов, "Страны и народы Ближнего и Среднего Востока", Ереван, 2002, Вып. 21, էջ 105:

[56] ՀԱԱ. հավաքածու 1, գ. 2, թ. 142.

[57] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.: Քաղաքական պատմություն (Փաստաթղթերի ժողովածու), էջ 363:

[58] Кемаль М., Путь новой Турции, т. III, Москва, 1932, с. 102.

[59] Տես Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991, էջ 380:

[60] Սիմոնյան Հր., Թուրք սոցիալիստական բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Եր., 1986, էջ 511:

Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները թեև աջակցում էին քեմալականներին, սակայն այլ կերպ էին վերաբերվում քեմալական հարձակմանը Հայաստանի վրա: 1920 թ. հոկտեմբերի 5-ին Բ. Լեզրանին Թիֆլիս ուղարկած հեռագրում արտգործժողկոմ Չիչերինը հուշում է, որ քանի դեռ թուրքերը չեն անցել Ճախքախք-Սարիղամիշ գիծը, անհանգստանալու կարիք չկա, միևնույն ժամանակ նա զգուշացնում է, որ «Մենք չենք կարող թույլ տալ նրան (Հայաստանը - Կ.Խ.) ճզմելու»:[61]

Խորհրդային կառավարության մոտ առկա էր այն մտավախությունը, որ թուրքերի հարձակումը կատարվում է Անտանտի հետ համաձայնեցված, որը «պատրաստվում է Բաթումում դեսանտ իջեցնել»[62] և Թուրքիայի, Հայաստանի ու Վրաստանի հետ միասին Բաքվում և Կովկասում պատերազմել Ռուսաստանի դեմ: Հոկտեմբերի 9-ին Լեզրանին ուղարկած հերթական հեռագրում Չիչերինը նշում է, որ «Դաշնակների կառավարությունը վերածվել է Անտանտի հարձակման բացահայտ գործիքի: Անտանտը դաշնակներին մատակարարում է զինամթերք և ինչ-որ բան է պատրաստում» և «Թուրքական հարձակումը կարող է սաղրիչ դեր խաղալ Անտանտի համար»:[63]

1920 թ. նոյեմբերի 21-ին Վ. Լենինը զգուշացնում էր իր համախոհներին, որ Կովկասում «մեր վզին կարող է պատերազմ փաթաթվել նույնիսկ օրավուր»:[64]

Սպառնացող այդ վտանգը չեզոքացնելու և Անտանտին պատերազմ սկսելու առիթ չտալու համար խորհրդային իշխանությունները փորձում էին խուսափել տարածաշրջանում կտրուկ քայլերից: Խորհրդային ղեկավարությունը զգուշանում էր նաև քեմալականներից և չէր ցանկանում Հայաստանի պատճառով սրել հարաբերությունները նրանց հետ, առավել ևս այն դեպքում՝ երբ, ինչպես նշում է Գ. Չիչերինը, «Մենք թուրքերի առաջխաղացումը կանխելու հնարավորություն չունենք»:[65] Նշենք, որ 1920 թ. աշնանը Խորհրդային Ռուսաստանի արտաքին դրությունը շարունակում էր խիստ լարված մնալ: 1920 թ. սեպտեմբերի 22-ին ՌԿ(բ)Կ Համառուսաստանյան 9-րդ կոնֆերանսին Կենկոմի քաղաքական հաշվետվությունը ներկայացնող Վ. Լենինը,

---

[61] Տես Արզումանյան Ս.Վ., Արխավիրքից վերածնունդ, Եր., 1973, էջ 333:
[62] Տես նույն տեղում, էջ 349:
[63] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, лл. 173-174.
[64] Լենին, ԵԼԺ, հ. 42, էջ 29:
[65] Տես Գալոյան Գ., Պատմության բառաստիններում, Եր., 1982, էջ 340:

անդրադառնալով ռուս-լեհական պատերազմի խնդիրներին, նշում է. Վրաստանի և Լատվիայի կոմունիստները բողոքում են, թե ինչու մենք չենք օգնում վերջիններիս խորհրդայնացմանը, «Եվ հիմա էլ մենք չենք կարող դա անել, մենք դրա հնարավորությունը չունենք: Հանրապետության (Ռուսաստանի - Կ.Խ.) փրկությունը և ամրապնդումը՝ դա է մեր գերագույն խնդիրը»:[66]

Թուրք-հայկական պատերազմի թեժ շրջանում, 1920 թ. հոկտեմբերի 14-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն որոշում է հաստատել ՌՍՖԽՀ արտգործժողկոմ Չիչերինի առաջարկությունները Հայաստանի նկատմամբ խորհրդային քաղաքականության վերաբերյալ: Դրանք են. «*1.* Համաձայնել Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու անհրաժեշտության մասին Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի կարծիքի հետ, *2.* նրան *քաղաքական* (ընդգծումը մերն է - Կ.Խ.) օգնություն ցույց տալ թուրքերի առաջխաղացումը կասեցնելու համար և *3.* պաշտպանել նոր, խորհրդային կառավարությունը»:[67]

Քաղբյուրոյի այս որոշումը Հայաստանի Առաջին Հանրապետության դատավճիռն էր, Հայաստանը պետք է խորհրդայնացվեր: Եվ անիմաստ էին դառնում Երևանում ընթացող հայ-ռուսական բանակցությունները և դրանց արդյունքում հոկտեմբերի 28-ին Ռուսաստանի և Հայաստանի հաշտության պատվիրակությունների կողմից նախաստորագրված «Եզրափակիչ որոշման արձանագրությունը» ու նրան կից «Հաշտության պայմանագրի» նախագիծը:[68] Դրանք դատապարտված էին մնալու թղթի վրա, և մնացին, որովհետև արմատապես հակասում էին քաղբյուրոյի հոկտեմբերի 14-ի վերը նշված որոշմանը:

Այնուհանդերձ, հայ-ռուսական «Արձանագրությունում», որը ստորագրել էին Ռուսաստանի կառավարության կողմից լիազորված Բ. Լեգրանը և Հայաստանի՝ Լ. Շանթը, Հ. Տերտերյանը և Լ. Զարաֆյանը, կողմերը պարտավորվում էին հնարավորինս սեղմ ժամկետներում ստորագրել նրան կից «Հաշտության պայմանագիրը»՝ հետևյալ պայմանները կատարելու դեպքում. Ռուսաստանի և Աղրբեջանի կառավարությունները պետք է ճանաչեին Հայաստանի իրավունքները Նախիջևանի և Զանգեզուրի նկատմամբ, իր հերթին՝ Հայաստանի

---

[66] Տես Ленин В.И., Неизвестные документы. 1891-1922 гг., с. 374.
[67] Հայաստանը... փաստաթղթերում, էջ 456:
[68] Տես ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թթ. 2-8:

կառավարությունը պարտավորվում է հրաժարվել Ղարաբաղի նկատմամբ պահանջներից և ընդունել ՌՍՖԽՀ կառավարության բարեկամական օժանդակությունը՝ Թուրքիայի հետ տարածքային հարցերը լուծելու խնդրում (այն դեպքում, եթե թուրքական զորքերը հետ քաշվեին մինչև 1914 թ. ռուս-թուրքական նախկին սահմանը): Նախատեսվում է, որ Թուրքիան պետք է հրաժարվեր Բրեստ-Լիտովսկի և Բաքուի պայմանագրերից և ճանաչեր Հայաստանի հանրապետության անկախությունը՝ այն սահմաններում, որ կորոշվեր հայ-ռուսական հաշտության պայմանագրով: Ռուսաստանը պարտավորվում է Հայաստանին տրամադրել 2,5 մլն. ռուբլի (ոսկով) վարկ:[69]

Հայ-ռուսական դիվանագիտական փաստաթղթերը՝ «Արձանագրությունը» և պայմանագրի նախագիծը, 1920 թ. նոյեմբերի 4-ին քննարկվեցին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի Բաքվում հրավիրված համատեղ նիստին, որին մասնակցում էր նաև Ի. Ստալինը: Վերջինս ՌԿ(բ)Կ Կենտկոմի հատուկ հանձնարարականով և մեծ լիազորություններով հոկտեմբերի վերջերին ժամանել էր տարածաշրջան՝ «կովկասյան հարցերին» մոտիկից ծանոթանալու և հրատապ լուծումներ գտնելու համար:

Քննարկելով հայ-ռուսական պայմանագրի մասին Բ. Լեգրանի զեկուցումը, նիստի մասնակիցները կտրականապես դեմ են արտահայտվում Նախիջևանը և Զանգեզուրը Հայաստանին թողնելու նախապայմանին, քննադատության են արժանանում նաև պայմանագրի մյուս դրույթները: Լուրջ մեղադրանքներ են հնչում Լեգրանի հասցեին, անհրաժեշտ է համարվում նրան զորձուղել Մոսկվա՝ «Հայաստանի հետ կապված հարցը պարզելու համար»:[70] Խնդրի կապակցությամբ նոյեմբերի 16-ին Մոսկվա՝ Չիչերինին (պատճենը՝ Լենինին) հղած հեռագրում Ստալինը բացահայտում է իր դիրքորոշումը. հոկտեմբերի 28-ի պայմանագրի նախագծի մասին «խոսելն ավելորդ է, այն ետ է մնացել իրադարձություններից. այնպես, ինչպես ետ է մնացել (Հայաստանի վրայով - Կ.Խ.) տարանցման պահանջը»:[71]

Այո, Ստալինը իրավացի էր՝ մինչ Լեգրանը Բաքվում փորձում էր ստանալ Հայաստանի հետ պայմանագիր ստորագրելու հանձնարարականը, թուրքական բանակը հոկտեմբերի 31-ին արդեն գրավել էր Կարսը, իսկ նոյեմբերի 7-ին՝ Ալեքսանդրապոլը (Գյումրին):

---

[69] Տե՛ս նույն տեղում:
[70] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 276, թթ. 1-6:
[71] Նույն տեղում, հավաքածու 1, գ. 2, թ. 139:

1920 թ. նոյեմբերի 6-ին և 7-ին Մոսկվա՝ Գ. Չիչերինին և Վ. Լենինին Բաքվից ուղարկած հեռագրերում Ստալինը և Օրջոնիկիձեն տեղեկացնում էին, որ «Թուրքական հարձակումը Հայաստանի վրա շարունակվում է», և որ ստացված տեղեկությունների համաձայն՝ (դրանք հաղորդել էր Թիֆլիսում խորհրդային ներկայացուցիչ Ստարկը - Կ.Խ.) Կարսը գրավված է, իսկ Ալեքսանդրապոլը կարծես թե շուտով կգրավվի: Նշելով, որ ըստ Ստարկի՝ «թուրքերը Մոսկվային հայտնի գծից առաջ չեն շարժվելու», Ստալինը հուշում է, որ «թուրքերն արդեն իսկ անցել են այդ գիծը» և «Հայաստանում դրությունն այնպիսին է, որ եթե Ալեքսանդրապոլն իրոք ընկնի, բացառված չէ դաշնակների կողմից, Ադրբեջանի օրինակով, իշխանությունը մեզ փոխանցելու հնարավորությունը»: Անհանգստություն հայտնելով, որ քեմալականների հետ կապի բացակայության պատճառով իրենք լիովին անտեղյակ են թուրքերի հետագա ծրագրերից, որոնք «սպառնում են փոխվել մեզ համար ոչ ձեռնտու ուղղությամբ, ինչն անթույլատրելի է», Ստալինը և Օրջոնիկիձեն առաջարկում են իրենց ենթադրությունները ճշտելու, թուրքերի մտադրությունները պարզելու, և ըստ այդմ որոշումներ կայացնելու համար, քեմալականների մոտ գործուղել կուսակցական հայտնի գործիչ Պ. (Բուդու) Մդիվանուն: Լենինին և Չիչերինին հուշելով, որ իրենք նպատակահարմար չեն գտնում դիվանագիտական կարևոր այդ առաքելությունը վստահել Լեգրանին, Ստալինը և Օրջոնիկիձեն հեգնանքով առաջարկում են. «Ավելի լավ է նրան կանչեք Մոսկվա՝ պայմանագրի նախագծի (հոկտեմբերի 28-ի հայ-ռուսական - Կ.Խ.) վերաբերյալ բացատրություններ տալու համար»:[72] Պարզ է, որ Ստալինը դժգոհ էր Հայաստանի հարցում Լեգրանի վարած քաղաքականությունից և ձգտում էր չեզոքացնել նրան «հայկական գործերից»: «Հայկական գործերում» Լեգրանի միակ «դաշնակիցը»՝ ՌՍՖԽՀ արտգործժողկոմ Չիչերինը, Կովկասում Ստալինի դերի ուժեղացման պայմաններում, այլևս չէր փորձում ընդդիմանալ վերջինիս: «Չիչերինը և Լեգրանը իրադարձությունների զարգացման այս փուլում Հայաստանին որևէ գործնական օգնություն ցույց տալ չէին կարող: Հիմնախնդրի բոլոր լծակները կենտրոնացված էին Ստալինի ձեռքում»:[73]

Եվ այդ «լծակները» չկորցնելու համար քեմալականների մոտ Կարս գործուղվեց Ստալինի հակահայկական ծրագրերը գործնականում իրականացնողներից մեկը՝ Բուդու Մդիվանին: Վերջինս՝

---

[72] Տե՛ս նույն աեղում, էջ. 132-135:

[73] Խուրշուդյան Լ.Ա., Հայասաանի բաժանումը 1920 թ., Եր., 2002, էջ 242:

նախ Կարսում, այնուհետև Ալեքսանդրապոլում ընդգծված հակահայկական քարոզչություն էր վարում քեմալականների հետ դիվանագիտական շփումներում:

«Մղիվանին թուրքամետ էր, հակահայ: Նա ոչ միայն Ստալինի կամակատարն էր, այլև համախոհը: Մղիվանին Ալեքսանդրապոլում եռանդուն գործունեություն ծավալեց, լեզու գտավ Կարաբեքիրի հետ և ամեն ինչ արեց Թուրքիայի պահանջները բավարարելու, Հայաստանը ծնկի բերելու համար»:[74]

Թուրք-հայկական պատերազմում քեմալականների ռազմական հաջողությունները անհանգստացնում էին Խորհրդային Ռուսաստանի իշխանություններին, այդ կապակցությամբ Չիչերինը 1920 թ. նոյեմբերի 6-ին հեռագրում է Ստալինին. «Անհրաժեշտ է փրկել Հայաստանը նրա խորհրդայնացման գնով», Չիչերինը հույս է հայտնում, որ եթե այնտեղ գոնե մեկ ռուս գինվոր լինի, թուրքերը չեն համարձակվի շարժվել Հայաստանի խորքերը:[75] Իսկ նման վտանգը չէր բացառվում. նոյեմբերի 8-ին, երբ թուրքական զորքերն արդեն գտնվում էին Ալեքսանդրապոլում, Թուրքիայի արտգործնախարարի տեղակալ Ահմեդ Մուխթարը հետևյալ դիմումն է հղում քեմալական բանակի Արևելյան ռազմաճակատի հրամանատար գեներալ Քյազիմ Կարաբեքիրին. «Հայաստանը գտնվում է խիստ լայնատարած մուսուլմանական մի հողատարածքի վրա, հետևապես՝ անհրաժեշտ է նրան ինչպես քաղաքականապես, այնպես էլ փաստականորեն ոչնչացնել: Հարկ է հաշվի առնել, որ քաղաքական ընդհանուր իրադրությունն ու մեր հզորությունը բարենպաստ են այդ մտադրությունն իրականացնելու համար»:[76] Ինչպես ասում են՝ բացատրություններն ավելորդ են, կարծում ենք նաև, որ միայն այս փաստը բավարար է, որպեսզի սին դառնան բոլոր նրանց պնդումները, ովքեր ջանքեր չեն խնայում համոզելու, որ թուրքերը, միևնույն է՝ լիներ թե չլիներ Խորհրդային Ռուսաստանի գործոնը, խնայելու էին Հայաստանը, այն սահմաններում, որ գծվել էին Բաթումում և Ալեքսանդրապոլում:

Նշվածի ապացույցն է նաև քեմալականների վայրագությունները Արևելյան Հայաստանի գինագրված տարածքներում, մասնավորապես Կարսում: Ներխուժելով Կարս, Կարաբեքիր փաշայի զոր-

---

[74] Նույն տեղում, էջ 268-269:
[75] Տե՛ս Գալայան Գ., նշվ.աշխ., էջ 346-347:
[76] Տե՛ս Սարգսյան Ե., Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա. Եր., 1994, էջ 170-171:

քերը ձեռնամուխ եղան խաղաղ հայ բնակչության կոտորածին: Միաժամանակ իրականացվեցին զանգվածային ձերբակալություններ, պետական և մասնավոր ունեցվածքի կողոպուտ, այլ բռնություններ: Ռազմազերիները և ձերբակալվածները, որոնց թիվը հասնում էր մոտ երեք ու կես հազարի, աքսորվեցին Էրզրում՝ տաժանակիր աշխատանքների. նրանց մեծ մասը ոչնչացվեց ինչպես ճանապարհին, այնպես էլ աքսորավայրերում: Դաժան ճակատագրի արժանացան նաև Կարսում Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան նպաստամատույց կոմիտեի խնամքի տակ գտնվող 6 հազար որբ հայ երեխաները: Նրանց միայն չնչին մասը մնաց Հայաստանում: Փոխարենը՝ Էրզրումից Կարս տեղափոխվեցին 2 հազար թուրք որբեր: Ընդհանուր առմամբ Կարսում և նրա շրջանում կոտորվեցին շուրջ 15 հազար հայեր: Նշենք, որ բռնությունների ենթարկվեցին նաև Կարսի շրջանի մալականների տասնյակ գյուղեր, մի շարք օտարերկրյա քաղաքացիներ: Հետաքրքիր է դրանցից մեկի՝ ռումինացի Վասիլի Իոնեսկոյի, որը մեկ ամիս գտնվելով թուրքական գերությունում անձամբ էր կրել վերջինիս դաժանությունները, վկայությունները: Վրաստանում ՀՍԽՀ ներկայացուցչությանն ուղղված գրությունում տուժողի աչքերով ներկայացնելով քեմալականների վայրագությունները, Իոնեսկոն վկայում է. «Քաղաքում ահավոր սպանդ էր տիրում, իմ աչքի առջև մի խումբ կանայք, խուսափելով ձերբակալությունից, նետվեցին Կարսաչայ գետը: Ձերբակալվածներիս օրերով ոչ միայն հաց, անգամ ջուր չէին տալիս, ամբողջովին մերկացրել էին, եղան տղամարդկանց բռնաբարության դեպքեր: Աքսորի ճանապարհին ձերբակալվածները ենթարկվում էին զանազան խոշտանգումների: Ազատվելուց հետո Կարսում դոկտոր Նուրի-բեյից տեղեկացա, որ քաղաքում կոտորվել է 8 հազար հայ, բայց իմ դիտարկումներով՝ նրանց թիվը պետք է կազմի 10-12 հազարից ոչ պակաս: Գրեթե բոլոր կանայք բռնաբարված և վարակված էին, շատերը սովամահ էին լինում, թալանված էր ամեն ինչ, հայերից բռնագրավված խանութներում առևտուր էին անում թուրքերը»:[77]

Սթափ գնահատելով պատերազմում Հայաստանի անհուսալի դրությունը և ձգտելով կանգնեցնել թուրքերի հաջող հարձակումը Ջաջուրի ուղղությամբ, Հայաստանի կառավարությունը ստիպված է լինում նոյեմբերի 18-ին ընդունել թուրքական հրամանատարության ներկայացրած զինադադարի պահանջները. Թուրք-հայկական պատերազմում Հայաստանի հանձնապետության պարտությունը կստարյալ

[77] Տես Ներսիսյան Մ.Գ., Պատմության կեղծարարները, Եր., 1998, էջ 308-310:

էր: Խնդիր չհետապնդելով վերլուծելու մեր ժողովրդի համար ծանր և ճակատագրական հետևանքներ ունեցող պարտության բոլոր պատճառները, նշենք միայն, որ պարտության համար պատասխանատվության մեծ բաժինն ընկնում է Հայաստանի ղեկավարության ու քաղաքական ուժերի, Հայկական բանակի հրամանատարության ու զինվորականության վրա:

1920 թ. նոյեմբերի 11-ին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը հանդես էր եկել հայտարարությամբ, ուր պատրաստակամություն էր հայտնել միջնորդի դեր ստանձնել պատերազմող կողմերի միջև և այդ նպատակով «ռազմական գործողությունների շրջան ուղարկել իր լիազոր ներկայացուցիչ Մդիվանուն»: Այդ մասին է նշվում նաև Թուրքիայի և Հայաստանի կառավարություններին ուղղված Գ. Չիչերինի հեռագրերում:[78] Նույն օրը Լոնդոն, Ռուսաստանի առևտրական ներկայացուցիչ Լ. Կրասինին հաղորդած ռադիոհեռագրում Չիչերինը նշում է, որ «Թուրք ազգայնականների վերջին հաջողություններից հետո Հայաստանի դրությունը շատ տագնապալից է և Ռուսաստանի միջնորդությունը հենց ժամանակին է»:[79]

Ժամանելով տարածաշրջան, Ռուսաստանի կառավարության լիազոր ներկայացուցիչ Մդիվանին նախ այցելում է Կարս և հանդիպումներ ունենում Կարաբեքիրի հետ, իսկ այնուհետև՝ Երևան: Այստեղ Լեգրանի հետ միասին Մդիվանին նոյեմբերի 19-ին հանդիպում է Հայաստանի նախարարապետ Համո Օհանջանյանի և զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի հետ: Բանակցությունների ընթացքում Ռուսաստանի ներկայացուցիչները հուշում են, որ խորհրդային ղեկավարության միջնորդությունը կարող է իրական արդյունքներ տալ միայն Հայաստանում ռուսական բանակի առկայության պայմաններում, և որ քեմալականները «Հայաստանի համար Ռուսաստանի հետ չեն պատերազմի»: Մդիվանին ավելացնում է նաև, որ «Հարկավոր է դա վերջապես գիտակցել և անմիջապես ընդունել խորհրդայնացումը», այդ դեպքում՝ հայ ժողովուրդը կփրկվի «վերջնական ոչնչացումից»: Խորհրդայնացումն ընդունելու դիմաց՝ Ռուսաստանի ներկայացուցիչները խոստանում են վերականգնել Հայաստանի 1914 թ. սահմանները:[80]

---

[78] Հայաստանը... փաստաթղթերում, էջ 458-459:

[79] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 597, թ. 142: Տես նաև Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 598-599.

[80] Տես Բ. Լեգրանի մեմուարները. փաստաթղթեր. ԲՀԱ, Երևան, 1967, թիվ 3, էջ 85-92:

Սա, փաստորեն, Հայաստանը խաղաղ ճանապարհով խորհրդայնացնելու առաջարկ էր՝ անքաքույց պահանջի տեսքով:

Այսպիսով, ընկնելով քեմալաքոլշևիկյան ռազմաղիվանագիտական ուժգին ճնշումների տակ, Հայաստանի իշխանությունները ձգտում էին հայ-ռուսական և հայ-թուրքական բանակցությունների միջոցով ելքեր գտնել դժվարին կացությունից: Սակայն նրանք, կարծես չէին գիտակցում իրավիճակի ողջ լրջությունը, դրսում 1920 թ. ամառը չէր, երբ Հայաստանի թե՛ քաղաքական և թե՛ ռազմական դրությունը համեմատաբար կայուն էր և հնարավոր էր բանակցությունների միջոցով հասնել վիճելի խնդիրների լուծմանը: Ժամանակն անվերադարձ կորսված էր. թուրքական զորքերն իրենց մահաբեր ներխուժման սպառնալիքի տակ էին պահում Հայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտավայրը, վերջնականապես երես էր թեքել և իր անզորության մասին հայտնել «քաղաքակիրթ Եվրոպան»՝ միշտ պատրաստ սևծովյան նեղուցների և Բաքվի նավթի համար զոհաբերել հայ ժողովրդի շահերը: Իսկ Ռուսաստանը, հատելով իր համբերությունը, և մի կողմ թողնելով Հայաստանի հետ անարդյունք և անվերջ թվացող բանակցությունների քաղաքականությունը, անցել էր գործնական «վճռական գործողությունների»:

Քեմալականների հաղթական երթը Հայաստանի տարածքով չէր կարող չանհանգստացնել խորհրդային իշխանություններին, նրանց մոտ դեռևս մեծ էր այն մտավախությունը, որ «թուրքերը խորամանկում են, հետապնդում սեփական նպատակները», - 1920 թ. նոյեմբերին այդ մասին հաղորդում էր Մոսկվա՝ Չիչերինին և Լենինին, Ստալինը: Լենինին ուղղված մեկ այլ հեռագրում Ստալինը հուշում է նաև, որ թուրքերը «ձգտում են ընդհանուր սահման ունենալ Ադրբեջանի հետ»:[81]

Իրադարձությունների նման զարգացումը կանխելու նպատակով Օրջոնիկիձեն նոյեմբերի երկրորդ կեսին Ստալինին հայտնում է իր, ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի ընդհանուր կարծիքը. «Այլևս չսպասել և անմիջապես սեպով խրվել (թուրքերի և Ադրբեջանի միջև - Կ.Խ.)»: Օրջոնիկիձեն հուշում է նաև, որ դա «միաժամանակ կարագացնի հաջորդ գործողության (խոսքը Հայաստանի խորհրդայնացման մասին է. - Կ.Խ.) նախապատրաստումը»: Օրջոնիկիձեի կողմից առաջ քաշված ծրագրին ծանոթանալուց հետո Ստալինը խորհուրդ է տալիս նրան «ղեռ մի փոքր հե-

[81] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 2, թթ. 135, 150:

տածգել», և սկսել «այն պահին, երբ մենք հնարավորություն կունենանք իրականացնել առաջին ու նրանից անմիջապես հետո և երկրորդ (Հայաստանը խորհրդայնացնելու - Կ.Խ.) գործողությունը»: Հրահանգավորելով Օրջոնիկիձեին՝ «Առայժմ պատրաստել հեղկոմը (Հայաստանի - Կ.Խ.), որպեսզի այն գտնվի զորքերում», Ստալինը հուշում է, որ պետք է. խորհրդակցի «ծերուկի (Լենինի - Կ.Խ.) հետ»:[82]

Օրջոնիկիձեի հետ իր զրույցի բովանդակության մասին անմիջապես հաղորդելով Մոսկվա՝ Լենինին, Ստալինը հայտնում է նաև, որ անձամբ շատ հարցերում «միանգամայն համաձայն է Օրջոնիկիձեի հետ»: Լենինին հուշելով, որ ներկայումս առավել վտանգավոր է համարում այն փաստը, որ քեմալականները «ձգտում են ընդհանուր սահման ունենալ Աղրբեջանի հետ», Ստալինը դարձյալ առաջարկում է. հետաձգել Հայաստանը խորհրդայնացնելու գործողությունը և սկսել այն պահին, երբ հնարավորություն կստեղծվի ռազմական ուժեր կուտակել նաև Վրաստանի սահմաններին: Այնուհանդերձ, Ստալինը կարծիք է հայտնում նաև, որ միգուցե «արժե հանդգնել և գործողությունը իրականացնել անհապաղ»: Խուսափելով որոշում ընդունելու ողջ պատասխանատվությունից, Լենինը առաջարկում է հարցը քննարկել քաղբյուրոյի նիստին, միաժամանակ առաջարկում է. Ստալինին. կամ գործել իրեն՝ Ստալինին տրված լիազորությունների հիման վրա, կամ էլ՝ անձամբ վերադառնալ Մոսկվա՝ «Կովկասյան հարցն ամբողջությամբ լուծելու համար»: Ստալինը նախընտրում է վերջին տարբերակը և Օրջոնիկիձեին տալով նախապատրաստական աշխատանք վարելու և Մոսկվայից կարգադրություններ սպասելու հանձնարարական, շտապում է. Մոսկվա, քաղբյուրոյի նիստին մասնակցելու նպատակով:[83]

1920 թ. նոյեմբերի 27-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյում Ստալինը հանդես է գալիս Կովկասի դրության մասին ընդարձակ զեկուցումով: Նույն օրը քաղբյուրոյի կողմից ընդունված որոշման մեջ, որի նախագիծն անձամբ գրել էր նիստը նախագահող Լենինը, նշվեց. «Ո՛չ Վրաստանի, ո՛չ Հայաստանի, ո՛չ Պարսկաստանի վրա արշավելու խնդիր չդնել»:[84]

Պետք է նշել, որ քաղբյուրոյի որոշումն ուներ ավելի շուտ տակտիկական նշանակություն: Իսկ գործնականում, խորհրդային բարձր-

---

[82] ՀԱԱՀ, հավաքածու 1, գ. 2, pp. 144-147:
[83] Նույն տեղում, pp. 148-151:
[84] Նույն տեղում, ֆ. 4050, ց. 1, գ. 6, p. 1:

աստիճան ղեկավարությանը պետք է որ հայտնի լիներ, որ արդեն նոյեմբերի 25-ին 11-րդ Կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդի և Հայաստանի հեղկոմի միջև ձևոք բերված համաձայնությամբ, Կարմիր բանակի 20-րդ դիվիզիայի հրամանատարությանն առաջարկվել էր առանց հապաղելու դիվիզիայի 60-րդ բրիգադան շարժել դեպի Դիլիջան, իսկ այնտեղից՝ Երևան:[85]

Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին ծանր դրությունը 1920 թ. նոյեմբերի կեսերին Հայաստանի ներքաղաքական կյանքում առաջ բերեց քաղաքական որոշ վերածնումների անհրաժեշտություն: Դրանք թեև իրականացվեցին, սակայն մեծ հաշվով արմատական որևէ փոփոխություն չմտցրեցին հանրապետության որդեգրած արտաքին քաղաքական կուրսում: ՀՀ Խորհրդարանի նոյեմբերի 23-ի արտակարգ նիստին քննարկվեց և ընդունվեց Հ. Օհանջանյանի կառավարության հրաժարականը, նոր նախարարապետ ընտրվեց Սիմոն Վրացյանը, նոյեմբերի 24-ին հաստատվեց նաև վերջինիս կողմից ներկայացված կառավարության նոր կազմը: Նրանում թեև ընդգրկվեցին քաղաքական տարբեր կողմնորոշումներ ունեցող գործիչներ, որոնց մի մասը ներկայացվում է որպես «ռուսական կողմնորոշման ջատագովներ» (Դրո, Հ. Տերտերյան), սակայն, ինչպես նշվեց, ՀՀ արտաքին քաղաքականության մեջ դա որևէ փոփոխություն չմտցրեց: Վրացյանի հայտարարությունները և ձեռնարկած քայլերը հուշում էին, որ ՀՀ արտաքին քաղաքական գիծը գրեթե ոչնչով չէր տարբերվելու Օհանջանյանի կառավարության գծից: Նորանշանակ կառավարության արտաքին քաղաքական առաջին քայլը հանդիսացավ՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովին ուղղված նամակը՝ հաշտության երկկողմանի բանակցություններ սկսելու առաջարկությամբ:

Թուրքերը հենց դրան էլ սպասում էին, նրանց կողմից առաջարկությունն ընդունվեց անմիջապես և նոյեմբերի 24-ին Ալեքսանդրապոլում սկսվեցին հայ-թուրքական հաշտության բանակցությունները: Այսպիսով, հետևելով իրենց արևմտյան «խորհրդատուների» հորդորներին. որ «հայերը այլընտրանք չունեն, բանի որ սովետների հետ պայմանագրի տարբերակը անկասկած վատագույնն է»[86] (այդ մասին դաշնակցական կառավարությանը հայտնել էր Հայաստանում բրիտանական գործակալ Ստոքսը), Հայաստանի իշխանությունները անտեսեցին Խորհրդային Ռուսաստանի կողմից առաջարկված միջ-

---

[85] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1022, ց. 8, գ. 330, թ. 1:

[86] Տե՛ս Գաթյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923), էջ 362:

նորդությունը և համաձայնվեցին թուրքերի հետ երկկողմ բանակցություններին:

Ինչպես նշվեց, խորհրդային իշխանությունները խուսափում էին Կովկասում լայնամասշտաբ պատերազմի մեջ ներքաշվելուց, ուստի՝ ձգտելով տպավորություն ստեղծել, որ Հայաստանը խորհրդայնացվում է միմիայն հայ ժողովրդի ցանկությամբ և Հայհեղկոմի ուժերով, վերջինիս տրամադրության տակ դրվեց Կարմիր բանակի շարքերից առանձնացված «Հատուկ խնդիր հետապնդող գունդ (Հայկական)՝ ... քաղաքական վերջին հրահանգների համաձայն օգտագործելու համար»:[87]

1920 թ. նոյեմբերի 29-ին «Հատուկ գնդի» ուղեկցությամբ ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի կողմից կազմավորված Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն, բոլշևիկյան հայտնի գործիչ Սարգիս Կասյանի նախագահությամբ, Աղդբեջանից մտնում է Իջևան և «Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ» երկիրը հռչակում խորհրդային հանրապետություն:[88]

Տարիներ շարունակ այսպես էր փաստագրում Հայաստանի խորհրդայնացումը խորհրդային պատմագրությունը: Իրականում՝ Հայաստանը հռչակվում էր խորհրդային ոչ թե «ժողովրդի կամքով ու ցանկությամբ», և իբր թե նրա կողմից բարձրացված ապստամբության, այլ՝ միայն Հայաստանի կոմունիստական կուսակցության և Հայհեղկոմի անունից: Վերջինիս ապացույցն է Հայհեղկոմի անդամ Ավիս Նուրիջանյանի նոյեմբերի 30-ի հեռագիրը Գ. Օրջոնիկիձեին. «Մեր ժամանելը (հեղկոմի և Կարմիր բանակի մուտքը Հայաստան - Կ.Խ.) ճիշտ ժամանակին էր, որովհետև *կազմակերպված գյուղացիները* (ընդգծումը մերն է. - Կ.Խ.) հաջորդ օրը (այսինքն նոյեմբերի 30-ին - Կ.Խ.) մի խումբ ընկերների գլխավորությամբ, որոնց մենք նախօրոք ուղարկել էինք այդ շրջանում ծպտյալ աշխատանքի, պետք է ապստամբեին»: Ավիսը նշում է նաև, որ «Ամեն ինչ վերցվում է հաշվառման: Ամեն ինչի համար վճարվում է», խորհուրդ է տալիս «փողը և միջոցները չխնայել»:[89]

Սա է ճշմարտությունը Հայաստանում 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայհեղկոմի կողմից խորհրդային իշխանության հռչակման մասին:

---

[87] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը... Հայաստանում, էջ 400:
[88] Հեղափոխական կոմիտեները Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու, 1920 թ. նոյեմբեր – 1922 թ. հունվար), Եր., 1974, էջ 27:
[89] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 367, թ. 1:

«Հայաստանի խորհրդայնացման» կապակցությամբ նոյեմբերի 30-ին Հայհեղկոմը շտապում է ողջույնի հեռագիր հղել Վ. Լենինին, և դարձյալ «Հայաստանի բոլոր բանվորների և գյուղացիների անունից» խնդրում Կարմիր բանակի օգնությունը:[90]

Մինչ Մոսկվան երկմտում էր՝ Կարմիր բանակի մուտքը Հայաստան արտոնելու հարցում, Օրջոնիկիձեի կարգադրությամբ նրա զորամասերը արդեն շարժվում էին Հայաստանով: Նոյեմբերի 30-ին Օրջոնիկիձեն հրահանգավորում է 11-րդ բանակի 20-րդ դիվիզիայի հրամանատար Վելիկանովին. «Չմոռանաք առաջ շարժվել դեպի Ղարաքիլիսա (Վանաձոր) և գրավել այն, եթե, իհարկե, քաղաքը չի գրավվում թուրքերի կողմից: Մեր զորքերի հնարավոր հանդիպումը թուրքերի հետ կազմակերպեք հանդիսավորությամբ»: Վելիկանովից և Հայաստանի Ռազմհեղկոմի անդամներից Օրջոնիկիձեն պահանջում է. «թույլ չտալ բանակային զորամասերին դրսևորել որևէ կամայականություն», «չդիմել որևէ բռնությունների», «բնակչության նկատմամբ լինել անսահման կոռեկտ, թույլ չտալ Հատուկ բաժնին և Արտակարգ հանձնաժողովին փչացնել գործը», «լինել զգույշ և միլիոն անգամ զգույշ»:[91]

Սակայն, ինչպես հայտնում էին նրան Հայհեղկոմի անդամները, Կարմիր բանակի երթը Հայաստանով հարթ չէր ընթանում. «Առանձին զորամասերի կողմից թույլ են տրվում անթույլատրելի արարքներ: Պարենի բացակայության պատճառով բանակը բռնագրավում է բնակչության բոլոր պաշարները»:[92] Նման դեպքերը հետագայում բացառելու համար Օրջոնիկիձեն հրամայում է Վելիկանովին, որպեսզի նա «տեղն ու տեղը գնդակահարի» ապօրինությունների մեջ կասկածվող զորամասերի հրամանատարներին: Սպառնալով Վելիկանովին, որ նրանց «խուլիգանության համար պատասխանատու եք միայն Դուք», Օրջոնիկիձեն պահանջում է մտածել նաև բանակի մատակարարման այլ ուղիների մասին:[93]

Պարզ չէ, թե ինչպիսի ընթացք և հետևանքներ կունենար Հայհեղկոմի և Կարմիր բանակի ոչ արտոնյալ մուտքը Հայաստանի հյուսիսային շրջանները, եթե այդ նույն ժամանակ Երևանում չընթանային բանակցություններ հայկական իշխանությունների և Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանի

---

[90] Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, էջ 31-32:
[91] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 367, թթ. 3-4:
[92] Նույն տեղում, թ. 8:
[93] Նույն տեղում, թ. 11:

միջև: Դրանք Հայաստանը խորհրդային հռչակելու և իշխանությունն օրինական ճանապարհով Ռազմհեղկոմին փոխանցելու վերաբերյալ էին: Ձեռքին ունենալով Հայհեղկոմի և ռուսական զորքերի՝ Հայաստանում գտնվելու հզոր խաղաթուղթը, Լեգրանը շտապեց օգտագործել այն՝ հայկական իշխանությունների կողմից Հայաստանը խորհրդայնացնելու վերջնագիրն ընդունելու համար:

Նոյեմբերի 30-ին տեղեկանալով Լեգրանից, որ «Հայաստանի հեղկոմը ոտք է դրել Հայաստան և ձեռնարկել նրա խորհրդայնացումը», իսկ Կարմիր բանակն էլ շարժվում է դեպի Երևան, Հանրապետության կառավարությունը և Հ.Յ.Դ. բյուրոն դեկտեմբերի 1-ին ընդունում են վերջնագիրը և դնում «որոշ պայմաններ»:[94] Նախարարներ Դ. Կանայանը (Դրո) և Հ. Տերտերյանը լիազորվում են համապատասխան համաձայնագիր ստորագրել Ռուսաստանի կառավարության ներկայացուցչի հետ:

Ի կատարումն Հայաստանի կառավարության հանձնարարականի՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրվում է «Համաձայնագիր ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցչի և Հայաստանի կառավարության միջև»: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Հայաստանը հայտարարվում է «Սոցիալիստական Խորհրդային անկախ Հանրապետություն», նախկին կառավարությունը հեռանում է իշխանությունից, մինչև Ռազմհեղկոմի ժամանումը Երևան այն անցնում է զինվորական հրամանատարությանը՝ Դրոյի և ՌՍՖԽՀ կոմիսար Օ. Սիլինի համատեղ գլխավորությամբ:[95] Վերջիններս էլ, հիմք ընդունելով հայ-ռուսական համաձայնագիրը, նույն օրը, դեկտեմբերի 2-ին, ստորագրում են «Հրաման Հայաստանը խորհրդային հանրապետություն հայտարարելու մասին» փաստաթուղթը:

Հրամանը հրապարակվում է ՀՍԽՀ դեկրետների և հրամանների պաշտոնական ժողովածուի մեջ (պրակ 1, էջմիածին, 1921, էջ 5), սակայն հետագայում հանվում է այնտեղից: Ինչպե՞ս և ինչո՞ւ է դա կատարվել: Հայաստանի խորհրդայնացման տարեդարձի նախօրեին, 1921 թ. նոյեմբերի 19-ին, ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահությունը որոշում է «Դեկտեմբերի 2-ը»՝ որպես Հայաստանը խորհրդային հայտարարելու օր, «Կոդիֆիկացիոն կարգով փոխել (օրինակարգավորել -

---

[94] Նույն տեղում, ֆ. 1022, ց. 3, գ. 272, թթ. 42, 44:

[95] Сборник действующих договоров, Москва, 1922, № 79, с. 14-15. Տե՛ս նաև Ключников Ю., Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. 3, Москва, 1928, с. 75-76:

Կ.Խ.)» և «իբրև խորհրդային իշխանության ազդարարման օր հայտարարել նոյեմբերի 29-ը»: Ըստ այդմ՝ որոշվում է ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածուից հանել Հայաստանը խորհրդային հայտարարելու մասին դեկտեմբերի 2-ի «Հրամանը»:[96] Փաստը գալիս է ապացուցելու, որ Հայաստանի խորհրդային իշխանությունները Հայաստանի խորհրդայնացման օրը իրավացիորեն համարել են «դեկտեմբերի 2-ը», այլ ոչ «նոյեմբերի 29-ը», և միայն «անցյալի հետ բոլոր կապերը պատռելու» գաղափարական խնդիրն էր, որ ստիպեց նրանց «դեկտեմբերի 2-ը» դարձնել պատմության «սպիտակ էջը»:

Այսպիսով 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով և դրան հետևած «Հրամանով» Հայաստանում տեղի ունեցավ իշխանափոխություն: Այն թեև պարտադրված էր դրսից ուժի դիրքերից, սակայն իրականացվեց իրավական տարրին համապատասխան: Հայոց պետականության պատմության մեջ Հայաստանի Առաջին Հանրապետությունն իր տեղը զիջեց Հայաստանի Երկրորդ՝ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությանը: Ինչ վերաբերում է Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեի նոյեմբերի 29-ի՝ Հայաստանը խորհրդային հայտարարելու մասին «Հռչակագրին», ապա այն պետք է դիտել որպես կուսակցական մի փաստաթուղթ, որով կոմունիստ հայերը հայտարարում էին իրենց քաղաքական ծրագրերի, այն է՝ Հայաստանը խորհրդային հռչակելու և իշխանության դեկը ստանձնելու մասին:

Հայաստանի կառավարության լիազորությունները վայր դնելու և Հայաստանը խորհրդայնացնելու մասին Լենինը շտապում է անմիջապես հեռագրել Բաքու՝ Օրջոնիկիձեին: Դրան հաջորդում է վերջինիս «կայծակնային» հեռագիրը Մոսկվա՝ Վ. Լենինին: Հայտնելով Հայաստանում խորհրդային իշխանության հաղթանակի մասին, Օրջոնիկիձեն առաջարկում է Ռուսաստանի կառավարությանը. «*1.* Հեղկոմի հրավերի համաձայն, պաշտոնապես թույլատրել Կարմիր բանակի զորամասերի մուտքը Հայաստան: *2.* Անհապաղ ուղարկել Լենինի պատասխան հեռագիրը՝ Հեղկոմի անունով»:[97] Այսպիսով Օրջոնիկիձեն փորձում էր կոծկել «սեփական նախաձեռնությամբ» կարմիր զորքերի մուտքը Հայաստան արտոնելու մասին որոշումը և «օրինականացնել» Խորհրդային Ռուսաստանի գործողությունները:

---

[96] ՀԱԱ, ֆ. 113, ց. 43, գ. 30, թ. 39:
[97] Տես Աղայան Ծ.Պ., նշվ.աշխ., էջ 343:

1920 թ. դեկտեմբերի 2-ին նույնպիսի «կայծակնային» արագությամբ «ծնվում է» Լենինի «պատմական» հեռագիրը Հայաստանի Ռազմհեղկոմի նախագահ Ս. Կասյանին, որում նա ողջունում է Հայաստանի խորհրդայնացումը:[98] Եվ միայն հաջորդ օրը, դեկտեմբերի 3-ին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի հանձնարարությամբ Ստալինը հայտնում է Բաքու՝ Օրջոնիկիձեին, որ թույլատրվում է Կարմիր բանակի զորամասերը մտցնել Հայաստան: Մինչդեռ, ինչպես նշել ենք, Օրջոնիկիձեի թույլտվությամբ նրանք վաղուց արդեն Հայաստանում էին: Ստալինը զգուշացնում է, որ զորամասերի մուտքը Հայաստան պետք է կատարել ռազմաճակատի կամ բանակի հրամանատարության անունից և հիշեցնում, որ «Պատերազմի մեջ ներքաշվելը մեզ համար անթույլատրելի է»:[99] Այսպիսով ևս մեկ փաստարկ, որ Ռուսաստանի իշխանությունները չափազանց զգուշանում էին Կովկասում Անտանտի հետ պատերազմի մեջ ներքաշվելու վտանգից: Մյուս կողմից՝ Ռուսաստանը փորձում էր կանխել Հայաստանը «ինչպես քաղաքականապես, այնպես էլ փաստականորեն ոչնչացնելու» թուրքական ծրագիրը: Այդ մասին է հուշում նաև հետևյալ փաստը: Հայաստան ներխուժած Կարմիր բանակի Ղարաքիլիսայի ուղղության զորքերի խմբավորման հրամանատար Կուռիշկոյից տեղեկանալով, որ Ղարաքիլիսայում է գտնվում 21 հոգուց բաղկացած թուրքական առաքելություն, Օրջոնիկիձեն պահանջում է ողջունել նրանց, բայց նաև «Առանց հապաղելու առաջ քաշել զորամասերը դեպի Ղարաքիլիսա և գրավել այն»:[100]

Երևանի հայ-ռուսական համաձայնագրի ստորագրումից և Հայաստանի խորհրդայնացումից մի քանի ժամ անց՝ դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը, երբ Հայաստանում արդեն իշխանափոխություն էր կատարվել, այլևս գոյություն չունեցող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված հայկական պատվիրակությունը Ա. Խատիսյանի գլխավորությամբ Ալեքսանդրապոլում ստորագրում է հայ-թուրքական հաշտության պայմանագիրը:

Դրանով Հայաստանի Հանրապետությունը հրաժարվում է ոչ միայն Արևելյան Հայաստանի մի զգալի հատվածի նկատմամբ իր իրավունքներից, այլև Սևրի պայմանագրից, Արևմտյան Հայաստանից: Ավելին, հայկական կողմը ընդունում է այդ տարածքների «պատմական, էթնիկական և իրավական անվիճելի կապը Թուրքիայի հետ»:

---

[98] Լենին Վ.Ի., ԵԼԺ, հ. 42, էջ 65:
[99] Տես Աղայան Ծ.Պ., նշվ.աշխ., էջ 343:
[100] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 367, թ. 12:

Պայմանագիրը նվաստացուցիչ էր հայկական պետության և հայ ժողովրդի համար ոչ միայն տարածքային զիջումների առումով: Նրա 5-րդ և 12-րդ հոդվածների համաձայն թուրքական կառավարությունը պարտավորվում է Հայաստանին սպառնացող արտաքին կամ ներքին վտանգի դեպքում՝ վերջինիս կառավարության խնդրանքով, զինված օգնություն տրամադրել նրան և իրավունք ստանում «ռազմական միջոցներ ձեռք առնել Հայաստանում»:[101] Ճակատագրի հնչյիսի հեգնանք՝ Հայաստանի և հայ ժողովրդի անվտանգության պաշտպանությունը պատրաստվում էր ստանձնել մի պետություն, որը տարիներ շարունակ անխնա կոտորել և ոչնչացրել էր հայկական տարրը, ամայացրել Հայոց աշխարհը:

Այսպիսով, եթե Ալեքսանդրապոլի պայմանագիրը կյանքի կոչվեր, տարածքային կորուստներից քացի, Հայաստանը կրելու էր նաև ներքին ինքնուրույնության զգալի սահմանափակումներ, փաստորեն դառնալու էր Թուրքիայից կախյալ և նրա կողմից «հովանավորվող» պետական մի կազմավորում:

Ալեքսանդրապոլի պայմանագիրն ուղղված էր ինչպես Հայաստանի, այնպես էլ Խորհրդային Ռուսաստանի ռազմավարական շահերի դեմ: Խորհրդային պատմաբան Ն. Ռուբինշտեյնը իրավացիորեն նշում է, որ Ալեքսանդրապոլի «պայմանագիրն ակնառու կերպով բնութագրում էր Անդրկովկասում թեմալականների թալանչիական, գավթողական նկրտումները»:[102]

Բարեբախտաբար Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրման իսկ պահից օրինական չէր և մնաց լոկ որպես դիվանագիտական մի փաստաթուղթ՝ պատմաբանների և մասնագետների կողմից տարբեր մեկնաբանությունների և խիստ բացասական որակավորումների արժանանալու համար:

Այսպիսով, թեմալաբոլշևիկյան ռազմաքաղաքական ուժգին ճնշումների տակ դադարեց գոյություն ունենալ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, նրան փոխարինեց Հայաստանի Երկրորդ՝ Խորհրդային Հանրապետությունը: Ժամանակի միջազգային հարաբերություններում և տարածաշրջանում ստեղծված քաղաքական բարդ իրավիճակում, Հայաստանի արևմտյան դաշնակիցների դատապարտելի անգործության, Խորհրդային Ռուսաստանի որդեգրած արևելյան

---

[101] Հայաստանը... փաստաթղթերում, էջ 683-687:

[102] Рубинштейн Н.Л., Внешняя политика Советского государства в 1921-1925 гг., Москва, 1953, с. 62.

քաղաքականության, որը հիմնված էր քեմալական Թուրքիայի հետ սերտ համագործակցության վրա, Խորհրդային Ադրբեջանի՝ թշնամական, Վրաստանի հանրապետության՝ ոչ բարեկամական տրամադրվածության պայմաններում, Հայաստանի խորհրդայնացումն իրոք որ «ժամանակի խնդիր էր»: Եթե այն իրականություն չդարձավ դեռևս 1920 թ. գարնանը, իրականացվեց նոյեմբերի վերջին - դեկտեմբերի սկզբին: Չիրականացվեր այդ ժամանակ՝ անկասկած, հայ ժողովրդի համար ավելի մեծ կորուստներով իրականություն կդառնար որոշ ժամանակ անց: Նշված կարծիքի օգտին է վկայում նաև տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադարձությունների հետագա ընթացքը՝ Վրաստանի, և դրանով իսկ ամբողջ Անդրկովկասի խորհրդայնացումը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

1. 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը: Համաձայնագրի դրույթների խախտումը նոր իշխանությունների կողմից և բռնությունների ծավալումը

Հայաստանի կառավարության ներկայացուցիչների և Հայաստանում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցչի միջև դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրված համաձայնագրով Խորհրդային Ռուսաստանը ստանձնում է նորաստեղծ Խորհրդային Հայաստանի պաշտպանությունը և այն ապահովելու համար պարտավորվում տրամադրել անհրաժեշտ ռազմական ուժեր: Համաձայնագրի երրորդ հոդվածով Ռուսաստանի կառավարությունն ընդունում է, որ ՀՍԽՀ տարածքն անվիճելիորեն կազմում են. Երևանի նահանգն իր բոլոր գավառներով, Կարսի մարզի այն մասը, որի սահմանները որոշված էին 1920 թ. օգոստոսի 10-ի Թիֆլիսի համաձայնագրով և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք մինչև 1920 թ. սեպտեմբերի 28-ը պատկանում էին Հայաստանին: Հանգուցային այս կետերից բացի, դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը պարունակում է հոդվածներ, որոնցով արձանագրվում է, որ խորհրդային իշխանությունը պարտավորվում է չդիմել հետապնդումների և բռնությունների հայկական նախկին բանակի հրամանատարական կազմի և հայ քաղաքական կուսակցությունների ու նրանց անդամների նկատմամբ՝ մինչև Հայաստանի խորհրդայնացումը նրանց ծավալած կուսակցական և պետական գործունեության համար (չորրորդ և հինգերորդ հոդվածներ): Վեցերորդ հոդվածով կողմերը միջև համաձայնության են գալիս, որ Հայաստանում իշխանությունը ստանձնող Ռազմահեղափոխական կոմիտեն պետք է ձևավորվի կոալիցիոն հիմունքներով. հինգ անդամ Հայկոմկուսից և երկու՝ ձախ դաշնակցություն խմբակցությունից: Վերջիններիս թեկնածությունը նախօրոք պետք է համաձայնեցվեր Հայկոմկուսի ղեկավարության հետ:[103] Պարզ է, որ համաձայնագրի այս հոդվածները Հայաստանի

[103] Сборник действующих договоров, с. 14-15.

նախկին կառավարության այն «որոշ պայմաններն» էին, որոնց առկայությունը հայ-ռուսական համաձայնագրում նախապայման էր, կառավարության՝ իշխանությունից խաղաղ ճանապարհով հեռանալու համար:

Երևանի դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը որքան էլ որ զարմանալի է, Հայհեղկոմի հավանությանը չարժանացավ. վերջինս ոչ միայն չէր պատրաստվում իշխանությունը Հայաստանում կիսել որևէ քաղաքական ուժի հետ, նամանավանդ՝ Հ.Յ. Դաշնակցության, այլ ձգտում էր Հայաստանի խորհրդայնացման դափնիները ամբողջությամբ վերագրել իրեն: Դեկտեմբեր 3-ին Լեգրանի հետ հեռագրագրույցում Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանը, չթաքցնելով գայրույթը, հուշում է, որ «ոչ թե Դրոն, այլ Հայաստանի հեղկոմն է Հայաստանը հռչակել անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետություն», և դրանից ելնելով՝ պետք է. «անվավեր ճանաչել և Ձեր համաձայնությունը Դրոյի հետ»: Լեգրանը նույնպիսի վճռականությամբ պատասխանում է նրան, որ «դա ամենևին չի փոխում իրավիճակը և ոչ ոք իրավունք չունի չեղյալ հայտարարել իր կողմից ստորագրված համաձայնագիրը: Բացի այդ՝ խնդրում եմ նկատի ունենալ, որ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի որոշումով Դրոն և Տերտերյանը Խորհրդային Հայաստանի հեղկոմի կազմում են»:[104]

Սակայն ընդամենը մեկ օր անց՝ դեկտեմբերի 4-ին, հաղորդելով Մոսկվա՝ Ստալինին, Լենինին և Չիչերինին, այն մասին, որ «Լեգրանը պնդում է Դրոյին և Տերտերյանին հեղկոմ մտցնելու հարցում», Օրջոնիկիձեն նշում է, որ հարցը «կլուծվի Կասյանի Երևան ժամանելուց հետո»: Նա նաև ավելացնում է, որ «հնարավոր է ստիպված լինենք հրաժարվել հայտնի որոշումից»:[105]

«Լեգրանի դրությունը հասկանալի է, - մեկ այլ առիթով Օրջոնիկիձեն հաղորդում է Մոսկվա, - նա չափից ավելին է խոստացել հայկական նախկին կառավարությանը»:[106] Պետք է նշել, որ Բորիս Լեգրանը Հայաստանում երբեմն գործում էր սեփական նախաձեռնությամբ և, փորձելով անցկացնել «սեփական քաղաքականությունը» Հայաստանի հարցում, դուրս էր գալիս իրեն տրված լիազորությունների շրջանակներից: Սա էր, կարծում ենք, պատճառներից մեկը, որ խորհրդային իշխանությունները հետագայում գործնականում հետա-

---

[104] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1154, թ. 1:
[105] Նույն աեղում, ֆ. 1022, ց. 4, գ 368, թ. 1:
[106] Նույն աեղում, հավելված 1, գ. 2, թ. 183:

մուտ չեղան դեկտեմբերի 2-ի համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Երևանի հայ-ռուսական համաձայնագրի մի շարք դրույթներ թեև մնացին թղթի վրա և անտեսվեցին խորհրդային իշխանությունների կողմից, համաձայնագրի որոշակի նշանակությունը, այնուամենայնիվ, թերագնահատել չի կարելի: Ներքաղաքական տեսակետից դա արտահայտվեց նրանով, որ Հայաստանի կառավարությունն առանց որևէ դիմադրության խաղաղ ճանապարհով հեռացավ իշխանությունից: Դրանով իսկ կանխվեցին դեպի Երևան շարժվող Հայհեղկոմի և Կարմիր բանակի զորամասերի հնարավոր բախումները Հայաստանի բանակային և զինված այլ կազմավորումների հետ: Վերջապես, ժողովուրդը հոգեբանորեն նախապատրաստվեց խորհրդային զորքերի և նոր իշխանությունների գալուն: Պատահական չէ, որ երկրում հաշտ մթնոլորտը պահպանելու, Հայաստանում իշխանափոխության գործընթացին հանդիսավորություն հաղորդելու նպատակով Հայհեղկոմին դիմավորելու համար նրան «ընդառաջ ուղարկվեցին ավտոմոբիլներ»:[107]

Մեծ էր դեկտեմբերի 2-ի համաձայնագրի նշանակությունը նաև միջազգային արտաքին քաղաքական տեսակետից: Համաձայնագրով Խորհրդային Ռուսաստանը և Հայաստանը դառնում էին դաշնակից պետություններ, իրավական հիմք էր նախապատրաստվում Հայաստանի տարածքում Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակի զորամասերի տեղակայման համար: Վերջինս լուրջ կռվան էր Հայաստանում գտնվող թուրքական բանակի հնարավոր առաջխաղացման դեռևս չվերացած վտանգը կանխելու, «Մեծ Թուրանի» ճանապարհին հզոր պատնեշ ստեղծելու համար: Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը «Թուրքիայի «հավանությանը» չարժանացավ»:[108]

Ի վերջո, ինչպես արդեն նշել ենք, համաձայնագրի շտապ ստորագրման դիվանագիտական հմուտ քայլն իրավական հիմք և հնարավորություն տվեց Հայաստանի և Ռուսաստանի խորհրդային իշխանություններին չեղյալ հայտարարել Ալեքսանդրապոլի թուրքհայկական պայմանագիրը և անընդունելի համարել նրա դրույթները կատարելու մասին թուրքական կողմի պահանջները:

---

[107] Նույն տեղում, ֆ. 4033, ց. 2, գ. 1154, թ. 1:
[108] Ավետիսյան Հ.Ա., Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997, էջ 353:

* * *

Դրոյի և Սիլինի իշխանությունը Հայաստանում տևեց ընդամենը 4 օր, 1920 թ. դեկտեմբերի 6-ից այն ամբողջությամբ իր ձեռքը վերցրեց Հայաստանի Ռազմհեղկոմը՝ Սարգիս Կասյանի նախագահությամբ: Հայ-ռուսական համաձայնագիրը Հայաստանի նոր իշխանությունների հավանությանը թեև չէր արժանացել, սակայն, կարծես գիտակցելով նրա ներքին և արտաքին քաղաքական նշանակությունը, Ս. Կասյանը, որը Հայհեղկոմի անդամների հետ միասին առանց որևէ խոչընդոտի ժամանել էր Երևան, այստեղից հեռագրեց Գ. Օրջոնիկիձեին. «Երևանում համոզվեցի Լեգրանի տակտիկայի ճշտության մեջ»:[109] Սակայն դա միայն ճշմարտության խոստովանում էր, և չէր նշանակում, որ Հայհեղկոմն ընդունելու էր համաձայնագիրն ի կատարում, ընդհակառակը՝ իր իշխանության առաջին իսկ օրերին նա «անվավեր ճանաչեց» և «առ ոչինչ համարեց դեկտեմբերի 2-ի ակտը», - նշում է Աշոտ Հովհաննիսյանը:[110]

Եվ իրոք, Հայհեղկոմը նախ խախտեց հեղկոմի կազմի վերաբերյալ դեկտեմբերի 2-ի համաձայնագրի վեցերորդ հոդվածով ձեռք բերված համաձայնությունը (նրա բոլոր 6 անդամները կոմունիստներ էին, իսկ Դրոն և Տերտերյանը, իհարկե, հեղկոմի կազմ չմտան), իսկ շուտով՝ նաև մյուս հոդվածները: Բնորոշիչ է, որ համաձայնագիրը խաղտողներից առաջինը Ռուսաստանի կողմից այն ստորագրած Բ. Լեգրանն էր: Դեկտեմբերի 2-ին նա հաղորդում է Բաքու՝ Օրջոնիկիձեին, որ կարգադրել է ձերբակալել Հայաստանի նախկին նախարարապետ Հ. Օհանջանյանին, նրա կառավարության որոշ անդամներին (Ա. Արարատյան, Ա. Չիլինգարյան, Ա. Ջամալյան, Ռ. Տեր-Մինասյան) և մի շարք պետական ու քաղաքական «հակահեղափոխական» այլ գործիչներին: Լեգրանը միաժամանակ «մեծահոգաբար» հուշում է, որ սահմանափակվելու են միայն նշված անձանց ձերբակալություններով:[111]

Խորհրդային իշխանության առաջին իսկ օրերից ամբողջ երկրով մեկ հետապնդումներ ծավալվեցին, բռնություններ գործադրվեցին ինչպես նախկին կառավարության անդամների, ազգային կուսակցությունների (հատկապես՝ Հ.Յ. Դաշնակցության) և, ընդհանրապես

---

[109] Տե՛ս Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922), Եր., 1987, էջ 188-189:
[110] Հովհաննիսյան Ա., Համազգային կրիզիսը, Եր., 1926, էջ 26:
[111] Տե՛ս Գարոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ 373-374:

այլախոհների, հայկական նախկին բանակի սպայական կազմի, այնպես էլ բնակչության նկատմամբ: Ինչպես խորհրդային մյուս հանրապետություններում, Հայաստանում նույնպես հաստատվում է կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության մենիշխանությունը:

Խորհրդային Հայաստանում հայ բոլշևիկները մեխանիկորեն կրկնեցին Խորհրդային Ռուսաստանում 1918-1920 թթ. բոլշևիկների կիրառած կառավարման ձևերը և փորձում էին իրականացնել նույն քաղաքականությունը: Հայհեղկոմի անդամ Ալեքսանդր Բեկզադյանը հայտարարում էր, որ «Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, երկրի իշխանությունն իրենց ձեռքը վերցնելով, քաղաքականության մեջ պետք է հետևեն Խորհրդային Ռուսաստանին»:[112] Եվ դա միանգամայն բնական էր. չէ որ խորհրդային իշխանությունը տարածաշրջան ներմուծվեց հենց Ռուսաստանից, և Հայաստանում իշխանության ղեկը ստանձնած կոմունիստական կուսակցությունը Ռուսաստանի կոմկուսի բաղկացուցիչ մասերից մեկն էր և ղեկավարվում էր մեկ քաղաքական կենտրոնից՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմից, նրա Կովկասյան բյուրոյի միջոցով: 1920 թ. դեկտեմբերի 5-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղղված ռադիոյնի հեռագրում ՀԿ(բ)Կ Կենտկոմը Հայաստանի խորհրդայնացումը ներկայացնում է որպես «ՌԿԿ ազդեցության և գործողության ոլորտը նոր, բայց կարևոր շրջանի կցում»:[113]

Ընդօրինակելով Խորհրդային Ռուսաստանի պետական իշխանության կառուցման փորձը, Հայհեղկոմը վերացնում է կառավարման հին համակարգը և ձեռնամուխ լինում խորհրդային պետական նոր համակարգի կազմակերպման գործին: Հանրապետության գործադիր իշխանության նոր մարմինները՝ ժողովրդական կոմիսարիատներն էին, ըստ գործունեության բնագավառի: Կառավարման համակարգում բոլշևիկները չափազանց կարևոր դեր էին հատկացնում Ռազմհեղկոմի նախագահ Ս. Կասյանի դեկտեմբերի 6-ի առաջին իսկ դեկրետով հիմնված Արտակարգ հանձնաժողովին (Չեկա՝ Չրեզվիչայնայա կոմիսիա): Արտակարգ հանձնաժողովը պայքարելու էր «հակահեղափոխության, շահադիտության (սպեկուլյացիայի) և ի պաշտոնե հանցագործությունների դեմ», նրան կից ստեղծվում է Հատուկ բաժին, որը գործելու էր Հայաստանի Կարմիր բանակում:[114]

---

[112] Բեկզադյան Ալ., Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, Եր., 1981, էջ 83-84:
[113] Տես ԲՀԱ, Երևան, 1965, թիվ 3, էջ 3-4:
[114] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1. էջ 7-8:

ՀՍԽՀ արդարադատության ժողկոմի 1920 թ. դեկտեմբերի 22-ի հրամանով՝ հին դատական համակարգը փոխարինվում է «ժողովրդական դատարաններով»,[115] իսկ Հայհեղկոմի 1921 թ. հունվարի 15-ի դեկրետով՝ «Հայհեղկոմին կից հաստատվում է ՀՍԽՀ Գերագույն հեղափոխական տribունալ»: Վերջինիս վճիռները համարվում են վերջնական և գործադրման ենթակա 48 ժամվա ընթացքում, բացառություն էր արվում միայն մահապատժի համար, նման վճիռները պետք է հաստատեր Հայհեղկոմը:[116]

Խորհրդային Հայաստանի կառավարման գործը Հայհեղկոմն իրականացնում էր ՀՍԽՀ բարձրագույն վարչական մարմնի՝ Ներքին գործերի ժողկոմատի միջոցով:[117] Հայհեղկոմի «Հեղափոխական կարգ և հասարակական ապահովություն հաստատելու մասին» 1921 թ. հունվարի 21-ի հրամանով՝ ներգործժողկոմին իրավունք է վերապահվում Հայաստանի սահմաններից հեռացնել ինչպես հանցագործ տարրերին, այնպես էլ «ակնհայտնի հակահեղափոխականներին», ի դեպ՝ «Գանգատ ներկայացնելու հանգամանքը չէր խանգարելու որոշման իրագործմանը»:[118]

Ամբողջ այս համակարգը մշտված էր ծառայելու կոմունիստների գաղափարական շահերին և այն գործիքն էր, որն օգտագործվեց բոլշևիկների կողմից այլախոհների դեմ պայքարը հաջողությամբ իրականացնելու, հայկական նախկին բանակը խորհրդային հիմունքներով վերակազմավորելու և, ընդհանրապես՝ Հայաստանում խորհրդային իշխանությունն ամրապնդելու, ժողովրդին «գաղափարապես կոփելու» և «հեղափոխական» այլ միջոցառումներն իրականացնելու համար:

Այսպիսով, ինչպես Խորհրդային Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում հաստատվեց պետական այն իշխանությունը, որը բոլշևիկները համարում էին «Բանվորագյուղացիական», «Պրոլետարիատի դիկտատուրա»: Բոլշևիկների առաջնորդ Վ. Լենինը հետևյալ կերպ է բնութագրում «դիկտատուրա» տերմինը. «Դիկտատուրայի գիտական հասկացությունը ոչ այլ ինչ է, քան ոչնչով չսահմանափակված, ոչ մի օրենքով, բացարձակապես ոչ մի կանոնով չկաշկանդված, անմիջականորեն բռնության վրա հենվող իշխանություն»:[119]

---

[115] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, էջ 27:
[116] Նույն տեղում, էջ 70-71:
[117] Նույն տեղում, էջ 8-9:
[118] Նույն տեղում, էջ 85:
[119] Լենին Վ.Ի., ԵԼԺ, հ. 41, էջ 487:

* * *

Հայաստանում խորհրդային իշխանությունների առաջնահերթ խնդիրներից էր հայկական ազգային բանակի վերակազմավորման գործը: ՀՍԽՀ բանակի հրամանատար Դրոյի և ՌՍՖԽՀ կոմիսար Սիլինի 1920 թ. դեկտեմբերի 2-ի հրամանով այն կոչվելու էր «Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակ», վերակազմավորվելու էր «հեղափոխական հիմունքներով» և կրելու էր դասակարգային բնույթի մի շարք փոփոխություններ:[120] Բանակը վերակազմավորելու գործում Հայհեղկոմը ղեկավարվելու էր ՌՍՖԽՀ Բանվորագյուղացիական Կարմիր բանակի շինարարության հիմնական սկզբունքներով:

Ինչպես Խորհրդային Ռուսաստանի քաղաքական իշխանությունները և Կարմիր բանակի հրամանատարությունը, այնպես էլ Հայաստանի իշխանությունները չէին հանդուրժելու, որպեսզի ՀՍԽՀ Կարմիր բանակում հրամանատարական պաշտոններում մնար հայկական նախկին բանակի սպայակազմը: Հետաքրքիր է, որ Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրը՝ դեկտեմբերի 2-ին, 11-րդ Կարմիր բանակի 20-րդ դիվիզիայի հրամանատար Մ. Վելիկանովը Բաքվում գտնվող Օրջոնիկիձեին հայտնում է, որ «մտադիր է ձերբակալել (հայկական բանակի – Կ.Խ.) սպաներին»:[121]

Անգամ այն փաստը, որ ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի և անձամբ Օրջոնիկիձեի պնդմամբ՝ ՀՍԽՀ բանակի հրամանատարի պաշտոնում էր Դրոն, ինչը Օրջոնիկիձեն համարում էր «Մեծ կովան Եվրոպայի առջև, որովհետև նրան այնտեղ գիտեն»,[122] չէր կարող կանխել հայկական բանակի սպաների նկատմամբ բոլշևիկների կողմից ծրագրված բռնությունները: Լեգրանը Հայհեղկոմին խորհուրդ է տալիս չանհանգստանալ Դրոյի՝ բարձր պաշտոնում լինելու կապակցությամբ, քանզի «նա գործում է մեր ցուցումներին միանգամայն համաձայն և մեր կոմունիստների հետ համատեղ»:[123]

Բաքվում տեղակայվող 11-րդ Կարմիր բանակի Հատուկ բաժնի անմիջական ցուցումով 1920 թ. դեկտեմբերին – 1921 թ. հունվարի սկզբին Խորհրդային Հայաստանի համապատասխան մարմինները «բանակից հեռացնում և Բաքու՝ 11-րդ բանակի շտաբի տրամադրության տակ են ուղարկում մինչև 400 սպա, որոնցից 100 - 120-ը նախկի-

---

[120] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 164, թ. 1: Տե՛ս նաև ՀՍԽՀ ղեկավարների և հրամանների ժողովածու, պրակ 1, էջ 5-7:
[121] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 367, թ. 10:
[122] Նույն աղբյուր, թ. 6:
[123] ՀԱԱ. ֆ. 4033, ց. 2, գ. 1154, թ. 1:

նում ծառայել են սպիտակ գորքերում»,[124] - հայտնում է ՌԿ(բ)Կ Կենտկոմի անդամներին Ալ. Բեկզադյանը:

Սպաների աքսորի չափերի ծավալմանն ընդդիմանում են Հայհեղկոմի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի մի շարք անդամներ («մեղմ» քաղաքականության կողմնակիցներ Ս. Կասյանը, Ա. Մռավյանը և Ալ. Բեկզադյանը), նրանք գտնում են, որ բանակը «մաքրելու» քաղաքականությունը պետք է անցկացնել զգույշ և չափավոր՝ առանց խուճապ առաջացնելու:

Դեկտեմբերի վերջին օրերին տեղեկություններ ստանալով այն մասին, որ 11-րդ բանակի Հատուկ բաժինը մտադրվել է աքսորել նաև Բաքվում բնակվող հայ սպաներին, Կասյանը ահազանգում է Բաքու՝ Ադրբեջանում Հայաստանի ներկայացուցիչ Մ. Աբարբեկյանին, հրահանգավորում նրան միջոցներ ձեռնարկել ծրագրված աքսորը կանխելու համար: Խորհրդային Հայաստանի ղեկավարների մի մասն և 11-րդ բանակի Հատուկ բաժնի միջև դիմակայության մանրամասներին տեղեկանում ենք Հայհեղկոմի անդամ և Մոսկվայում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանի 1921 թ. հունվարի 15-ի նամակից՝ ուղղված ՀԿ(բ)Կ Կենտկոմ: Տեր-Գաբրիելյանը հայտնում է, որ ՌՍՖԽՀ Չեկայի Հատուկ բաժինը հեռագիր է ստացել Բաքվից, որում նշվում է, որ Հայաստանի Չեկայի նախագահ Նիկոլայ Այվազովից (պաշտոնավարել է 1920 թ. դեկտեմբերի 6-ից – 1921 թ. հունվարի վերջը) ստացած տեղեկությունների համաձայն՝ Հայհեղկոմը «թուլություն է» դրսևորում և չի թույլատրում ընդլայնել աքսորի չափերը: Հեռագրի մասին հայտնի է դառնում Ստալինին, իր մոտ հրավիրելով Տեր-Գաբրիելյանին, նա պարզաբանումներ է պահանջում. «Թե ինչո՞ւ հեղկոմը չի թույլատրում երկրամասը մաքրել հակահեղափոխականներից, և ի՞նչ է նշանակում հեղկոմի և, մասնաավորապես, Կասյանի նման վարքագիծը»: Հավանաբար՝ նամակը շարադրելու ընթացքում դեռևս գտնվելով Ստալինի խիստ հարցապնդումների ազդեցության տակ, Տեր-Գաբրիելյանը Հայաստանի իշխանություններից «թախանձագին» խնդրում է «Չարել հարաբերությունները Ադրբեջանի և մանավանդ կենտրոնից գործուղված ռուս աշխատակիցների հետ»:[125]

Սակայն, չպատելով Հայհեղկոմի «վճռական քայլերին» և ձգտելով էլ ավելի արագացնել «երկրամասի մաքրումը հակահեղափոխականներից», 1921 թ. հունվարի սկզբներից Մոսկվան դիմում է

---

[124] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թ. 125:
[125] Նույն տեղում, ֆ. 4049, ց. 1, գ. 7, թթ. 4-5:

վճռական գործողությունների: Կենտրոնի պահանջով ՀՍԽՀ բանակի հրամանատարի պաշտոնից ազատվում է Դրոն, հունվարի 11-ին նա մի խումբ հայ սպաների հետ լքում է Հայաստանի սահմանները և Բաքվով տեղափոխվում Մոսկվա: Փաստորեն, Դրոն կատարել էր իր «դերը Եվրոպայի առջև» և նրա ներկայությունը Խորհրդային Հայաստանում բոլշևիկների կողմից այլևս նպատակահարմար չէր համարվում: Այնուհանդերձ, հաշվի առնելով Դրոյի «մատուցած ծառայությունները», խորհրդային իշխանությունները թույլատրեցին նրան անարգել տեղափոխվել Մոսկվա, իսկ այնուհետև՝ արտասահման: 1920 թ. հունվարի 20-ին Օրջոնիկիձեն հեռագրում է Մոսկվա՝ ՀՍԽՀ ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանին. «Դրոն գալիս է ձեզ մոտ: Տեղավորիր նրան ինչպես հարկն է: Տեղավորիր նաև նրա տղաներին դասընթացների»:[126]

Դրոյի և մյուս հայ սպաների փոխարեն Հայաստանի Կարմիր բանակում ղեկավար պաշտոնների նշանակվեցին բոլշևիկ ռուս սպաներ. բանակի հրամանատար նշանակվեց Վ.Մ. Մոլկաչանովը, կոմիսար՝ Ի. Սվիրիդովը: Կադրային այս և մյուս փոփոխությունները, ինչպես նաև Համառուսաստանյան Արտակարգ հանձնաժողովի ու 11-րդ բանակի Հատուկ բաժնի կողմից հրահանգներով օժտված լիազոր ներկայացուցիչ Գևորգ Աթարբեկյանի ժամանումը Հայաստան 1921 թ. հունվարի 14-ին նոր լիցք հաղորդեցին բոլշևիկների բռնություններին: Հայաստանում գտնվելու առաջին իսկ օրերից Աթարբեկյանը գործի է դնում Ռուսաստանում ձեռք բերած «մեծ փորձը». նա պահանջում է Համառուսաստանյան Չեկայի հրահանգների համաձայն առանց որևէ քննության և արագ կերպով ձերբակալել բոլոր սպաներին անխտիր: «Աթարբեկյանը նախապատվությունը տալիս էր բռնությանն ու զենքի ուժին:... Նա պատրաստ էր ձերբակալել բոլորին», որովհետև «կասկածում էր բոլորի վրա, միշտ», - այսպես է բնութագրում նրան խորհրդահայ պատմաբանը:[127]

Գ. Աթարբեկյանի քաղաքական «կոշտ» գիծը պաշտպանում էին ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Գ. Ալիխանյանը, ռազմգործժողկոմ Ա. Նուրիջանյանը (Ավիս), ներգործժողկոմ Ի. Դովլաթյանը, Չեկայի նախագահ Ն. Այվազովը և այլք: «Ձախերի» այս խմբին թեև փորձում էին զսպել «մեղմ» քաղաքականություն վարելու կողմնակիցներ Ս. Կասյանը, Ա. Մռավյանը և Ալ. Բեկզադյանը, սակայն «ձախե-

---

[126] Նույն տեղում, գ. 4, թ. 1:

[127] Կուսակցության Հ., Մեծ պայքարի մարդիկ, գիրք 1, Եր., 1963, էջ 427, 432:

րի» քաղաքական հաղթանակը կանխորոշված էր՝ նրանք, փաստորեն, կյանքի էին կոչում Մոսկվայի կենտրոնական իշխանությունների հրահանգները:

Հայկական բանակի սպաների հունվարյան աքսորի կազմակերպման և ընթացքի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ է պարունակում ՀՍԽՀ արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանի 1921 թ. մարտի 26-ի զեկուցագիրը՝ ուղղված Մոսկվա՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմ, պատճենները՝ Վ. Լենինին, Ի. Ստալինին և ՌՍՖՍՀ ռազմգործժողկոմ Լ. Տրոցկուն: Զեկուցագրում Բեկզադյանը նշում է, որ արհամարհելով հեղկոմի նախազգուշացումներն այն մասին, որ սպաների զանգվածային աքսորը «քաղաքականապես անբարեխոհ և անիմաստ է, ոչնչով պայմանավորված չէ, բայց կարող է հանգեցնել ոչ ցանկալի հետևանքների», 1921 թ. հունվարի կեսերից «ձախերը» անցնում են «Համառուսաստանյան Արտակարգ հանձնաժողովի ցուցումների» կատարմանը: Այդ ժամանակ էլ կարգադրություն է արձակվում հայկական նախկին բանակի բոլոր սպաների նոր ցուցակագրման մասին: Հայաստանի ամբողջ տարածքում, որտեղ տարածվում է խորհրդային իշխանությունը, կազմակերպվում են հավաքակայաններ, ուր պարտաճանաչ կերպով ներկայանում են ծառայության մեջ գտնվող կամ չգտնվող գրեթե բոլոր սպաները, նրանք ոչինչ չէին կասկածում զալիք արհավիրքների մասին: Հաջորդ օրը զինված պահակախմբի հսկողության տակ սպաներին ոտքով քշում են դեպի Աղստաֆա. ճանապարհին չեն կերակրում, ենթարկում ծաղրուծանակի, թալանում վերջին ունեցվածքը: Աքսորվածներին Աղստաֆայից գնացքով ուղարկում են Բաքու՝ 11-րդ բանակի Հատուկ բաժնի տրամադրության տակ: Բաքվում հայկական բանակի սպաներին նետում են բանտերը, իսկ մոտ 500-ին՝ աքսորում Խորհրդային Ռուսաստանի Ռյազան քաղաքի համակենտրոնացման ճամբարները: Ինչպես զեկուցագրում նշում է Ալ. Բեկզադյանը, աքսորվածներից շատերը ոչ միայն դաշնակցականներ և կաղրային սպաներ չէին, այլ՝ «կոմունիստներ էին (կուսակցական տոմսերով), ինժեներներ, տնտեսագետներ, տեխնիկական աշխատակիցներ, որոնց կարիքն այդքան զգացվում էր Հայաստանում»: Նշելով, որ իր կողմից հավաքված պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ Աքայբեկովը Համառուսաստանյան Արտակարգ հանձնաժողովի կողմից ոչ միայն լիազորված չի եղել կազմակերպելու սպաների զանգվածային աքսորը, այլև նրան չեն տրվել ոչ մի տեսակի հրահանգներ Հայաստանի նկատ-

մամբ», Բեկզադյանը ՌԿ(բ)Կ Կենտկոմից խնդրում է ազատ արձակել աքսորում գտնվող սպաներին:[128]

Հետաքրքիր է, որ աքսորված սպաներից շատերի մոտ նույնպես առկա էր այն կարծիքը, որ իրենց նկատմամբ բռնությունները թյուրիմացության արդյունք են և «չար կամքի դրսևորում»: Այդ մասին է նշվում Բաքվում 11-րդ բանակի Հատուկ բաժնի կալանքի տակ գտնվող 170 սպաների 1921 թ. փետրվարի 18-ի դիմումում Մոսկվա՝ Լենինին և Տրոցկուն: Դրանում հայ սպաները ոչ միայն բողոք են ներկայացնում, այլ նաև հավաստում են Խորհրդային Ռուսաստանի իշխանությունների նկատմամբ իրենց լոյալ և բարյացակամ վերաբերմունքի մասին, պատրաստակամություն հայտնում՝ «ծառայել» խորհրդային իշխանությանը:[129]

Հայկական բանակի «Հեղափոխական վերակազմավորման» նշանաբանի ներքո կիրառված բռնությունների արդյունքում խորհրդային իշխանության առաջին ամիսների ընթացքում Հայաստանից, ինչպես նաև Ադրբեջանից, աքսորվեցին հայկական նախկին բանակի շուրջ 1400 սպաներ և զինծառայողներ: Աքսորից զերծ չմնացին հայ ժողովրդի հերոսներ, գեներալներ Թ. Նազարբեկյանը, Մ. Սիլիկյանը, Ա. Հովսեփյանցը, Ա. Բեյ-Մամիկոնյանը, Հ. Հախվերդովը, Կ. Գամազովը և այլք: Ավելացնենք միայն, որ աքսորված սպաների մեջ զգալի թիվ էին կազմում այլազգի (հիմնականում ռուս) սպաները. գեներալ-մայորներ Դիմիտրի Անդրեևսկի, Վլադիմիր Իվանով, Յակով Իովլովսկի, գնդապետներ Վլադիմիր Իլյենկո, Նիկոլայ Շիշով, Միխայիլ Օռլովսկի, Պավել Շլիտեր, Նիկոլայ Տիմչենկո և շատ ու շատ ուրիշներ:[130]

Հայկական բանակի սպաների աքսորը կազմակերպողներից մեկը՝ ՀՍԽՀ ռազմգործժողկոմ Ավիսը, իրենց կողմից ձեռնարկված խիստ միջոցառումների անհրաժեշտությունը հիմնավորում էր Ռուսաստանի փորձով: Երևանում լույս տեսնող ռուսալեզու «Կոմունիստ» թերթի թղթակցին տված հարցազրույցում նա նշում է. «Ռուսաստանի փորձը խիստ օրինակելի է, չէր կարելի չնախատեսել սպայության կուտակման վտանգը մի երկրում, որտեղ դեռ չէր եղել հեղափոխական լուրջ կռիվ», «Թող նրանք անցնեն պրոլետարական կարգապահության հնոցով, թող իրենց հետևից պայթեցնեն բոլոր կամուրջները, այրեն բոլոր նավերը, իսկ դրանից հետո միայն նրանցից յուրաքանչ-

---

[128] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թթ. 125-127: Տես նաև ֆ. 114, ց. 1. գ. 85, թթ. 1-2:
[129] Տես նույն աղբյուրում, ֆ. 114, ց. 2, գ. 15, թ. 5:
[130] Տես նույն աղբյուրում, ֆ. 113, ց. 113, գ. 3, թթ. 44-47:

յուրն ուզած պահին կարող է վերադառնալ Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակի շարքերը»:[131]

Հայկական բանակի սպաների նկատմամբ բոլշևիկների կողմից գործադրված բռնությունների հետևանքով հայկական բանակը ոչ միայն էլ ավելի բարոյալքվեց, զրկվեց ազգային նկարագրից, այլև կորցրեց իր հմուտ և փորձառու հրամանատարական կազմը՝ կուփված Կովկասյան ռազմաճակատում թուրքական բանակի հետ մարտերում, 1918 թ. մայիսյան հերոսամարտերում: Այս ամենն, ինչ խոսք, չէր կարող չազդել հայկական բանակի մարտունակության վրա: Մեկ առիթով անդրադառնալով խնդրին, Ալ. Մյասնիկյանը թեև բարեխիղճ արձանագրեց, որ «Հրամանատարության աքսորումը, անփորձ մարդկանց մուտքը բանակ (շատ պաշտոններ վարում էին հասարակ զինվորներ), իհարկե, խիստ ազդեցություն թողեց նրա ռազմընդունակության վրա», սակայն միաժամանակ, կարծես թե ձգտելով արդարացնել աքսորը, նշում է. «Այդ միջոցները ապահովեցին բանակի քաղաքական բարեհուսությունը»:[132]

* * *

Հայաստանի խորհրդայնացումից հետո բոլշևիկյան իշխանությունները որդեգրեցին Հայաստանի նախկին իշխանությունները վարկաբեկելու, ազգային կուսակցությունները հեղինակազրկելու և պառակտելու քաղաքականությունը: Հայաստանը խորհրդային հայտարարելու մասին 1920 թ. նոյեմբերի 29-ի հռչակագրում հայ կոմունիստները շեշտում էին, որ անողոք պայքար են ծավալելու «ապիկար և վայրենի» Դաշնակցություն կուսակցության դեմ, որն իր «ոճրագործ» քաղաքականությամբ ամայեցրել, ավերել և կործանել է երկիրը: Հայհեղկոմի անդամ Ավիս Նուրիջանյանը խոստովանում է. «Մեր հեղաշրջման գլխավոր նպատակն է՝ ամենաանողոք պայքարը դաշնակների դեմ»:[133]

Հ.Յ. Դաշնակցության դեմ բռնությունների գործադրումը հետապնդում էր ևս մեկ նպատակ՝ ապացուցել թեմալականներին, որոնք Հայաստանի խորհրդայնացումից հետո էլ շարունակում էին թշնամական քաղաքականություն վարել Հայաստանի նկատմամբ և անվստահություն էին հայտնում Հայաստանի նոր իշխանությունների հանդեպ,

---

[131] Коммунист, Ереван, 29 января, 1921.
[132] Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, Եր., 1957, էջ 371:
[133] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 16, թ. 64:

մատնանշելով Դրոյի ներկայությունը կառավարությունում, որ թուրքերի համակրանքը և բարեկամությունը հայցելու համար խորհրդային իշխանությունը պատրաստ է անհաշտ պայքար ծավալել Դաշնակցության դեմ: Բոլշևիկ հայերը կարծում էին, որ հալածանքների ենթարկելով Դաշնակցությունն կուսակցությանը ոչ միայն կամրապնդեն իրենց իշխանությունը, այլև անշահախնդիր բարեկամության գործնական երաշխիքներ կտան քեմալական Թուրքիային, և որ նախատեսվող խորհրդաթուրքական բանակցություններում վերջինս ավելի բարյացակամ կլինի Խորհրդային Հայաստանի նկատմամբ:

1921 թ. հունվարի 15-ին Մոսկվայից ՀԿ(բ)Կ Կենտկոմ ուղղված նամակում Ս. Տեր-Գաբրիելյանը Կենտկոմի անդամներին հուշում է, որ մինչև խորհրդաթուրքական կոնֆերանսը հարկավոր է «ազատվել դաշնակցական ախտից», «անգամ եթե Դրոն և մյուսները միանգամայն անկեղծորեն աշխատում են մեզ հետ»:[134]

Այսպիսով, Դրոյին Հայաստանից հեռացնելու ևս մեկ դրդապատճառ է բացահայտվում՝ հարկավոր էր «հանգստացնել» քեմալականներին: Սակայն դա ոչ մի նշանակություն չունեցավ, թուրքական կողմը մազաչափ անգամ չշեղվեց հակահայկական քաղաքականությունից: ՌՍՖԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինի հետ 1920 թ. դեկտեմբերի 8-ին ունեցած հեռագրագրույցում Գ. Օրջոնիկիձեն իրավացիորեն հուշում է. «Դրոն մեզ օգտակար է, իսկ թուրքերը միևնույնն է պետք է խոսեն անվստահության մասին (Խորհրդային Հայաստանի իշխանությունների նկատմամբ - Կ.Խ.), եթե անգամ Դրոյին հեռացնենք»:[135]

Հայկական բանակի սպաների աքսորի կազմակերպումով բոլշևիկների բռնությունները ոչ միայն չավարտվեցին, այլ ավելի սանձարձակ դարձան՝ նրանց գաղափարախոսները կարծում էին, որ Հայաստանում այլևս չկա այն ուժը, որը կհամարձակվի զսպել իրենց:

Պետք է նշել, որ բացառությամբ Հ.Յ. Դաշնակցության, ազգային մյուս կուսակցությունները կամ ողջունեցին Հայաստանի խորհրդայնացումը և Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական դաշինքի հաստատումը, կամ էլ՝ մնացին միանգամայն լոյալ, թեև իրականում կտրականապես մերժում էին համայնավարական գաղափարախոսությունը: Այսպես՝ Սոցիալ - դեմոկրատական Հնչակյան և Հայ Ռամկավար կուսակցությունները Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրե-

---

[134] ՀԱԱ, ֆ. 4049, ց. 1, գ. 7, թ. 4:
[135] Նույն տեղում, հավաքածու 1, գ. 2, թ. 185:

րից կուսակցական մամուլում պաշտոնապես պաշտպանեցին խորհրդային իշխանությունը Հայաստանում: «Ջերմագին ողջունում ենք կատարած հեղաշրջումը, ստեղծված խորհրդային իշխանությունը Հայաստանում», - նշվում է Հայհեղկոմին ուղղված Ս.Դ. Հնչակյան կուսակցության Երևանի մասնաճյուղի վարչության 1920 թ. դեկտեմբերի 11-ի ողջույնի նամակում:[136]

Հայ ազգային կուսակցությունների մեծ մասը Հայաստանի խորհրդայնացումը կարևորում էր Խորհրդային Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական դաշինքի ստեղծման տեսանկյունից, որովհետև, ինչպես իրավատեսորեն նշում է Ս.Դ.Հ.Կ. Կ.Պոլսի «Երկիր» թերթը. «Հայաստանին փրկարար և նպատակահարմար է այն քաղաքականությունը, որն իրեն կապահովի Ռուսաստանի բարեկամությունը: Նրանից բացի չկա մեկ ուրիշ իրական և մոտիկ ուժ, որի օգնությանը կարելի է դիմել մեր ֆիզիկական և քաղաքական գոյությունը ապահովելու համար»:[137]

Կ. Պոլսում 1920 թ. դեկտեմբերի 13-ին գումարված Հայ Ռամկավար կուսակցության Կենտրոնական վարչության ժողովի կողմից ընդունված շրջաբերականում նշվեց. «Անդրկովկասի ներկայ պայմաններու մէջ հայերը թուրքերու եւ թաթարներու սպառնալիքին հանդէպ իրենց ֆիզիքական գոյութիւնը, ինչպէս նաեւ, կարելի է ըսել, քաղաքական իրաւունքները ապահովելու համար ուրիշ ոեւէ կողմէ գործնական օգնութիւն չեն կրնար ակնկալել, եթէ ոչ Ռուսաստանէն միայն»:[138]

1921 թ. հունվարի վերջերին «ձախերի» ճնշման տակ Հայկոմկուսի պլենումը որոշում է անհաշտ պայքար ծավալել Հ.Յ.Դ.-ի դեմ՝ ձերբակալել և մեկուսացնել կուսակցության բոլոր կոմիտեների և կազմակերպությունների ղեկավարներին, նախկին կառավարության անդամներին: Որոշվում է ձերբակալել նաև «Ժողովրդական ազատություն» կուսակցության ղեկավար անդամներին: Պլենումի որոշումների մասին «ձախերի» ներկայացուցիչներ Ալիխանյանը, Նուրիջանյանը և Դովլաթյանը 1921 թ. հունվարի 27-ին հայտնում են Բաքու՝ Օրջոնիկիձեին: Հունվարի 28-ին Օրջոնիկիձեին դիմում են նաև Կասյանը և Մռավյանը, որոնք դեմ էին արտահայտվել Հայկոմկուսի պլենումի որո-

---

[136] ՀԱԱ, ֆ. 4045, ց. 1, գ. 245, թ. 1:
[137] Երկիր, Կ. Պոլիս, դեկտեմբերի 28, 1920:
[138] Դասրիանեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890էն 1940), Եր., 2003, էջ 275:

շումներին: Կասյանը և Մռավյանը հուշում են, որ բռնությունների քաղաքականությունը հղի է ծանր հետևանքներով, այն «ոչ միայն հեղինակազրկում է խորհրդային իշխանությունը բնակչության աչքում, այլև կարող է հանգեցնել անկազմակերպվածության և անիշխանության»:[139]

Օրջոնիկիձեի պատասխանը չի հապաղում, 1921 թ. փետրվարի 1-ին նա և Մ. Օրախելաշվիլին Կովկասյան բյուրոյի անունից, որը, փաստորեն, դատավորի դեր էր ստանձնել կողմերի միջև, Ավիսին և Կասյանին հայտնում են բյուրոյի որոշման մասին: Նրանում մասնավորապես նշվում է. «Քաղաքական իրադրությունը հրամայաբար պահանջում է անողոք պայքար մղել Դաշնակցություն կուսակցությունը լիակատար լիկվիդացնելու համար, հարկավոր է մեկուսացնել կազմակերպությունների ղեկավարներին...»: Կովկասյան բյուրոն միաժամանակ զգուշացնում է, որ «Հակաժողովրդական կուսակցության լիկվիդացման համար մղվող պայքարը ոչ մի դեպքում չպետք է վերածվի թեկուզև դաշնակցական անցյալով մտավորականության դեմ հախուռն պայքարի»:[140]

ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի այս որոշում-հրահանգից հետո Հայաստանում զանգվածային ձերբակալություններ են սկսվում, դրանցից զերծ չի մնում նույնիսկ հայ մտավորականությունը: Ձերբակալելով և բանտերը լցնելով հարյուրավոր քաղաքանտարկյալներով, հայ բոլշևիկները զգուշացնում են, որ դաշնակների կողմից հակախորհրդային շարժում ծավալելու և իշխանությունը զավթելու աննշան փորձի դեպքում՝ կգնդակահարեն պատանդներին և կդիմեն ռազմահեղափոխական ժամանակի բոլոր խիստ միջոցների կիրառմանը՝ անգամ նրանց ընտանիքների անդամների նկատմամբ: Այդ մասին է նշվում ՀՍԽՀ Չեկայի նորանշանակ նախագահ Ծ. Ամիրխանյանի փետրվարի 10-ի հայտարարության մեջ:[141]

Փետրվարի 13-ին Հայհեղկոմի նախագահին ուղղված զեկուցագրում Ամիրխանյանը տեղեկացնում է, որ ձերբակալվել է 106 մարդ, միաժամանակ հուշում, որ նրանցից շատերը... անմեղ են:[142]

---

[139] Տես Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման մի քանի հարցեր, էջ 20:
[140] Ալիխանյան Մ., Գ.Կ. Օրջոնիկիձեն և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, Եր., 1974, էջ 113:
[141] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը... Հայաստանում, էջ 476:
[142] Նույն տեղում, էջ 480:

Մոսկվայում կուսակցական համագումարին մասնակցող հայ կոմունիստներին 1921 թ. մարտի 9-ին ուղղված նամակում Ա. Մռավյանը նշում է, որ փետրվարի կեսերին խորհրդային իշխանության գործունեությունը Հայաստանում «նշանավորվեց դաշնակների զանգվածային ձերբակալություններով. Երևանում ձերբակալվել էին 200-ից ավելի, Հայաստանի այլ շրջաններում՝ նույնը, ձերբակալում էին տասնյակներով, հարյուրներով, շատ դեպքերում՝ անմեղների»:[143]

Ձերբակալվածների մեջ էին նախկին նախարարապետներ Հովհաննես Քաջազնունին և Համազասպ Օհանջանյանը, ազգային գործիչներ Նիկոլ Աղբալյանը և Լևոն Շանթը, հայ զորահրամանատարներ Համազասպ Սրվանձտյանը և Նիկոլայ Կորգանովը, շատ ու շատ ուրիշներ: Վերջին երկուսը, մի քանի տասնյակ այլ բաղբանտարկյալների հետ միասին զնդակահարվեցին բոլշևիկյան բանտերում, մյուսներին փրկեց փետրվարյան ապստամբության հաղթանակը:

Հայաստանում խորհրդային իշխանության առաջին շրջանում բոլշևիկների գործադրած բռնությունների դրդապատճառներից էր ոչ միայն «ներքին հակառակորդի ոչնչացման անհրաժեշտությունը», այլև արտաքին վտանգի «ուրվականը»: 1920-1921 թթ. ձմռանը Մոսկվայում շարունակում էր տիրել այն կարծիքը, որ պատերազմը Կովկասում անխուսափելի է: Խորհրդային իշխանությունները քաջ գիտակցում էին, որ Հայաստանը և Վրաստանը դեռևս կարող են օգտագործվել Անտանտի և Թուրքիայի կողմից որպես հենադաշտ՝ տարածաշրջանը Ռուսաստանից անջատելու համար: Հայաստանը թեև խորհրդային էր, սակայն բոլշևիկների դիրքերն այնտեղ դեռևս ամուր չէին, իսկ տարածաշրջանում խորհրդային զորքերի անբավարար քանակությունը թույլ չէր տալիս Ռուսաստանի իշխանություններին հանգիստ լինել Խորհրդային Հայաստանի համար: Անհանգստանալու պատճառներ համայնավարներն իրոք որ ունեին. չէ որ Հայաստանում խորհրդային իշխանության առաջին ամիսներին նրանք չկարողացան հայ ժողովրդին տրամադրել առատ խոստացած թե՛ ռազմական և թե՛ տնտեսական այն օգնությունը, որի մասին նշում էին երկիրը խորհրդայնացնելու նախօրեին: Հայաստանի խորհրդայնացումից հետո չփոխվեց նաև թուրքերի թշնամական քաղաքականությունը Հայաստանի՝ որպես Ռուսաստանի դաշնակցի, նկատմամբ: Ավելին, Խորհրդային Հայաստանի զինագրավված շրջաններում շարունակվում էին

[143] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 79, թ. 1:

թուրքական բանակի ոճրագործությունները: Նման պայմաններում հակախորհրդային ելույթները և խորհրդային իշխանության տապալումը Հայաստանում ոչ միայն չէր բացառվում, անգամ միանգամայն հավանական էր դառնում: Հանձին հայկական բանակի սպայության և Հ.Յ. Դաշնակցության Հայաստանում առկա էր մնում այն ուժը, որը կարող էր իր վրա վերցնել ինչպես հակախորհրդային պայքարի կազմակերպումը, այնպես էլ՝ անմիջական ղեկավարումը: Պատահական չէ, որ 1921 թ. հունվարի 12-ին ՌՍՖԽՀ արտգործժողկոմ Չիչերինը, հրավիրելով Ստալինի ուշադրությունը Հայաստանի և այնտեղ գտնվող ռուսական զորամասերի աղետալի դրության վրա, հուշում է. «Հնարավոր է անհրաժեշտ լինի ետ կանչել մեր զորամիավորումները (Հայաստանից - Կ.Խ.) և դաշնակները, որոնց հետ թուրքերն իրր թե բանակցություններ են վարում, կարող են վերստին հայտնվել իշխանության գլխին: Դա շատ լուրջ հարված կլինի Արևելքում խորհրդային իշխանության հեղինակությանը»:[144] Երկու օր անց Չիչերինը կրկին տեղեկացնում է Ստալինին. «Շեյնմանը (ՌՍՖԽՀ ներկայացուցիչը Վրաստանում - Կ.Խ.) ինչպես Անտանտի, այնպես էլ Քեմալի քաղաքականությունը բնութագրում է որպես անքաքույց ձգտում՝ ստեղծել մեր նկատմամբ թշնամաբար տրամադրված Կովկասյան դաշնություն»:[145]

Իր հերթին Ա. Շեյնմանը 1921 թ. փետրվարի 2-ին հայտնում է Գ. Օրջոնիկիձեին, որ իրեն հասած հավաստի տեղեկությունների համաձայն՝ առաջիկա գարնանը Կովկասում ապստամբություն է սպասվում: Այս հաղորդագրության հիման վրա Օրջոնիկիձեն փետրվարի 6-ին շտապում է հայտնել Մոսկվա՝ Լենինին. «Կրկին ու կրկին տեղեկացնում եմ Ձեզ, որ գարնան մոտենալու հետ դրությունը Կովկասում ավելի ու ավելի սպառնալից է դառնալու»:[146]

Կասկածից վեր է, որ Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի իշխանությունները նշված սպառնալիքները չեզոքացնելու լավագույն տարբերակ էին ընտրել. նախ՝ սպաների աքսորի միջոցով հայկական բանակը զրկել ազգային նկարագրից, ապա՝ «լիկվիդացնել» ազգային ուժերը, առաջին հերթին «գաղափարական թշնամի» Հ.Յ. Դաշնակցությունը:

---

[144] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 7, թ. 26:
[145] Նույն աեղում, թ. 27:
[146] Տես Եսայան Ա., Հայաստանի միջազգային իրավիճակը 1920-1922 թթ., Եր., 1967, էջ 179:

Սակայն բռնությունների միջոցով չեզոքացնել բոլոր «սպառնալիքները» խորհրդային իշխանություններին, այնուհանդերձ, չհաջողվեց, ընդհակառակը՝ Հայաստանում բոլշևիկների կողմից իրականացված բռնությունները հանգեցրեցին ներքաղաքական իրադրության կտրուկ սրմանը:

2. 1921 թվականի փետրվարյան ապստամբությունը Հայաստանում և Խորհրդային Ռուսաստանը

Հայաստանի խորհրդայնացումից ընդամենը երկուս ու կես ամիս անց, 1921 թ. փետրվարի կեսերին երկրում հակախորհրդային ապստամբություն բռնկվեց: Նոր իշխանությունների քաղաքականությունից դժգոհ ժողովրդական զանգվածները ոտքի կանգնեցին և մի քանի օրում Հայաստանի կենտրոնական մասերում տապալեցին խորհրդային կարգերը: Եթե Հայաստանի խորհրդայնացումը փրկել էր երկիրը և ժողովրդին թուրքական զորքերի հնարավոր մահաբեր առաջխաղացումից դեպի Արարատյան դաշտավայրը և երկրի խորքերը, ի վերջո՝ վերջնական կործանման վտանգից, ապա խորհրդային իշխանության առաջին ամիսներին Հայաստանի ո՛չ քաղաքական և ո՛չ էլ սոցիալ-տնտեսական դրությունը չբարելավվեց, ընդհակառակը՝ էլ ավելի վատթարացավ: Քեմալական զորքերը չէին շտապում հեռանալ Հայաստանի սահմաններից, նրանց կողմից զինազրկված շրջաններում շարունակվում էր հայ ժողովրդի անխնա կողոպուտը, հալածումը և կոտորումը: Խորհրդային իշխանությունների կողմից առատ խոստացված օգնության փոխարեն Հայաստան էր մտել ընչաքաղց Կարմիր բանակը, իսկ կոմունիստ հայերը երկրում հաստատեցին բռնությունների և բռնագրավումների վրա հիմնված բոլշևիկյան ամենատիրություն: Հայ ժողովուրդը խաղաղ աշխատանքի, օգնության ծարավով էր լցված դեպի նոր իշխանությունները, իսկ նրանից պահանջեցին և բռնագրավեցին վերջին ունեցվածքը՝ «Ընկեր Լենինին», «Պիտերի և Մոսկվայի պրոլետարիատին» որպես «Եղբայրական օգնություն» ուղարկելու համար:

Բռնությունները, ինչպես նշվեց, առավել սաստկացան 1921 թ. հունվարի սկզբներից, երբ խորհրդային իշխանությունների մոտ ամրապնդվեցին կասկածները այն մասին, որ Հայաստանում հակախորհրդային ելույթներ են նախապատրաստվում: Հայ կոմունիստնե-

ից ոմանք հանդես էին գալիս Հայաստանում քաղաքացիական պատերազմի անհրաժեշտության մասին կոչերով, գտնում էին, որ եթե Խորհրդային Ռուսաստանն անցել է դրա բովով, ապա այն անխուսափելի է նաև Հայաստանի համար, դա դիտում էին որպես սոցիալիստական հեղափոխության զարգացման անհրաժեշտ պայման: Կուսակցական տպագիր օրգան «Կոմունիստ»-ում երիտասարդ հայ կոմունիստները («Ձախ» թևի ներկայացուցիչներ Ա. Նուրիջանյանը, Գ. Աքարբեկյանը, Գ. Ալիխանյանը, Շ. Ամիրխանյանը և այլք - Կ.Խ.) «աղմկալի, ճոճղան տոնով քաղաքացիական պատերազմի կոչ էին անում».[147] - 1921 թ. մարտի 9-ի նամակում նշում է Ա. Մռավյանը: Եվ դա իրոք այդպես էր, բերենք մեկ օրինակ՝ 1921 թ. փետրվարի 11-ի «Պետք է հարթենք» խմբագրականում «Կոմունիստ»-ը գրում է. «Մենք սսկված հակահեղափոխությանը կանչում ենք վճռական մարտի»:[148] Նման սադրիչ բովանդակությամբ հոդվածներ թերթի էջերին պարբերաբար տպագրվում էին այն դեպքում, երբ, ինչպես խոստովանում է Ա. Մռավյանը, «Դաշնակներին մենք ձեռնոց նետեցինք այն պահին, երբ Հայաստանում չունեինք իրական ռազմական հենարան», բանգի հայկական բանակի վերակազմավորման գործում ճակատագրական սխալ գործեցինք, և բանակը «մեր իշխանության երկուս ու կես ամսում ոչ միայն չդարձավ մերը, այլև՝ վճռորոշ պահին դավաճանեց մեզ»:[149] Հայաստանում տեղակայվող 11-րդ Կարմիր բանակի 20-րդ դիվիզիայի հրամանատար Մ. Վելիկանովը նույնպես հաստատում է, որ «Հայկական բանակի մեծ մասն անցել էր խռովարարների կողմը»:[150]

Ինչ վերաբերում է ռուսական զորամասերին, ապա դրանք դուրս էին բերվել երկրից: Ինչպես արդեն նշել ենք, դեռևս 1921 թ. հունվարի 12-ին ՌՍՖԽՀ արտգործժողկոմ Չիչերինը հուշում էր Ստալինին, որ «Հնարավոր է անհրաժեշտ լինի ետ կանչել մեր զորամիավորումները (Հայաստանից - Կ.Խ.) »:[151]

Հայաստանից ռուսական զորամասերը հեռացնելու որոշումը պայմանավորված էր մի շարք պատճառներով. նախ՝ երկրում օրեցոր խորացող սոցիալ-տնտեսական ճգնաժամը ծանր էր անդրադառնում ոչ միայն բնակչության, այլև բանակային զորամասերի վրա, երկրորդ՝ Վրաստանի խորհրդայնացման խնդիրը հրատապ էր դարձնում Կար-

---

[147] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 79, թ. 1:
[148] Կոմունիստ, Երևան, փետրվարի 11, 1921:
[149] ՀԱԱ, ֆ. 161, ց. 2, գ. 79, թ. 2-ի շրջերես:
[150] Նույն տեղում, ֆ. 1022, ց. 8, գ. 330, թ. 3:
[151] Նույն տեղում, հավաքածու.1, գ. 7, թ. 26:

միր բանակի ուժերի կենտրոնացումը նրա սահմաններին: Խորհրդային իշխանությունները համոզված էին նաև, որ հայկական բանակի սպաների աքսորումը Հայաստանից, ազգային հայտնի գործիչների ձերբակալությունները, թուրքական վտանգը, ինչպես նաև Վրաստանի հասունացող խորհրդայնացումը կկանխեն հնարավոր հակախորհրդային ելույթները Հայաստանում: Այսպես, 1921 թ. փետրվարի 16-ին տեղեկանալով Ավիս Նուրիջանյանից Հայաստանում տիրող պայթունավտանգ իրադրության մասին, Գ. Օրջոնիկիձեն նրան հանգստացնում է. «զուսաբացին կհարված ենք Վրաստանին և այն ժամ մեր առջև կբացվեն բոլորովին այլ հեռանկարներ»:[152]

Սակայն բոլշևիկյան ղեկավարները սխալվեցին իրենց կանխատեսումներում, Հայաստանում խորհրդային իշխանությունների բռնությունները ի վերջո հանգեցրեցին փետրվարյան ժողովրդական ապստամբությանը: Այն ժողովրդի հուժկու ընդվզումն էր ընդդեմ խորթ և բիրտ ուժի, արժանապատվությունը պահպանելու ձգտում էր:

Փետրվարի 16-18-ը ապստամբությունն արագ ընդգրկեց Հայաստանի կենտրոնական մի շարք շրջանները. Կոտայքը, Թալինը, Բաշ-Գյառնին, Դարալագյազը, Բաշ-Ապարանը և այլն: Նշված շրջաններում խորհրդային իշխանությունը տապալելուց հետո ապստամբները ընդհուպ մոտենում են Երևանին:

Խորհրդային իշխանությունները խուճապի մեջ էին, արդեն փետրվարի 17-ին ՀՍԽՀ Կարմիր բանակի հրամանատար Մոլկաչանովը հաղորդում է Բաքու՝ 11-րդ բանակի ռազմհեղկոմին. «Ապստամբությունը սպառնալի բնույթ է կրում», «Հարկավոր է ռուսական զորամասերի խոշոր միավորումներ մտցնել (Հայաստան-Կ.Խ.)»:[153] Սակայն արդեն հաջորդ օրը, փետրվարի 18-ին, ՀՍԽՀ պետական և կուսակցական մարմինները իրենց հավատարիմ բանակային զորամասերի ուղեկցությամբ թողեցին Երևանը և «Ազատամարտ» ու «Վարդան Զորավար» զրահագնացքների պաշտպանության ներքո հեռացան դեպի Ղամարլու (Արտաշատ) - Վեղի-Բասար (Արարատ)՝ նրանց թիկունքում Խորհրդային Նախիջևանն էր: Այսպիսով, ինչպես իրավացիորեն նկատում է խորհրդային պատմաբան Բ. Բորյանը, ապստամբությունը ծագելուց անմիջապես հետո, հասկանալով իրենց թուլությունը, ՀՍԽՀ իշխանություններն օգնության խնդրանքով դիմեցին Խորհր-

---

[152] Տե՛ս Ալիխանյան Ս., Գ.Կ. Օրջոնիկիձեն և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, Եր., 1974, էջ 118-119:
[153] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 218, թ. 1:

դային Ռուսաստանին և, «փոքրաթիվ զորքերի պաշտպանության ներքո դիմելով փախուստի, Հայաստանի փրկության գործը հանձնեցին Կարմիր բանակի ձեռքը»:[154]

Չհանդիպելով որևէ լուրջ դիմադրության, ապստամբները փետրվարի 18-ին մտնում են Հայաստանի մայրաքաղաք: Երևանում ստեղծվում է իշխանության նոր մարմին՝ Հայրենիքի փրկության կոմիտե, Առաջին Հանրապետության վերջին նախարարապետ Սիմոն Վրացյանի նախագահությամբ: Մինչև փետրվարի վերջը կոմիտեի իշխանությունը տարածվեց Հայաստանի կենտրոնական և հարավային շրջանների վրա. Էջմիածին, Աշտարակ, Ախթա, Նոր-Բայազետ, մայրաքաղաք Երևան: Խորհրդային իշխանությունը կանգուն մնաց Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջաններում. Համամլու (Սպիտակ), Ղարաքիլիսա (Վանաձոր), Դիլիջան, Շամշադին (Տավուշ): Ինչպես գիտենք՝ շարունակում էր ինքնավար մնալ Սյունիքը:

Ստանձնելով իշխանությունը Հայաստանում և գիտակցելով, որ անհնար է միայնակ դիմակայել Խորհրդային Ռուսաստանին, որն, անշուշտ, ձգտելու է վերականգնել խորհրդային իշխանությունը Հայաստանում, Հայրենիքի փրկության կոմիտեն փորձում է համագործակցություն հաստատել արտաքին որևէ ուժի հետ: Եվ քանի որ Արևմուտքի օգնությունն այլևս չէր ակնկալվում, կոմիտեն անմիջապես կապի մեջ է մտնում Վրաստանի մենշևիկյան իշխանությունների հետ: Վերջիններս առաջարկում են առանց հապաղելու ընդհանուր պայքար ծավալել Խորհրդային Ռուսաստանի դեմ և խոստանում՝ «հարվածել բոլշևիկներին թիկունքից»:[155] Սակայն Վրաստանի խորհրդայնացումը կանխում է հայ-վրացական հակաբոլշևիկյան համագործակցությունը:

Հակախորհրդային պայքարում միայնակ չմնալու համար Հայրենիքի փրկության կոմիտեն փորձում է համագործակցություն հաստատել Կովկասի ժողովուրդների հետ և Ռուսաստանի դեմ պայքարը դարձնել համակովկասյան: Սակայն դա նույնպես ապարդյուն է անցնում, որովհետև, ինչպես հայտարարում է Գ. Օրջոնիկիձեն, «Վրաստանում խորհրդային իշխանության հաստատումը միանգամից վերացրեց ապստամբությունը Դաղստանում և կանխորոշեց դաշնակցական ապստամբության ճակատագիրը Երևանում»:[156]

---

[154] Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, часть 2, М.-Л., 1929, с. 159.

[155] ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 28, թթ. 14,17:

[156] Օրջոնիկիձե Գ.Կ., Ընտիր հոդվածներ և ճառեր, Եր., 1950, էջ 59:

Հայրենիքի փրկության կոմիտեն օգնության խնդրանքով դիմեց նաև Թուրքիայի քեմալական իշխանություններին: Ս. Վրացյանը վերջիններիս հիշեցնում է, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի համաձայն. Հայաստանին սպառնացող արտաքին կամ ներքին վտանգի և հայկական կառավարության խնդրանքի դեպքում՝ թուրքերը պարտավորվել են զինված օգնություն տրամադրել վերջինիս:

Այսպիսով Վրացյանը փորձում էր վերակենդանացնել մի փաստաթուղթ, որով հարցականի տակ էր դրված Հայաստանի՝ որպես ինքնուրույն պետություն, գոյությունը: Եվ պատահական չէ, որ վրացյանական Կոմիտեի պաշտոնաթերթ «Ազատ Հայաստանը» իր էջերից քարոզում է հայ-թուրքական բարեկամություն և համերաշխություն, իսկ Կոմիտեի մարտի 8-ի որոշումով թերթը պետք է հրատարակվեր նաև թուրքերեն լեզվով:[157]

1921 թ. մարտի 18-ին օգնության հերթական խնդրանքով դիմելով Հայաստանում քեմալականների ներկայացուցիչ Բեհաետտին Բեյին, Վրացյանը հույս է հայտնում, որ Հայաստանը կստանա «տաճիկ ժողովրդի գործուն աջակցությունը, որովհետև տաճիկ ժողովրդի կենսական շահն էլ պահանջում է Հայաստանի հաղթական դուրս գալն այս կռվից և անկախ մնալը»:[158]

Զարմանալ կարելի է Վրացյանի քաղաքական կարճատեսության վրա, ինչպես կարելի էր ակնկալել, որ թուրք-քեմալականներն օգնության կհասնեն Հայաստանին և նրա համար կառճակատվեն Խորհրդային Ռուսաստանի հետ, որից ոչ միայն շոշափելի չափերի ռազմամթերք և ֆինանսական օգնություն էին ստանում, այլև քաղաքական մեծ աջակցություն միջազգային ասպարեզում: Չմոռանանք նաև, որ նույն օրերին Մոսկվայում ընթացող ռուս-թուրքական կոնֆերանսին թուրքական կողմը թեժ «առևտուր» էր ծավալել այդ օգնության չափերը բազմապատկելու համար:

Քեմալականները Վրացյանին թեև խրախուսեցին հակախորհրդային պայքարի, խորամանկորեն խոստացան աջակցել, բայց, իհարկե, դրանից այն կողմ չանցան:

Խորհրդային Ռուսաստանի իշխանություններին մտահոգում էր Հայաստանում տիրող անկայուն իրադրությունը, Գ. Չիչերինը նշում է, որ Հայաստանում դաշնակների հայտնվելը իշխանության

---

[157] ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 5, թ. 30:
[158] Նույն տեղում, գ. 9, թ. 66-ա:

գլխին՝ «դա շատ լուրջ հարված է խորհրդային իշխանության հեղինակությանն Արևելքում»:[159]

Խորհրդային իշխանությունների մոտ տիրապետող էր այն կարծիքը, որ հակախորհրդային ապստամբությունը Հայաստանում, «Փրկության կոմիտեները» Աղրբեջանում, Լեռնականների հանրապետությունում՝ «Դա ամենուրեք Կովկասում խորհրդային իշխանության դեմ ապստամբություն բարձրացնելու մեկ միասնական ծրագիր է»:[160]

Եվ ահա այդ «ծրագրի» առաջամարտիկի դերին, կարծես, հավակնում էր... Հայրենիքի փրկության կոմիտեն և Սիմոն Վրացյանը, մեկ առիթով նա խոստովանում է. «Մենք, այո, աշխատում ենք մեր պայքարը հանել հայկական շրջանակներից և դարձնել համակովկասյան: Մենք ձգտում ենք համերաշխություն առաջ բերել Կովկասյան ժողովուրդների միջև և հաշտվել տաճիկների հետ: Սա մեր քաղաքականության անկյունաքարն է»:[161] Վրացյանի «ծրագրերը», եթե իրագործվեին, ապա, ինչպես ճիշտ նկատում է ակադեմիկոս Գ. Գալոյանը, «Հանգեցնելու էին ամբողջ Անդրկովկասի անջատմանը Խորհրդային Ռուսաստանից»:[162]

Այսպիսով, Վրացյանը հավակնում էր քեմալական Թուրքիայի հովանավորությամբ ստանձնել տարածաշրջանում հակախորհրդային պայքարի ղեկավարումը, և դա այն դեպքում, երբ անգամ Խորհրդային Ռուսաստանի կատաղի թշնամի Անգլիան փորձում էր բարիդրացիական հարաբերություններ պահպանել վերջինիս հետ:

1922 թ. մայիսի 30-ին Վենետիկից Վրացյանին ուղարկած նամակում հայ մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանը, չթաքցնելով զայրույթը, գրում է. «Հայաստանը՝ հացից, ջրից զուրկ այդ ողբալի երկիրը, զենք է խաղացնում խենթացած Ռուսիայի դեմ... Երևանի կառավարությունը չպետք է ժամավաճառ լիներ և կորցներ ստվերի համար Ղարս, Իգդիր, Կողբ և տասնյակ հազարավոր կյանքեր... Հիմա. – Հիմա ամենալավ լուծումն է, որ եղավ. միայն բոլշևիկ Հայաստանը կարող է իր բացասական կողմերով հանդերձ, պահել հայի գոյությունը»:[163]

---

[159] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 7, թ. 26:
[160] Օրջոնիկիձե Գ.Կ., Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 49:
[161] Ասպարեզ, սեպտեմբերի 27, 1921:
[162] Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, էջ 379-380:
[163] Տե՛ս Վրացյան Ս., Հին թղթեր, նոր պատմության համար (Հավելված՝ Ավ. Իսահակյանի նամակները), Բեյրութ, 1962:

Ինչևէ, Հայաստանում փետրվարյան ապստամբությունը ճնշելու գործի կազմակերպումը ստանձնում է ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն: Վերջինիս ցուցումով Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջաններում, ուր պահպանվում էր խորհրդային իշխանությունը, փետրվարի 26-ին ստեղծվում է կառավարման նոր մարմին՝ Ղարաքիլիսա - Դիլիջան գավառների ռազմահեղափոխական կոմիտե, Գևորգ Աբարբեկյանի նախագահությամբ: Ռազմահեղկոմի տրամադրության տակ է դրվում 11-րդ Կարմիր բանակի զորամիավորում՝ Ղազախ-Դիլիջան շրջանի զինվորական պետ Ա. Շիրմախների հրամանատարությամբ: Այսպիսով Հայաստանում փետրվարյան ապստամբության ճնշումը իրականացվելու էր 11-րդ Կարմիր բանակի ուժերով, քանզի ՀՍԽՀ պետական և կուսակցական մարմինները՝ իրենց հավատարիմ մնացած փոքրաթիվ բանակային ուժերով, պաշարված էին ապստամբների կողմից Ղամարլու - Վեղի-Բասար շրջանում և ստիպված էին հոգալ սեփական պաշտպանության մասին: Նրանց փրկությունը նույնպես կախված էր 11-րդ բանակի հարձակման հաջողությունից:

1921 թ. մարտի սկզբին 11-րդ բանակի հրամանատարությունը բացում է «Հյուսիսային ճակատը» և պատրաստվում Վրաստանի ու Աղրբեջանի կողմից անցնել հարձակման, սակայն ճանապարհների անանցանելիության պատճառով հարձակումն անընդհատ հետաձգվում է: Միաժամանակ, օրի օրի ծանրանում էր Ղամարլու - Վեղի-Բասարում պաշարված խորհրդային ուժերի դրությունը: Հայտնվելով դժվարին կացության մեջ վերջիններիս ղեկավարները բազմաթիվ սրտաճմլիկ հեռագրեր են հղում Բաքու և Թիֆլիս՝ Օրջոնիկիձեին, 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Ա. Գեկկերին, որոնցում ոչ միայն խնդրում են օգնել իրենց սննդամթերքով և ռազմամթերքով, այլև «պահանջում են», որպեսզի 11-րդ բանակի զորամասերը անհապաղ հարձակվեն Երևանի ուղղությամբ: Սակայն, ինչպես հուշում է մարտի 16-ի հեռագրում Ավիս Նուրիջանյանը, «11-րդ բանակի շտաբը հանցագործ կերպով լռում է և չի արձագանքում մեր աղաչանքներին»:[164]

11-րդ բանակի ռազմահեղխորհրդին օգնության խնդրանքով դիմում են նաև Կասյանը և Մոլկաչանովը, 1921 թ. մարտի 20-ի հեռագրում նրանք շեշտում են, որ այսուհետ միայն Ռուսաստանի օգնությունից է կախված իրենց լինել կամ չլինելու հարցը:[165]

---

[164] ՀԱԱ. ֆ. 1022, ց. 5, գ. 375, թթ. 3, 5:
[165] Նույն տեղում, ց. 2, գ. 268, թ. 1:

Վերջապես, ՌՍՖԽՀ Ժողկոմխորհի նախագահ Վ. Լենինի անմիջական ցուցումով՝ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Ղամարլու - Վեղի-Բասարում պաշարված հայկական խորհրդային ուժերի համար հատկացնում է 150 հազար ռուբլի (ոսկով) օգնություն: 1921 թ. մարտի 29-ին ռուս օդաչուներ Վ. Մելնիկովը և Ռ. Կուդրինը հերոսական ջանքերի շնորհիվ օգնությունը՝ 47 կգ. ոսկի, հասցնում են պաշարվածներին: Նույն օրը Հայաստանի Կարմիր բանակի հրամանատար Մոլկաչանովը օգնության համար շնորհակալական հեռագիր է հղում Ա. Գեկկերին:[166] Ռուսական ոսկին օգտագործվեց Պարսկաստանում պարենամթերք գնելու համար, որն էլ պաշարվածներին փրկեց սովի ճիրաններից:

Եթե ապստամբական ուժերի և խորհրդային զորքերի միջև ռազմական գործողությունների առաջին շրջանն ընթանում էր կողմերի փոփոխակի հաջողություններով, ապա Վրաստանից և Ադրբեջանից կարմիրբանակային հիմնական զորամասերի Հայաստան վերադարձնալուց հետո ապստամբների պարտությունը կանխորոշված էր:

Մինչ Հայրենիքի փրկության կոմիտեի զինված ուժերի վրա վճռորոշ հարձակման անցնելու հրամանի արձակումը, Կարմիր բանակի ռազմհեղափոխորհրդի անդամ Գ. Օրջոնիկիձեն՝ ձգտելով կասեցնել ռազմական գործողությունների ծավալումը, մարտի 20-ին վերջնագիր է ներկայացնում Ս. Վրացյանին, պահանջում «Անմիջապես դադարեցնել անհույս դիմադրությունը և վերջնականորեն վայր դնել զենքերը»:[167] Օրջոնիկիձեի միջնորդությամբ մարտի 21-ին դիվանագիտական առաքելությամբ Թիֆլիսից Երևան է ժամանում հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Քանի որ Օրջոնիկիձեի վերջնագիրը մնում է անպատասխան, իսկ Թումանյանի առաքելությունը՝ անարդյունք, 1921 թ. մարտի 25-ից Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի զորամասերը վճռական հարձակում են ձեռնարկում Երևանի ուղղությամբ: Երևանյան ուղղության Կարմիր զորքերի հրամանատար Մ. Վելիկանովի (վերջինիս վրա էր դրված Երևանը գրավելու և ապստամբությունը ճնշելու խնդիրը) մարտի 30-ի հրամանում նշվում է. ապրիլի 1-ի առավոտյան գրավել Էջմիածինը, մոտենալ Երևանի մատույցներին, փորձել գրավել նաև Բաշ-Գյառնին՝ «հակառակորդի նահանջը դեպի Զանգեզուր կանխելու նպատակով»:[168]

---

[166] ԲՀԱ, Երևան, 1980, թիվ 2, էջ 51:
[167] Красная звезда, Тифлис, 23 мая, 1921, № 19.
[168] ԲՀԱ, Երևան, 1980, թիվ 2, էջ 52-53:

Չստանալով ակնկալվող աջակցությունն ու օգնությունը քեմալական Թուրքիայից, չունենալով բավարար քանակությամբ զինված ուժեր խորհրդային բանակին դիմակայելու համար, Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Վրացյանը մի վերջին հուսահատ դիվանագիտական քայլն է ձեռնարկում Կարմիր բանակի հարձակումը կանգնեցնելու նպատակով: ՌՍՖԽՀ արտգործժողկոմ Չիչերինին ուղղված մի շարք դիմումներում Վրացյանը տեղեկացնում է, որ ռուսական բանակի հարձակումը ուղեկցվում է խաղաղ բնակչության թալանով և կոտորածով: Համոզվածություն հայտնելով, որ այս ամենի մասին Մոսկվայում անտեղյակ են, Վրացյանը «պահանջում է հանուն մարդկայնության վերջ տալ բարբարոսական արշավանքին դեպի Հայաստան»:[169] Մեկ այլ հեռագրում Վրացյանը հույս է հայտնում, որ «Խորհրդային Ռուսաստանը հայ ժողովրդին ցույց կտա վիճելի խնդիրները լուծելու ավելի կուլտուրական և ավելի արժանավայել միջոցներ»:[170] Հայտնի չէ՝ հեռագրերը հասցեատիրոջը հասել են, թե՞ ոչ, սակայն, եթե անգամ հասել են՝ ապա որևէ նշանակություն ունենալ չէին կարող, որովհետև, ինչպես շեշտում է մարտի 20-ի վերջնագրում Օրջոնիկիձեն. «Ամեն մեկի համար ամենափոքր իսկ կասկածի ենթակա լինել չի կարող, որ հասել է բանվորագյուղացիական իշխանության միակատար հաղթանակի պահը ամբողջ Անդրկովկասում»:[171]

Սա էր ողջ ճշմարտությունը, որ ժամանակին չընկալեց «Հայրենիքի փրկության» վրացյանական կոմիտեն և ժողովրդական արդար ու խիզախ պոռթկումը վերածեց Խորհրդային Ռուսաստանի հետ անհամաստ և կործանարար կռիվների:

Մինչ Վրացյանը մեկը մյուսի ետևից հուսահատ հեռագրեր էր ուղարկում Թուրքիա և Մոսկվա, ԱՄՆ և Լոնդոն, խորհրդային զորքերը մոտենում էին Հայաստանի մայրաքաղաքին: Կարմիր բանակի Երևանյան ուղղության խմբավորման շտաբի ռազմական գործողությունների ապրիլի 1-ի ամփոփագրում նշվում է, որ Երևանի մատույցներում կատաղի մարտեր են ընթանում:[172] Ապրիլի 2-ին Վելիկանովը հերթական հրամանն է արձակում Երևանը գրավելու մասին, հրամայվում է «Գործել վճռականորեն և լինել համառ՝ հակառակորդի զորքերը Երևանից բաց չթողնելու նպատակով», զինվորներին ոգևորելու

---

[169] ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 112:
[170] Նույն տեղում, թ. 41:
[171] Правда Грузии, Тифлис, 26 марта, 1921, № 21.
[172] ԲՀԱ, Երևան, 1980, թիվ 2, էջ 53:

համար հրամանում նշվում է նաև, որ քաղաքը դարձել է «հակահեղափոխության կենտրոնը Կովկասում»:[173]

Շրջափակման մեջ հայտնվելու վտանգից խուսափելու, ավելորդ զոհեր չտալու համար ապստամբները մայրաքաղաքում դիմադրություն առանձնապես ցույց չտվեցին և Հայրենիքի փրկության կոմիտեի գլխավորությամբ Բաշ-Գյառնիով և Դարալագյազով (Վայոց Ձոր) նահանջեցին դեպի Զանգեզուր: Նահանջի միջանցքի անվտանգությունն ապահովված էր Գարեգին Նժդեհի գինված ուժերի կողմից, դա թերևս միակ իրական օգնությունն էր, որ կարողացավ ցույց տալ Հայրենիքի փրկության կոմիտեին և ապստամբներին ինքնավար Սյունիքը: Ինքը՝ Նժդեհը նշում է, որ ազատ Սյունիքը «հոգեբանական երաշխիչներ Հայաստանի փետրվարյան համաժողովրդական ընդվզումի» և ընդգծում, որ պետք էր «փրկության կամուրջ հանդիսանալ բոլշևիզմի գազանից մազապուրծ եղած հայ մտավորականության համար»:[174]

Մեկ այլ առիթով Նժդեհը հուշում է. «Երևանի ապստամբությունը նպատակ չուներ երկար ժամանակով վերականգնելու հանրապետական Հայաստանը: Ավելի պարզ էր նրա առարկան՝ փշրել Խորհրդային բանտերի դռները, ուր հոգևարում էր հայ մտավորականությունը», իսկ այնուհետև ուղի բացեր «մղվելու դեպի Սյունիք»:[175]

Հազարավոր փախստականների մեջ էին բազմաթիվ հայ ազգային գործիչներ, զինվորականներ, հայտնի մտավորականներ, ինչպես նաև քաղաքացիներ և գյուղացիներ: Փրկության կոմիտեն իր հետ տանում էր Հանրապետության գանձերով լի 15 արկղ (հայկական և ռուսական, արտասահմանյան դրամական միջոցներ, թանկարժեք իրեր, ոսկի և այլն): Միանգամայն իրավացի է Արամ Հ. Սիմոնյանը, երբ նշում է, որ «Փրկության կոմիտեն գոնե բարոյական իրավունք չուներ քայքայված ու սոված երկրից դուրս տանելու վերջին միջոցները» և «կատարվածը ոչ մի կերպ չի կարելի արդարացնել»:[176]

1921 թ. ապրիլի 2-ին 11-րդ Կարմիր բանակի զորամասերը մտնում են Երևան, բանտերից ազատ են արձակվում 1000-ից ավելի

---

[173] Տե՛ս նույն տեղում, էջ 54-55:

[174] Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Եր., 2001, էջ 236, 238:

[175] Գարեգին Նժդեհ, Ազատ Սյունիք, «Հայրենիք», 1925, թիվ 9, էջ 84:

[176] Սիմոնյան Ա.Հ., Զանգեզուրի գոյամարտը (1920-1921թթ.), Եր., 2000, էջ 445-446: Այդ մասին մանրամասն տե՛ս նաև, Ջաղեբյան Գ.Ա., Մոտիկ անցյալից, Եր., 1967, էջ 16-20:

ձերբակալվածներ: Նշենք, որ մի խումբ բանտարկյալ կոմունիստների, որպես պատանդների, Փրկության կոմիտեն իր հետ տարավ Զանգեզուր: Բացառությամբ մի քանիսի, նրանք բոլորը, ինչպես նաև Սյունիքի զինված ուժերի կողմից գերեվարված 100-ից ավելի կարմիրբանակայինները, ծանր հալածանքներից հետո գնդակահարվեցին:[177] Ինչևէ՝ բռնությունը բռնություն էր ծնում, իսկ զոհերի մեծ մասը հայեր էին:

Այսպիսով շուրջ 45-օրյա ընդմիջումից և խորհրդայնացումից 4 ամիս անց Հայաստանում (բացի Զանգեզուրից) վերահաստատվեց խորհրդային իշխանությունը: Դա անխուսափելի էր, քանի որ նրա թիկունքին կանգնած էր Խորհրդային Ռուսաստանը և Կարմիր բանակը:

Փետրվարյան ապստամբությունը սթափեցնող ներգործություն ունեցավ խորհրդային իշխանությունների վրա, ստիպեց առավել զգուշորեն իրականացնել խորհրդային իշխանությունը Հայաստանում: 1921 թ. ապրիլի 3-ին Ս. Կասյանը Գ. Օրջոնիկիձեին հուշում է, որ «Հարկավոր է միանգամից սահմանել խելացի գործելակերպ, վերջ դնել քյալլագրգությանը: Հարկավոր է վերակազմավորել Կենտկոմը և Հեղկոմը»:[178] Ապրիլի 4-ին Կասյանին ուղղված պատասխանում Օրջոնիկիձեն հուշում է, որ հարկավոր է հայտարարել ավելի լայն համաներում և հաստատել լիբերալ վարչակարգ: Իսկ մի քանի օր անց տեղեկանալով Կասյանից, որ որոշվել է ապստամբության ակտիվ ղեկավարներին ձերբակալել, Օրջոնիկիձեն նշում է, որ անձամբ ինքը՝ լիակատար համաներման կողմնակից է և հուշում, որ «Այդպիսին է նաև Մոսկվայի տեսակետը»:[179]

Սակայն ՀՍԽՀ հեղկոմի 1921 թ. ապրիլի 10-ի դեկրետով համաներում է շնորհվում ապստամբության ոչ բոլոր մասնակիցներին, այն չի տարածվում ապստամբության ղեկավարների վրա:[180] Այնուհանդերձ, Մոսկվայի և անձամբ Օրջոնիկիձեի համառ ջանքերի շնորհիվ Հայհեղկոմը ապրիլի 24-ի դեկրետով համաներում է շնորհում ապստամբության բոլոր մասնակիցներին՝ ներառյալ ղեկավարներին:

Հայաստանում փետրվարյան ապստամբությունը ճնշելուց և խորհրդային կարգերը վերահաստատելուց հետո Հայաստանի

---

[177] Տե՛ս Սիմոնյան Ա.Հ., Զանգեզուրի զոյամարտը (1920-1921թթ.), էջ 442-446, 462-465:
[178] Տե՛ս Таирян И., 11-ая Красная Армия в борьбе за установление и упрочение советской власти в Армении, Ереван, 1971, էջ 274-275:
[179] Տես նույն տեղում, էջ 276-277:
[180] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, Էջմիածին, 1921, պրակ 2, էջ 10-12:

խորհրդային իշխանությունները ձեռնամուխ են լինում հայկական բանակի աքսորված սպաներին ազատ արձակելու և Հայաստան վերադարձնելու գործին: Այսպես, արդեն 1921 թ. մարտի 26-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղղված նամակում Ալ. Բեկզադյանը հուշում է, որ անհրաժեշտ է հետաքննել սպաների գործը, ազատել նրանց և վերադարձնել Հայաստան:[181]

Նշենք, որ Մոսկվայում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանը Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի թույլտվությամբ 1921 թ. ապրիլին այցելում է Ռյազանի համակենտրոնացման ճամբարը, տեսակցում աքսորված հայ սպաների հետ: Մոսկվա վերադառնալուն պես, Տեր-Գաբրիելյանը նամակով դիմում է Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Չիչերինին: Վերջինս խնդրին կարևոր նշանակություն է տալիս և համապատասխան կարգադրություններ անում: Ս. Տեր-Գաբրիելյանին 1921 թ. ապրիլի 16-ին ուղղված նամակում հուշելով այդ մասին, Չիչերինը միաժամանակ խնդրում է հայտնել իրեն. «Թե ներկայում ի՞նչ վիճակում է նախկին հայ գեներալների և սպաների հարցը: Հարկավոր է, արդյո՞ք, մեր հետագա աջակցությունը նրանց ազատելու և օգտագործելու համար»:[182]

Հայաստանի իշխանությունների հետևողական քայլերը շուտով տվեցին իրենց առաջին արդյունքները, արդեն 1921 թ. մայիսի կեսերից աքսորված սպաներից շատերը ազատ են արձակվում և խմբերով վերադառնում Խորհրդային Հայաստան: Հայրենիքում նրանց ընդունումը և հաշվառումը կարգավորելու նպատակով հրապարակվում է Հայհեղկոմի մայիսի 11-ի համապատասխան որոշումը:[183]

Հայաստանում խորհրդային իշխանությունը վերահաստատելուց հետո քայլեր ձեռնարկվեցին այնտեղ տեղակայվող ռուսական զորամասերի վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ մեղմելու ուղղությամբ: Խմբավորման հրամանատար Վելիկանովի և զինկոմ Կուզնեցովի 1921 թ. ապրիլի 21-ի հատուկ հրամանում նշվում է, որ զորամասերն իրենց այնպես պետք է պահեն, որպեսզի Հայաստանի ողջ բնակչությունը «հարգանքով և սիրով տոգորվի Կարմիր բանակի հանդեպ»: Դրան հասնելու համար հրամայվում է. «Վերջ դնել անպատկառությանը», օգնել գյուղացիությանը դաշտային աշխատանքներում,

---

[181] Տես ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թ. 127:
[182] Տես նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 15, թ. 22:
[183] Տես նույն տեղում, ց. 1, գ. 126, թ. 9:

նրան վերադարձնել բռնագրավված սայլակառքերը, «չվիրավորել բնակչության կրոնական և ազգային զգացմունքները», հիշել, որ Խորհրդային Հայաստանը միանգամայն անկախ է:[184] Ապրիլի 23-ին նման բովանդակությամբ հրաման է արձակվում նաև ՀՍԽՀ բանակային զորամասերի համար՝ այն ստորագրել է ռազմգործժողկոմ Ավիսը:[185]

Փետրվարյան ապստամբությունը ստիպեց Մոսկվայի կենտրոնական իշխանություններին առավել մտահոգվել Հայաստանին օգնություն հատկացնելու և խորհրդային իշխանությունն այնտեղ ամրապնդելու խնդիրներով: 1921 թ. գարնանը Հայաստան են գործուղվում մի շարք փորձառու և հեղինակավոր հայ կոմունիստներ՝ ակադեմիկոս կուսակցական և պետական գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանի գլխավորությամբ: Անդրկովկաս ուղևորվելուց առաջ Ալ. Մյասնիկյանը Մոսկվայում հանդիպում է Վ. Լենինին՝ նրանից ցուցումներ և մաղթանքներ ստանում: Մյասնիկյանի խնդրանքով Լենինն իր մոտեցումները շարադրում է Կովկասի կոմունիստներին ուղղված ապրիլի 14-ի նամակում:[186] Մի շարք կարևոր ցուցումների հետ մեկտեղ, Լենինը խորհուրդ է տալիս ժողովրդի նկատմամբ դրսևորել «ավելի մեղմություն, զգուշություն, զիջողականություն»:[187]

1921 թ. մայիսին ժամանելով Հայաստան, իր առաջին իսկ հրապարակային ծրագրային ելույթում Ալ. Մյասնիկյանը հայտարարեց. «Ծանր է Հայաստանի դրությունը: Այս դրությունից դուրս կգանք, եթե չհակառակվենք աշխատավորության կամքին: Դաշնակների ավանտյուրան պետք է դաս լինի բոլոր նրանց, որոնք դեռ մտածում են հակառակություն ցույց տալ աշխատավորության կամքին»:[188]

Տարիներ շարունակ խորհրդային պատմագրությունը «դաշնակցական արկածախնդրություն» կամ «ավանտյուրա» օտար բառով է որակել 1921 թ. փետրվարյան ապստամբությունը Հայաստանում՝ դրանով իսկ փորձելով հետևանքների ողջ պատասխանատվությունը բարդել Հ.Յ. Դաշնակցություն կուսակցության վրա: Իրականում՝ «արկածախնդրություն» էր բոլշևիկների վարած քաղաքականությունը Հայաստանում խորհրդային իշխանության առաջին ամիսներին: Սա խոստովանում էին հենց իրենք՝ հայ կոմունիստները. 1921 թ. մարտի 29-ին

---

[184] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 307, թթ. 1-3:
[185] ԲՀԱ, Երևան, 1980, թիվ 2, էջ 62-63:
[186] Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, Եր., 1957, էջ 469–470:
[187] Լենին Վ.Ի., ՍԼԾ, հ. 43, էջ 238:
[188] Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, էջ 337:

Գ. Օրջոնիկիձեին ուղղված նամակում Ս. Կասյանը հուշում է, որ Հայաստանի բնակչությունը, որը «աննկարագրելի խանդավառությամբ ընդունեց մեզ դեկտեմբերին, ընդամենը մեկ ամսվա անգործիմաց քաղաքականության և անիշխանության պայմաններում կտրուկ շրջվեց մեզանից և նորից նետվեց դաշնակների գիրկը»: «Այն փաստը, որ դաշնակները դիմանում են մեկ ամսից ավելի, ցույց է տալիս, թե որքան մեծ է ժողովրդի մեծ մասի համակրանքը նրանց նկատմամբ: Մենք պետք է դա խոստովանենք, թեպետ արտաքին աշխարհի համար գոչում ենք միանգամայն այլ բան»:[189] Այս միտքը հաստատում է նաև Ա. Մռավյանը. «Իմ խորին համոզմունքով՝ Կենտկոմի (ՀԿ(բ)Կ – Կ.Խ.) վերջին ամսվա քաղաքականությունը, ժողովրդին թեկուզ մեկ բան տալու մեր անընդունակությունը, բնակչության մեջ հոգեբանական ակնառու հակակրանք առաջացրեց մեր նկատմամբ»:[190]

Հայաստանի կոմունիստների 1-ին համագումարին (հունվարի 26-29, 1922թ.) ունեցած ելույթում ՀՍԽՀ լուսավորության գործերի ժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը հայտարարեց. «Հակահեղափոխությունը ստեղծվեց ոչ թե դաշնակների առանձնասենյակներում, այլ հանդիսացավ մեր քաղաքականության հետևանքը»:[191]

«Ապստամբների հիմնական խնդիրը յուրայինների բանտերից ազատելն էր, որպիսին իրագործելուց հետո ապստամբությունը կարելի էր և պետք էր չշարունակել: - Իրավացիորեն նշում է պրոֆեսոր Վ. Ղազախեցյանը, - Չէ որ հենց ապստամբության ղեկավարներն են խոստովանել իրենց անհուսալիությունը»:[192]

Միաժամանակ՝ ինչ վերաբերվում է Հայրենիքի փրկության կոմիտեի և նրա նախագահ Սիմոն Վրացյանի վարած արտաքին քաղաքականությանը ապստամբության հաղթանակից մինչև նրա պարտությունը, ապա այն, մեղմ ասած, չէր բխում ոչ հայոց պետության և ոչ էլ հայ ժողովրդի շահերից: Սակայն դա այլ խնդիր է, նշենք միայն, որ փետրվարյան ապստամբությունն իր դրական, բայց նաև անժխտելի բացասական հետևանքներով, մեր պատմության էջերից մեկն է՝ հերոսական թե ողբերգական, բայց մեր:

---

[189] ՀԱԱ, ֆ. 4050, ց. 1. գ. 8. թթ. 2-3:
[190] Տես նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 79, թ. 3-ի շրջևես - 4:
[191] Նույն տեղում, ֆ. 1, ց. 2, գ. 2, թ. 10:
[192] Ղազախեցյան Վ.Ն., Հայաստանը 1920-1940 թթ., Եր., 2006, էջ 83:

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՈՐԴ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՍԽՀ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄՅՈՒՄ 1921 Թ.

1. Հանրապետությունների ռազմաքաղաքական համագործակցությունը Լոռու Չեզոք գոտին ազատագրելու գործում: Վրաստանի խորհրդայնացումը

Հայաստանի խորհրդայնացումով ռազմաքաղաքական նպաստավոր իրավիճակ ստեղծվեց հայ-վրացական տարածքային վիճելի խնդիրներից մեկը՝ Լոռու չեզոք գոտու խնդիրը, Հայաստանի օգտին լուծելու համար: Նպաստավոր էր նրանով, որ Խորհրդային Հայաստանի թիկունքին այսուհետ կանգնած էր Խորհրդային Ռուսաստանը և Կարմիր բանակը, միաժամանակ՝ բավականին սրված էին ռուս-վրացական հարաբերությունները: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելուց հետո Խորհրդային Ռուսաստանի համար հրատապ խնդիր էր Անդրկովկասի երեք հանրապետություններից վերջինի՝ Վրաստանի խորհրդայնացումը: Դա ոչ միայն եզրափակելու էր ամբողջ Անդրկովկասը խորհրդայնացնելու բոլշևիկյան քաղաքականության ջանքերը, այլև, ինչն առավել կարևոր էր, երաշխավորելու էր Ռուսաստանի ռազմավարական շահերի անվտանգությունը տարածաշրջանում: Եթե Ադրբեջանի խորհրդայնացման գործում Ռուսաստանի իշխանություններն օգտագործեցին քեմալական Թուրքիայի գործոնը, իսկ Հայաստանի՝ քեմալա-ադրբեջանականը միասին, ապա Վրաստանի դեպքում՝ նրանք օգտագործելու էին նաև հայկականը: Հայ-վրացական տարածքային վեճերը պարարտ հող էին Խորհրդային Ռուսաստանի միջամտության համար՝ դրանք սեփական շահերին ծառայեցնելու նպատակով: Խոչընդոտ չէր կարող հանդիսանալ անգամ այն, որ 1920 թ. մայիսի 7-ի ռուս-վրացական պայմանագրով Ռուսաստանը ճանաչել էր Վրաստանի անկախությունը, նրա իրավունքները Լոռու և Ախալքալաքի նկատմամբ:[193]

---

[193] Տե՛ս Борьба за победу Советской власти в Грузии. (Документы и материалы. 1917-1921 гг.), Тбилиси, 1958, с. 563-568:

Լոռու չեզոք գոտին առաջացել էր 1918 թ. դեկտեմբերին տեղի ունեցած հայ-վրացական կարճատև պատերազմի հետևանքով: Դեկտեմբերի 31-ին կողմերի միջև հաստատված զինադադարից հետո, 1919 թ. հունվարի 9-17-ը Թիֆլիսում Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրված հայ-վրացական կոնֆերանսին, որը նախագահում էր տարածաշրջանում անգլիական օկուպացիոն զորքերի հրամանատար, Բրիտանական ծառայության գնդապետ Ստյուարտը, որոշվում է Լոռին հայտարարել «Չեզոք գոտի»: Գոտու մեջ մտնում էին Բորչալուի գավառի Ալավերդու (Թումանյան), Ուզունլարի (Օձուն) և Վորոնցովկայի (Կալինինո, այժմ՝ Տաշիր) շրջանները, իրենց 41 գյուղերով: Կնքված համաձայնագրով կարգավորվում են մի շարք հարցեր, ճշգրտվում են գոտու սահմանները, որոշվում են այնտեղ տեղակայվող հայկական և վրացական զորքերի թվաքանակը, սահմանվում է հատուկ կառավարում: Այն իրականացվելու էր Հայաստանի և Վրաստանի լիազոր ներկայացուցիչների համատեղ ղեկավարությամբ և անգլիացի գեներալ-նահանգապետի ընդհանուր վերահսկողությամբ:[194]

1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմի ժամանակ, երբ առկա էր քեմալական բանակի՝ Լոռի ներխուժելու վտանգը, Վրաստանի կառավարության առաջարկությամբ նոյեմբերի 13-ին Թիֆլիսում ստորագրվում է հայ-վրացական համաձայնագիր՝ Բորչալուի նահանգի «Չեզոք գոտի» ժամանակավորապես վրացական զորքեր մտցնելու մասին: Համաձայնագրի 2-րդ կետով արձանագրվում է, որ «Չեզոք գոտում վրացական զորքերի գտնվելը չի առաջացնելու այդ տարածքի նկատմամբ (վրացական կողմի - Կ.Խ.) որևէ նոր իրավունք»: Համաձայնագիրը կնքվում էր 3 ամիս ժամկետով, այն լրանալուց հետո՝ կողմերի համաձայնությամբ, կարող էր երկարաձգվել, հակառակ դեպքում՝ կորցնելու էր իր ուժը. զորքերը դուրս էին բերվելու, գոտում վերականգնվելու էր նախկին դրությունը:[195]

1920 թ. աշնան վերջին Հայաստանում տիրող ծանր իրավիճակը, թուրք-հայկական պատերազմում նրա պարտությունը, վրացական կողմին հնարավորություն ընձեռեց պարբերաբար խախտելու համա-

---

[194] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.: Քաղաքական պատմություն: (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու). Եր., 2000, էջ 82-83: Հայ-վրացական կոնֆերանսի և Լոռու Չեզոք գոտու առաջացման մասին տե՛ս նաև Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Եր., 2003, էջ 304-310:

[195] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 340-341: Տե՛ս նաև Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, էջ 325-327:

ձայնագրի դրույթները: Ավելացվեց չեզոք գոտում տեղակայվող վրացական զորամասերի թվաքանակը, դրանք մտցվեցին նաև գոտու սահմաններից դուրս գտնվող հայկական ութ այլ բնակավայրեր՝ Ջալալօղլի (Ստեփանավան), Շահալի կայարան (Վահագնի), Փամբակ, Լոռուտ, Քոլազիրան և այլն: Խախտելով հայ-վրացական համաձայնագրի 7-րդ կետը՝ վրացական կողմը չեզոք գոտու կառավարումից հեռացնում է Հայաստանի կառավարության լիազոր-ներկայացուցչին և Լոռիում հաստատում վրացական գեներալ-նահանգապետություն: Այս փոփոխությունները վրացական իշխանություններին հնարավորություն են տալիս սաստկացնել բռնությունները և վրացական զորամասերը պարենով մատակարարելու համար, բռնագրավել բնակչության վերջին ունեցվածքը: Լոռու Ռազմհեղկոմի հաղորդագրություններից մեկում նշվում է, որ Վրաստանի կողմից գինագրավված շրջաններում «թագավորում է սանձարձակ, քմահաճ վերաբերմունքը և ամենախայտառակ կողոպուտը»:[196]

Հայաստանի խորհրդայնացումից հետո, երբ թուրքական զորքերի Լոռի ներխուժելու վտանգը վերացել էր, Վրաստանի կառավարությունը ոչ միայն պատրաստակամություն չհայտնեց հեռացնել իր զորքերը չեզոք գոտուց, այլև ձգտում էր այն միացնել Վրաստանին: «Հայաստանի Հեղկոմի տեղեկություններով, - նշում է Բաքվի «Կոմունիստ» թերթը, - Վրաստանի կառավարության անդամ Չխեիձեն, Վրաստանի Սահմանադիր ժողովի հինգ անդամների հետ միասին, չեզոք գոտում ֆիզիկական ուժի գործադրման միջոցով կազմակերպվող հանդիպումներում բնակչությանը պարտադրում են բանաձևեր ընդունել Վրաստանի հետ միավորվելու օգտին: Գոտու խորհրդային վարչությունն ապօրինաբար ձերբակալվում և ուղարկվում է Քութայիսիի բանտ»:[197] Նման «քարոզչություն» անցկացվում է նաև այլ միջոցներով, սակայն ապարդյուն. վրացական կողմի այս գործելաոճը որևէ արդյունք չի տալիս, ընդհակառակը՝ ստիպում է Լոռու բնակչությանը էլ ավելի համախմբվելու և ոտիներ որոնելու վրացական լծից ազատվելու համար:

1920 թ. դեկտեմբերին Լոռու մի շարք գյուղերում (Պրիվոլնոյե, Գյառգյառ, Վորոնցովկա, Արմանիս, Նովո-Պոկրովկա, Նովո-Միխայլովկա և այլն) տեղի ունեցող հանրահավաքներում մերկացվում են վրացական իշխանությունների և զորամասերի կողմից կատարված

---

[196] Կոմունիստ, Երևան, փետրվարի 11, 1921, թիվ 53:

[197] Коммунист, Баку, 11 января, 1921, №8. Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ.1022, ց.4, գ.82, թ. 5:

ապօրինությունները, կամայականություններն ու թալանը: Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի իշխանություններին ուղղված բանաձևերում բնակչությունը պահանջում է Կարմիր բանակի օգնությամբ դուրս քշել մենշևիկյան զորքերը Լոռուց և այն միացնել Խորհրդային Հայաստանին:[198]

Հայաստանում խորհրդային իշխանության առաջին իսկ օրերից Լոռու չեզոք գոտու խնդիրը գտնվում է Հայհեղկոմի ուշադրության կենտրոնում: Վերջինս 1920 թ. դեկտեմբերի 7-ին և 10-ին շտապում է հուշագրեր հղել Վրաստանի կառավարությանը՝ չեզոք գոտուց վրացական զորքերը դուրսբերելու, ինչպես նաև Հայաստանի շրջափակումը վերացնելու պահանջներով: Սակայն վրացական կողմը հրաժարվում է բավարարել դրանք:[199] Դեկտեմբերի 24-ին Հայհեղկոմը որոշում է կրկնել պահանջները և Լոռուց վրացական զորքերի դուրսբերումը համարել նախապայման՝ Հայաստանի և Վրաստանի միջև բանակցություններ սկսելու համար:[200]

ՀՍԽՀ արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանը դեկտեմբերի 29-ին հերթական հուշագիրն է հղում Վրաստանի արտգործնախարարին, պատճենը՝ Վրաստանում Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Շեյնմանին, Մոսկվա՝ արտգործժողկոմ Գ. Չիչերինին, Բաքու՝ արտգործժողկոմ Հուսեյնովին, որտեղ նշում է, որ նոյեմբերի 13-ի համաձայնագրի վրա վրացական կողմի պնդումները «ձևական են», քանզի այն խախտվել է հենց վրացական կառավարության գործողություններով: Հայտարարելով, որ Հայաստանի խորհրդայնացումով հայ-վրացական համաձայնագիրը կորցրել է իր նշանակությունը, Բեկզադյանը նշում է, որ Հայաստանի իշխանությունները պատրաստ են խաղաղ բանակցությունների միջոցով հասնել վիճելի հարցերի կարգավորմանը, ինչպես նաև նպատակահարմար են գտնում բանակցություններին ՌՍՖՍՀ ներկայացուցչի մասնակցությունը:[201] Այսպիսով ՀՍԽՀ իշխանությունները հնարավորություն էին ընձեռում Ռուսաստանին պաշտոնապես միջամտելու հայ-վրացական հարաբերություններին, վիճելի հարցերի լուծմանը: Իր հերթին, վրացական կառավարությունը սթափ էր գնահատում ստեղծված իրավիճակը և սկզբունքորեն դեմ չէր Ռուսաստանի մասնակցությանը նախատեսվող հայ-վրա-

---

[198] Տե՛ս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը... Հայաստանում, էջ 427-428, 433-434, 443, 445:
[199] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 290, pp. 2- 4:
[200] Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 17, p. 18:
[201] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3. գ. 290, pp. 2-4: Տե՛ս նաև Հեղկոմները Հայաստանում, էջ 80-83:

ցական բանակցություններին. վրացիներին չէր կարող չմտահոգել Ռուսաստանի դիրքորոշումը Վրաստանի հանրապետության և, մասնավորապես, Լոռու չեզոք գոտու խնդրի վերաբերյալ:

Վրացիների մտավախություններն անհիմն չէին, նրանք որոշ տեղեկություններ ունեին, որ «Աղրբեջանում և Հայաստանում տեղաբաշխված խորհրդային զորքերը Վրաստանի և Հայաստանի միջև Բորչալուի գավառում տարածքային վեճը կարգավորելու պատրվակով մտադրվում են առանց Մոսկվայի գիտության հարձակվել Վրաստանի վրա», այս մասին Վրաստանի արտգործնախարար Սարախտարաշվիլին 1920 թ. դեկտեմբերի 10-ին հայտնում է Մոսկվա՝ Ռուսաստանում Վրաստանի լիազոր ներկայացուցիչ Մախարաձեին:[202]

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելուց հետո Ռուսաստանի իշխանությունները Վրաստանից պահանջում են ապահովել վրացական տարածքով դեպի Հայաստան փոխադրվող բեռների անվտանգությունը և անարգել տարանցումը: Հայաստանի շրջափակումը վերացնելու նպատակով Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը վրացական իշխանություններին մատնանշում է 1920 թ. մայիսի 7-ի ռուս-վրացական պայմանագրի դրույթները կատարելու անհրաժեշտությունը: Քաղաքական ճնշումների հետ մեկտեղ, խորհրդային կառավարությունը դիմում է տնտեսական պատժամիջոցների կիրառմանը, նրա ցուցումով դադարեցվում է աղրբեջանական նավթի առաքումը դեպի Վրաստան: 1920 թ. դեկտեմբերի 15-ին Ա. Շեյնմանը հեռագրում է Մոսկվա՝ Չիչերինին, Բաքու և Երևան. «Միայն նավթի առաքումը (Վրաստանին - Կ.Խ.) դադարեցնելուց հետո վրացական կառավարությունը պաշտոնապես տեղեկացրեց ինձ, որ սույն ամսվա 14-ից հանրապետության երկաթուղային գծերով դեպի Հայաստան ազատ տարանցման իրավունք է տրամադրում ՌՍՖԽՀ-ին և Աղր. ՍԽՀ-ին»:[203]

Այսպիսով, Հայաստանի խորհրդայնացումից հետո Ռուսաստանի իշխանությունները աստիճանաբար ուժեղացնում էին քաղաքական ճնշումը Վրաստանի վրա, դա վկայում է, որ վերջինիս խորհրդայնացման խնդիրը դարձել է խիստ հրատապ: Հետաքրքիր է, որ դեռևս 1920 թ. նոյեմբերի վերջերին ՌՍՖԽՀ ազգությունների գործերի ժողկոմ Ի. Ստալինը Վ. Լենինի և Գ. Չիչերինի ուշադրությունը հրավիրում էր այն փաստի վրա, որ Վրաստանը խորհրդայնացնելու

---

[202] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1158, թ. 3:
[203] Նույն տեղում, թ. 20:

«տարբերակներից լավագույնը, իմ կարծիքով, Թուրքիայի հաջող պատերազմն է Վրաստանի հետ, ինչը Ռուսաստանին հնարավորություն կտա ստանձնել միջնորդի դեր և հանդես գալ որպես (Վրաստանի – Կ.Խ.) փրկիչը»:[204] Նոյեմբերի 28-ին Գ. Օրջոնիկիձեին հղած հեռագրում Ստալինը դարձյալ ակնարկում է վրացական հարցը նշված տարբերակով լուծելու մասին և հուշում, որ «հարկավոր է թուրքերին դրդել, որպեսզի նրանք հարձակվեն Վրաստանի վրա»:[205] Եվ իրոք, եթե Հայաստանի դեպքում այդ «տարբերակը» լիովին իրեն արդարացրել էր, ապա ինչո՞ւ չփորձել այն նաև Վրաստանի դեպքում, հավանաբար խորհում էր Ստալինը, բոլշևիկյան այն գործիչը, որին վստահված էր իրականացնելու ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղաքականությունը Կովկասյան տարածաշրջանում:

Խնդրի վերաբերյալ իրարամերժ և ոչ հետևողական էր ՌՍՖԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինի դիրքորոշումը՝ 1920 թ. դեկտեմբերի 3-ին Կենտկոմ ուղղված գեկուցագրում նա նշում է, որ հարկավոր է հետ պահել թուրքերին Վրաստանի վրա հարձակվելուց՝ «մանավանդ Հայաստանի խորհրդայնացումից հետո: Վերջինս ստիպում է շատ ավելի զգույշ լինել Անտանտի նկատմամբ»:[206] Բայց ընդամենը երկու օր անց, դեկտեմբերի 5-ին, Անդրկովկասում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչներ Լեգրանին և Մդիվանուն ուղղված ռադիոհեռագրում Չիչերինը հուշում է, որ «Եթե թուրքերը փորձեն գրավել Վրաստանի վիճելի մարզերը, հատկապես Ախալցխան և Ախալքալաքը, չենք առարկի: Միայն կպնդենք, որպեսզի նրանք այլևս առաջ չշարժվեն: Բայց նախօրոք այդ մասին թուրքերին չենք ասի, քանի որ նախաձեռնությունը պետք է նրանք հանդես բերեն և ոչ թե մենք»:[207]

Իսկ արդեն հաջորդ օրը, դեկտեմբերի 6-ին, տեղեկանալով այն մասին, որ Կենտկոմը որոշել է Բուդու Մդիվանու միջոցով թուրքերին հայտնել, որ Ռուսաստանը դեմ չի լինի «Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում թուրքերի իշխանության հաստատմանը», Չիչերինը դարձյալ շտապում է հայտնել իր մտավախությունները: Կենտկոմ ուղղված նամակում նա համառորեն պնդում է հետաձգել Ախալցխայի և Ախալքալաքի հարցի վերաբերյալ Կենտկոմի ընդունած որոշումը, քանզի իրադարձությունների նման զարգացումը անխուսափելի

---

[204] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 2, թ. 142:

[205] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.: Քաղաքական պատմություն: (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), էջ 363:

[206] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 7, թ. 21:

[207] Տե՛ս Գալոյան Գ.Ա., Հայաստանը և Մեծ տերությունները (1917-1923), էջ 393:

կղարձնի թուրք-վրացական պատերազմը՝ «ինչն էլ, իր հերթին, կհանգեցնի Բաքումի անխուսափելի գրավմանը թուրքերի կողմից»: Չիչերինը եզրակացնում է, որ անթույլատրելի է Բաքումը գրավելու առիթ տալ թուրքերին:[208]

Վրաստանը Կարմիր բանակի ուժերով խորհրդայնացնելու ծրագրեր էր մշակում Բաքվում տեղակայվող ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն: Վերջինիս փաստացի ղեկավար Գ. Օրջոնիկիձեի կողմից 1920 թ. դեկտեմբերի 15-ին Կրեմլ՝ Վ. Լենինին ուղարկված ծածկագրում նշվում է, որ Կավբյուրոյի խորհրդակցությունը, որին բյուրոյի անդամներ Ե. Ստասովայից, Ն. Նարիմանովից, Բ. Մդիվանուց և Գ. Օրջոնիկիջևից բացի մասնակցել են նաև Ծ. Էլիավան, Բ. Լեգրանը, Գ. Ստարկը, Ա. Գեկկերը և այլք. «Գաղտնի և միաձայն որոշել է լուսաբացին անցնել Վրաստանի սահմանը: Ամեն ինչ նախապատրաստված է»: Կավբյուրոն ակնկալում էր Մոսկվայի թույլտվությունը:[209] Սակայն Լենինը և ՌՍՖՍՀ ռազմգործժողկոմ Լ. Տրոցկին շտապում են զսպել նրանց, և պատասխանում են, որ Կավբյուրոյի որոշումը «արմատապես հակասում է Կենտկոմի որոշումներին և կարող է ունենալ ողբերգական հետևանքներ: Կտրականապես պահանջում ենք դադարեցնել որոշման իրականացումը և չեղյալ հայտարարել այն»: Լենինի և Տրոցկու պահանջ-հրահանգը Օրջոնիկիջևի կողմից ընդունվում է ի կատարում:[210]

Հատկանշական է, որ ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի դեպքում, Կրեմլը չէր շտապում ձեռնարկել նրա խորհրդայնացումը, ինչը «հղի էր անկանխատեսելի հետևանքներով»: Սակայն տարածաշրջանի կոմունիստ ղեկավարները և հատկապես Կավբյուրոն, Մոսկվայի կենտրոնական իշխանություններին փաստորեն ստիպում էին հավանություն տալ իրենց ծրագրերին:

Մոսկվայի մերժումը ստանալուց շատ չանցած, արդեն 1921 թ. հունվարի 2-ին Կավբյուրոյի անդամներ Գ. Օրջոնիկիձեն և Ս. Կիրովը «Խիստ գաղտնի» գեկուցագիր են ուղարկում ՌԿ(բ)Կ Կենտկոմի բոլոր անդամներին, որում դարձյալ ներկայացնում են Վրաստանը խորհրդայնացնելու դրդապատճառները և անհրաժեշտությունը: Ըստ Օրջոնիկիձեի և Կիրովի դրանք են՝ Վրաստանը հանդիսանում է Կովկասում հակահեղափոխության հենակետը, Հյուսիսային Կովկասում և Աղրբե-

---

[208] Տե՛ս ՀԱԱ, հավաքածու 1, գ. 7, թ. 23:
[209] Տե՛ս նույն տեղում, գ. 2, թ. 189:
[210] Տե՛ս նույն տեղում:

ջանում աջակցելով հակախորհրդային ապստամբությունների կազմակերպմանը վարկաբեկում է մեզ մուսուլման բնակչության աչքերում, «Խորհրդային Հայաստանն առանց Խորհրդային Վրաստանի փաստորեն մնում է ավելի շուտ Թուրքիայի, քան թե մեր ազդեցության ոլորտում», «Անդրկովկասում ստեղծված իրադրությունը ստիպում է մեզ Աղրբեջանում պահել շոշափելի քանակությամբ ռազմական ուժեր, ինչը ցանկալի չէ բնակչության և վնասակար է զբաղմավորումների համար», և այլն: Օրջոնիկիձեն և Կիրովը նշում են նաև, որ Վրաստանի խորհրդայնացման դեպքում ամուր կպահենք Հյուսիսային Կովկասը և ամբողջ Անդրկովկասը, եթե գրավենք Բաքումը՝ Անտանտը, որը ներկայումս չունի բավարար ուժեր մեզ դիմակայելու համար, կգրկվի հարավում մեր դեմ ուղղված իր վերջին հենակետից: Զեկուցագրի վերջում Օրջոնիկիձեն և Կիրովը Կենտկոմի անդամներին հուշում են, որ Վրաստանը ներսից խորհրդայնացնելու հույսեր չկան և հարկավոր է «մեր օգնությունը»: Զեկուցագիրները ներկայացնում են նաև այդ «օգնության» իրենց տարբերակը, այն է. «Հարկավոր չէ բացեիբաց հարձակվել Վրաստանի վրա, վրացական գործերին մեր միջամտության համար առկա են պատրվակներ, հնարավոր է շարժումներ առաջացնել Աբխազիայում, Աջարիայում, *Բորչալուի գավառում, որտեղ դրա համար պարարտ հող կա: Այդ տեսակետից, մեզ կարող են օգնել Թուրքիան ու Հայաստանը* (ընդգծումը մերն է - Կ.Խ.) և հնարավոր է ստեղծվի այնպիսի մի իրավիճակ, որը թույլ կտա մեզ հանդես գալ որպես քայքայվող և դեպի անիշխանությունը գլորվող Վրաստանի փրկիչը»: Զեկուցագիրն ավարտվում է Վրաստանն անհապաղ խորհրդայնացնելու կոչով:[211] Այսպիսով, ի տարբերություն Ստալինի, Օրջոնիկիձեն և Կիրովը առաջարկում էին Վրաստանը խորհրդայնացնելու գործում օգտագործել նաև հայկական գործոնը, մասնավորապես՝ հայ-վրացական առճակատումը Լոռու չեզոք գոտու խնդրում:

Օրջոնիկիձեի և Կիրովի զեկուցագիրը քննարկվում է ՌԿ(բ)Կ Կենտկոմի 1921 թ. հունվարի 12-ի պլենումին, Վ. Լենինի մասնակցությամբ: Պլենումը մերժում է զեկուցագրում ներկայացված առաջարկությունները և դարձյալ խորհուրդ տալիս խստորեն հետևել հարցի վերաբերյալ Կենտկոմի նախկին որոշումներին:[212]

Ինչպես նշել ենք, 1920-1921 թթ. ձմռանը Կրեմլում շարունակում էր տիրել այն մտավախությունը, որ Ռուսաստանին Կովկասում

---

[211] Տե՛ս ՀԱԱ, հավաքածու 1, գ. 3, թթ. 1-2:
[212] Տե՛ս նույն տեղում, թ. 3:

անխուսափելիորեն պատերազմ է սպառնում, որին նա դեռևս պատրաստ չէ: Մոսկվան գիտակցում էր նաև, որ Հայաստանը և, հատկապես Վրաստանը, կարող են օգտագործվել Անտանտի և, ինչու չէ, նաև Թուրքիայի կողմից որպես հենադաշտ՝ տարածաշրջանը Ռուսաստանից անջատելու նրանց ձգտումներում: 1921 թ. հունվարի 14-ին Գ. Չիչերինը տեղեկացնում է Ստալինին, որ Վրաստանում Ռուսաստանի ներկայացուցիչ «Ծեյնմանը ինչպես Անտանտի, այնպես էլ Քեմալի քաղաքականությունը բնութագրում է որպես անթաքույց ձգտում՝ ստեղծել մեր նկատմամբ թշնամաբար տրամադրված Կովկասյան դաշնություն»:[213]

Անդրկովկասում ծավալվող իրադարձությունները ստիպում էին վրացական իշխանություններին ուղիներ որոնելու Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերությունները բարելավելու համար: 1921 թ. հունվարին Վրաստանի կառավարությունը Մոսկվայում իր ներկայացուցիչ Մախարաձեի միջոցով տեղեկացնում է խորհրդային իշխանություններին, որ ցանկանում է, որպեսզի շտապ լուծվեն «Վրաստանի և Ռուսաստանի միջև ձգձվող տարաձայնությունները»: Վրացիները հավաստում են նաև իրենց անկեղծ մտադրությունները՝ բարեկամական հարաբերություններ հաստատել երկու հանրապետությունների միջև:[214] Վրաստանի իշխանությունները հուսով էին, որ դա իրենց կհաջողվի, նրանք ելնում էին այն նկատառումներից, որ մայիսի 7-ի ռուս-վրացական պայմանագրով Ռուսաստանի կառավարությունը Լոռու չեզոք գոտին ճանաչել էր Վրաստանի մասը: «Դրանով էլ մեծ չափով բացատրվում է, իհարկե, ինչպես (Վրաստանի - Կ.Խ.) համաձայնությունը ՌՍՖԽՀ-ի մասնակցությանը (նախատեսվող հայ-վրացական - Կ.Խ.) կոնֆերանսին, այնպես էլ այն, որ Սաբախտարաշվիլին խնդրում է կոնֆերանսը հնարավորին չափ շուտ հրավիրել», - 1921 թ. հունվարի 17-ին հայտնում է Հայաստանի արտգործժողկոմին Վրաստանում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյանը: Նա հուշում է նաև, որ վրացական կառավարությունը երբեք հնչտությամբ դուրս չի բերի իր զորքերը չեզոք գոտուց:[215]

Ռուս-վրացական բանակցությունները սկսելու մասին Վրաստանի կառավարության առաջարկությանը հետևում է Ռուսաստանի արտգործժողկոմ Չիչերինի հունվարի 17-ի պատասխանը, որում նա

---

[213] Տե՛ս ՀԱԱ, հավաքածու 1, գ. 7, թ. 27:
[214] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 320, թ. 1:
[215] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 12, թ. 21:

վրացական իշխանություններին հայտնում է, որ մինչ բարեկամական հարաբերություններ հաստատելը Վրաստանը պետք է ընդունի Ռուսաստանի կողմից ներկայացվող մի շարք պահանջները:

ՌՍՖԽՀ կառավարության պահանջների թվում էին՝ Ռուսաստանին Վրաստանի տարածքով դեպի Հայաստան ազատ տարանցման իրավունքի տրամադրումը և հայ-վրացական սահմանի որոշման բանակցություններին Ռուսաստանի ներկայացուցիչների մասնակցությունը:[216] Այս ամենի մասին է նշվում նաև Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Ա. Շեյնմանի՝ Վրաստանի կառավարությանը 1921 թ. հունվարի 21-ին ուղղված հայտագրում:[217]

Չսպասելով ներկայացրած պահանջների վերաբերյալ վրացական կողմի պատասխանին, Չիչերինը շտապում է վրացական հարցի վերաբերյալ իր նկատառումները կիսել Վ. Լենինի հետ: Հունվարի 20-ին վերջինիս ուղղված նամակում նշելով, որ «Վրաստանն այնպես է չափն անցել, որ մենք կարող է կանգնած լինենք այն խորհրդայնացնելու անհրաժեշտության առջև», Չիչերինը հուշում է. «Եթե նրանք մերժեն մեր ներկայացրած պայմանագրային պահանջները, մեզ կմնա միայն հետ կանչել մեր ներկայացուցչությունը: Այդ դեպքում, խորհրդային Հայաստանը կտրվի բախտի քմահաճույքին: Անտանտն առանց որևէ վերահսկողության կհաստատվի Վրաստանում: Մենք չենք կարող թույլ տալ, որ մեզ հետ այդպես խաղան և խախտեն պայմանագիրը (խոսքը 1920 թ. մայիսի 7-ի ռուս-վրացական պայմանագրի մասին է - Կ.Խ.): Ամեն դեպքում, հարկավոր է հենց այժմ ընդունել նախապատրաստական միջոցներ և նկատի ունենալ, որ մեր անվտանգությունը և հեղինակությունը կպահանջեն այդ քարախապալարի (նկատի ունի Վրաստանի դեմոկրատական հանրապետությունը - Կ.Խ.) ոչնչացումը»:[218]

Չիչերինի մտավախությունները կիսում էր նաև Ստալինը, հունվարի 24-ին նա հետևյալ գրությունն է ուղղում Կենտկոմի անդամներին. «Առաջարկում եմ հավանություն տալ ընկեր Չիչերինի քաղաքական գծին Վրաստանի հարցում (տե՛ս նրա վերջին նամակը) և հրահանգավորել Հանրապետության Ռազմհեղափոխորդին՝ Կովկասում անհապաղ նախապատրաստական աշխատանքներ սկսելու անհրաժեշ-

---

[216] ՀԱԱ, ֆ. 1022, գ. 3, գ. 320, թ. 1:

[217] Տե՛ս РСФСР и ГДР (Грузинская демократическая республика), их взаимоотношения, НКИД, 1922, с. 87:

[218] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 7, թ. 29:

տության մասին, հարցը ռազմական միջամտության կարգով լուծելու համար: Միաժամանակ հրահանգավորել ընկեր Օրջոնիկիձեին՝ *Վրաստանի հայտնի շրջաններում ապստամբական կազմակերպելու անհրաժեշտության մասին* (ընդգծումը մերն է - Ա.Խ.)»:[219] Ընթերցողին անշուշտ պարզ է, որ խոսքը Լոռու չեզոք գոտու շրջանի մասին էր, նշենք միայն, որ այն Վրաստանինը չէր՝ այլ միայն զինագրավված էր նրա զորքերի կողմից:

Չիչերինի և Ստալինի «առաջարկություններին» ծանոթանալուց հետո ՌԿ(բ)Կ Կենտկոմի անդամներ Տրոցկին, Կամենևը և Կրեստինսկին առաջարկում են մի քանի օրով հետաձգել հարցի քննարկումը, սակայն անձամբ Վ. Լենինի պնդմամբ ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը 1921 թ. հունվարի 26-ին քննարկում է հարցը և ընդունում համապատասխան բանաձև: Բանաձևը, որի նախագիծը պատրաստել էր Վ. Լենինը, հրահանգում է «Հանրապետության Ռազմհեղափոխորդին և Կովկասյան ռազմաճակատի ղեկավարությանը, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստվել Վրաստանի հետ պատերազմի»:[220]

1921 թ. փետրվարի 2-ին Ա. Շեյնմանը հայտնում է Գ. Օրջոնիկիձեին, որ իրեն հասած հավաստի տեղեկությունների համաձայն, առաջիկա գարնանը Կովկասում հակախորհրդային ապստամբություն է սպասվում: Իր հերթին, Օրջոնիկիձեն փետրվարի 6-ին շտապում է հայտնել Մոսկվա՝ Լենինին. «Կրկին ու կրկին տեղեկացնում եմ Ձեզ, որ գարնան մոտենալու հետ դրությունը Կովկասում ավելի ու ավելի սպառնալից է դառնում»: Նա համոզում է Լենինին հավանություն տալ, թույլատրել և աջակցել Վրաստանում զինված ապստամբության կազմակերպմանը:[221]

Վրաստանի խորհրդայնացման գործընթացը սկսելու ազդանշան էր հանդիսանալու Լոռու չեզոք գոտու գյուղացիության ապստամբությունը վրացական զինագրավման դեմ: Այն կազմակերպելու նախապատրաստական աշխատանքները ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն, 11-րդ բանակի Ռազմհեղափոխորդը և ՀՍԽՀ իշխանությունները սկսել էին Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո: «Այդ ժամանակից ամբողջ գոտին ծածկվում է մեր կուսակցության ընդհատակյա կազմակերպությունների և հեղկոմների խիտ ցանցով», որովհետև

---

[219] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 3, թ. 16:
[220] Նույն տեղում, էջ. 17-18:
[221] Տե՛ս Նասրսն Ա., Հայաստանի միջազգային իրավական դիրքը 1920-1922 թթ., Եր., 1967, էջ 179:

«ընկ. ընկ. Օրջոնիկիձեի և Լեգրանի նախաձեռնությամբ որոշվել էր գոտում ապստամբության գործը կատարել ՀԿԿ Կենտկոմի անունից»,[222] - ՌԿ(բ)Կ Կավբյուրոյի անդամներին 1921 թ. դեկտեմբերի 3-ին ուղղված զեկուցագրում նշում է Ռուսաստանում քաղաքացիական կռիվների ակտիվ մասնակից, Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ ՀՍԽՀ ռազմգործժողկոմի տեղակալ և Կարմիր բանակի բաղվարչության պետ Հովսեփ Լազյանը: ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1920 թ. դեկտեմբերի 23-ի որոշումով վերջինս նշանակվել էր Լոռու չեզոք գոտում կուսակցական-քաղաքական աշխատանքների համար պատասխանատու, ըստ Լազյանի, իր թեկնածության վրա պնդել է Բորիս Լեգրանը:[223] ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կավբյուրոյի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի փոխհամաձայնությամբ՝ 1920 թ. դեկտեմբերի վերջին Լազյանը նշանակվում է «Լոռու աշխատավորների զինված ապստամբության շտաբի պետը»:[224] Շտաբին կից ստեղծվում է Ղարաքիլիսայի հատուկ նշանակության ջոկատը և Լոռու պարտիզանական գունդը:

Շտաբի գործունեությունը չէր սահմանափակվելու միայն չեզոք գոտու ազատագրման հարցերով, ինչպես նշում է Հ. Լազյանը, «Երևանից ստացված հաղորդման համաձայն գոտու ազատագրման հարցն արդեն կապվում էր Վրաստանի խորհրդայնացման հետ և մենք ընդհանուր հետախուզություն սկսեցինք ամբողջ Վրաստանում»:[225] Նշենք, որ ապստամբների շտաբը սերտ կապերի մեջ էր Վրաստանի ընդհատակյա կուսակազմակերպությունների հետ, վերջիններս փոխանակվում էին գաղտնի տեղեկություններով:

1921 թ. հունվարի 25-ին Լազյանին Բաքվից տեղեկացնում են, որ «շտաբը ենթարկվելու է 11-րդ բանակին» և «ապստամբությունը լինելու է Վրաստանի խորհրդայնացման սկիզբը»:

Ապստամբության նախապատրաստական աշխատանքներին ծանոթանալու նպատակով փետրվարի սկզբներին Ղարաքիլիսա են ժամանում 11-րդ բանակի հրամանատար Գեկկերը և Ռազմհեղորիրդի անդամ Վեսնիկը: Ծանոթանալով իրավիճակին, նրանք, իբրև օգնություն ապստամբներին, տրամադրում են 300 հոգուց բաղկացած ռուսական զումարտակ:

---

[222] Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, էջ 90-91: Զեկուցագիրն ամբողջությամբ տես նաև ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1309, pp. 1-15:
[223] Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, էջ 80, 91:
[224] Նույն տեղում, էջ 372:
[225] Նույն տեղում, էջ 94:

Լազյանի գլխավորած շտաբը փետրվարի 8-ին 11-րդ բանակի հրամանատարությունից հրաման է ստանում. «Չեզոք գոտում ապստամբությունը սկսել փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը»:[226] Այդ օրը պատահական չէր ընտրված՝ լրանում էր 1920 թ. նոյեմբերի 13-ի հայվրացական համաձայնագրի եռամսյա ժամկետը:

Ապստամբության հաջողությունը կախված էր ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Շահալիի (Զամալուի) երկաթուղային կամրջի ականազերծումից և անվնաս գրավումից: Վրացիները ոչ միայն օրու գիշեր աչալրջորեն հսկում էին կամուրջը, այլև ականապատել էին այն. սպառնացող վտանգի դեպքում՝ պայթեցնելու նպատակով: Իրադարձությունների նման զարգացումը ոչ միայն կվտանգեր ապստամբության հաջողությունը, այլև կխոչընդոտեր Վրաստանի խորհրդայնացման գործընթացին, իսկ Հայաստանին երկար ժամանակով կզրկեր Երևան-Թիֆլիս երկաթգծից օգտվելու հնարավորությունից:

Շահալիի կամրջի ականազերծումը հերոսաբար իրականացրեցին մի խումբ հայ պարտիզաններ՝ Արտաշես Ստեփանյանի գլխավորությամբ: 1921 թ. փետրվարի 12-ի գիշերվա ժամը 2-ին իրականացրած այդ գործողությունն ազդանշան հանդիսացավ Հայկական Կարմիր բանակի հատուկ նշանակության ջոկատի, Լոռու պարտիզանական գնդի և չեզոք գոտու ապստամբ գյուղացիների խմբերի համար՝ տարբեր ուղղություններով հարձակման անցնելու վրացական կայազորների և զորամասերի վրա: Փետրվարի 12-ին ապստամբների շտաբը օգնության խնդրանքով դիմում է Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի Ռազմհեղափոխարիդին:[227]

Ապստամբներին շուտով օգնության են հասնում Հայկական Կարմիր բանակի հեծելազորային բրիգադան, ինչպես նաև 11-րդ Կարմիր բանակի 20-րդ հրաձգային դիվիզիայի հեծելազորային գումարտակը:

Եռօրյա համառ մարտերի և հերոսական պայքարի արդյունքում կարմիր զորքերին և ապստամբներին հաջողվում է ամբողջ չեզոք գոտին մաքրել յոթ հազարանոց վրացական բանակից: Ապստամբները գերի են վերցնում 3000 զինվոր և սպա, առգրավվում է մեծ քանակությամբ զենք և զինամթերք: 1921 թ. փետրվարի 15-ին Հ. Լազյանը ապստամբության հաղթական ավարտի մասին շտապում է հայտնել

---

[226] Հեղկոմները Հայաստանում, էջ 96-98:
[227] Տե՛ս նույն տեղում, էջ 100:

Բաքու՝ 11-րդ բանակի Ռազմհեղխորհրդին և Երևան՝ ՀՍԽՀ իշխանություններին:[228]

Ապստամբության հաղթանակից հետո Լոռիում հաստատվում է խորհրդային իշխանություն, այն ենթարկվելու էր Խորհրդային Հայաստանի կառավարությանը: «Այսպիսով՝ այն, ինչ չէր հաջողվել անել Հայաստանի Հանրապետությանը 1918-1920 թթ. ընթացքում, - իրավացիորեն նշում է Կ. Հարությունյանը, - 1921 թ. փետրվարին իրականացրեց Խորհրդային Հայաստանը՝ Խորհրդային Ռուսաստանի զորքերի օգնությամբ»:[229]

Լոռու ազատագրումը վրացական զինագրավումից և Հայաստանին միացնելը հանդիսացավ խորհրդային երկու հանրապետությունների՝ Ռուսաստանի և Հայաստանի ռազմաքաղաքական համագործակցության առաջին արդյունքը, հաջորդը՝ հանդիսանալու էր Վրաստանի խորհրդայնացումը:

* * *

Լոռու չեզոք գոտում ծավալվող իրադարձությունները և հատկապես դրանց հնարավոր կործանարար հետևանքները Վրաստանի հանրապետության համար խիստ լարվածություն և անհանգստություն էին առաջացրել Վրաստանի կառավարող շրջանակներում: Խորհրդային Ռուսաստանում Վրաստանի կառավարության լիազոր ներկայացուցիչ Մախարաձեն շտապում է փետրվարի 12-ին մի շարք հարցապնդումներով դիմել Ռուսաստանի իշխանություններին: Նա մասնավորապես ցանկություն է հայտնում պարզել, թե վերջիններս ի՞նչ տեսակետ ունեն չեզոք գոտում տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ, համերաշխ են, արդյո՞ք, «Վրաստանի վրա հարձակվող կողմի նման գործելակերպի հետ», և դիմելու են արդյո՞ք որևէ միջոցների դրանք կանխելու համար:[230]

Վրացական կողմի հարցապնդումներին հետևում է ՌՍՖԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինի փետրվարի 14-ի պատասխանը, ուր նա նշում է, որ հարձակողական գործողությունները ռուսական բանակին վերագրելը չի համապատասխանում իրականությանը, Չիչերինը հուշում է նաև, որ չեզոք գոտում ծավալվող իրադարձությունների բոլոր

---

[228] Հեղկոմները Հայաստանում, էջ 88:
[229] Հարությունյան Կ.Ա., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Եր., 2002, էջ 98:
[230] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 335, թթ. 1-2:

հնարավոր հետևանքներն ընկնում են բացառապես վրացական կառավարության վրա: Քանի որ Չիչերինի պատասխանը չի բավարարում վրացական իշխանություններին,[231] փետրվարի 18-ին նա ստիպված է լինում վերջիններիս հայտնել, որ խորհրդային կառավարությունը, այնուամենայնիվ, դեռ չի կորցրել հույսերը, որ հայ-վրացական «միջադեպը» կարելի է կարգավորել «խաղաղ ճանապարհով», և պատրաստ է միջնորդել կողմերի միջև:[232]

Բայց ի՞նչ միջնորդության մասին էր խոսքը, եթե Լոռու չեզոք գոտում բարձրացրած ապստամբության հաղթական ավարտը միայն հնարավորություն ընձեռեց Խորհրդային Ռուսաստանին անցնելու վճռական գործողությունների՝ Վրաստանի հանրապետությունը խորհրդայնացնելու նպատակով:

1921 թ. փետրվարի 14-ին և 15-ին Ռ.Կ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն հաջորդաբար հաստատում է 11-րդ բանակի Ռազմհեղափոխորհրդին ուղղված առաջին և երկրորդ հեռագրերի տեքստերը, համաձայն դրանց. նախ՝ թույլատրվում է օգնություն ցույց տալ ապստամբներին, ապա՝ նշվում է 11-րդ բանակի զորամասերի գործողությունների քաղաքական բնույթի մասին:[233]

Ձերբերը ծալած չէին նստած նաև վրացի կոմունիստները, 1921 թ. փետրվարի 16-ին Բորչալուի գավառի Շուլավեր (Շահումյան) գյուղաքաղաքում կազմակերպված Վրաստանի հեղափոխական կոմիտեն դիմում է Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի նախագահ Վ. Լենինին՝ Վրաստանի բանվորներին օգնություն ցույց տալու կոչով, իսկ արդեն երկու օր անց, փետրվարի 18-ին՝ Վրացիեղկոմը Վրաստանը հռչակում է Խորհրդային հանրապետություն:[234]

Փետրվարի 17-ին 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը հրաման է արձակում Վրաստանի հանրապետության դեմ ընդհանուր հարձակում սկսելու մասին: Խորհրդային ուժերի հարձակմանը քեև մասնակցեցին նաև Լոռու չեզոք գոտին ազատագրած հայկական կարմիրբանակային և ապստամբական ուժերը, սակայն գլխավոր հարվածը վերապահվեց Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի զորամիավորումներին: Խորհրդային Ադրբեջանից

---

[231] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 335, pp. 3-4:
[232] Նույն տեղում, գ. 339, pp. 1-2:
[233] Տե՛ս Таирян И., 11-ая Красная Армия в борьбе за установление и упрочение Советской власти в Армении, Ереван, 1971, с. 186-187:
[234] Տե՛ս Борьба за победу Советской власти в Грузии. Документы и материалы (1917-1921), с. 659, 661-662:

Վրաստան մտան 11-րդ բանակի 20-րդ լեռնահրաձգային դիվիզիայի հեծելազորային և հետևակային գնդերը, իսկ Օսեթիայից հարձակվելու էր 11-րդ բանակի 98-րդ հրաձգային բրիգադան:

Կոտրելով վրացական զորքերի դիմադրությունը, 1921 թ. փետրվարի 25-ին Կարմիր բանակի զորամասերը և ապստամբները մտնում են Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիս, մինչև մարտի կեսերը խորհրդային կարգերը հաստատվեցին ամբողջ Վրաստանում: Նշենք, որ Առանձին հայկական հավաքական հեծյալ գունդը մասնակցեց Բաքումի, Գորիի, վրացական այլ տարածքների՝ մենշևիկյան զորքերից ազատագրելու ռազմական գործողություններին:[235]

Այսպիսով, ինչպես ժամանակին ճիշտ նկատել է ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը, «Վրաստանը խորհրդայնացնելու պատմությունը որոշ չափով կատարված է հայ կարմիր զորքերի միջոցով»:[236]

Կարմիր բանակի մուտքը Վրաստան 1921 թ. փետրվար-մարտին և վերջինիս խորհրդայնացումը կարևոր նշանակություն ուներ ջավախքահայության համար, գաղտնիք չէ, որ իր անկման նախօրյակին Վրաստանի մենշևիկյան կառավարությունը փաստորեն արտոնել էր քեմալական զորքերի ներխուժումը Բաքում, Ախալցխա և Ախալքալաք: Մենշևիկների մտահղացումն էր՝ միմյանց դեմ հանել քեմալական և Կարմիր բանակները, և հույսեր փայփայել, որ նրանց հնարավոր զինված առճակատումը կարող է կտրուկ փոխել քաղաքական իրադրությունն ամբողջ տարածաշրջանում:

Պարզ ասած՝ Վրաստանի մենշևիկյան կառավարությունը ձգտում էր «պղտորել ջուրը» և փորձել նրանում «ձուկ որսալ»: Իսկ թե ինչպիսի ծանր հետևանքներ էր ունենալու քեմալականների կողմից Ախալցխայի և Ախալքալաքի երկարատև զինագրավվումը տեղի հայ բնակչության համար, վրաց մենշևիկներին չեր անհանգստացնում: Նրանց տմարդի քաղաքականության արդյունքում քեմալականները 1921 թ. փետրվարի վերջին - մարտի սկզբին դավադրաբար ներխուժեցին Ախալքալաք և նոր արհավիրքներ բերեցին 1918 թ. թուրքական ներխուժման ողբերգական հետևանքները դեռևս չդարմանած հայ բնակչության գլխին:

---

[235] Տե՛ս Հարությունյան Կ.Ա., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., էջ 100:

[236] Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, Եր., 1957, էջ 372:

Իսկ Բաթումի համար քեմալա-բոլշևիկյան բախումն ամենևին էլ չէր բացառվում, մանավանդ այն բանից հետո, երբ քեմալական զորքերի հրամանատար Կարաբեքիր փաշան 11-րդ Կարմիր բանակի հրամանատարին մարտի 11-ին ուղղված պաշտոնական հեռագրում հայտնում էր, որ «Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի որոշմամբ. Բաթումը, Ախալցխայի և Ախալքալաքի գավառները, որպես Թուրքիայի օրինական մասեր, պետք է միացվեն վերջինիս, և որ դրա հիման վրա էլ ինքը հրաման է ստացել նշված շրջանները զբաղեցնելու համար»:[237] Եվ սա այն դեպքում, երբ նույն օրերին Մոսկվայում ընթացող ռուս-թուրքական կոնֆերանսում համառ դիվանագիտական պայքար էր ծավալվել հենց նշված տարածքների, հատկապես՝ Բաթումի, պատկանելիության հարցի շուրջը: Կոնֆերանսի աշխատանքների ընթացքում Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությանը թեև ի վերջո հաջողվեց տարածքային մեծ զիջումների գնով, հիմնականում Հայաստանի տարածքների հաշվին, կորզել թուրքերի համաձայնությունը՝ Բաթումը, Ախալցխան և Ախալքալաքը խորհրդային տարածք ճանաչելու մասին, սակայն թուրքական զորքերը չէին շտապում հեռանալ տարածաշրջանից: Եվ միայն խորհրդային ղեկավարության և Կարմիր բանակի հրամանատարության վճռական հայտարարություններն ու գործողությունները, Կարմիր բանակի մուտքը այդ տարածքներ, ստիպեցին թուրքերին հեռացնել իրենց զորքերը: Կարմիր բանակը Ախալցխա մտավ 1921 թ. մարտի 8-ին, իսկ Ախալքալաք՝ մի քանի օր անց և փաստորեն կանխեց տեղի հայ բնակչությանը սպառնացող հերթական սպանդը, բայց բնակչության թալանը Ախալքալաքի գավառում շարունակվեց մինչև ապրիլի կեսերը, երբ քեմալական զորամասերը վերջնականապես հեռացան գավառից: Միաժամանակ, նրանք լքեցին նաև Ալեքսանդրապոլի գավառը, իսկ Բաթումը թողել էին դեռևս մարտի 24-ին:

Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի ռազմաքաղաքական համագործակցության արդյունքում Լոռու չեզոք գոտում հաղթանակած ապստամբությունը ոչ միայն հնարավոր դարձրեց հայկական այդ տարածքի միացումը Խորհրդային Հայաստանին, այլև՝ կանխեց չեզոք գոտուն հարակից հայկական մի քանի բնակավայրերի հնարավոր անջատումը Հայաստանից: Ինչ վերաբերում է Վրաստանի խորհրդայնացմանը, ապա դա նույնպես կարևոր նշանակություն ունե-

---

[237] Տե՛ս Революционные комитеты в Грузии. Сб. документов, Тбилиси, 1963, с. 55-56:

ցավ Խորհրդային Հայաստանի համար, նախ՝ դեպի Հայաստան հաղորդակցության ուղիների ապաշրջափակման տեսակետից և, ամենագլխավորը՝ եթե Վրաստանում իշխանության գլուխ մնային մենշևիկները, ապա հայ-վրացական հարաբերությունները բավականին կսրվեին, քանզի Հայաստանի խորհրդայնացումից հետո դրանք արդեն իսկ լարված էին: Նկարագրելով Լոռու ապստամբության օրերին Թիֆլիսում տիրող իրավիճակը, Լեոն նախ անկեղծորեն խոստովանում է, «որ անհնարին չէր այս տեսակ մթնոլորտի մեջ նաև հայկական կոտորածը», ապա հիացմունքով նշում, որ այդ ամենին վերջ տվեց Վրաստանի խորհրդայնացումը:[238]

Եթե Խորհրդային Ռուսաստանի համար Լոռու չեզոք գոտում վրացական զինագրավման դեմ բարձրացրած ապստամբությունը նախնառաջ կարևորվում էր Վրաստանի խորհրդայնացման հեռանկարներով, ապա վրացական զինագրավումից Լոռին ազատագրելը և Խորհրդային Հայաստանին միացնելը նրա բնակչության միահամուռ ցանկությունն էր և, ինչպես նկատում է Հ. Լազյանը, «Ապստամբության ամբողջ ժամանակամիջոցում նրանք թույլ չեն տվել ոչ մի դավաճանություն, ոչ մի անախորժ դեպք»:[239]

2. Խորհրդային Ռուսաստանը և Զանգեզուրի խորհրդայնացումը: Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Ադրբեջանին

Հայաստանի խորհրդայնացումը նոր հունի մեջ դրեց նաև Զանգեզուրի հարցը: Խորհրդայնացման նախօրեին Զանգեզուրը ազատագրվել էր ռուս-թուրք-թաթարական զորքերի զինագրավումից, իսկ Հայաստանի խորհրդայնացումից հետո պահպանում էր իր անկախությունը: Թերահավատորեն վերաբերվելով ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի և 11-րդ Կարմիր բանակի Ռազմահեղափոխական խորհրդի անդամ Օրջոնիկիձեի նախաձեռնությամբ Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի 1920 թ. նոյեմբերի 30-ի՝ «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի հանրապետության մաս համարելու» մասին որոշմանը,[240] ինչպես նաև այն փաստին, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագրով Խորհրդային

---

[238] Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 461:
[239] Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, էջ 103:
[240] Ռոմունիստ, Երևան, դեկտեմբերի 7, 1920, թիվ 2:

Ռուսաստանը նույնպես ճանաչել էր Զանգեզուրը Հայաստանի կազմում, 1920 թ. դեկտեմբերի 25-ին Սյունիքի Տաթևի վանքում հրավիրված համազանգեզուրյան համագումարին զանգեզուրցիները երկրամասը հռչակում են ինքնավար՝ քանի դեռ քաղաքական իրադրությունը հնարավորություն չի ընձեռի Հայաստանին միանալու համար: Սյունիքի սպարապետ նշանակվեց Գարեգին Նժդեհը:

Սակայն նման իրավիճակը երկար տևել չէր կարող, Զանգեզուրի անկախությունը լրջորեն անհանգստացնում էր խորհրդային իշխանություններին, 1921 թ. հունվարի 23-ին Գ. Օրջոնիկիձեն Բաքվից հեռագրում է Մոսկվա՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմ, պատճենը՝ Լենինին, Տրոցկուն, Ստալինին, որ զանգեզուրցիներին Թավրիզից աջակցում են անգլիացիները, «որոնք պատրաստվում են հարվածել մեզ դաշնակների օգնությամբ՝ Զանգեզուրի միջոցով»: Օրջոնիկիձեն հուշում է, որ Դրոյի հետ հանգամանալից զրույցից հետո ինքը համոզվել է, որ «եթե անգամ հաջողվի Հայաստանի համար թուրքերից կորզել 1914 թ. սահմանները (ինչը հազիվ թե հաջողվի), ապա այդ դեպքում էլ Զանգեզուրը մնալու է հակահեղափոխության հենաշարը»: Օրջոնիկիձեն Զանգեզուրը ռազմական ուժի միջոցով խորհրդայնացնելու կողմնակից էր, սակայն Մոսկվային հուշում է, որ «ճանապարհների անանցանելիության պատճառով Աղրբեջանի կողմից ռազմական գործողություններ ձեռնարկել Զանգեզուրի դեմ ներկայումս անհնար է»:[241]

1921 թ. ձմռանը 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը փորձում է բանակցությունների միջոցով լուծել Զանգեզուրի խորհրդայնացման խնդիրը: Այդ նպատակով փետրվարի 2-ին Գարեգին Նժդեհի մոտ Գորիս դիվանագիտական առաքելությամբ ժամանում է 11-րդ Կարմիր բանակի և Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների միացյալ պատվիրակությունը՝ Գրիգոր Վարդանյանի գլխավորությամբ: Վերջինս բանակցությունները սկսելուց առաջ Նժդեհին է փոխանցում Դրոյի նամակը: 1921 թ. հունվարի 21-ին Բաքվում գրած այդ նամակում պատճառաբանելով, որ առաջիկայում Մոսկվայում գումարվելիք խորհրդաթուրքական կոնֆերանսին Հայաստանի սահմանների հարցի լուծումը հօգուտ Հայաստանի պայմանավորված է նաև Զանգեզուրի խորհրդայնացումով և Խորհրդային Հայաստանին միացումով, Դրոն հուշում է, որ հարկավոր է ընդունել խորհրդայնացման առաջարկը: Նա համոզմունք է հայտնում, որ Մոսկվայի կոնֆերանսը «Կգա ապացուցելու, որ Խորհրդային Ռուսաստանը պաշտպա-

---

[241] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 3, թ. 12:

նելու է հայ աշխատավորության շահերը»:[242] Ավաղ, Դրոն չէր կարող կռահել, թե ինչպիսի կորուստներ է կրելու Հայաստանը Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով:

Չկիսելով Դրոյի լավատեսական հույսերը, Գարեգին Նժդեհը մերժում է ինչպես նրա, այնպես էլ խորհրդային պատվիրակության առաջարկությունը՝ խորհրդայնացումը ընդունելու մասին: Բանակցությունների ընթացքում Նժդեհը շեշտում է, որ դեմ չի լինի Զանգեզուրի խորհրդայնացմանը, եթե խորհրդային իշխանությունը ոչ թե խոսքով, այլ գործնականում ապացուցի իր արդար և բարի վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ: Հերքելով Անտանտի հետ իր համագործակցության մասին խորհրդային կողմի մեղադրանքները, Նժդեհը Զանգեզուրի խորհրդայնացման հետևյալ նախապայմաններն է դնում. քեմալական զորքերի հեռացումը Հայաստանի զինագրաված շրջաններից, Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի փաստացի միացումը Հայաստանին, հայ մտավորականների ազատումը խորհրդային բանտերից:[243] Այս ամենի մասին է նշվում նաև 11-րդ բանակի հրամանատար Գեկկերին ուղղված Նժդեհի նամակում: Նամակը, ինչպես նաև Սյունիքի կառավարության կողմից փետրվարի 4-ին կազմված բողոքհուշագիրը՝ ուղղված ՌՍՖԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինին, խորհրդային պատվիրակությանն է հանձնում կառավարության նախագահ Գեղեոն Տեր-Մինասյանը: Հուշագրում Խորհրդային Ռուսաստանի իշխանություններից և Կարմիր բանակի հրամանատարությունից պահանջվում է հանգիստ թողնել Զանգեզուրը և նրա ժողովուրդին, որովհետև՝ «Արևելքի Ձեր քաղաքականությամբ Հայաստան կոչված երկիրը կատարյալ դժոխքի եք վերածել»:[244]

Նժդեհին ուղղված պատասխանում Գեկկերը մերժում է քեմալաբոլշևիկյան հակահայկական դաշինքը, շեշտում, որ Մոսկվայի կոնֆերանսը նպաստավոր ընթացք կտա հայկական հարցի լուծմանը: 1921 թ. փետրվարի 24-ին Գեկկերին ուղղված հերթական նամակում Նժդեհը հեռատեսորեն պատասխանում է. «Միամիտ չլինենք ենթադրելով, որ Մոսկվայի Ձեր կոնֆերանսը մուկ չի ծնելու: Ձեր ցանկությամբ տաճիկները մտան Հայաստան, սակայն Ձեր հրամանով նրանք չպիտի հեռանան»:[245] Եվ իրոք, դա էր իրականությունը:

---

[242] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 29:
[243] Գեորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Եր.,1991,էջ 131-134:
[244] ՀԱԱ. ֆ. 114, ց. 2, գ. 70, թթ. 32-34:
[245] Գեորգյան Վ.. նշվ.աշխ., էջ 135-139:

Գիտակցելով, որ հաջողությունների չհասնելով բանակցությունների միջոցով Կարմիր բանակի հրամանատարությունը ձգտելու է ռազմական գործողությունների միջոցով խորհրդայնացնել Զանգեզուրը, վերջինիս անվտանգությունն ապահովելու համար, 1921 թ. փետրվարի 16-ին Նժդեհի զինակից Յապոնի (Հ. Պարոնյան) ջոկատը գրավում է Դարալագյազը: Կարմիր բանակի զորամասերը լուրջ դիմադրություն ցույց չտվեցին, իսկ մոտ 400 կարմիրբանակայիններ գերի հանձնվեցին: Դարալագյազը հռչակվեց Զանգեզուրի անբաժան մասը:

Մեծ ոգևորություն առաջացրեց Զանգեզուրում նաև Երևանում վիետրվարյան ապստամբության հաղթանակի լուրը: 1921 թ. մարտի 5-ին Յապոնի ջոկատը ազատագրեց Նոր-Բայազետը, սակայն Հայրենիքի փրկության կոմիտեին օգնության հասնելու, և նրա զինված ուժերին միանալու բոլոր ջանքերն ապարդյուն անցան:

Ինչպես նշեցինք, 1921 թ. ապրիլի 2-ին Կարմիր բանակը մտնում է Երևան, իսկ ապստամբական ուժերը և հոծ բազմությունը Դարալագյազով նահանջում են դեպի Զանգեզուր: Կարմիր բանակը չէր սահմանափակվելու Երևանի գրավումով՝ 1921 թ. ապրիլի 16-ին Մ. Վելիկանովը խմբավորման զորամասերին հրամայում է շարունակել դաշնակների հետապնդումն ու ջախջախումը, և կարճ ժամանակում դուրս գալ Զանգեզուրի սահմաններին:

Շարունակելով ապստամբների հետապնդումը, Կարմիր բանակը ապրիլի 15-ին գրավում է Դարալագյազը, Յապոնի ջոկատը նահանջում է դեպի Գորիս: Ապրիլի կեսերին 11-րդ բանակի զորամասերին հաջողվում է ճնշել նաև Նժդեհի զինակից Թևանի (Ստեփանյան) ղեկավարած ապստամբությունը Ղարաբաղում, Թևանի ջոկատը նույնպես նահանջում է դեպի Զանգեզուր:

Այսպիսով, 1921 թ. գարնանը Զանգեզուրը մնացել էր անկախության միակ կղզյակը Կովկասում և իր վրա սևեռել բոլշևիկների ամբողջ ուշադրությունը և ռազմական ներուժը:

1921 թ. մայիսի սկզբին Կարմիր բանակի հրամանատարությունը դադարեցնում է ապրիլյան հարձակումը և որոշում վերստին դիմել բանակցությունների՝ Զանգեզուրի խորհրդայնացման խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու համար: Մայիսի 12-ին Սիսիանի Հալաջուղ գյուղում խորհրդային (ՀՍԽՀ ներկայացուցիչ՝ Արտաշես Կարինյան և Կարմիր բանակի՝ Վ. Մելնիկով) և Լեռնահայաստանի (Գ. Տեր-Մինասյան, Մ. Մինասյան և Լ. Մինասյան) պատվիրակությունների միջև սկսված բանակցությունները, ինչպես և նախորդները, ավարտ-

վում են անարդյունք:[246] 1921 թ. մայիսի 23-ին տեղեկացնելով այդ մասին Ա. Գեկկերին, ՀՍԽՀ Ժողկոմխորհի նորընտիր նախագահ և ռազմգործժողկոմ Ալեքսանդր Մյասնիկյանը միաժամանակ խորհուրդ է տալիս համալրել Զանգեզուրի սահմաններին տեղակայված խորհրդային զորամասերը:[247]

Հերթական բանակցությունների ձախողումը ստիպում է ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյին վճռական քայլերի դիմել Զանգեզուրը խորհրդայնացնելու նպատակով: Բյուրոյի կողմից 1921 թ. հունիսի 3-ին ընդունված՝ «Զանգեզուրը հակահեղափոխականներից մաքրելու մասին» որոշման մեջ նշվում է. «*1.* Զանգեզուրը լիկվիդացնել հունիսի վերջին: *2.* Անմիջապես անցնել ռազմական գործողությունների նախապատրաստմանը: *3.* Դրա հետ մեկտեղ հանձնարարել Հայաստանի կառավարությանը Հոչակագիր ուղարկել Զանգեզուր: *4.* Միջոցներ ձեռնարկել Մեղրին անմիջապես գրավելու համար»:[248]

Կատարելով որոշման 3-րդ կետը, ՀՍԽՀ կառավարությունը հունիսի 13-ին ևս մեկ անգամ դիմում է Զանգեզուրի կառավարությանը՝ պայքարը դադարեցնելու և խորհրդայնացումը ընդունելու կոչով: Հոչակագրում նշվում է նաև, որ Զանգեզուրը և Ղարաբաղը լինելու են Խորհրդային Հայաստանի կազմում:[249]

Զանգեզուրի խաղաղ խորհրդայնացման կողմնակից էր նաև Հ.Յ. Դաշնակցության Գերագույն մարմինը: Վերջինիս որոշմամբ, Վահան Փափազյանը 1921 թ. մայիսի 26-ին Բեռլինից Մոսկվա՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած նամակում առաջարկում է բանակցություններ սկսել երկու կուսակցությունների միջև՝ միմյանց փոխհարաբերությունները ճշտելու, Զանգեզուրի խորհրդայնացման հարցը խաղաղ ճանապարհով լուծելու, Դաշնակցությանը հուզող մի շարք այլ հարցերի վերաբերյալ ՌԿ(բ)Կ դիրքորոշումը պարզելու համար: Նամակում հույս է հայտնվում, որ բոլշևիկյան կուսակցությունը սատար կկանգնի Հայկական հարցի արդարացի լուծմանը:[250]

1921 թ. հունիսի 7-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղղված նամակում Հ.Յ. Դաշնակցության հետ բանակցություններ վարելու օգտին է արտահայտվում Ռուսաստանում ՀՍԽՀ ներկայացուցիչ Ս. Տեր-Դաբ-

---

[246] Տե՛ս Բաղալյան Ա., Լեռնահայաստանի հերոսամարտը, «Դրոշակ», մարտի 12-25, 1998, թիվ 5, էջ 28-29:
[247] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4004, ց. 1, գ. 42, թ. 1:
[248] Տե՛ս նույն տեղում, ֆ. 4033, ց. 2, գ. 1187, թ. 13:
[249] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 26:
[250] Տե՛ս նույն տեղում, ֆ. 4047, ց. 1, գ. 191, թթ. 5-8:

ռիելյանը, նա հուշում է. նաև, որ հավանական է դրանք նպաստեն Զանգեզուրի հարցի խաղաղ լուծմանը:[251]

Հ.Յ.Դ-ի հետ բանակցությունների մեջ մտնելու անհրաժեշտության մասին է նշվում նաև Ռուսաստանի արտգործժողկոմատի կոլեգիայի անունից ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղղված արտգործժողկոմ Գ. Չիչերինի 1921 թ. հունիսի 10-ի նամակում:[252]

1921 թ. հունիսի 10-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն ընդունում է Հ.Յ. Դաշնակցության Գերագույն մարմնի առաջարկությունը և բանակցությունների անցկացման վայր նշանակում Ռիգան, իսկ խորհրդային պատվիրակության անդամներ՝ Բեռլինում Ռուսաստանի ներկայացուցիչ Ա. Իոֆֆեին (որպես ՌԿԿ Կենտկոմի ներկայացուցիչ) և Ռուսաստանում ՀՍԽՀ ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանին:[253]

Միակ կողմը, որ դեմ էր Հ.Յ. Դաշնակցության հետ բանակցություններ վարելու մտադրությանը դա ՀՍԽՀ կառավարությունն էր և ՀԿ(բ)Կ Կենտկոմը: Վերջիններիս անունից 1921 թ. հունիսի 22-ին Տեր-Գաբրիելյանին և ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղղված հեռագրում Ալ. Մյասնիկյանը նշում է, որ Հ.Յ. Դաշնակցության մայիսի 26-ի առաջարկությունը «պետք է անպատասխան թողնել... անբուլլատրելի է նաև Հայաստանի ներկայացուցչի մասնակցությունը բանակցություններին»: Խորհրդային Հայաստանի իշխանությունների նման դիրքորոշումը Մյասնիկյանը բացատրում է նրանով, որ այն դեպքում, երբ իրենք ջանք չեն խնայում՝ Զանգեզուրի հարցը խաղաղ ճանապարհով լուծելու համար, ապստամբները դավադրաբար հարձակվել են Դարալագյազում գտնվող կարմիր զորքերի վրա: ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահը հանդես է գալիս վճռական հայտարարությամբ. «Զանգեզուրի հարցն այսուհետև պետք է լուծվի բացառապես պատերազմով»:[254]

Մյասնիկյանի դիմումի վերաբերյալ, Կենտկոմի հանձնարարությամբ, կարծիք է հայտնում Վահան Տեր-Վահանյանը, որը նույնպես նշանակվել էր Ռիգայի բանակցություններին խորհրդային պատվիրակության անդամ: Հունիսի 25-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրո ուղղված նամակում Տեր-Վահանյանը Հայաստանի իշխանությունների դիրքորոշումը «քաղաքականապես սխալ է» որակում, և միանշանակ կողմ արտահայտվում Հ.Յ. Դաշնակցության հետ բանակցությու-

---

[251] Տե՛ս ֆ. 4047, ց. 1, գ. 191, թթ. 2-3:
[252] Տե՛ս նույն աղբյուր, թ. 10:
[253] Տե՛ս նույն աղբյուր, թ. 1:
[254] Տե՛ս նույն աղբյուր, թ. 17:

ներին:[255] Նույն օրը Կենտկոմի քաղբյուրոն վերահաստատում է բանակցություններ վարելու անհրաժեշտության մասին նախկինում ընդունած իր որոշումը:[256]

Դաշնակցության հետ բանակցություններ վարելու որոշմանը դեմ էր նաև ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն: Հունիսի 30-ին Կենտկոմ ուղարկած դիմումում բյուրոն իր աջակցությունն էր հայտնել Հայաստանի իշխանությունների դիրքորոշմանը:[257]

Մինչ Մոսկվայում մտորում էին Հ.Յ. Դաշնակցության հետ բանակցություններ սկսելու նպատակահարմարության հարցի շուրջը, Հայաստանում իրադարձությունները զարգանում էին կայծակնային արագությամբ: Երբ ՀՍԽՀ իշխանությունները դեռևս սպասում էին զանգեզուրցիներին հունիսի 13-ին ուղղված դիմումի պատասխանին, Նժդեհի զինված ուժերը ռազմական գործողություններ ծավալեցին կարմիր զորքերի դեմ և հունիսի 15-ին գրավեցին Դարալագյազը: Որակելով դա որպես դավադիր քայլ և բանակցությունների վիժեցում, խորհրդային իշխանությունը դիմում է վճռական գործողությունների: 1921 թ. հունիսի 18-ին ապստամբությունը ճնշելու հրաման է արձակում 11-րդ բանակի Երևանյան զորախմբի հրամանատար Մ. Վեյիկանովը:[258] Դեռևս հունիսի 6-ին, ի կատարումն Կովկասյան բյուրոյի հունիսի 3-ի որոշումների, նման հրաման էր արձակել նաև Ադրբեջանում տեղակայված Առանձին կովկասյան բանակի հրամանատարությունը:

Այսպիսով, Կարմիր բանակը Զանգեզուրի վրա հարձակվելու էր ինչպես արևմուտքից, այնպես էլ արևելքից: Հունիսի 20-ին այդ հարձակումը սկսվում է: Ալ. Մյասնիկյանի և Մ. Վելիկանովի կողմից կարմիր զորքերին ուղղված «Պատգամներում» և «Հրամանում» կոչ է արվում անխնա լինել՝ ավազակ ապստամբների և հոգատար՝ խաղաղ բնակչության նկատմամբ: Որպեսզի ռուս կարմիրբանակայիններին ավելի պարզ լինեն իրենց առջև դրված խնդիրները՝ Նժդեհի ապստամբական ուժերը համեմատվում են «Մախնոյական խմբերի» հետ: Ինչպես ժամանակին Հայաստանը, այնուհետև Վրաստանը, հետագայում Երևանը՝ Զանգեզուրը նույնպես հայտարարվում է «համակովկասյան հակահեղափոխության դրոշ», որի ջախջախումը կարևորվում է համակովկասյան շահերով:[259]

---

[255] Տե՛ս Ֆ. 4047, ց. 1, գ. 191, թ. 12:
[256] Տե՛ս նույն տեղում, թ. 11:
[257] Տե՛ս նույն տեղում, Ֆ. 4033, ց. 2, գ. 1187, թ. 14:
[258] ԲՀԱ. Երևան, 1980, թիվ 2, էջ 66-67:
[259] Տե՛ս Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, էջ 339-342:

1921 թ. հունիսի 26-ին Կարմիր բանակը մտնում է Դարալագյազ, հունիսի 30-ին՝ Սիսիան: Վերջինիս անկումից հետո Գարեգին Նժդեհը որոշում է դադարեցնել պայքարը և Գորիսից նահանջում դեպի Ղափան՝ գորիսցիներին պատգամելով, չդիմադրել հայ-ռուսական կարմիր զորքերին և անխնա լինել՝ եթե հարձակում ձեռնարկեն աղրբեջանական ջոկատները:

Հուլիսի 2-ին Գորիս են մտնում Առանձին կովկասյան բանակի և Երևանյան խմբավորման զորամասերը: Հուլիսի 7-ին նրանք արդեն Ղափանում էին՝ ապստամբական ուժերը Նժդեհի գլխավորությամբ նախօրոք նահանջել էին դեպի Մեղրի: Հայաստանում գտնվելու վերջին օրերին Նժդեհը դիմում է հղում Հայրենիքին. մի շարք պահանջների և մաղթանքների հետ մեկտեղ (որպեսզի հայ ժողովուրդը նորից չապստամբի խորհրդային իշխանության դեմ), նա շեշտում է, որ աղրբեջանցիները չպետք է վերադառնան Զանգեզուրի իրենց կողմից լքված գյուղերը, Զանգեզուրը և Ղարաբաղը մեկընդմիշտ պետք է լինեն Հայաստանի կազմում: Զգուշացնելով, որ ինքն ընդմիշտ չի հեռանում Լեռնահայաստանից, այլ կվերադառնա՝ եթե «Երևանի փոխարեն Բաքուն լինի Սյունիքի հողի վրա ոտք դնողը», Գարեգին Նժդեհը թողնում է Հայաստանի սահմանները և փոքրաթիվ ուժերով անցնում Արաքսի իրանական ափը:[260]

1921 թ. հուլիսի 13-ին Կարմիր բանակը մտնում է Մեղրի՝ Զանգեզուրի խորհրդայնացման գործընթացն այդպիսով ավարտված էր:

Հայ ժողովրդի մեծ զավակ Գարեգին Նժդեհի գլխավորած հերոսական պայքարի շնորհիվ երկրամասը կազմեց Խորհրդային Հայաստանի անբաժան մասը, հակառակ դեպքում՝ նրան կարող էր սպառնալ Նախիջևանի կամ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը:

1921 թ. հուլիսի 16-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Սարգիս Լուկաշինը շտապում է հեռագրել ՌԿ(բ)Կ Կենտկոմ, Գ. Չիչերինին և Ս. Տեր-Գաբրիելյանին. «Զանգեզուրը միանգամայն լիկվիդացիայի է ենթարկվել: Դաշնակցականների հետ բանակցությունների վարումը Հայաստանի կոմկուսի Կենտկոմը համարում է աննպատակահարմար և, նույնիսկ վնասակար, նամանավանդ՝ որ... երկրի ներսում մենք նրանց վերջնականապես ոչնչացնում ենք»:[261] Լուկաշինը դեռ անտեղյակ էր, որ հուլիսի 8-ին Ռիգայում սկսված բանակցություններն արդեն

---

[260] Գևորգյան Վ., նշվ. աշխ., էջ 173-175:
[261] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 191, թ. 29:

իսկ ավարտված էին՝ կողմերի միջև հուլիսի 14-ին մի շարք փաստաթղթերի նախաստորագրմամբ:

Համաձայն նախաստորագրած համաձայնագրի՝ խորհրդային պատվիրակությունը ՌԿ(բ)Կ-ի անունից համաձայնվում է, որ Հայկական հարցը լուծված կհամարի այն ժամանակ, «եթե Հայաստանը տարածքային առումով միավորված լինի»: Ըստ փաստաթղթի, Հայկական հարցը լուծելու նպատակով ՌԿ(բ)Կ-ն պարտավորվում է ազդել Թուրքիայի վրա՝ «Հայ ժողովրդի քաղաքական ազատ գոյության համար բավարար տարածք (ելքով դեպի ծով) տրամադրելու համար», իսկ եթե Միացյալ Հայաստան ստեղծելու համար պահանջվեր ապախորհրդայնացնել Խորհրդային Հայաստանը՝ պատրաստ լինել դիմելու այդ քայլին:[262]

Խորհրդային պատվիրակությունը հանդես է գալիս նաև գրավոր հայտարարությամբ, որում նշում է, որ ՌԿ(բ)Կ Կենտկոմը պարտավորվում է միջնորդել ՀԿ(բ)Կ Կենտկոմի առջև՝ Հ.Յ. Դաշնակցություն կուսակցության գործունեությունը Հայաստանում օրինականացնելու և նրա հետ համագործակցելու համար:[263]

Նախաստորագրած փաստաթղթերը հուլիսի 14-ին ուղարկվում են ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի հաստատմանը: Փաստաթղթերի հետ միասին խորհրդային պատվիրակության ղեկավար Իոֆֆեն ՌԿ(բ)Կ Կենտկոմ և արտգործժողկոմ Չիչերինին է ուղարկում փաստաթղթերի վերաբերյալ իր հիմնավորումները, դրանցում նա պնդում է, որ փաստաթղթերը անհրաժեշտ է անպայման հաստատել: Իոֆֆեն հուշում է, որ այդ դեպքում՝ կբարձրանա Խորհրդային Ռուսաստանի վարկանիշը Արևմուտքում, քաղաքացիական պատերազմը Զանգեզուրում կդադարի, եթե Զանգեզուրը և Ղարաբաղը միացվեն Խորհրդային Հայաստանին՝ հայ ժողովրդի վստահությունը Ռուսաստանի նկատմամբ կամրապնդվի: Իոֆֆեն շեշտում է նաև, որ «միաժամանակ լավ դաս կտանք Մուստաֆա Քեմալին և կապացուցենք նրան, որ մեր թիկունքում քաղաքականություն վարել անթույլատրելի է, և մեր նկատմամբ թշնամական վերաբերմունքի դեպքում՝ նրան օգնություն տրամադրել ամենևին էլ մտադիր չենք»: Նամակի վերջում Իոֆֆեն եզրակացնում է. «Ահա թե ինչու, մենք... համաձայնվեցինք նախաստորագրել կցվող փաստաթղթերը՝ այսինքն ցույց տվեցինք, որ անձամբ մենք դրանք ստորագրելու կողմնակից ենք, և ահա թե ինչու, ես Ձեզ համա-

[262] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 191, թ. 36:
[263] Նույն տեղում, թ. 33:

որեն և վճռականորեն խորհուրդ եմ տալիս համաձայնվել մեզ հետ և պաշտոնապես թույլ տալ ստորագրել այդ փաստաթղթերը»:[264]

Սակայն Զանգեզուրի խորհրդայնացումից հետո, երբ Հ.Յ. Դաշնակցությունն այլևս չէր կարող շահարկել Զանգեզուրի հարցը և այն կռվան դարձնել՝ բոլշևիկներից զիջումներ կորզելու համար, ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն 1921 թ. հուլիսի 26-ին որոշում է՝ «Վճռականորեն մերժել խորհրդային պատվիրակության կողմից Ռիգայում նախաստորագրված համաձայնագրի նախագիծը»:[265]

1921 թ. հուլիսի 28-ին Իոֆֆեն ստանում է Չիչերինի ծածկագիրը, որտեղ ՌՍՖԽՀ արտգործժողկոմը նրան տեղեկացնում է քաղբյուրոյի հուլիսի 26-ի որոշման մասին և շեշտում, որ «Անթույլատրելի էր արծարծել Թուրքահայաստանի հարցը, քանի որ մենք ամուր կանգնած ենք Մոսկվայի պայմանագիրը կատարելու դիրքերում»: Նա հուշում է նաև, որ նախաստորագրած փաստաթղթերը չպետք է մնան դաշնակների մոտ, որպեսզի «ոչ մի հետք չմնա»:[266] Նույն օրը ՌԿ(բ)Կ Կենտկոմ և Չիչերինին ուղղված պատասխան նամակում Իոֆֆեն նշում է, որ իրեն մեղավոր չի ճանաչում նախաստորագրած փաստաթղթերի համար, որովհետև իր բազմաթիվ խնդրանքները՝ բանակցություններ վարելու համար ստանալու ՌԿ(բ)Կ Կենտկոմի հրահանգները և ցուցումները, թողնվել են անպատասխան: Նա «ցավով» նշում է, որ այլևս «հետքերը վերացնել հնարավոր չէ» և զարմանք հայտնում, թե ինչու Մոսկվան չի ցանկանում փոխշահավետ համաձայնության գալ Հ.Յ. Դաշնակցության հետ և փոխել իր քաղաքականությունը Հայկական հարցում՝ «Հայկական հարցը համարելով սեփական շահերի հարցը»:[267]

Ցավալի է, որ Ա. Իոֆֆեի դիրքորոշումը որոշիչ չէր կարող լինել և բոլշևիկյան կուսակցությունը շարունակում էր վարել ոչ հայանպաստ քաղաքականություն՝ այն շղարշելով համաշխարհային հեղափոխության շահերով: Դա առավել ցայտուն կերպով արտահայտվեց Լեռնային Ղարաբաղի հարցում:

---

[264] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 191, թթ. 20-27:
[265] Նույն տեղում, թ. 30:
[266] Նույն տեղում, թ. 37:
[267] Նույն տեղում, թթ. 37-38:

* * *

Քանի դեռ Զանգեզուրն անկախ էր, Ղարաբաղի հարցը կարծես լուծվում էր Խորհրդային Հայաստանի օգտին: Կովկասյան բյուրոյի 1920 թ. հունիսի 3-ի որոշման 5-րդ կետով Հայաստանի կառավարությանը հանձնարարվեց հոչակագրով հայտարարել «Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին պատկանելիության մասին»:[268] Ելնելով կոնյուկտուրային շահերից, հարկավոր էր նպաստել Զանգեզուրի արագ խաղաղ խորհրդայնացմանը, բյուրոյի որոշմանը կողմ արտահայտվեց նաև Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը: Ի կատարումն Կովկասյան բյուրոյի որոշմանը՝ ՀՍԽՀ Ժողկոմխորհը 1921 թ. հունիսի 12-ին հայտարարեց. «Լեռնային Ղարաբաղը այժմվանից կազմում է ՀՍԽՀ անքաժան մասը»:[269]

1921 թ. հունիսի 25-ին Թիֆլիսում հրավիրվում է Կովկասյան բյուրոյի մայիսի 2-ի որոշումով կազմավորած Անդրկովկասի հանրապետությունների ներքին սահմանները որոշելու հանձնաժողովի անդրանիկ նիստը: Հանձնաժողովում Հայաստանի միակ ներկայացուցիչ Ալ. Բեկզադյանը նիստի մասնակիցներին ներկայացնում է վերջին տարիներին հայ ժողովրդի կրած ծանր կորուստների, Հայաստանի սոցիալ-տնտեսական ներկա դժվարին կացության, այնտեղ կուտակված քազմահազար գաղթականների բնակեցման խնդրի (որը լուծելու համար տարածքներ են անհրաժեշտ), վերջապես՝ Մոսկվայի ռուսթուրքական պայմանագրով Հայաստանի համար ստեղծված ծանր վիճակի մասին: Հաշվի առնելով այդ ամենը, Բեկզադյանը առաջարկում է Ադրբեջանից և Վրաստանից հայկական տարածքների կտրակցումներ կատարել Հայաստանի օգտին:

Հանձնաժողովի ադրբեջանցի և վրացի ներկայացուցիչները կտրականապես մերժում են տարածքային փոփոխությունների մասին Բեկզադյանի առաջարկը, դա որակում որպես ազգայնական դիրքորոշում, իսկ հանձնաժողովի նախագահ Ս. Կիրովը, որը աջակցում էր վրաց-ադրբեջանական այլանսին, շեշտում է, որ «Քաղաքական նկատառումներից ելնելով ներկայումս տարածքային կտրակցումների մասին խոսք անգամ լինել չի կարող»:[270]

1921 թ. նոյեմբերի 22-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրո ուղղված զեկուցագրում անդրադառնալով Անդրկովկասի հանրապետութ-

---

[268] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1187, թ. 13:
[269] Խորհրդային Հայաստան, Երևան, հունիսի 19, 1921:
[270] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 640-642.

յուններում ազգայնական թեքումների հարցին, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի անդամներ Մ. Հուսեյնովն ու Ռ. Ախունդովը, որպես դրա «ցայտուն օրինակ», ցինիկորեն բերում էին Բեկզադյանի կողմից հանձնաժողովի վերը նշված նիստում ներկայացված տարածքային պահանջների օրինակը. «Ընկ. Կիրովը վկա է հանդիսանում, - նշվում է զեկուցագրում, - թե ինչպես առաջին իսկ նիստում Հայաստանի ներկայացուցիչ ընկ. Բեկզադյանը հանձնաժողովին մի քարտեզ ներկայացրեց՝ Ադրբեջանի և Հայաստանի միջև սահմանագծերի նախագծով, ըստ որի՝ Ադրբեջանի շուրջ բառորդ մասն անցնում էր Հայաստանին»:[271]

Հանձնաժողովի հունիսի 25-ի նիստին առաջ քաշվեց նաև Լեռնային Ղարաբաղի հարցը, որի քննարկումը, սակայն, Ադրբեջանի ներկայացուցիչ Մ. Հուսեյնովի խնդրանքով հետաձգվում է՝ հարցի վերաբերյալ Բաքվից անհրաժեշտ հրահանգներ և լիազորություններ չստանալու պատճառաբանությամբ:[272]

Ստեղծված նյարդային լարված մթնոլորտում, որը սպառնում էր ձախողել հանձնաժողովի աշխատանքները, Ս. Կիրովը և Գ. Օրջոնիկիձեն հունիսի 26-ին շտապում են հեռագրել Բաքու՝ Նարիմանովին. «Զանգեզուրում ստեղծված իրավիճակում Հայաստանի սահմանների որոշման բանակցություններում ընդմիջումը թողնում է խիստ անբարենպաստ տպավորություն:... Խնդրում ենք շտապ հրավիրել քաղբյուրո և ժողկոմխորհ ու լուծել Ղարաբաղի հարցը»: Օրջոնիկիձեն և Կիրովը հայտնում են նաև հարցի վերաբերյալ իրենց կարծիքը՝ «Անհրաժեշտ է ղեկավարվել այսպիսի սկզբունքով՝ ոչ մի հայկական գյուղ չպետք է միացվի Ադրբեջանին, ինչպես և ոչ մի մուսուլմանական գյուղ չի կարելի միացնել Հայաստանին»:[273]

Նույն օրը հրավիրվում է Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի համատեղ նիստ, որին Օրջոնիկիձեի և Կիրովի առաջարկությունը արմատապես սխալ է համարվում, ինչ վերաբերում է Ղարաբաղի հարցում Բեկզադյանի հարցադրմանը, ապա նիստին ընդունվում է հետևյալ որոշումը. «Ելնելով Լեռնային Ղարաբաղի տնտեսական բացարձակ կապն Ադրբեջանի հետ, հարցը պետք է լուծել հենց այդ իմաստով»:[274]

---

[271] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 3, pp. 140-141;
[272] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 642.
[273] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 105, pp. 7-10:
[274] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 645.

1921 թ. հունիսի 27-ին որոշման մասին Բաքվից հաղորդելով Թիֆլիս՝ Հուսեյնովին, նշվում է, որ հակառակ դեպքում՝ Նարիմանովը սպառնացել է Ադրբեջանի Ժողկոմխորհի հրաժարականով: Պատասխանում Հուսեյնովը Նարիմանովին հուշում է, որ որոշումը սառնությամբ կընդունվի, որովհետև իր հետ զրույցում Օրջոնիկիձեն շիտակ հայտնել է, որ Ղարաբաղի հարցի լուծումը խորհրդային իշխանության պատվի հարցն է, և պետք է լուծվի վերջնական, և այն ձևով, «ինչպես ես Ձեզ երեկ հաղորդել եմ»:[275]

Սակայն, անգամ բոլշևիկ բարձրաստիճան ղեկավարների վճռական «հրահանգը» չազդեց Նարիմանովի վրա: Այսպիսով, երբ Կարմիր բանակի կողմից հունիսի վերջին Զանգեզուրի վրա սկսված հաջող հարձակումը կանխորոշեց վերջինիս խորհրդայնացման խնդիրը, Ադրբեջանը կոշտ և անզիջում քաղաքականություն որդեգրեց Ղարաբաղի հարցում:

Հանդիպելով ադրբեջանական կողմի նման դիրքորոշմանը, Ալ. Բեկզադյանը հունիսի 27-ին հրաժարվում է մասնակցել անդրկովկասյան հանրապետությունների սահմանների հարցի որոշման հանձնաժողովի հետագա աշխատանքներին և պնդում, որպեսզի վիճելի հարցերը փոխանցվեն Կովկասյան բյուրոյի քննարկմանը:

1921 թ. հուլիսի 2-7-ը Թիֆլիսում գումարված ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 4-ի նիստին, որին Օրջոնիկիձեի հրավերով մասնակցում էր Հյուսիսային Կովկասում (Նալչիկում) իր արձակուրդն անցկացնող ՌԿ(բ)Կ Կենտկոմի անդամ Ստալինը, քննարկելով Ղարաբաղի հարցը, քվեարկության արդյունքում ընդունվում է օրինական և արդարացի որոշում՝ «Լեռնային Ղարաբաղը մտցնել ՀՍԽՀ կազմ»: Սակայն որոշմանը դեմ է արտահայտվում Նարիմանովը, նա պնդում է, որպեսզի հարցի վերջնական լուծումը փոխադրվի ՌԿ(բ)Կ Կենտկոմ: Բայց հաջորդ օրը, հուլիսի 5-ին, հրավիրվում է Կովկասյան բյուրոյի պլենումի արտահերթ նիստ, որին վերանայվում են Ղարաբաղի հարցի վերաբերյալ հուլիսի 4-ի պլենումի որոշումները: Պլենումը առանց քվեարկություն անցկացնելու որոշում է. «Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ՍԽՀ սահմաններում, նրան տալով մարզային լայն ինքնավարություն...»:[276]

Կարծում ենք, հուլիսի 5-ի որոշման ընդունման գործում ՌԿ(բ)Կ Կենտկոմի անդամ Ստալինի բացասական դերը մեծ էր, բայց

---

[275] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 105, թ. 11:
[276] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 649-650.

ոչ որոշիչ: Այլապես ինչով բացատրել, որ Ստալինի ներկայությունը հուլիսի 4-ի նիստին չէր խանգարել Հայաստանի օգտին արդարացի որոշման ընդունմանը: Չի բացառվում, որ հուլիսի 4-ի որոշումից հետո աղրբեջանական կողմին հաջողվել էր ստանալ ՌԿ(բ)Կ Կենտկոմի ավելի բարձրաստիճան անդամների, ենթադրաբար Լենինի և Տրոցկու աջակցությունը, համոզել նրանց՝ հրահանգել Կավբյուրոյին վերանայելու հուլիսի 4-ի որոշումը Ադրբեջանի օգտին:

Կավբյուրոյի հուլիսի 5-ի ոչ օրինական որոշման կայացման նշված վարկածի օգտին է խոսում նաև այն փաստը, որ այլենումին Հայաստանի ներկայացուցիչ Մյասնիկյանը, Նարիմանովի օրինակով, չպնդեց զարարաղյան հարցի վերջնական լուծումը ՌԿ(բ)Կ Կենտկոմ փոխադրելու հարցում, որի իրավունքը նա ուներ:

Հայկոմկուսի առաջին համագումարին (հունվարի 26-29, 1922 թ.) ունեցած ելույթում հերքելով իր և ՀԿ(բ)Կ Կենտկոմի հասցեին հնչած խիստ քննադատությունը և ծանր մեղադրանքները, որ վերջիններս Ղարաբաղի հարցում չդրսևորեցին վճռականություն և ավելի հաստատակամ չպնդեցին երկրամասը Խորհրդային Հայաստանին միացնելու հարցում, Ալ. Մյասնիկյանը, կարծես արդարանալով, հուշում է միայն, որ Կովկասյան բյուրոյի այլենումի նիստը հիշեցնում էր Անդրկովկասի հանրապետությունների նախկին ղեկավարների պայքարը. «Այսպես՝ Ադրբեջանն ասում էր՝ եթե Հայաստանը պահանջի Ղարաբաղը, ապա մենք նավթ չենք մատակարարի».[277] Սակայն պետք է ենթադրել, որ անդրկուլիսյան բանակցություններում Նարիմանովի կողմից որպես որոշիչ կռվան առաջ է քաշվել ոչ միայն ադրբեջանական նավթի՝ այլև «թուրքական գործոնը»:

Այսպիսով՝ «թուրք-ադրբեջանական ճնշումը Խորհրդային Ռուսաստանի վրա, - իրավացիորեն նկատում է ակադեմիկոս Հ. Ավետիսյանը, - կրում էր մեթոդական և հետևողական բնույթ».[278] Իսկ բոլշևիկյան առաջնորդների համար որոշիչը ոչ թե հայ ժողովրդի արդար պահանջատիրությունն էր, այլ Բաքվի նավթը և քեմալական Թուրքիայի բարեհաճ տրամադրվածությունը, համաշխարհային հեղափոխության շահերը:

Ինչևէ, ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի այլենումի հուլիսի 5-ի ոչ օրինական որոշումով խախտվեց միջազգային իրավունքի հիմնարար՝ ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը, ոտնահարվեցին Ղարա-

---

[277] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 2, թթ. 13, 23:
[278] Ավետիսյան Հ.Ա., նշվ. աշխ., էջ 355:

բաղի հայ բնակչության իրավունքները, անտեսվեցին Խորհրդային Հայաստանի շահերը: Ահա թե ինչու, ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1921 թ. հուլիսի 16-ին միանգամայն սխալ և անբավարար ճանաչեց Ղարաբաղի հարցի վերաբերյալ Կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի որոշումը:[279]

ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 7-ի նիստում իր իրավաքաղաքական հանգուցալուծումը ստացավ նաև Լոռու չեզոք գոտու, ինչպես նաև Ախալքալաքի և Խրամի (Ծալկայի) «վիճելի» շրջանների՝ Հայաստանին կամ Վրաստանին միացնելու խնդիրը: Թեժ քննարկումներից հետո քվեարկության արդյունքում, ձայների վեց կողմ, մեկ ձեռնպահ հարաբերակցությամբ որոշվեց Լոռու չեզոք գոտին միացնել Հայաստանին, իսկ Ախալքալաքի և Խրամի շրջանների հարցը փոխանցել Վրաստանի կոմկուսի Կենտկոմի քննարկմանը:[280] Վերջինս հուլիսի 16-ին հաստատեց Լոռու չեզոք գոտու մասին Կովկասյան բյուրոյի որոշումը, ինչ վերաբերում է Ախալքալաքի և Խրամի շրջաններին, ապա, նկատի ունենալով այդ շրջանների՝ Թիֆլիսի հետ «ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական կապվածության նկատառումները», Կենտկոմն անընդունելի համարեց դրանց գիջումը Հայաստանին:[281]

Հայ-վրացական սահմանի մասին վերջնական համաձայնագիրը ստորագրվեց 1921 թ. նոյեմբերի 6-ին Թիֆլիսում: ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի և Վրաստանի հեղկոմի նախագահ Պ. Մդիվանու կողմից ստորագրված այդ փաստաթղթով Լոռու չեզոք գոտին, բացառությամբ հայաբնակ սահմանամերձ որոշ գյուղերի (Աղ-Քյորփի, Օփրեք, Խոժոռնի, Բրդաձոր, Սադախլո և այլն), մնաց Խորհրդային Հայաստանի, իսկ Ախալքալաքի և Խրամի շրջանները՝ Վրաստանի կազմում:[282]

Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի կազմում թողնելու Կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի ոչ օրինական որոշումից հետո Ադրբեջանի ղեկավարությունը ջանք ու եռանդ չէր խնայում՝ ստանալու արցախահայության համաձայնությունը՝ Ադրբեջանի գերիշխանությունը ճանաչելու հարցում: Այդ նպատակին հասնելու համար ադրբե-

---

[279] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 18:
[280] Տե՛ս նույն տեղում, գ. 47, թ. 8:
[281] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 7, թթ. 43-45:
[282] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 116, թ. 29: Տե՛ս նաև նույն տեղում, գ. 55, թթ. 3, 10: Խնդրի վերաբերյալ մանրամասն տե՛ս նաև Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, էջ 337-347:

ջանական իշխանությունները Լեռնային Ղարաբաղի տարբեր շրջաններում լայն քարոզարշավ անցկացրեցին, սակայն ամենուրեք հանդիպեցին «սառը դիմադրության»: Բաթվի ջանքերով Ստեփանակերտում հրավիրված շրջանի գործադիր կոմիտեների ներկայացուցիչների 1921 թ. հուլիսի 28-ի համագումարի աշխատանքների մասին Ղարաբաղից Երևան ուղարկած գաղտնի զեկուցագրերից մեկում նշվում է. «Դրությունն օրհասական է, խնդրում ենք միջոցներ ձեռնարկել՝ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միացնելու համար»:[283] Այդպիսին էր Ղարաբաղի ողջ հայ բնակչության միահամուռ ցանկությունը, սակայն դրա հետ ոչ ոք հաշվի չէր նստում:

Այնուհանդերձ, արցախահայության և Խորհրդային Հայաստանի ղեկավարության հաստատակամ և հետևողական ջանքերի շնորհիվ երկու տարվա համառ դիմադրությունից հետո Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները ստիպված էին նահանջել և 1923 թ. հուլիսի 7-ի որոշումով Լեռնային Ղարաբաղին տրամադրել ինքնավար մարզի կարգավիճակ:[284] Դրա շնորհիվ էր նաև, որ արցախահայությունը խորհրդային տարիներին միասնաբար դիմակայեց Ադրբեջանի սադրանքներին և ազգային խտրականության քաղաքականությանը, Արցախը չհայաթափվեց:

3. Հայկական հարցը խորհրդա-թուրքական հարաբերությունների ոլորտում: Մոսկվայի ու Կարսի կոնֆերանսները

Ռուսաստանի և Հայաստանի խորհրդային իշխանությունների նկատմամբ հայ ժողովրդի վերաբերմունքը և վստահության հարցը կապված էր ՀՍԽՀ սահմանների հարցի արդարացի լուծման հետ: Բ. Բորյանը իրավացիորեն և դիպուկ նկատում է, որ «Խորհրդային Հայաստանը, առավել քան մյուս ազգային խորհրդային հանրապետությունները, շահագրգռված էր Խորհրդային Ռուսաստանի ճիշտ քաղաքականության անցկացման մեջ Արևելքում, որովհետև մեծ տերությունների արևելյան քաղաքականությունը հանգեցրել էր հայ ժողովրդի կեսի բնաջնջմանը...»:[285]

---

[283] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, pp. 41-42:
[284] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 669-670.
[285] Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, часть II, М.-Л., 1929, с. 149.

Հայաստանի խորհրդայնացումով տարածաշրջանում ստեղծված քաղաքական նոր իրադրությունը ստիպում էր Մոսկվային ճշգրտումներ է մտցնել խորհրդային արևելյան քաղաքականության մեջ: 1920 թ. դեկտեմբերի 3-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրո ուղղված զեկուցագրում ՌՍՖԽՀ կառավարության արտգործժողկոմ Գ. Չիչերինը հուշում է, որ «Եթե մենք դիվանագիտական աջակցություն ցույց չտանք Խորհրդային Հայաստանին, ապա դա ամենուրեք կհիասթափեցնի խորհրդային իշխանության կողմնակիցներին»: Չիչերինը անհրաժեշտ է համարում «չափավորել թուրքերի պահանջները Հայաստանի նկատմամբ» և շարունակել պնդել Արևմտահայաստանի որոշ մասի անկախության համար: Սակայն նա միաժամանակ շեշտում է, որ «դա չպետք է փորձաքար հանդիսանա թուրքերի հետ մեր բարեկամական հարաբերությունների համար»:[286]

Չիչերինի զեկուցագիրը քննարկվում է Կենտկոմի քաղբյուրոյի դեկտեմբերի 4-ի նիստին, զեկուցագրի հիման վրա մշակված, և Ստալինի կողմից առաջարկված «թուրքական հարցի մասին» բանաձևի նախագծի վերաբերյալ լրացման մեջ Լենինը գրում է. «Հավատաք քեմալականներին, նրանց զենք չտրամադրեք, բոլոր ջանքերն ուղղեք թուրքերի շրջանում խորհրդային ագիտացիա անցկացնելու, ամուր հիմքերի վրա հիմնված և սեփական ուժերով հաղթանակի հասնելու ունակ խորհրդային կուսակցություն ստեղծելուն»:[287]

Այսպիսով, Թուրքիան և «ամբողջ Արևելքը» խորհրդայնացնելու բոլշևիկյան ծրագրերը դեռևս շարունակում էին օրակարգում մնալ, թեև դրանց մասին չէր բարձրաձայնվում: Այդ ծրագրերի իրականացման գործում որոշակի դեր կարող էր ունենալ նաև Խորհրդային Հայաստանը: Պատահական չէ, որ արդեն 1920 թ. դեկտեմբերի 20-ին ՀՍԽՀ արտգործժողկոմատի պատասխանատու աշխատակից Մ. Պետրոսյանի կողմից պատրաստված «Խորհրդային Հայաստանի Արևելքի քաղաքականության մասին» զեկուցման մեջ նշվում է, որ խորհրդային հռչակվելուց հետո Հայաստանը, «իբրև դաշնակից Ռուսաստանի ընկերային հեղափոխության մեծ շարժման, պիտի կատարի իր կողմից ավանգարդի դերը հետամնաց Արևելքի մեջ, տարածելու համար հեղափոխական սերմերը տառապող աշխատավոր ժողովուրդների մեջ և ստեղծելու Արևելյան ազգերի մի նոր ֆեդերացիա, որը Անդրկովկասյան ֆեդերացիայի հետ միասին պիտի կապվի հեղա-

[286] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 7, թ. 21:
[287] Ленин В.И., Неизвестные документы. 1891-1922 гг., с. 404.

փոխական Ռուսաստանին»: Այնուհետև հուշելով, որ «Հայաստանը պետք է դառնա միջնորդը Ռուսաստանի արևելյան քաղաքականության», Պետրոսյանը նշում է, որ այդ խնդիրները իրականացնելու համար ՀՍԽՀ արտգործժողկոմատի համակարգում պետք է ստեղծել «Արևելքի բաժին», որը կհամագործակցի Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի արտգործժողկոմատների համապատասխան բաժինների հետ:

Զեկուցագրի մի ամբողջ բաժին Պետրոսյանը նվիրում է թուրքական թեմային: «Ինչպե՞ս ենթարկել Թուրքիան սովետիզացիայի» վերնագիրը կրող այդ բաժինը սկսվում է «Թուրքիայի մեջ բանվորագյուղացիական հեղափոխություն առաջ բերելը ամենադժվարին գործն է» հեղինակի մտքով: Պետրոսյանն այնուհետև մասնավորապես հուշում է, որ առաջին հերթին հարկավոր է Թուրքիան ողողել խորհրդային գործակալներով (գերադասելի են ռուսաստանցի և ադրբեջանցի թուրք մտավորականները), որոնք այնտեղ պետք է հիմնեն գաղտնի կազմակերպություններ և հեղափոխություն տարածեն թուրքերի մեջ, իսկ գաղտնի այդ կազմակերպությունների «ընդհանուր ղեկավարությունը պետք է լինի Հայաստանի մեջ»:[288]

Ահա թե ինչպիսի դերի, ըստ Մ. Պետրոսյանի, պետք է հավակներ Խորհրդային Հայաստանը Ռուսաստանի արևելյան քաղաքականության համատեքստում: Սակայն, ինչպես ցույց տվեցին իրադարձությունների հետագա զարգացումները, Թուրքիան խորհրդային ուղեծրում պահելու համար Հայաստանից ոչ թե դա էր պահանջվելու, այլ «տարածքային առավելագույնս զոհաբերություններ»:

Հայաստանի խորհրդայնացումով դարձյալ առաջին պլան մղվեց խորհրդաթուրքական նոր կոնֆերանս հրավիրելու հարցը: Հայ-թուրքական սահմանի որոշման հարցը Ռուսաստանի իշխանությունները շարունակում էին կապել խորհրդաբեմալական հակաիմպերիալիստական դաշինք ստեղծելու խնդրի հետ, որը կազմում էր բոլշևիկների արևելյան քաղաքականության առանցքը: Միևնույն ժամանակ, Խորհրդային Ռուսաստանի իշխանությունների համար արդեն ակնառու էին դարձել քեմալականների «երկդիմի կեցվածքը», և նրանց զավթողական քաղաքականության միտումները: Այստեղ է որ Խորհրդային Հայաստանի դերը կարևորվում է Ռուսաստանի կողմից, 1921 թ. դեկտեմբերի 5-ին Ռ(ք)Կ Կենտկոմի քարտուղար ուղղված զեկուցագրում Գ. Չիչերինը հուշում է. «Ես միշտ նշել եմ, որ եթե Թուրքիայի քա-

[288] ՀԱԱ, ֆ.114, ց. 1, գ. 16, թթ. 3-5:

դաբականությունը Կովկասում վերածվի զավթողականի՝ Հայաստանը դրա դեմ պատնեշ կդառնա և կպաշտպանի մեզ»:[289]

1920 թ. դեկտեմբերի 9-ին բեմալական կառավարությանը ուղղված հուշագրում ՌՍՖԽՀ կառավարությունը անհրաժեշտ է համարում նախատեսվող կոնֆերանսին Խորհրդային Հայաստանի (ինչպես նաև Ադրբեջանի) ներկայացուցիչների մասնակցությունը և հավաստում, որ «Ռուսաստանի և Թուրքիայի միջև արգելապատնեշ լինելուց՝ Հայաստանը դարձել է բարեկամական օղակ այդ նույն երկրների միջև»:[290] Սակայն, ինչպես արդեն նշել ենք, Հայաստանի նկատմամբ թուրքերի թշնամական վերաբերմունքը խորհրդայնացումից հետո չվերացավ: Քեմալականները դա հիմնավորում էին՝ մատնանշելով ՀՍԽՀ իշխանությունների մեղմ քաղաքականությունը Հ.Յ. Դաշնակցության նկատմամբ, և կառավարությունում Դրոյի ներկայությունը: Քեմալականների նման դիրքորոշումը Գ. Օրջոնիկիձեն անհիմն էր համարում, Չիչերինի հետ դեկտեմբերի 8-ին ունեցած հեռագրագրույցում Օրջոնիկիձեն շեշտում է, որ բոլոր դեպքերում «թուրքերը միևնույնն է՝ խոսելու են անվստահության մասին»: «Իմ կարծիքով, - հուշում է Օրջոնիկիձեն, - թուրքերի իրական մտադրությունն է՝ Հայաստանը բաժանել մեր միջև»:[291]

Հայաստանի խորհրդայնացումով տարածաշրջանում ստեղծված քաղաքական նոր իրավիճակում թուրքական իշխանությունների դիրքորոշումները պարզելու նպատակով Մոսկվան որոշում է դիվանագիտական նոր առաքելություն գործուղել Անկարա: Այն կազմավորվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի կողմից, անդամներ նշանակվեցին Թուրքիայի կոմունիստական կուսակցության ներկայացուցիչներ Աբիդ Ալիմովը, Սոկեյման Նուրին, իսկ նախագահ՝ Իսմայիլ Խակկին:[292] Առաքելության կազմն իսկ հուշում է, որ նրա կողմից հավաքվող տեղեկությունները օբյեկտիվ լինել չէին կարող:

1920 թ. դեկտեմբերի սկզբին հանձնախումբը Ալեքսանդրապոլում հանդիպումներ է ունենում և բանակցություններ վարում հայ ժողովրդի դահիճ Կարաբեքիր փաշայի հետ: Հիմնականում նրանից ստացած տեղեկությունների հիման վրա Ի. Խակկին դեկտեմբերի կե-

---

[289] АВП РФ, ф.04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52987, л. 66.
[290] ДВП СССР, т. III, Москва, 1959, с. 371-372.
[291] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 2, թ. 185:
[292] Ի. Խակկին 1920 թ. սեպտեմբերի սկզբին Բաքվում հրավիրված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի կողմից կազմավորված Քարոզչության և գործողության խորհրդի նախագահության անդամ էր:

սերին Երևանից զեկուցագիր է հղում Բաքու՝ ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրո: Դրանում Խակկին անհիմն է համարում այն լուրերը, թե իբր քեմալականները նպատակ ունեն ընդհանուր լեզու գտնել Կ. Պոլսի սուլթանական կառավարության և Անտանտի հետ: Նա շեշտում է, որ Հայաստանում Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Լեզրանի կողմից ժամանակին ներկայացված այդ կարծիքը մոլորություն է: Խակկին միաժամանակ հուշում է, որ Հայաստանի սահմանների հարցի լուծման վերաբերյալ վերջինիս տեսակետը (Լեզրանը հանձնախմբին առաջարկել էր թուրքերի հետ հանդիպումներին բարձրացնել Կարսը Հայաստանին թողնելու հարցը - Կ.Խ.) միանգամայն հակասում է մեր ընդհանուր նպատակին: Զեկուցագրի վերջում Խակկին տեղեկացնում է, որ հանձնախմբի անդամներ Ալիմովը և Նուրին ուղեորվել են Բաքու՝ Կովկասյան բյուրոյին ընդարձակ զեկուցագիր ներկայացնելու համար, իսկ ինքը մնալու է Հայհեղկոմի տրամադրության տակ, և պետք է քարոզչական և կազմակերպչական աշխատանք վարի Հայաստանի մահմեդական բնակչության շրջանում:[293]

1920 թ. դեկտեմբերի 20-ին Կովկասյան բյուրո ուղղված զեկուցագրում Ալիմովը և Նուրին նշում են հետևյալ եզրահանգումների մասին. քեմալականները պատրաստ են Խորհրդային Ռուսաստանի հետ ձեռք ձեռքի պայքարել միջազգային իմպերիալիզմի դեմ և գերակշռող դեր խաղալ Արևելքի հեղափոխականացման գործում, Խորհրդային Հայաստանի նկատմամբ քեմալականների անվստահությունը կշարունակվի՝ բանի դեռ դաշնակների հանդեպ չի ծավալվում անողոք պայքար, Կ. Պոլսի կառավարության, Անտանտի և քեմալականների միջև որևէ համաձայնություն չկա: Հանձնախմբի անդամները առանձնակի շեշտում են, որ Կարսի հարցի բարձրացումը կհանգեցնի անցանկալի հետևանքների:[294]

Այսպիսով հանձնախումբը, ինչպես և ապասվում էր, հանդես եկավ քեմալականներին բոլոր միջոցներով սիրաշահելու, օգնելու և պաշտպանելու դիրքորոշմամբ, ինչը միանգամայն տրամաբանական էր. չէ որ նրա բոլոր անդամները թուրքեր էին:

Ընդգծված թուրքամետ դիրքորոշում ուներ, ինչպես արդեն նշել ենք, նաև քեմալականների մոտ Ռուսաստանի կառավարության ներկայացուցիչ Պ. (Ռուդու) Մդիվանին: Նա ջանքեր չէր խնայում՝ Ռուսաստանի բոլշևիկյան իշխանություններին համոզելու, որ քեմալա-

---

[293] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 59, թ. 11:
[294] Նույն տեղում, ց. 1, գ. 16, թթ. 64-65:

կանները, և անձամբ Կարաբեքիրը, խորհրդային իշխանության ամենանվիրված բարեկամներն են, միաժամանակ՝ Անտանտի թշնամիները: Կողմնակալ և Հայաստանի շահերի համար վնասակար տեղեկություններ հայտնելով և մոլորության մեջ գցելով Ռուսաստանի իշխանություններին, Մդիվանին խորհուրդ է տալիս խորհրդաթուրքական բանակցություններում չբարձրացնել Կարսի, Վանի, Մուշի, հայկական այլ տարածքների հարցը: Նշենք, որ Մդիվանին վայելում էր անձամբ Ստալինի մեծ համակրանքը և հովանավորությունը: Երբ 1920 թ. նոյեմբերի կեսերին Խորհրդային Ռուսաստանի կառավարության առջև խնդիր ծառացավ՝ թե ո՞ւմ գործուղել քեմալականների մոտ որպես Ռուսաստանի ներկայացուցիչ (առկա էին մի քանի թեկնածուներ. Էլիավա, Ստարկ, Մդիվանի), Ստալինը միանշանակ և վճռականորեն պաշտպանեց Մդիվանու թեկնածությունը: Մոսկվա՝ Լենինին և Չիչերինին ուղղված հեռագրում նա հուշում է. «Մդիվանին ծանոթ է մեր քաղաքականությանը (Արևելքում - Կ.Խ.) այնքան, որքան Ստարկը և Էլիավան միասին վերցրած: Չի կարելի դատել Մդիվանու մասին վստահություն չներշնչող պաշտոնամոլների կասկածելի զեկույցների հիման վրա»: Վճռական բացառակ հայտնելով «վստահություն չներշնչող կոմունիստ և ոչ փորձառու քաղաքական գործիչ» Ստարկի թեկնածությանը, Ստալինը դիմում է շանտաժի, նա Լենինին և Չիչերինին զգուշացնում է. ինձ հետ «Ձեր անհամաձայնության դեպքում՝ խնդրում եմ գործել առանց իմ գիտության»:[295]

Ի տարբերություն Մդիվանու՝ այլ էր Հայաստանում ՌՍՖԽՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Բ. Լեզրանի վերաբերմունքը քեմալականների նկատմամբ: Ճիշտ գնահատելով Արևելքում տեղի ունեցող իրադարձությունները, քեմալական շարժման բուն էությունը, Լեզրանը գտնում էր, որ իրականում՝ քեմալականները շարունակում են երիտթուրքերի զավթողական, պանթուրքական քաղաքականությունը Անդրկովկասում: 1920 թ. դեկտեմբերի 22-ին Չիչերինին ուղղված հեռագրում Լեզրանը հուշում է. «Հայաստանում խորհրդային հեղաշրջումը թուրքերի քաղաքականության մեջ չառաջացրեց ոչ մի շրջադարձ Հայաստանի անկախության նկատմամբ: Նրանք պահպանում են թշնամական դիրքը... թաքցնում են իրենց սեփական անվստահությունը Խորհրդային Ռուսաստանի կովկասյան քաղաքակա-

[295] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 2, թ. 139:

նության նկատմամբ: Ինձ թվում է, թե թուրքերը մեզ ուզում են մեկուսացնել Արևելքում անմիջական գործունեությունից»:[296]

Նշենք, որ Խորհրդային Ռուսաստանի քաղաքական որոշ շրջանակներում նույնպես առկա էին հակաքեմալական տրամադրություններ: 1920 թ. դեկտեմբերի վերջին Մոսկվայում հրավիրված Համառուսաստանյան խորհուրդների 8-րդ համագումարին խորհրդակցական ձայնով մասնակցող ընդդիմության ներկայացուցիչներ մենշևիկ Ֆ. Դանը և սոցիալիստ-հեղափոխական (էսէռ) Վոլսկին պահանջեցին խզել Ռուսաստանի հարաբերությունները Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության հետ: Նրանք իրավացիորեն պնդում էին, որ Մուստաֆա Քեմալը երկդիմի քաղաքականություն է վարում Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ: Վոլսկու կողմից առաջարկված «Արևելյան քաղաքականության վերաբերյալ սոցիալիստ-հեղափոխականների փոքրամասնության թեզիսներում» նշվում է. «Քեմալ փաշայի գլխավորած շարժումը նպաստում է թուրքական իմպերիալիզմի ծրագրերի իրականացմանը, նրանք ձգտում են անջատել Կովկասը Ռուսաստանից և Կովկասի ժողովուրդներին ենթարկել Թուրքիային»: Էսէռները անհրաժեշտ են համարում անմիջապես խզել հարաբերությունները Քեմալի հետ:[297]

Սակայն բոլշևիկյան մենատիրության պայմաններում նման իրատեսական մոտեցումները դատապարտված էին անտեսման՝ համագումարը միաձայն մերժեց դրանք: Փոխարենը՝ համագումարին միաձայն հավանության արժանացան լենինյան արևելյան քաղաքականության հիմունքները: Համագումարի կոմունիստական ֆրակցիայի նիստին եզրափակիչ խոսքում Լենինը շեշտեց, որ հարկավոր է բարեկամական հարաբերություններ հաստատել թեմալականների հետ, և նրանց բազմակողմանի օգնություն տրամադրելով՝ ընդհանուր պայքար ծավալել միջազգային իմպերիալիզմի դեմ:[298]

Իսկ թե այդ դեպքում ի՞նչ էր վիճակված հայ ժողովրդին, պարզ է դառնում, երբ ծանոթանում ենք այն մտքերին, որոնք արտահայտեց բոլշևիկների առաջնորդը 1920 թ. դեկտեմբերի 13-ին Կրեմլում՝ Հայհեղկոմի անդամներ Ս. Տեր-Գաբրիելյանի և Ա. Մռավյանի հետ հանդիպման ժամանակ: Մոսկվայից վերադարձած Մռավյանը դեկտեմբե-

---

[296] Տե՛ս Ավետիսյան Հ.Ա., նշվ. աշխ., էջ 353:
[297] Восьмой Всероссийский съезд Советов. Стенографический отчет, Москва, 1921, с. 52.
[298] Լենին Վ.Ի., ԵԼԺ, հ. 42, էջ 154-155:

րի 26-ին Բաքվից հաղորդում է. ՀՍԽՀ արտգործժողկոմ Ալեքսանդր Բեկզադյանին. Լենինը Կարսը թուրքական քաղաք է համարում, և մեր այն դիտողությանը, որ եթե արդարացի չկարգավորվեն Հայաստանի տարածքային հարցերը Կոմկուսը կվարկարեկի իրեն հայ ժողովրդի առջև՝ նա պատասխանել է, որ պատրաստ է դրան, և ավելացրել, որ իրենք ժամանակավորապես պարտավորված են հայ աշխատավորների շահերը զոհաբերել համաշխարհային հեղափոխության շահերին:[299]

Համաշխարհային հեղափոխության շահերին պատրաստ էին ծառայեցնել հայ ժողովրդին և Հայաստանը նաև կոմունիստ հայերը: 1920 թ. դեկտեմբերի 23-ին տեղի ունեցած Հայկոմկուսի ընդհանուր ժողովին արտգործժողկոմ Բեկզադյանը Խորհրդային Հայաստանը հռչակեց «համաշխարհային կոմունիստական բանակի զորամասերից մեկը», որի նպատակն է լինելու՝ Ռուսաստանի և Թուրքիայի հետ միասին Արևելքում պայքարել միջազգային իմպերիալիզմի դեմ, իսկ «մնացյալ ամեն ինչը բխելու է այս ընդհանուր սկզբունքային պլատֆորմից»:[300]

Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի դիվանագիտական համատեղ բոլոր ջանքերը՝ ազդելու քեմալականների վրա, որպեսզի փոխվի նրանց թշնամական վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ, որևէ արդյունք չտվեցին: 1921 թ. հունվարի 18-ին Օրջոնիկիձեին ուղղված հեռագրում Չիչերինը նշում է. «Թուրքերը ոչ միայն աջակցություն ցույց չեն տալիս խորհրդային հանրապետությանը (Հայաստանի – Կ.Խ.), այլև շրջափակում են այն, թալանում, սովի մատնում: Յուրաքանչյուր խորհրդային հանրապետության գործը, մեր գործն է և մենք մեզ հավատարիմ չէինք լինի, եթե անտարբեր դիտեինք եղբայրական խորհրդային հանրապետության հոգևարքը»:[301]

Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին փետրվարի 6-ին ուղղված հեռագրում Գ. Չիչերինը հավաստիացնում է, որ ՌՍՖՍՀ կառավարությունը «ամենավճռական ձևով կպնդի, որ թուրքական իշ-

---

[299] Տե՛ս Մսբրյան Զ., Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի դաշնագրերը, 1920-1921 թթ.,) Բեյրութ, 1979, էջ 95 (Հեղինակը հենվում է հետևյալ աթիթվային փաստաթղթի վրա՝ F.O. 371/6266 E 2303, և նշում, որ Մռավյանի և Բեկզադյանի «խոսակցությունն ըստ էության լրատեսված է Անդրկովկասի մեջ բրիտանական ներկայացուցչի՝ գնդապետի տեղակալ Սթոքսի միջոցով և 1921 թ. փետրվարի 2-ին Լոնդոն՝ Ֆորեյն Օֆիս... «գաղտնի» մակագրությամբ փոխանցված»):

[300] Բեկզադյան Ալ., Նամակներ, հոդվածներ. փաստաթղթեր, Եր., 1981, էջ 84:

[301] ДВП СССР, т. III, с. 479.

խանությունները փոխեն իրենց վերաբերմունքը Հայաստանի... նկատմամբ»:[302] Սակայն դրանք միայն սին խոսքեր էին, թուրքական զորքերը շարունակում էին ավերել Հայաստանի զինազրաված շրջանները, կոտորել տեղի բնակչությանը, մինչդեռ հայ ժողովուրդը համոզված էր, որ խորհրդայնացումից հետո թուրքերը կհեռանան Հայաստանից: Դրանում համոզված էին նաև արևմտահայ մի խումբ գաղթականները, նրանց դիմումում Մոսկվա՝ Լենինին, Ստալինին, Կարախանին և Տեր-Գաբրիելյանին, նշվում է. «Մենք հավատում էինք, որ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման փաստն իսկ սթափեցնող ներգործություն կունենան Քեմալի վրա», սակայն նա շարունակում է ավերել նաև Խորհրդային Հայաստանը, իսկ նրա իշխանություններին հաշվի չի առնում և արհամարհում է: Գաղթականները հույս են հայտնում, որ Խորհրդային Ռուսաստանը «վճռական բայլերի կդիմի, խելքի կբերի Քեմալին և կփրկի Խորհրդային Հայաստանը հետագա ավերումից»:[303]

Նույն հույսեր էին կապում Խորհրդային Ռուսաստանի հետ նաև ՀՍԽՀ իշխանությունները: Ռուսաստանում Հայաստանի ներկայացուցիչ Տեր-Գաբրիելյանը վերջիններիս վստահեցնում էր, որ Ստալինը և հեղինակավոր ու ազդեցիկ կուսակցական այլ գործիչները զգալիորեն փոխել են իրենց բարյացակամ վերաբերմունքը քեմալականների նկատմամբ: 1921 թ. հունվարի 15-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմ ուղղված նամակում նշելով այդ մասին, Սահակ Տեր-Գաբրիելյանը հույս է հայտնում, որ Լենինի, Կրեստինսկու, Ստալինի և այլոց հետ իր հանդիպումները չեն մնա անարդյունք և կնպաստեն Հայաստանի սահմանների հարցի արդարացի լուծմանը:[304] Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին հունվարի 16-ին ուղղված հերթական հեռագրում Տեր-Գաբրիելյանը դարձյալ «վստահաբար» շեշտում է. «Մոսկվայում թուրքերի նկատմամբ վերաբերմունքը Ձեր օգտին է»:[305]

* * *

Խորհրդաթուրքական կոնֆերանսին նշանակված հայկական պատվիրակությունը Ալ. Բեկզադյանի գլխավորությամբ հունվարի երկրորդ կեսին ուղևորվում է Մոսկվա (Բեկզադյանը հունվարի 15-ին

---

[302] ДВП СССР, т. III, с. 508.
[303] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 35, թ. 34:
[304] Նույն տեղում, ֆ. 4049, ց. 1. գ. 7, թթ. 3-4:
[305] Նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 9, թ. 15:

ստացել էր Գ. Չիչերինի հեռագիրը՝ Մոսկվա մեկնելու անհրաժեշտության մասին): Տեղ հասնելուն պես, հայկական պատվիրակությունը Ռուսաստանի արտգործժողկոմատ է ներկայացնում փաստաթղթերի, քարտեզների, փաստագրական այլ նյութերի մեծ փաթեթ՝ «Հայկական պատվիրակության 1921 թ. փետրվարի 2-ի տեղեկատու զեկուցումը ռուս-թուրքական կոնֆերանսի համար» վերնագրով: Զեկուցման «Հայաստանը մինչև վերջին հայ-թուրքական պատերազմի սկիզբը» բաժնում բացահայտվում է հայկական մի շարք տարածքների (Կարս, Արդահան, Բայազետ, Ալեքսանդրապոլ, Սուրմալու, Նախիջևան, Շարուր-Դարալագյազ և այլն) ինչպես ռազմավարական, այնպես էլ սոցիալ-տնտեսական նշանակությունը. շեշտվում է, որ նշված տարածքները հարկավոր է ընդգրկել Խորհրդային Հայաստանի կազմում: «Թուրքիայի հետ սահմանների տարբերակներ» բաժնում առաջարկվում է հնարավոր չորսը տարբերակ:[306] Փաստաթղթերին ծանոթանալուց հետո ակնհայտ է դառնում, որ հայկական կողմի կարծիքով՝ ՀՍԽՀ սահմաններում պետք է լինեին 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակի դրությամբ Հայաստանի Հանրապետությանը պատկանող տարածքները:

Առաջ անցնելով նշենք, որ հայկական պատվիրակության զեկուցագիրը ռուս-թուրքական կոնֆերանսին չներկայացվեց: Ավելին՝ ՌՍՖՍՀ արտգործժողկոմի տեղակալ Լևոն Կարախանը կոնֆերանսի բացման նախօրյակին Բեկզադյանից վերցնում է բոլոր փաստաթղթերը՝ պայմանով, ծանոթանալ դրանց և վերադարձնել հաջորդ օրը: Սակայն, ինչպես տեղեկանում ենք Բեկզադյանի 1921 թ. ապրիլի 6-ի դիմումից Կարախանին, վերջինս չէր շտապում վերադարձնել փաստաթղթերը: Դիմումում Կարախանին հուշելով, որ «Մինչ օրս՝ թեև մեկ ամսից ավելի ժամանակ է անցել, ես փաստաթղթերը ետ չեմ ստացել», Բեկզադյանը նրանից պահանջում է անհապաղ վերադարձնել դրանք:[307] Քանի որ ռուս-թուրքական պայմանագիրը վաղուց արդեն ստորագրվել էր և հայկական պատվիրակության «Զեկուցագիրը» այլևս որևէ դեր խաղալ չէր կարող, Կարախանը ապրիլի կեսերին վերադարձնում է փաստաթղթերը Բեկզադյանին:

Եթե Հայաստանի խորհրդայնացումից հետո Ռուսաստանի կառավարությունը բազմիցս շեշտում էր խորհրդաթուրքական կոնֆերանսը հնարավորինս շուտ հրավիրելու անհրաժեշտության մասին և

---

[306] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թթ. 1-23:
[307] Նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 85, թ. 8:

մտահոգված էր, որ քեմալականները յուրաքանչյուր պահի կարող են «նետվել Անտանտի գիրկը», ապա թուրքերն առանձնապես չէին շտապում: Չգտնելով ժամանակ շահել, և հետևել իրադարձությունների զարգացմանը, քեմալականները միաժամանակ քայլեր էին ձեռնարկում, որպեսզի մինչև կոնֆերանսի պաշտոնական բացումը Ռուսաստանի իշխանություններից անհրաժեշտ երաշխիքներ ստանան՝ հայկական հարցը իրենց օգտին լուծելու վերաբերյալ: Խորհրդաթուրքական կոնֆերանսին նշանակված թուրքական պատվիրակությունը (նախագահ՝ քեմալական կառավարության ժողտնտեսության ժողկոմ Յուսուֆ Քեմալ) Մոսկվա ուղևորվելու ճանապարհին 1921 թ. հունվարին Կարսում նախնական բանակցություններ է վարում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Բուդու Մդիվանու հետ: Քեմալական կառավարության արտգործնախարարի պաշտոնակատար Ահմեդ Մուխթարի կողմից 1921 թ. հունվարի 30-ին Գ. Չիչերինին ուղղված հուշագրից երևում է, որ բանակցություններում թուրքերը որոշակի հաջողությունների էին հասել: Մուխթարը նշում է. «Ձեր ներկայացուցիչը (Մդիվանին - Կ.Խ.) ՌՍՖԽՀ-ի անունից պաշտոնապես հաստատել է, որ Թուրքիայի կողմից Հայաստանին տարածքային զիջումների մասին խոսք լինել չի կարող:... Ուստի այլևս որևէ լուրջ խոչընդոտներ չկան, որպեսզի կարողանան դժվարացնել մոսկովյան բանակցությունները»:[308]

Իր հերթին, թուրքերի հետ բանակցությունների ավարտից հետո Մդիվանին հունվարի 20-ին Կարսից Օրջոնիկիձեին ուղարկած նամակում հուշում է. «Ճիշտ է, որ մենք պետք է հոգանք Խորհրդային Հայաստանի մասին, բայց պակաս ճիշտ չէ նաև այն, որ թուրքերին էլ պետք է սիրաշահենք, և ներկա պահին գործի այդ կողմն առավել կարևոր է»: Մդիվանին մտահոգություն է հայտնում, որ Մոսկվայում հարցի վերաբերյալ առկա են հակադիր տեսակետներ՝ եթե «Ստալինը և Լենինը ինձ հուշում են, - գրում է նա, - որ Կարսի համար թուրքերի հետ վիճել չի կարելի, ապա Չիչերինը, պարզվում է, պահանջել է Վանը և Մուշը»:[309] Չիչերինի կողմից թուրքերին ներկայացված այս պահանջի մասին հայտնի է դառնում նաև Ստալինին, որը շտապում է իր մտահոգությունները կիսել Վ. Լենինի հետ: «Ընկեր Լենին, ես միայն երեկ տեղեկացա, - փետրվարի 12-ին վերջինիս ուղղված նամակում

---

[308] ДВП СССР, т. III, с. 469.

[309] Տե՛ս Зограбян Э., Территориально-разграничительные вопросы на второй Московской русско-турецкой конференции (февраль-март 1921 г.) «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1989, թիվ 2, էջ 15:

գրում է Ստալինը, - որ Չիչերինը, իսկապես, ինչ որ ժամանակ թուրքերին ուղարկել է հիմար (և սադրիչ) պահանջ՝ Հայաստանի օգտին Վանը, Մուշը և Բիթլիսը (թուրքերի հսկայական գերակշռությամբ թուրքական շրջանները) մաքրելու մասին: Հայկական իմպերիալիստական այդ պահանջը չի կարող լինել մեր պահանջը: Պետք է արգելել Չիչերինին հայերի ազգայնական տրամադրությամբ հուշագրեր ուղարկել թուրքերին»:[310]

Կոնֆերանսի նախօրյակին ընդգծված հակահայկական բովանդակությամբ դիմումներ է հղում Վ. Լենինին նաև Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը, հանձին հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի: Նշենք, որ խորհրդաթուրքական կոնֆերանսին նշանակված թուրքական պատվիրակությունը դեպի Մոսկվա ճանապարհին, Կարսից ժամանեց Բաքու և այստեղ բազմաթիվ հանդիպումներ ունեցավ Ադրբեջանի ղեկավարության հետ: Դրանց արդյունքում մշակվեցին թուրք-ադրբեջանական համատեղ գործողությունների ծրագրեր՝ Հայկական հարցում Մոսկվայի վրա ճնշումներ գործադրելու նպատակով:

Ծրագրի մասն էր կազմում փետրվարի կեսերին Լենինին հասցեագրված Նարիմանովի նամակը: Լենինը նամակին ծանոթանում է փետրվարի 19-ին և նրանում Նարիմանովի կողմից արծարծված առավել կարևոր հարցերի տակ ընդգծումներ է կատարում: Նարիմանովը մասնավորապես հուշում է Լենինին, որ խորհրդաթուրքական ապագա բանակցություններին «թուրքերի համար ամենանուրբ հարցը հայկականն է: Այդ հարցում նրանք առավելագույն եռանդ են հանդես բերել, որպեսզի այն իրենց օգտին լուծվի»: Ադրբեջանի հեղկոմի նախագահը շեշտը դնում է նրա վրա, որ «եթե *Հայկական հարցի պատճառով* (այստեղ և այնուհետև ընդգծված է Լենինի կողմից - Կ.Խ.) Մոսկվան իրենից հրի անկարացիներին (քեմալականներին - Կ.Խ.), ապա նրանք, հուսալքված, կարող են նետվել Անգլիայի գիրկը»: Նարիմանովը Լենինին «նախազգուշացնում է», որ «Չիչերինը շփոթում է Արևելյան հարցը, *նա չափազանց շատ է հրապուրվում Հայկական հարցով,* և հաշվի չի առնում այն ամենը, ինչը կարող է պատահել, եթե անկարացիների հետ խզումը տեղի ունենա հենց Հայկական հարցի պատճառով»: Նամակի վերջում Նարիմանովը հուշում է, որ «Եթե ցանկանում ենք Ադրբեջանը մեր ձեռքին պահել, ապա *պետք է ինչ գնով ուզում է լինի անկարացիների հետ ամուր դաշինք կնքեք*», ինչը «մեզ կրերի մուսուլմա-

[310] Տե՛ս նույն աեղում:

նական ամբողջ Արևելքը»:[311] Պարզ է, որ Լենինի ընդգծումները նշանակում էին, որ նա չափազանց կարևոր նշանակություն էր տալիս այդ հարցերին, և հիմնականում համաձայն էր Նարիմանովի եզրահանգումների հետ:

Հայաստանում խորհրդային իշխանության տապալման լուրը ստանալուց անմիջապես հետո 1921 թ. փետրվարի 21-ին Նարիմանովը շտապում է հերթական նամակը ուղղել Լենինին: Նրանում մեկ անգամ ևս Նարիմանովը նախազգուշացնում է, որ «Հայկական հարցը թուրքական պատվիրակության հետ բանակցություններում չպետք է դեր խաղա»:[312]

Իր հերթին թուրքական պատվիրակությունը, որը Բաքվից արդեն ժամանել էր Մոսկվա, նույնպես ժամանակն անիմաստ չէր վատնում, 1921 թ. փետրվարի 23-ին թուրքերը հանդիպում են Ստալինի հետ: Հանդիպման մանրամասներին տեղեկանում ենք թուրքական պատվիրակության անդամ, Ռուսաստանում Թուրքիայի կառավարության առաջին դեսպան Ալի Ֆուադ փաշայի (Ջերեսոյ) «Մոսկովյան հիշողություններ» մենագրությունից: Ըստ Ջերեսոյի՝ իրենց կողմից Ստալինին ներկայացված այն մտավախությանը, որ հայկական հարցը կարող է մտնել խորհրդա-թուրքական կոնֆերանսի օրակարգ և բացասական ազդեցություն ունենալ ռուս-թուրքական հարաբերությունների վրա, Ստալինը պատասխանել է. «Դուք հայկական հարցը լուծել եք ինքնուրույն: Եթե դեռևս մնացել են չլուծված հարցեր՝ վճռեք մինչև վերջ»:[313]

Ի. Ստալինի, Ն. Նարիմանովի, Պ. Մդիվանու ընդգծված հակահայկական դիմումները, նրանց կողմից Գ. Չիչերինի դեմ ուղղված մեղադրանքներն ի վերջո տվեցին իրենց բացասական արդյունքները: Եթե 1920 թ. հուլիս-օգոստոս ամիսներին տեղի ունեցած ռուս-թուրքական առաջին կոնֆերանսին Չիչերինի ջանքերով քեմալականների նկրտումները հայկական տարածքների նկատմամբ մերժվեցին, իսկ ռուս-թուրքական պայմանագրի կնքումն էլ հետաձգվեց, ապա 1921 թ. գարնանը ՌՍՖԽՀ արտգործժողկոմը այլևս անկարող էր կանխել հայկական հարցի ոչ արդարացի լուծումը:

Այսպիսով, ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսի նախօրեին ինչպես քեմալականների և Խորհրդային Ադրբեջանի, այնպես էլ

---

[311] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 614-616.
[312] Նույն տեղում, էջ 617:
[313] Տե՛ս Հայոց պատմություն (նյութերի ժողովածու, 1900-1939 թթ.), էջ 202:

առանձին բոլշևիկ գործիչների հակահայկական քարոզարշավը բավականին արդյունավետ էր: Սակայն դա վճռորոշ դեր ունենալ չէր կարող, եթե չլիներ ՌԿ(բ)Կ Կենտկոմի և, հատկապես, Վ. Լենինի և Լ. Տրոցկու՝ Հայկական հարցի նկատմամբ նույն, ոչ հայանպաստ դիրքորոշումը: Հատկանշական է, որ 1921 թ. փետրվարի 26-ին (Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսի բացման օրը) Լենինը անձամբ ընդունեց թուրքական պատվիրակությանը և երկարատև առանձնազրույց ունեցավ նրա հետ:[314]

Պետք է ենթադրել, որ հենց այս բանակցությունների արդյունքում հարթվեցին խորհրդա-բեմալական վիճահարույց հարցերի մեծ մասը, նաև այն, որ կոնֆերանսը հայտարարվեց ոչ թե քառակողմ, ինչպես նախատեսված էր, այլ երկկողմ՝ ռուս-թուրքական: Թուրքական պատվիրակության համառ ջանքերի շնորհիվ էր, որ հայկական պատվիրակությունը չմասնակցեց կոնֆերանսին: Ինչպես դրա, այնպես էլ կոնֆերանսում հայկական շահերի անտեսման իրական պատճառներն ակնհայտ են դառնում, երբ ծանոթանում ենք Ալ. Բեկզադյանի կողմից 1921 թ. մարտի 18-ին Մոսկվայից Հայհեղկոմին ուղղված նամակի բովանդակությանը: Հայկական պատվիրակության նախագահը նրանում մասնավորապես նշում է, որ «Երևանի հեղաշրջումը (նկատի ունի 1921 թ. փետրվարյան ապստամբությունը Հայաստանում - Կ.Խ.) միայն որոշ անհարմար վիճակի մեջ գցեց հայկական պատվիրակությանը: Իսկ ամենագլխավորն այն է, որ Մոսկվա մենք հասանք ոչ բարենպաստ պահի, որպեսզի հույս ունենայինք, որ կարժանանանք կենտրոնի հետաքրքրությանը և ուշադրությանը Հայաստանի դրության ու գործերի նկատմամբ»: Բեկզադյանը դա բացատրում է Խորհրդային Ռուսաստանի թե ներքին, և թե արտաքին ծանր դրությամբ. պարենային և վառելիքային սուր ճգնաժամ, հակախորհրդային բազմաթիվ ապստամբությունների օջախների առաջացում ամբողջ Ռուսաստանով մեկ, ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարի տենդագին նախապատրաստում, և այս ամենին գումարած՝ Լոնդոնի միջազգային կոնֆերանսը, որը սպառնում է ներգրավել Թուրքիան հակախորհրդային ճամբարում: Միաժամանակ հուշելով, որ ստեղծված իրավիճակը միանգամայն բարենպաստ է թուրքական պատվիրակության համար, որն առավելագույն տարածքային պահանջներ է ներկայացրել ռուսական պատվիրակությանը, Բեկզադյանը ցավով կանխատեսում է.

---

[314] Տե՛ս Хейфец А.Н., Советская дипломатия и народы Востока, 1921-1927, Москва,1968, с.107: Տե՛ս նաև Զոհրաբյան Է., նշվ. աշխ., ԼՀԳ, Եր.,1989, թիվ 2, էջ 3:

«Չնայած մեր ատամների կրճտոցին, մեր հասարակությունը (նկատի ունի ՌՍՖԽՀ ամենաբարձր ղեկավարությունը - Կ.Խ.) կգնա զիջումների՝ (ի հաշիվ Հայաստանի)», և դրանց գնով բեմալականներին կպահի իր ազդեցության ոլորտում: Բեկզադյանը նշում է նաև, որ Թուրքիայի հետ պայմանագիրը ստորագրելուց հետո, Ռուսաստանը «մեզ և ադրբեջանցիներին կառաջարկի այս կամ այն ձևով մասնակից դառնալ այդ ակտին»:[315]

Հետաքրքիր է, որ գտնվելով Մոսկվայում հայկական պատվիրակության նախագահը գրեթե անտեղյակ էր կոնֆերանսի աշխատանքների ընթացքից, և մարտի 18-ին դեռ չգիտեր, որ ռուս-թուրքական պայմանագիրն արդեն իսկ պատրաստ է, իսկ իր կանխատեսումները՝ իրականություն են դարձել: Եվ դա այն դեպքում, երբ Խորհրդային Ադրբեջանի ներկայացուցիչ Բ. Շախթախթինսկին ոչ միայն լավատեղյակ էր կոնֆերանսի աշխատանքներին, այլև սահմանային տարանջատման խնդիրների վերաբերյալ ոչ պաշտոնական բանակցություններ էր վարում թուրքական պատվիրակության հետ:

Ռուս-թուրքական կոնֆերանսն անցնում էր բավականին լարված և փոխադարձ անվստահության մթնոլորտում: Խորհրդային պատվիրակությունը, հանձին արտգործժողկոմ Գ. Չիչերինի (նախագահ) և Ջ. Կորկմասովի, որը թուրքերի պահանջով վերջին պահին փոխարինել էր Լ. Կարախանին, չէր պատրաստվում բավարարել թուրքերի տարածքային բոլոր պահանջները, այդ թվում՝ Հայաստանի հաշվին: Այսպիսով ինչպես առաջին, այնպես էլ ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսը, կարծես ձախողման վտանգի առջև էր կանգնած:

Սակայն խրադարձությունների նման զարգացումը չէր բխում բոլշևիկյան Ռուսաստանի շահերից, 1921 թ. գարնանը նրա թե ներքին, և թե արտաքին դրությունը խիստ ծանր էր, և բոլշևիկները պատրաստ էին ինչ գնով էլ լինի պայմանագիր կնքել թուրքերի հետ:

Ստեղծված պայմաններում գործի է անցնում բոլշևիկների «ծանր հրետանին». Լենինը, որն ըստ Չիչերինի՝ «իրական հեռատեսությամբ էր հետևում բանակցությունների ճակատագրին»,[316] որոշում է գործի դնել Ստալինին: Բանակցությունների ամենաթեժ պահին, մարտի 9-ին Լենինը Չիչերինին հուշում է, որ նա կես ժամով ընդհատի կոնֆերանսի աշխատանքները, իր՝ Լենինի հետ հանդիպելու պատր-

---

[315] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 25:

[316] Чичерин Г.В., Статьи и речи по вопросам международной политики, Москва, 1961, с. 283.

վակով, իսկ այդ ընթացքում Ստալինը «բացեիբաց կխոսի թուրքական պատվիրակության հետ, որպեսզի գործը պարզի և ավարտին հասցնի հենց այսօր»:[317] Վլադիմիր Լենինի մտահղացումը ճշտորեն իրագործվում է, Ստալինը միջամտում է կոնֆերանսի աշխատանքներին և հարթում ռուս-թուրքական տարաձայնությունները: Թե որքան կարևոր և անհետաձգելի էր Ստալինի մասնակցությունը թուրքերի հետ բանակցություններին կարելի է դատել հետևյալ փաստից: Ռուս-թուրքական կոնֆերանսին զուգահեռ Մոսկվայում ընթացող ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարի մարտի 9-ի երեկոյան նիստի օրակարգում ընդգրկված էր նաև Ստալինի զեկուցումը «Ազգային հարցի» վերաբերյալ: Բայց այն հետաձգվում է, որովհետև՝ ինչպես համագումարի պատվիրակներին տեղեկացնում է նիստը նախագահող Լև Կամենևը, «Պարզվում է՝ ընկ. Ստալինը զբաղված է թուրքական պատվիրակության հետ բանակցություններում, որոնցից նրան կտրել չի կարելի»:[318]

Փաստերը վկայում են, որ ինչպես ռուս-թուրքական կոնֆերանսին նախորդող շրջանում, այնպես էլ կոնֆերանսի ընթացքում Ստալինը և նրա կողմից ղեկավարված ՌՍՖԽՀ ազգությունների ժողկոմատը վարում էր ընդգծված հակահայկական քաղաքություն: Կոմիսարիատի պաշտոնաթերթ «Ժիզն նացիոնալնոստեյ» պարբերականի 1921 թ. մարտի 4-ի համարում լույս տեսավ «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» առաջնորդող հոդվածը: Իր թուրքամետ հայացքներով հայտնի Ա. Սկաչկոյի հեղինակած այդ հոդվածում հայ ժողովրդին կոչ է արվում «ղեկավարվել ազգային մեծագույն զոհաբերությունների վերաբերյալ կոմինտերնական սկզբունքով և հրաժարվել ոչ միայն Մեծ Հայաստանի... այլև, հնարավոր է, նույնիսկ մշտապես հայկական անվանված հողատարածքների միավորման ավելի համեստ ցանկությունից: Հայաստանին... այլ ելք չի մնում, - եզրակացնում է Սկաչկոն, - քան հաշտվել դրա հետ, և համաշխարհային հեղափոխության շահերին զոհաբերել և իր երբեմնի հողատարածքները, և իր ժողովրդի այնտեղ մնացած հատվածները»:[319]

ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարի պատվիրակ, կուսակցական հայտնի գործիչ Անաստաս Միկոյանը մարտի 10-ին ելույթ ունենալով Ստալինի կողմից ներկայացված «Ազգային հարցի» վերաբերյալ զե-

---

[317] Լենին Վ.Ի., ԵԼԺ, հ. 52, էջ 107:
[318] Десятый съезд РКП(б). Стенографический отчёт, Москва, 1963, с. 133.
[319] Скачко А., Армения и Турция на предстоящей конференции. ''Жизнь национальностей'', Москва, 4 марта, 1921.

կուցմանը նվիրված քննարկումների նիստին, կարծես ջուր լցնելով Ստալինի և Սկաչկոյի հակահայկական քարոզչության ջրաղացին, հայտարարեց. «Քանի որ հայկական բորժուազիան իմպերիալիստական իղձեր ունի. զավթել Թուրքիայի մի մասը՝ մենք այդ իղձերին (մեր նախկին քաղաքականությանը հակակշիռ) չպետք է խրախուսենք: Մենք պետք է պայքարենք դրանց դեմ, որովհետև դրանք միայն կասեցնում են հեղափոխական շարժումը Կովկասում»:[320]

Ահա այսպիսի հակահայկական հիստերիա էր բարձրացվել 1921 թ. գարնանը Մոսկվայում, ինչը նախանշան էր նրա, որ հայ ժողովրդի հույսերը՝ բոլշևիկների կողմից Հայկական հարցը արդարացի լուծելու վերաբերյալ, անկատար էին մնալու:

Զիջումներ կատարելով տարածքային սահմանազատման հարցերում, խորհրդային պատվիրակության նախագահ Գ. Չիչերինը կոնֆերանսի քաղաքական հանձնաժողովի մարտի 10-ի նիստում թուրքական պատվիրակությունից պահանջեց ճանաչել Անդրկովկասի խորհրդային երեք հանրապետությունների լիիրավ ինքնուրույնությունը: Չիչերինը շեշտում է նաև, որ «Դա հանդիսանում է պայմանագիրը ստորագրելու էական նախապայման», և Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը երբևիցե չի հանդուրժի այդ հանրապետությունների ինքնուրույնության նկատմամբ Թուրքիայի կողմից ոտնձգության որևէ փորձ, դա «կհամարի ուղղված իր դեմ»:[321] Խորհրդային պատվիրակության այս հայտարարությունը, որն ի գիտություն ընդունվեց թուրքական պատվիրակության կողմից, կարծես թե, արտահայտում էր Խորհրդային Ռուսաստանի հաստատակամությունը՝ պաշտպանել Անդրկովկասի հանրապետությունների անկախությունը, հատկապես՝ Հայաստանի, քանզի Թուրքիան դեռևս շարունակում էր կառչած մնալ Ալեքսանդրապոլի պայմանագրի դրույթներից, պահանջում էր, որպեսզի Հայաստանը կատարի դրանք:

1921 թ. մարտի 16-ի[322] Մոսկվայի «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը ճանաչեց թուրքական «Ազգային ուխտը», Թուրքիային զիջեց Կարսի մարզը, Սուրմալուի գավառը (հայոց խորհրդանիշ Արարատ լեռով),

---

[320] Десятый съезд РКП(б). Стенографический отчёт, с. 208.

[321] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 63, թթ. 33-34:

[322] Պայմանագրի տեքստի ստորագրումը կատարվել է ոչ թե մարտի 16-ին, այլ 18-ին: Այդ մասին մանրամասն տե՛ս Казанджян Р., К вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921 г., ԼՀԳ, Երևան, 1999, էջ 183-187:

որը երբեք նրա կազմում չէր եղել, Նախիջևանի երկրամասը (Շարուր-Դարալագյազի շրջանի հարթավայրային մասով), որպես «Նախիջևանի մարզ», ինքնավար տարածքի կարգավիճակով փոխանցվեց Խորհրդային Ադրբեջանի խնամակալությանը՝ պայմանով, որ վերջինս այն չի զիջելու մի երրորդ պետությանը, այսինքն՝ Հայաստանին:

Այսպիսով ռուս-թուրքական «դավադիր գործարքով» Հայաստանից խլվեցին և Թուրքիային ու Խորհրդային Ադրբեջանին նվիրաբերվեցին նրա պատմական տարածքների մի մասը, կոպտորեն խախտվեց միջազգային իրավունքի գերագույն սկզբունքներից մեկը՝ ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը: Ոչ Խորհրդային Ռուսաստանը, և ոչ էլ քեմալական Թուրքիան որևէ իրավասություն չունեին տնօրինելու հայ ժողովրդի ճակատագիրը, ուստի միանգամայն իրավացի է սփյուռքահայ իրավաբան-պատմաբան Շ. Թորոսյանը, երբ եզրահանգում է, որ «Հայաստանի տարածքային հարցերին վերաբերող պայմանագրի կետերը չեն կարող լինել իրավական պարտավորություն Հայաստանի համար»:[323]

Եթե ռուս-թուրքական պայմանագրով հայ ժողովրդի շահերը կոպտորեն ոտնահարվեցին, ապա ինչպես Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները, այնպես էլ քեմալականները բավարարված էին: Խորհրդային կառավարությունը և նրա նախագահ Վ. Լենինը պայմանագիրը կարևորում էին բոլշևիկյան արևելյան քաղաքականության հեռանկարներով, այն համարում էին ոչ թե կոնյունկտուրային, այլ հիմնարար, որը միայն իրենց «ազատում է մշտական պատերազմներից Կովկասում»:[324]

Մոսկվայի պայմանագիրը նպաստեց քեմալական Թուրքիայի ինքնահաստատմանը և անկախության ամրապնդմանը, միջազգային ասպարեզում նրա դերի ուժեղացմանը: Խոսելով Հունաստանի նկատմամբ Արևմուտքում տարած հաղթանակների մասին, Մուստաֆա Քեմալը շեշտում է, որ դա հնարավոր դարձավ, որովհետև «թիկունքում՝ հյուսիսում և արևելքում, հանգստությունը լիովին ապահովված էր Խորհրդային Ռուսաստանի հետ բարեկամությամբ և նրա առատաձեռն օգնությամբ»:[325]

Մոսկվայի կոնֆերանսին հայ ժողովրդի շահերի անտեսման կապակցությամբ հայկական պատվիրակությունն ապրիլի 15-ին բո-

---

[323] Թորոսյան Շ., Հայկական հարցը և միջազգային իրավունքը, Բեյրութ, 1976, էջ 107:
[324] Լենին Վ.Ի., ԵԼԺ, հ. 43, էջ 181:
[325] Аралов С.И., Воспоминания советского дипломата, Москва, 196, с. 91.

ղոքի հուշագիր ուղղեց ՌԿ(բ)Կ Կենտկոմ և Վ. Լենինին: «Կոնֆերանսի արձանագրություններից չի երևում, - նշվում է հուշագրում, - թե արվել է գոնե մի չնչին փորձ՝ պահպանելու այն հողերն ու շրջանները, որոնք կենսական նշանակություն ունեն երիտասարդ և փոքր Խորհրդային Հայաստանի համար»:[326]

Հուշագրի մասին տեղեկացնելով Հայաստանի իշխանություններին, Բեկզադյանը միաժամանակ հուշում է, որ «այն, իհարկե, գործնական նշանակություն ունենալ չի կարող»:[327] Սակայն Ալ. Բեկզադյանը սխալվում էր, հուշագիրն, այնուամենայնիվ, որոշ նշանակություն ունեցավ: Պատասխանելով նրանում առաջ քաշված մեղադրանքներին, ՌՍՖԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինը ստիպված էր բացել բանակցությունների «անդրկուլիսյան երեսը» և խոստովանել, որ «բանակցությունների առավել բուռն ժամանակաշրջանն ընթացավ բոլորովին էլ ոչ հանձնաժողովի նստաշրջանին, այլ, մասամբ, անդրկուլիսյան բանակցություններում և մեծազդեցիկ ընկերների ներգործության ներքո: Քաղաքական հանձնաժողովի նստաշրջանը բացվեց միայն այն ժամանակ, - հուշում է Չիչերինը, - երբ հիմնական հարցերն արդեն վճռված էին», նա խոստովանում է, որ «Մեր կողմից զիջումները արվեցին Կենտկոմի որոշումներով»:[328] Այսպիսով, ամեն ինչ ասված է պարզ և միանշանակ:

Եթե Բեկզադյանի հուշագիրն արժանացավ Չիչերինի արձագանքին, ապա Սահակ Տեր-Գաբրիելյանի և կուսակցական հայտնի գործիչ Վահան Տեր-Վահանյանի (ի դեպ՝ երկուսն էլ ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարի պատվիրակներ էին) կողմից Վ. Լենինին ուղղված բողոքի դիմումը պատասխանի չարժանացավ: Նրանում հայ կոմունիստները Լենինի ուշադրությունն էին հրավիրում հայ ժողովրդի նկատմամբ թուրքերի կողմից իրականացված ոճրագործությունների փաստերի վրա: Տեր-Գաբրիելյանը և Տեր-Վահանյանը հայտարարեցին, որ դրան է նպաստել նաև մի շարք ազդեցիկ բոլշևիկ գործիչների գործունեությունը, որոնք՝ «խաղալիք դառնալով» քեմալականների ձեռքին, սադրանքներ են նյութել հայ ժողովրդի դեմ: Նշելով Նազիմանովի, Պավլովիչի, Ստասովայի, Էլիավայի, Սկաչկոյի անունները, Տեր-Գաբրիելյանը և Տեր-Վահանյանը պահանջում են հեռացնել նրանց քաղաքական աշխատանքից և բաց դատ կազմակերպել նրանց նկատմամբ,

---

[326] Տե՛ս Ավետիսյան Հ.Ա., նշվ. աշխ., էջ 355:
[327] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 85, թ. 3:
[328] Տե՛ս Սարգսյան Ե., Նշվ. աշխ., էջ 189-190:

որովհետև՝ «Աջակցել Թուրքիային Հայաստանի դեմ (դաշնակցական, թե խորհրդային՝ միևնույնն է), նշանակում է հայ ժողովրդին գլխովին կոտորելու և բնաջնջելու փաստացի սադրանք»:[329]

Այսպես հայ կոմունիստները փորձում էին իրենց բողոքը հայտնել կենտրոնական իշխանություններին, նրանց կողմից Հայաստանի շահերը անտեսելու կապակցությամբ:

* * *

1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը ստորագրելուց անմիջապես հետո Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները դիվանագիտական կտրուկ քայլերի դիմեցին Ալեքսանդրապոլի գավառը թուրքական գինագրավումից ազատագրելու համար:

Ինչպես արդեն նշել ենք, Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի ռազմական և քաղաքական ղեկավարության (Գեկկեր, Օրջոնիկիձե) հաստատակամ դիրքորոշման շնորհիվ քեմալական զորքերը 1921 թ. ապրիլին ստիպված էին վերջնականապես լքել Ախալքալաքի և Ախալցխայի գավառները, ուր ներխուժել էին փետրվարի վերջերին: Քեմալականների կողմից գավառների գինագրավումը ծանր հետևանքներ ունեցավ տեղի հայ բնակչության համար, և միայն կարմիրբանակային զորամասերի մուտքը տարածաշրջան կանխեց ջավախքահայության հետագա կեղեքումը: «Ժողովուրդը փաստացի պնդում է, - նշված է արխիվային փաստաթղթերից մեկում, - որ եթե Խորհրդային Ռուսաստանի զորքերը մի օր էլ ուշանային մտնել Ախալքալաք (քաղաք Ջավախքում) հայերին սրի էին քաշելու»:[330]

Քեմալական զորքերը չէին շտապում հեռանալ նաև Ալեքսանդրապոլի գավառից, իսկ զորքերի հրամանատար Կարաբեքիր փաշան Հայաստանի իշխանություններից պահանջում էր Ալեքսանդրապոլի պայմանագրի համաձայն, Թուրքիային հանձնել որոշակի քանակությամբ զենք և զինամթերք, զինաբափել հայկական բանակը: Պահանջների կատարումը պայման էր համարվում՝ Ալեքսանդրապոլից և գավառից թուրքական զորքերի հեռանալու համար, հակառակ դեպքում՝

---

[329] Տե՛ս Ավետիսյան Հ.Ա., նշվ. աշխ., էջ 354-355:

[330] Տե՛ս Մելքանյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, էջ 332:

Կարաբեքիրը սպառնում էր պատերազմել Խորհրդային Հայաստանի հետ:

Կարաբեքիր փաշայի կողմից Հայաստանի իշխանություններին ներկայացված այս պահանջների կապակցությամբ Օրջոնիկիձեին ապրիլի 6-ին ուղղված հեռագրում Գ. Չիչերինը նշում է, որ Կարաբեքիրի «խուլիգանության» մասին տեղյակ կպահի Ռուսաստանում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադին և կշեշտի, որ «Թուրքիայի և Խորհրդային Հայաստանի միջև պատերազմը կնշանակի պատերազմ Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև»:[331] Իսկ տեղեկանալով այն մասին, որ Կարաբեքիրի պահանջների ոգով հանձնես է եկել նաև բեմալական կառավարության ռազմական նախարար Ֆեզի փաշան (վերջինս հայտարարել էր, թե «Մնալով Կովկասում թուրքական բանակը պետք է ապահովի տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը»), ապրիլի 8-ին Ալի Ֆուադին ուղղված հերթական հեռագրում Չիչերինը միանշանակ հայտարարում է. «Ալեքսանդրապոլի պայմանագրի կատարումը ցանկանալը՝ հավասարազոր կլինի Մոսկվայի պայմանագիրը չեղյալ հայտարարելուն»:[332]

Սակայն խորհրդային կառավարության դիվանագիտական քայլերը չէին, որ ազդեցին թուրքերի վրա, նրանց սթափեցրեց ՌՍՖԽՀ 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Ա. Գեկկերի վերջնաուշիրը՝ ներկայացրած գեներալ Կարաբեքիրին: Ալեքսանդրապոլից քեմալական զորքերի անհապաղ չհեռանալու դեպքում՝ Գեկկերը սպառնում էր Կարմիր բանակի զորամասերը մտցնել Ալեքսանդրապոլ: Առավել քան խոսուն վերջնագիրը ներգործեց Կարաբեքիրի վրա՝ նրա հրամանով թուրքական զորամասերը ապրիլի 22-ին ընդմիշտ հեռացան Ալեքսանդրապոլից և գավառից:

Քաղաքի և գավառի շուրջ վեցամսյա թուրքական գինագրավումը մեծ աղետ էր տեղի բնակչության համար: Զինագրավման առաջին իսկ օրերից թուրքերը դիմեցին բնակչության կազմակերպված կոտորածին ու ծերբակալություններին: Միաժամանակ սկսվեց շրջանի պետական ունեցվածքի թալանը և տեղափոխումը Թուրքիա: Դրան հետևեց մասնավոր անձանց թալանը՝ թաղ առ թաղ, տուն առ տուն: Դիմադրողները տեղն ու տեղը սպանվում էին: Առանձնակի ատելության և դաժանության էին արժանանում Ալեքսանդրապոլում ապաստան գտած արևմտահայ գաղթականները, որոնց թուրքերն արհա-

---

[331] ДВП СССР, т. IV, Москва, 1960, с.50.

[332] Նույն աեղում, էջ 53-54:

մարհանքով անվանում էին «Մշեցի աղամ (մարդ)»: Գավառում գործում էին թուրք կառավարիչներին ծառայող գործակալների հատուկ խմբեր (հիմնականում Աղբաբայի թաթարներից կազմված), որոնց կողմից կազմված ցուցակներով ձերբակալվում և խոշտանգվում էին քիչ թե շատ ունևոր հայերը: Հարկ է նշել, որ տեղացի թաթարներն ակտիվ մասնակցում էին հայերի սպանդին և թալանին, իրենց դաժանությամբ շատ դեպքերում գերազանցում քեմալականներին:

Ալեքսանդրապոլի գավառում թուրքերի իրականացրած ոճրագործությունների ահավոր պատկերը բացահայտվեց 1921 թ. գարնանը, երբ քեմալականները հեռացան գավառից: Գավառի գրեթե բոլոր գյուղերի արվարձաններում հայտնաբերվեցին հազարավոր հայերի դիակներ. դրանցից շատերը խոշտանգված էին: ՀՍԽՀ պետական հանձնաժողովի 1921 թ. մայիսի 11-ի արձանագրությամբ՝ միայն Ղալթաղչի, Ալբուլաղ և Ղարաբոյա գյուղերի շրջանում հայտնաբերվել էր շուրջ 12 հազար դիակ, մեծ մասը կանայք և երեխաներ: Նույն պատկերն էր նաև Ալեքսանդրապոլում: Թուրքերի գազանությունների մասին Քաղաքային Դումայի զեկուցագրերից մեկում նշվում է, որ հատկապես մեծ թվով սպանվածներ են գտնվել քաղաքի կայազորի պետի, պարետի, ոստիկանապետի ապրած տների նկուղներում:[333] Սա վկայում է, որ հայերի կոտորածը կրում էր կազմակերպված բնույթ և արտոնված էր քեմալական ղեկավարության կողմից: Ընդհանուր առմամբ Ալեքսանդրապոլի գավառի զինագրավված շրջաններում պետական հանձնաժողովի մոտավոր պաշտոնական տվյալների համաձայն՝ 1920 թ. նոյեմբեր – 1921 թ. ապրիլ ամիսներին քեմալականները սպանել էին 30 հազար տղամարդ, 25 հազար կին և աղջիկ, 5 հազար երեխա, սովամահ է եղել ավելի քան 30 հազար մարդ, գերության քշվել՝ 25 հազարը, որոնց զգալի մասը ոչնչացվել է, բռնաբարվել է շուրջ 50 հազար կին և աղջիկ, իսկ հասցրած նյութական վնասը կազմել է մոտ 20 մլն. ռուբլի (ոսկով):[334]

Պետք է նշել, որ քեմալականների՝ Արևելյան Հայաստանում, մասնավորապես Կարսի և Ալեքսանդրապոլի շրջաններում կատարած ոճրագործությունները նման աղետալի չափերի չէին հասնի, եթե Հայաստանի Հանրապետության կառավարությունը և հայկական բանակի հրամանատարությունը ժամանակին հոգային նշված շրջանների հայ բնակչության էվակուացիայի մասին: Արխիվային շատ փաս-

---

[333] ՀԱԱ, ֆ. 144. ց. 3. գ. 45, թ. 7:
[334] Նույն տեղում, ց. 1, գ. 131, թ. 1:

տարբերներում անբարոյց արդարացի մեղադրանքներ են ներկայացվում հայկական իշխանություններին, որոնք բախտի քմահաճույքին թողեցին ռազմական գործողությունների շրջանների խաղաղ բնակչությանը: Մեղքի իրենց բաժինն ունեին նաև կոմունիստ հայերը, Հայաստանի նոր՝ խորհրդային իշխանությունները: Նրանք նախ համոզում էին, որ թեմալականներին դիմադրել հարկավոր չէ, որ նրանք գալիս են ժողովրդին փրկելու դաշնակներից, իսկ այնուհետև՝ Ալեքսանդրապոլում ստեղծեցին Հեղկոմ, որը կոչված էր «թուրք բոլշևիկների» հետ համատեղ ապահովել օրինականությունը և բնակչության անվտանգությունը: Բայց Հեղկոմը լիովին անզոր էր և արհամարհանքի, ավելին՝ բռնությունների էր ենթարկվում թեմալականների կողմից: Հեղկոմը, շատ շուտով համոզվելով, որ թեմալականները ոչնչով չեն տարբերվում, անգամ գերազանցում են երիտթուրքական դահիճներին, այդ մասին բազմիցս տեղեկացնում էր Խորհրդային Հայաստանի իշխանություններին, սակայն դադարեցնել թեմալականների վայրագությունները հնարավոր չէր:

Քեմալականների վայրագությունները հայ ժողովրդի նկատմամբ շարունակվեցին նաև հետագայում: Հայաստանում ՌՍՖԽՀ ներկայացուցիչ Լեգրանին 1921 թ. ամռան սկզբին հղած հեռագրում ՀՍԽՀ արտգործժողկոմ Մռավյանը հուշում է, որ Կարսից ստացված տագնապալի տեղեկությունների համաձայն, թուրքական իշխանությունները շարունակում են հայերի բնաջնջման հին քաղաքականությունը, հայ բնակչության մնացորդները աքսորվում են Թուրքիայի խորքերը: Մռավյանը խնդրում է միջոցներ ձեռնարկել՝ կանխելու հայերի բնաջնջումը:[335] Երևանում Թուրքիայի գլխավոր հրամանատարության ներկայացուցչին հունիսի 14-ին ուղղված գրությունում Մռավյանը տագնապ է հայտնում, որ թուրքական զինվորական մասերը հարձակումներ են իրականացնում Արփաչայի ձախ ափին գտնվող ՀՍԽՀ մի շարք գյուղերի վրա, թալանում և ավերում դրանք, քանդում են Արփաչայի վրա գտնվող կամուրջը և այլն:[336] Դիմումներն, իհարկե, որևէ արդյունք չտվեցին:

---

[335] Տե՛ս Ներսիսյան Մ.Գ., նշվ. աշխ., էջ 318:
[336] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 21, թ. 82:

* * *

ՀՍԽՀ արտգործժողկոմ Ալեքսանդր Բեկզադյանն իրավացի էր, երբ մարտի 18-ին Մոսկվայից Հայհեղկոմին ուղղված հեռագրում հուշում էր, որ Թուրքիայի հետ պայմանագիրը ստորագրելուց հետո Ռուսաստանը «մեզ և աղրբեջանցիներին կառաջարկի այս կամ այն ձևով մասնակից դառնալ այդ ակտին»: Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն, խորհրդային Ռուսաստանը պարտավորություն էր ստանձնել դիմելու անհրաժեշտ քայլերի, որպեսզի Թուրքիայի և Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միջև առաջիկայում ստորագրվող պայմանագրում վերջիններս «պարտադիր կերպով ճանաչեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջականորեն իրենց են վերաբերվում»:[337]

Հետաքրքիր է, որ եթե քեմալականները մոսկովյան բանակցությունների ժամանակ պնդում էին Անդրկովկասի հանրապետություններից յուրաքանչյուրի հետ առանձին առանձին պայմանագրեր կնքելու մասին, ապա այլ էր խորհրդային կողմի դիրքորոշումը: 1921 թ. ապրիլի 1-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրո ուղղված զեկուցագրում Չիչերինը նշում է, որ «Թուրքերը ձգտում են առանձին բանակցությունների ճանապարհով կովկասյան հանրապետություններից կորզել այն, ինչը չհաջողվեց ստանալ մեզանից»: Նա առաջարկում է կանխել թուրքերի այս նկրտումները և հրահանգավորել Անդրկովկասի հանրապետությունների իշխանություններին, որպեսզի նրանք «Ռուսաստանի կառավարության հավանությանը ներկայացնեն այն պայմանագրերի նախագծերը, որոնք պետք է կնքեն Թուրքիայի հետ»:[338] Լենինի առաջարկությամբ ապրիլի 3-ին քաղբյուրոն հավանություն է տալիս Չիչերինի առաջարկությանը և ընդունում համապատասխան որոշում:[339]

1921 թ. ապրիլի 2-ին ՀՍԽՀ արտգործժողկոմ Բեկզադյանը Մոսկվայից հեռագրում է Բաքու և Թիֆլիս, որ Անդրկովկասի հանրապետություններին «անհրաժեշտ է մշակել ընդհանուր գիծ և Թուրքիային առաջարկել միացյալ կոնֆերանս», այդ մասին Բեկզադյանը ապրիլի 8-ին տեղեկացնում է ՌՍՖՍՀ արտգործժողկոմ Չիչերինին:[340]

---

[337] ДВП СССР, т. III, с. 602.
[338] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 3, թ. 68:
[339] Նույն տեղում, թ. 69:
[340] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 85, թ. 7:

Նախատեսվող թուրք-անդրկովկասյան կոնֆերանսին միասնական ճակատով հանդես գալու և գործողությունների միասնական ծրագիր մշակելու անհրաժեշտությունից ելնելով, 1921 թ. մայիսի 7-ին Բաքվում հրավիրվում է Անդրկովկասի խորհրդային երեք հանրապետությունների ներկայացուցիչների խորհրդաժողով՝ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչներ Բ. Լեգրանի և Գ. Օրջոնիկիձեի մասնակցությամբ: Քննարկելով Անդրկովկասի հանրապետությունների և Թուրքիայի միջև միասնական պայմանագրի հիմնական սկզբունքները, խորհրդակցությունը որոշում է, որպեսզի հանրապետությունները հանդես գան «որպես մեկ պայմանավորվող կողմ», իսկ ստորագրվելիք պայմանագրի հիմքում՝ դնել Մոսկվայի մարտի 16-ի պայմանագիրը:[341]

Եթե խորհրդային կողմը շահագրգռված էր հնարավորինս շուտ սկսել անդրկովկասաթուրքական բանակցությունները, ապա թուրքական կառավարությունն անընդհատ ձգձգում էր կոնֆերանսի հրավիրումը և, կարծես կորցրել էր հետաքրքրությունը: Միայն այն բանից հետո, երբ Հունաստանի կառավարությունը 1921 թ. հունիսի 25-ին մերժեց թուրքական կառավարության կողմից ներկայացված հաշտության առաջարկը, և հունական զորքերը վճռական հարձակումով ստիպեցին թուրքերին ետ քաշվել Սակարիա գետի այն կողմը, թեմալականները հիշեցին կոնֆերանսի մասին, և այս անգամ արդեն իրենք էին պնդում, որպեսզի այն օր առաջ գումարվի: Ավելին՝ քեմալականներին մտահոգում էր նաև այն, որ հունական բանակի հաջող հարձակումը կարող է Վրաստանում և, հատկապես Հայաստանում, տրամադրություններ առաջացնել՝ կորցրած տարածքները վերադարձնելու նպատակով դիմել ռազմական գործողությունների:

Սակայն թուրքերի այդ մտավախություններն անհիմն էին, Խորհրդային Ռուսաստանը չէր էլ փորձում մազաչափ անգամ շեղվել քեմալականների հետ բարեկամության վրա հենված իր արևելյան քաղաքականությունից: Չգտնելով ցրել քեմալական կառավարության բոլոր հնարավոր կասկածները, ինչպես նաև հավաստիացնել նրանց, որ կոնֆերանսը գումարելու համար որևէ խոչընդոտ չկա, Մոսկվայում թուրքական դեսպանին հունիսի 6-ին և 13-ին ուղղված հուշագրերում արտգործժողկոմ Չիչերինը հայտնում է, որ ինչպես Վրաստանի և Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի խորհրդային կառավարությունները «վարում են արտաքին քաղաքական այն կուրսը, որը վարում է ռուսական կառավարությունը», և որ նրանք «համաձայնվել են ճանա-

---

[341] Հայաստանը... փաստաթղթերում, էջ 514:

չել Մոսկվայի պայմանագրով իրենց վերաբերվող պայմանները»:[342] Ստանալով Ռուսաստանի արտգործժողկոմի առավել քան համոզիչ հավաստիացումները, քեմալական կառավարության արտգործնախարար Յուսուֆ Քեմալը, որն այդ պաշտոնին նշանակվեց Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսի ընթացքում հայտող բանակցություններ վարելու համար, շտապում է հոկտեմբերի 1-ին հայտնել Չիչերինին, որ Թուրքիայի կառավարությունը պատրաստ է կոնֆերանսին, և «երջանիկ կլինի», եթե նրան մասնակցի նաև Ռուսաստանի պատվիրակությունը: Քեմալական Թուրքիայի կառավարության արտգործնախարարը դրա անհրաժեշտությունը հիմնավորում է նրանով, որպեսզի հարկ եղած դեպքում՝ ռուսական պատվիրակությունը միջոցներ ձեռնարկի և ստիպի Անդրկովկասի հանրապետություններին (հատկապես՝ Հայաստանին) անպայման ընդունել ռուս-թուրքական պայմանագրով իրենց վերաբերվող կետերը: Օգոստոսի 8-ին Յու. Քեմալին հղած պատասխան հուշագրում Չիչերինը տալիս է խորհրդային կառավարության համաձայնությունը թուրքական առաջարկին՝ Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն, իր վրա վերցրած պարտավորությունները մինչև վերջ կատարելու անհրաժեշտությունից ելնելով:[343]

Անդրկովկասաթուրքական առաջիկա կոնֆերանսի համար Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի քաղաքական միասնական ծրագրի դրույթները հաստատվեցին ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 3-ի՝ «Կարսի կոնֆերանսի մասին» որոշումով: Նրանում մասնավորապես նշվեց, որ անհրաժեշտ է խստորեն պահպանել Մոսկվայի պայմանագրի շրջանակները, «ոչ մի դեպքում թույլ չտալ Կովկասի հանրապետությունների մեկուսի ելույթները, բոլոր հարցերում լինել միահամուռ»:[344]

Կոնֆերանսի հետ կապված իր հարցերը նախապատրաստեց նաև ՀՍԽՀ կառավարությունը: «Կարսում Թուրքիայի հետ առաջիկա կոնֆերանսին ՀՍԽՀ կողմից քննարկման ներկայացվող հարցերը» վերնագիրը կրող հուշագրում կառավարությունը առաջադրում է հարցեր, որոնց դրական լուծումը էական նշանակություն կունենար Հայաստանի համար: Պետք է նշել, որ բարձրացրած հարցերի մի մասը հակասում էր Մոսկվայի պայմանագրին և բոլշևիկյան իշխանությունների կողմից իջեցված երահանգներին: Մասնավորապես՝ փաստաբղ-

---

[342] ДВП СССР, т. IV, с.170, 177.
[343] Նույն տեղում, էջ 255-256:
[344] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1185, pp. 42-43: Տե՛ս նաև նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 47, p. 14:

թով առաջարկվում է Նախիջևանի մարզի խնամակալությունը հանձնել Խորհրդային Հայաստանին, կամ էլ՝ անցկացնել մարզի նոր սահմանագծում: Հուշագրի տնտեսական հարցերի բաժնում առաջարկվում է Հայաստանին տրամադրել Օլթիի քարածխի և Կաղզվանի մկնդեղի հանքավայրերի, Սարիղամիշի անտառների, Կարսի խոտհարքերի, Կողբի աղահանքերի շահագործման իրավունքը: Հայաստանի կառավարությունը առաջ էր քաշում նաև Թուրքիայի և Հայաստանի միջև արտաքին ազատ առևտրի, արևմտահայ գաղթականների՝ հայրենի օջախները անվտանգ վերադառնալու, Թուրքիայում հայ բնակչության հավասար իրավունքների, նրանց կրած վնասների փոխհատուցման և այլ հարցեր:[345]

Այսպիսով Խորհրդային Հայաստանի իշխանությունները, անտեսելով Մոսկվայի պայմանագիրը, փորձում էին հանդես գալ ոչ միայն որպես Թուրքիային «նվիրաբերած» հայկական տարածքների պահանջատեր, այլև՝ արևմտահայերի իրավունքների պաշտպան: Այլ հարց է, որ հայկական կողմի արդարացի պահանջները դատապարտված էին անուշադրության և կոնֆերանսին անտեսվեցին:

Կարսի կոնֆերանսը բացվեց 1921 թ. սեպտեմբերի 26-ին, անդրկովկասաթուրքական բանակցություններում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ էր նշանակվել Լատվիայի հանրապետությունում խորհրդային դեսպան Յակով Գանեցկին: Առաջին հայացքից, վերջինիս նշանակումը կարծես անտրամաբանական էր՝ տրամաբանական կլիներ, եթե կոնֆերանսին ՌՍՖՍՀ ներկայացուցիչ նշանակվեր Անդրկովկասի հանրապետություններում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանը: Վերջինս ոչ միայն լավատեղյակ էր կովկասյան գործերին, այլև պաշտոնի բերումով պարտավոր էր պաշտպանել Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների շահերը կոնֆերանսում: Այսպես էր կարծում նաև ՌՍՖՍՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինը, դեռևս 1921թ. հուլիսի 29-ին Լեգրանին ուղղված հեռագրում Չիչերինը նշում է, որ նրա մասնակցությունը Թուրքիայի հետ առաջիկա բանակցություններում ոչ միայն ցանկալի է, այլև պարտադիր:[346]

Դեսպան Գանեցկուն Կարսի կոնֆերանսին Ռուսաստանի ներկայացուցիչ նշանակելը տհաճ անակնկալ էր նաև Լեգրանի համար: Տեղեկանալով այդ մասին, վերջինս սեպտեմբերի սկզբին Թիֆլի-

---

[345] ՀԱԱ. ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 97:
[346] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 3, թ. 102:

սից երկու հեռագիր է ուղարկում Մոսկվա, մեկը՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմ, մյուսը՝ արտգործժողկոմ Չիչերինին: Առաջինում Լեգրանը Կենտկոմին խնդրում է՝ իր դիմումի համաձայն, «Անմիջապես ազատել իրեն Անդրկովկասի հանրապետություններում լիազոր ներկայացուցչի պարտականությունների կատարումից և, ընդհանրապես, արտգործժողկոմատում հետագա աշխատանքից»: Երկրորդում՝ Չիչերինին ներկայացնելով նման դիմում գրելու դրդապատճառները, Լեգրանը խնդրում է՝ Կենտկոմում պաշտպանել հարցի դրական լուծումը:[347]

ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Վ. Մոլոտովին սեպտեմբերի 7-ին ուղղված նամակում Չիչերինը ներկայացնում է Լեգրանին Գանեցկիով փոխարինելու իրական պատճառը: «Գործը նրանում է, - հուշում է Չիչերինը, - որ թուրքական կառավարությունը խնդրել էր մեզ Լեգրանին չուղարկել Կարս՝ նրանք գտնում են, որ նա ընդգծված հայամետ դիրքորոշում ունի»: Չիչերինը նշում է, որ հաշվի առնելով քեմալականների ծանր վիճակը, մենք առճակատման գնալ չցանկացանք և ընդառաջեցինք խնդրանքին: Միաժամանակ, Ռուսաստանի արտգործժողկոմը բացառում է Լեգրանին աշխատանքից ազատելու հնարավորությունը և շեշտում, որ Լեգրանը թեև «հայտնի թերություններ ունի», սակայն նա անփոխարինելի է, և կոնֆերանսում խորհրդային պատվիրակության «փաստացի ղեկավարը» հենց նա պետք է լինի, իսկ Գանեցկին մշտական կապի մեջ պետք է գտնվի նրա հետ: Չիչերինը հուշում է, որ Լեգրանի վերաբերյալ իր կարծիքը կիսում է նաև Ստալինը:[348] 1921 թ. սեպտեմբերի 8-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն մերժում է Լեգրանի խնդրանքը:[349]

Հիրավի, զարմանք է առաջացնում, թե որքան ճկուն և հեռատես էր թուրքական դիվանագիտությունը, իր առջև դրված խնդիրները լուծելու և նպատակներին հասնելու համար, այն չէր անտեսում և ոչ մի մանրուք, որը կարող էր այս կամ այն չափով խոչընդոտել թուրքական ծրագրերի իրականացմանը: Ցավալի է, որ ո՞չ կոնֆերանսի նախօրյակին, և ո՞չ էլ ընթացքում նման վճռականություն չէր դրսևորում խորհրդային կողմը, զիջումների էր գնում գրեթե բոլոր հարցերում:

Այնուհանդերձ, Ռուսաստանի ներկայացուցիչ Յա. Գանեցկու համաձայնությամբ հայկական պատվիրակությունը, որի նախագահն էր ՀՍԽՀ արտգործժողկոմ Ա. Մռավյանը, բանակցություններին թուր-

---

[347] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 3, թթ. 102-103:
[348] Նույն տեղում, թթ. 100-101:
[349] Նույն տեղում, թ. 104:

քերից պահանջեց Հայաստանին վերադարձնել վերջինիս միջնադարյան մայրաքաղաք Անիի ավերակները, Կողբի աղահանքերը, քեմալականների կողմից Ալեքսանդրապոլի դեպոյի թալանված գույքը և այլն: Իր հերթին, թուրքական պատվիրակության նախագահ Կարաբեքիրի հետ անդրկուլիսյան բանակցություններում, Գանեցկին հուշում է, որ դրանք էական հարցեր են և մեծ նշանակություն ունեն ոչ միայն Հայաստանի, այլև Անդրկովկասի և Ռուսաստանի համար: Կարաբեքիրը, սակայն, անդրդվելի է մնում:

Խորհրդային Ռուսաստանը շահագրգռված էր նաև Ճորոխի պղնձահանքերը շահագործելու իրավունքը ստանալու հարցում: Դեռևս 1921 թ. մայիսի 18-ին ՌՍՖԽՀ արտգործժողկոմատը քեմալականներին խնդրել էր դրանց շահագործելու իրավունքը փոխանցել Ռուսաստանին: Մոսկվայում թուրքական դեսպան Ալի Ֆուադին մայիսի 24-ին ուղղված նամակում անդրադառնալով խնդրին, Գ. Չիչերինը միաժամանակ նրան հուշում է, որ բազմաթիվ անգամներ օգնություն տրամադրելով քեմալականներին, ռուսական կառավարությունը համոզված է եղել, որ հարկ եղած դեպքում՝ վերջիններս կընդառաջեն խորհրդային կողմի որոշ խնդրանքներին և մասնակի վարձահատույց կլինեն:[350] 1921 թ. մայիսի 27-ին Բաքու՝ Գ. Օրջոնիկիձեին ուղղված հեռագրում, Չիչերինի նշված տարբերակով խնդիրը լուծելու օգտին է արտահայտվում նաև Վ. Լենինը:[351]

Սակայն թուրքերը չընդառաջեցին խորհրդային կողմի խնդրանքին, քեմալական կառավարության արտգործնախարար Յուսուֆ Քեմալը հուլիսի 16-ին Չիչերինին պաշտոնապես տեղեկացնում է, որ թուրքական կառավարությունը կտրականապես մերժել է Ռուսաստանի խնդրանքը:[352]

Այնուհանդերձ, խորհրդային կողմը փորձեց հետամուտ լինել խնդրի դրական լուծմանը: ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 3-ի՝ «Կարսի կոնֆերանսի մասին» որոշման մեջ նշվեց, որ «բանակցությունների ընթացքում հարկավոր է դարձյալ առաջ քաշել Կաղզվանի արոտավայրերից և աղի հանքերից օգտվելու, ինչպես նաև Ճորոխի շրջանի պղնձահանքերը շահագործելու իրավունքի խնդիրը»:[353]

---

[350] ՀԱԱ, ֆ. 113, g. 3, q. 11, p. 222:
[351] Ленин В.И., Неизвестные документы. 1891-1922 гг., с. 444.
[352] ДВП СССР, т. IV, с. 707.
[353] ՀԱԱ, ֆ. 4033, g. 2, q. 1185, pp. 42-43: Տե՛ս նաև նույն տեղում, ֆ. 1, g. 1, q. 47, p. 14:

Խորհրդային կողմի խնդրանքը մերժվեց նաև Կարսի կոնֆերանսին: Գ. Չիչերինին հոկտեմբերի 5-ին Կարսից ուղարկած հերթական հեռագրում Գանեցկին շեշտում է, որ կոնֆերանսի «արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացուցիչ չեն, իսկ թուրքերի վարքագիծն այնպիսին է, որ ակամայից քեզ հարց ես տալիս. ինչո՞ւ էինք մենք նրանց համար այդքան զոհաբերությունների գնում»:[354]

Չգտնելով ներգործել թուրքերի վրա, Գանեցկին անգամ հայտարարում է, որ «թուրքական պատվիրակությունը բանակցությունների ամբողջ ընթացքում հաշվի է նստում բացառապես սեփական պահանջների հետ և հաշվի չի առնում մյուս կողմի ցանկությունները»:[355] Հայտարարությունը, սակայն, որևէ նշանակություն չի ունենում, ավելին՝ թուրքական պատվիրակության նախագահ Քյազիմ Կարաբեքիր փաշան պնդում է, որպեսզի Թուրքիայի և Անդրկովկասի հանրապետությունների միջև կնքվեն առանձին պայմանագրեր: Հանդիպելով խորհրդային կողմի համառ և վճռական դիմադրությանը, Կարաբեքիրը Անդրկովկասի հանրապետությունների պատվիրակություններից պահանջում է իրավական հաստատում ներկայացնել վերջիններիս քաղաքական միասնության մասին: 1921 թ. հոկտեմբերի 1-ին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչները ստիպված են լինում գրավոր դիմում ներկայացնել քեմալական կառավարությանը, որում հավաստում են, որ Անդրկովկասի խորհրդային երեք հանրապետությունները ռազմաքաղաքական սերտ դաշինքի մեջ են և քաղաքական, տնտեսական ու առևտրական հարցերում գործում են համատեղ: Յու. Քեմալին 1921 թ. հոկտեմբերի 3-ին ուղղված հուշագրում դա հաստատում է նաև ՌՍՖՍՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինը:[356] Միայն այս, խորհրդային կողմի համար նվաստացուցիչ դիվանագիտական գրագրությունից հետո, Կարաբեքիրը ստիպված տեղի տվեց և համաձայնվեց խորհրդային կողմի հետ ստորագրել մեկ ընդհանուր պայմանագիր:

1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրած անդրկովկասաթուրքական «Բարեկամության պայմանագիրը» չնչին փոփոխություններով վերահաստատեց Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով որոշված թուրք-անդրկովկասյան սահմանը: Խորհրդային կողմի միակ ձեռքբերումը կարելի է համարել այն, որ հոգուտ Հայաստանի

---

[354] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 48:
[355] Նույն տեղում, գ. 21, թ. 233:
[356] ДВП СССР, т. IV, с. 392.

ուղղվեց Նախիջևանի մարզի հյուսիս-արևմտյան սահմանի մի փոքր հատվածը (Արազդայանի տարածքը, Դայլի Դրունք վայրի մոտ մնում էր ՀՍԽՀ սահմաններում) և, ի տարբերություն մարտի 16-ի պայմանագրի, որով Նախիջևանի ինքնավար մարզի նկատմամբ խնամակալությունն Աղրբեջանը իրավունք չուներ զիջել «մի երրորդ պետության», Մոսկվայի ջանքերով Կարսի պայմանագրից այդ պայմանը հանվեց: Դա հնարավորություն էր տալիս Խորհրդային Ռուսաստանին կանխելու Թուրքիայի հնարավոր միջամտություններն Անդրկովկասի ներքին գործերին նախիջևանյան հարցի միջոցով, իսկ Աղրբեջանը՝ զրկվում էր իրավական հնարավորությունից՝ ապագայում Նախիջևանի հետ կապված որևէ հարցով դիմել Թուրքիայի հովանավորությանը: Թուրքիան, փաստորեն, «ճանաչում էր Անդրկովկասի նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի ամբողջական վերահսկողությունը»:[357]

«Այդ զիջումների դիմաց, - ինչպես հետագայում հայտարարեց կոնֆերանսում թուրքական պատվիրակության անդամ Մուխթար բեյը, - մենք Կարսի կոնֆերանսում ստացանք մեզ համար կարևոր իրավունքներ՝ Նախիջևանի շրջանից հարավ ընկնող տարածքները Թուրքիային միացնելու և եղբայրական Աղրբեջանի հետ անմիջական կապ ունենալու համար»:[358]

Միասնական պայմանագիր ստորագրելով Անդրկովկասի հանրապետությունների հետ, քեմալականները պնդեցին, որ զոնե պայմանագրի վավերացումը կատարվի յուրաքանչյուր հանրապետության կողմից առանձին: Թուրքիայի արտգործնախարար Յուսուֆ Քեմալը դա պայմանավորում է նրանով, որ այն դեպքում, երբ «Արևմուտքում հայկական հարցի շուրջը խոսակցություններ և քննարկումներ են տեղի ունենում... մեր ձեռքին ունենալով պայմանագրեր ինչպես հայ դաշնակցականների (նկատի ունի 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագիրը - Կ.Խ.), այնպես էլ հայ կոմունիստների հետ, մենք կարող ենք հանդես գալ մեր շահերի պաշտպանությամբ: Իսկ եթե Կարսի պայմանագիրը վավերացվի ոչ թե յուրաքանչյուր հանրապետության կողմից, ապա... (հայերը - Կ.Խ.) կարող են պնդել, թե դա հայ ժողովրդի կամքով չի տեղի ունեցել, այլ մյուս

---

[357] O' Коннор Т.Э., Г.В. Чичерин и советская внешняя политика (1918-1930), пер. с англ., Москва, 1991, с. 200.
[358] ՀԱԱ. ֆ. 114, ց. 1, գ. 221, թ. 36:

հանրապետությունների ճնշումների ներքո»:[359] Թուրքական ճկուն և հեռատես դիվանագիտությունն անխոցելի էր:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը Կարսի պայմանագիրը վավերացրեց միայն 1922 թ. մարտի 20-ին, իսկ քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի փոխադարձ պայմանավորվածությամբ՝ վերջիններս Կարսի պայմանագիրը վավերացրեցին միաժամանակ՝ 1922 թ. մարտի 16-ին:[360] Այո՛, մարտի 16-ին, Մոսկվայի ռուս-թուրքական բալանչիական պայմանագրի տարեդարձի օրը: Այս փաստը ևս մեկ անգամ հուշում է. կար բոլշևիկյան Ռուսաստանը, կար քեմալական Թուրքիան՝ նրանց կողմից ստորագրված «Բարեկամության և եղբայրության» պայմանագիրը, որով վերջիններս միմյանց միջև բաժանեցին Հայաստանը: ՀՍԽՀ խորհրդային իշխանություններին էլ պարտադրեցին Կարսում վավերացնել այդ «դավաղիր գործարքը»: Հատկանշական է, որ Կարսի պայմանագրի վավերացմանը նվիրված Թուրքիայի Ազգային մեծ ժողովի 1922 թ. մարտի 16-ի հանդիսավոր նիստում Էրզրումից ընտրված պատգամավոր Հուսեյն Ավնի բեյը վստահ հայտարարեց. «Մարտի 16-ի օրը, որը մեր դժբախտության օրն էր (1920 թ. մարտի 16-ին Անտանտի դաշնակից պետությունները Կ. Պոլսում ցրել էին օսմանյան խորհրդարանը, իսկ նրա մի շարք հիթիհադական անդամներին աքսորել էին Մալթա կղզի - Կ.Խ.), ներկայումս դարձել է, և ես դա հայտարարում եմ մեծ հպարտությամբ, տոնական օր ինչպես մեր, այնպես էլ ռուսների համար»:[361]

Եթե Հայաստանում խորհրդային իշխանության հաղթանակը Ստալինը ժամանակին համարեց «այսպես կոչված հայկական «պրոբլեմի» ամենաճիշտ լուծումը,[362] ապա Թուրքիայի Ազգային մեծ ժողովի բացման 2-րդ տարեդարձին նվիրված 1922 թ. մարտի 1-ի հանդիսավոր նիստում Մուստաֆա Քեմալ փաշան ստալինյան ոճով հայտարարեց. «Այսպես կոչված «հայկական հարցը», որը օգտում էին լուծել ավելի շուտ կապիտալիստական աշխարհի տնտեսական, այլ ոչ հայ ժողովրդի իրական շահերից ելնելով, իր ամենաճիշտ լուծումը գտավ Կարսի պայմանագրում (Ծափահարություններ): Մեր երկու աշ-

---

[359] Багиров Ю.А., Из истории советско-турецких отношений в 1920-1922 гг., Баку, 1965, с. 99.

[360] Պայմանագիրը վավերացրեցին Համառուսաստանյան Կենտգործկոմի նախագահությունը (Տե՛ս ՀԱԱ. ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 35) և Թուրքիայի Ազգային մեծ ժողովը. 172 կողմ, 12՝ դեմ և 3՝ ձեռնպահ ձայներով (Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 221, թ. 144):

[361] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 221, թ. 142:

[362] Правда, Москва, 4 декабря, 1920.

խաստաներ ժողովուրդների, որոնք դարերի ընթացքում ապրել են կողք կողքի, միջև բարեկամական հարաբերությունները, ի երջանկություն մեզ, վերականգնված են»:[363]

Կարսի պայմանագրի համաձայն՝ պայմանագիրը ստորագրող պետությունների միջև վավերագրերի փոխանակումը տեղի էր ունենալու 1922 թ. սեպտեմբերի 11-ին Երևանում: Սա նույնպես պատահական չէր՝ Թուրքիան և Ռուսաստանը ձգտում էին համայն աշխարհին ցույց տալ, որ Հայաստանը կամովին է հրաժարվել իր պատմական տարածքներից և ընդունում է Կարսի պայմանագիրը:

Բայց իրականությունն այլ էր, Խորհրդային Ռուսաստանի ճնշումների ներքո ստորագրելով Կարսի պայմանագիրը, Խորհրդային Հայաստանը թեև ճանաչեց Մոսկվայի պայմանագրով գծված հայ-թուրքական սահմանը, սակայն նրա իշխանությունները առիթը բաց չէին թողնում՝ իրենց դժգոհությունը հայտնելու համար: ՀԿ(բ)Կ 1-ին համագումարում (հունվարի 26-29, 1922 թ.) իր ելույթում Սարգիս Լուկաշինը ընդգծեց, որ Կարսի պայմանագիրը՝ «դա գրեթե նույն Ալեքսանդրապոլի պայմանագիրն է...», բայց, կարծես արդարանալով, միաժամանակ շեշտեց, որ «Այդ բանակցություններում մենք պետք է փրկեինք Հայաստանի ինտերնացիոնալ դեմքը»:[364] Կարսի պայմանագիրը կարևորելով հարևանների հետ հաշտ ապրելու և տարածաշրջանային խաղաղությունը պահպանելու անհրաժեշտությամբ, Ասքանազ Մռավյանը նշում է. «Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»:[365] Սակայն հայ կոմունիստները Հայկական հարցի լուծումը կապում էին «միջազգային հեղափոխության բախտի հետ»,[366] և համոզված էին, ինչպես նշում է Ալ. Մյասնիկյանը, որ Թուրքիայի օգնությամբ Արևելքը իմպերիալիզմից ազատագրելուց հետո «ինքնստինքյան կլուծվեն և սահմանային, տարածքային խնդիրները»:[367]

Ինչպիսի սին հույսեր, իրականում՝ «Ավելի ծանր և ավելի անօգուտ խաղաղություն, քան Կարսինն է, հազիվ թե կարելի է գտնել պատմության էջերում»,[368] - բարեխղճորեն արձանագրում է Ռ. Բորյա-

---

[363] ՀԱԱ, ֆ. 162, ց. 2, գ. 162, թ. 21:
[364] Նույն տեղում, ֆ. 1, ց. 2, գ. 2, թ. 3:
[365] Խորհրդային Հայաստան, Երևան, հոկտեմբերի 21, 1921, թիվ 201:
[366] Լուկաշին Ս., Հոդվածներ, զեկուցումներ, ճառեր, Եր., 1986, էջ 156:
[367] ՀԱԱ, ֆ. 4004, ց. 1, գ. 67, թ. 7:
[368] Տե՛ս Борьян Б., նշվ. աշխ., էջ 163:

նը, և իրավացիորեն նկատում, որ Կարսի պայմանագիրն «Ըստ էության, այնպես էլ ֆորմալ, քաղաքական և միջազգային իրավական նորմերի տեսանկյունից ինքնուրույն փաստաթուղթ չի հանդիսանում, այլ կրկնում և ամրագրում է 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը»:[369] Հետևաբար, քանի որ Մոսկվայի պայմանագիրն իր հերթին ստորագրվել էր միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների կոպիտ խախտումներով (պայմանագիրը ստորագրող կողմերն առանց որևէ լիազորության միջամտել էին այն չստորագրած ինքնիշխան պետության (պետությունների) տարածքային ամբողջականության հարցերին), ուստի կարծում ենք, որ տարածքային սահմանազատման հարցում Կարսի պայմանագրի նկատմամբ Հայաստանը իրավական պարտավորություն կրել չի կարող:

Մոսկվայի և Կարսի ոչ օրինական պայմանագրերով Խորհրդային Հայաստանը դարձավ խորհրդային արևելյան քաղաքականության «փրկագինը», շղթայվեց «համաշխարհային հեղափոխության» սնանկ գաղափարախոսության շղթաներով, գաղափարախոսություն, որ «հանդիսանում էր որոշիչ գործոն և չէր կարող ենթարկվել ուրիշ ոչնչի»:[370] Համոզիչ այս եզրահանգումներին չհամաձայնվել չենք կարող, այդպիսին էին ժամանակները:

Մյուս կողմից՝ Ալեքսանդրապոլի թուրք-հայկական պայմանագրի առկայությունը, հայկական տարածքների՝ քեմալական զորքերի զինագրավման տակ գտնվելու փաստը, Խորհրդային Ռուսաստանի թե ներքին, և թե արտաքին ծանր դրությունը, դրան հակառակ՝ քեմալական Թուրքիայի համար բարենպաստ միջազգային իրադրությունը, հնարավորություն չտվեցին խորհրդային դիվանագիտությանը Մոսկվայի և Կարսի կոնֆերանսներում իր կամքը թելադրել Թուրքիային, և փոփոխություններ կատարել Ալեքսանդրապոլի պայմանագրով գծված թուրք-հայկական սահմանում: Հայաստանի համար միակ դրականը թերևս կարելի է համարել այն, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Թուրքիան ճանաչեց Հայաստանի ինքնիշխանությունը, զրկվեց նրա ներքին գործերին միջամտելու հնարավորությունից:

Կարելի է ամփոփել, որ Խորհրդային Հայաստանի սահմանների որոշման հարցում Խորհրդային Ռուսաստանը ամբողջությամբ չպաշտպանեց հայ ժողովրդի շահերը, դրանք զոհաբերեց քեմալական Թուրքիայի հետ համագործակցության վրա հիմնված իր արևելյան

---

[369] Տե՛ս Борьян Б., նշվ. աշխ., էջ 300-301:
[370] Տե՛ս նույն տեղում, էջ 263:

քաղաքականության հեռանկարներին: Ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանի պատմական տարածքների զգալի մասը մնացին Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի կազմում, դրանով իսկ տարածաշրջանում ուժեղացավ թուրք-ադրբեջանա-վրացական գործոնը, թուլացավ՝ հայկականը: Սակայն պատմական ճշմարտությունն ու արդարությունը վաղ թե ուշ հաղթանակում են, և դրա ցայտուն օրինակն է ներկայիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որը հայ ժողովրդի ազգային-ազատագրական հերոսական պայքարի շնորհիվ ձեռք է բերել իր պետականությունը, դարձել Մայր Հայրենիքի անբաժան մասը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀՍԽՀ ԵՎ ՌՍՖԽՀ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1921-1922 ԹԹ.: ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. Հայ-ռուսական միջպետական հարաբերությունները խորհրդային հանրապետությունների պետական միավորման գործընթացի համատեքստում: Անդրդաշնության կազմավորումը

Հայաստանի խորհրդայնացումից հետո հանրապետության նոր կառավարությունը՝ Հայաստանի հեղկոմը, հրատապ էր համարում խորհրդային երկու հանրապետությունների՝ Հայաստանի և Ռուսաստանի միջև հաստատված ռազմաքաղաքական դաշինքին իրավական պայմանագրային ձևակերպում տալու խնդրի լուծումը: Պետք է նկատի ունենալ, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը ոչ միայն չէր կարգավորում հանրապետությունների միջպետական փոխհարաբերությունները, այլև, ինչպես արդեն նշել ենք, «չեղյալ համարվեց» Հայաստանի նոր իշխանությունների կողմից:

1920-1921 թթ. դեկտեմբեր-փետրվար ամիսներին Հայաստանում տիրող ներքաղաքական անկայուն և բարդ իրադրության պայմաններում, հայ-ռուսական պայմանագրի նախագիծ պատրաստելու և շտապ ստորագրելու՝ Հայաստանի իշխանությունների մտադրությունները չիրականացան: Բայց, ինչպես վկայում են արխիվային փաստաթղթերը, Հայհեղկոմը փորձեր, այնուամենայնիվ, կատարեց: Այսպես, 1921 թ. հունվարի 8-ին Հայհեղկոմի անդամ Ալեքսանդր Բեկզադյանը Ադրբեջանում ՀՍԽՀ ներկայացուցիչ Մ. Աբարեկյանին հրահանգավորում է, որպեսզի նա անմիջապես Մոսկվա հաղորդի Հայաստանի և Ռուսաստանի միջև ռազմաքաղաքական դաշինք կնքելու մասին Հայհեղկոմի ցանկության մասին:[371] Սակայն Հայաստանում փետրվարյան ապստամբության արդյունքում խորհրդային իշխանության տապալման հետևանքով, գործը դրանից այն կողմ չանցավ, և հայ-

[371] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 50, թ. 4: Տե՛ս նաև գ. 35, թ. 11-ի շրջերես:

ռուսական միջպետական պայմանագիր պատրաստելու և ստորագրելու գործընթացը կասեցվեց և մղվեց հետին պլան:

Պետք է նշել, որ Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի միջպետական հարաբերությունների ձևավորման գործընթացը սերտորեն շաղկապված էր ինչպես անդրկովկասյան հանրապետությունների, այնպես էլ Խորհրդային Ռուսաստանի և խորհրդային մյուս հանրապետությունների միջև ձևավորվող հարաբերությունների հետ և ընթանում էր զուգահեռ:

Ռուսական նախկին կայսրության տարածքի մեծ մասում 1917-1921 թթ. առաջացած խորհրդային ազգային հանրապետությունների փոխհարաբերությունների կարգավորման հարցը Ռուսաստանի բոլշևիկյան իշխանությունները հատուկ քննարկման առարկա դարձրին 1921 թ. մարտի 8-16-ը Մոսկվայում հրավիրված ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարին:

Կենտկոմի անունից ՌՍՖԽՀ ազգությունների գործերի ժողկոմ Ի. Ստալինի զեկուցման հիման վրա համագումարի ընդունած «Ազգային հարցում կուսակցության ընթացիկ խնդիրների մասին» բանաձևում արձանագրվեց, որ հակախորհրդային իմպերիալիստական շրջապատում խորհրդային հանրապետությունների մեկուսի, անջատ գոյությունն անխոհեմ և աննպատակահարմար է: Նշվեց, որ հանրապետությունների պաշտպանության, տնտեսության վերականգնման, փոխօգնության, ազգերի համերաշխության, ռազմաքաղաքական սերտ հարաբերություններ հաստատելու ընդհանուր շահերը «Հրամայաբար թելադրում են առանձին խորհրդային հանրապետությունների պետական միավորումը»: Միավորման լավագույն ձև համարվեց խորհրդային ֆեդերացիան (դաշնությունը), որի հիմքում դրվելու էր հանրապետությունների փոխադարձ վստահության և դաշնության մեջ մտնելու կամավորության սկզբունքը:[372]

Համագումարը ՌԿ(բ)Կ առաջնահերթ և հրատապ խնդիրներից համարեց՝ օգնել խորհրդային ազգային հանրապետություններին ամրապնդել խորհրդային պետականությունը, ազգային կոմկուսների գործունեությունը, զարգացնել ազգային մշակույթը, կրթությունը, գիտությունը (մայրենի լեզվով), հաղթահարել և վերացնել ազգերի հետամնացությունը և նրանց միջև փոխադարձ անվստահությունը: Բանաձևը ավարտվում է «Մեծապետական վելիկոռուսական շովինիզմի

[372] Десятый съезд РКП(б). Стенографический отчет, с. 602.

(ազգայնամոլության)» և «տեղական բուրժուական նացիոնալիզմի (ազգայնականության)» դեմ անխնա պայքար ծավալելու կոչով:[373]

Հարկ է նշել, որ մինչ կոմունիստական կուսակցության 10-րդ համագումարը, որի ընդունած բանաձևերով փաստորեն ճշգրտվեցին և նախանշվեցին խորհրդային հանրապետությունների՝ «խորհրդային դաշնության» սկզբունքի հիման վրա, ավելի սերտ միավորման գործընթացի հիմնական բաղադրիչները, Խորհրդային Ռուսաստանի և խորհրդային ազգային հանրապետությունների փոխհարաբերությունները կառուցվում էին նախ՝ «ռազմաքաղաքական դաշինքի»,[374] իսկ այնուհետև՝ հանրապետությունների միջև ստորագրված երկկողմ պայմանագրերի հիման վրա: Ռուսաստանը դաշինքի մասին պայմանագրեր և տնտեսական համաձայնագրեր էր ստորագրել խորհրդային մի քանի հանրապետությունների, այդ թվում՝ Խորհրդային Այրբեջանի (30 սեպտեմբերի, 1920 թ.), Ուկրաինայի (28 դեկտեմբերի, 1920 թ.) և Բելոռուսիայի (16 հունվարի, 1921 թ.) հետ:

Միջպետական ֆեդերատիվ հարաբերությունների նշված ձևերը, որոնց հիմքում դրված էր խորհրդային ազգային ինքնավարության սկզբունքը, բոլշևիկյան կուսակցության վերնախավը դիտում էր որպես անցումնային փուլ՝ համաշխարհային հեղափոխության հաղթանակից հետո «Միջազգային Խորհրդային հանրապետություն» ստեղծելու ճանապարհին:

Խորհրդային հանրապետությունների փոխհարաբերությունների ձևերը թեև փոխվում էին, սակայն դրանք որևէ ազդեցություն չէին գործում հանրապետությունների միջպետական հարաբերությունների էության վրա: Դա պայմանավորված էր նրանով, որ կուսակցական, արհմիութենական, տնտեսավարող, և անգամ ուժային կառույցների գործունեության հիմքում դրված «դեմոկրատական ցենտրալիզմի» սկզբունքը, անկախ ամենից, ապահովում էր բոլշևիկյան կուսակցության դիկտատուրան: Վերջինիս ամրապնդմանն էր ուղղված նաև

---

[373] Տե՛ս նույն տեղում, էջ 603-604, 607:

[374] Իրականացնելով 1919 թ. մարտին տեղի ունեցած ՌԿ(բ)Կ 8-րդ համագումարի ընդունած բանաձևերը, նույն թվականի հունիսի 1-ին Համառուսաստանյան Կենտգործկոմն ընդունեց «Համաշխարհային իմպերիալիզմի դեմ պայքարելու համար խորհրդային հանրապետությունների՝ Ռուսաստանի, Ուկրաինայի, Լատվիայի, Լիտվայի, Բելոռուսիայի միավորման մասին» հրովարտակը, պատմության մեջ այն հայտնի է որպես «Խորհրդային ազգային հանրապետությունների ռազմաքաղաքական միության մասին դեկրետ» (Տե՛ս Шесть лет национальной политики Советской власти и Наркомнац. 1917-1923 гг., Москва, 1923, с. 18-19):

ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարի կողմից ընդունված «Կուսակցության միասնության մասին» բանաձևը, որի համաձայն՝ բացառվում էր այլակարծության որևէ դրսևորում ոչ միայն կուսակցության ներսում, այլև խորհրդային ազգային հանրապետությունների փոխհարաբերություններում, դրանք նույնպես կարգավորվելու էին «կուսակցական կարգով»:

Բոլշևիկյան կուսակցության վերնախավն ամեն ինչ կանխատեսել էր, որպեսզի խորհրդային հանրապետությունները, անգամ Խորհրդային Ռուսաստանից պետական և վարչական առումով անջատ լինելով, ղեկավարվեին կուսակցական վերադաս մեկ մարմնից՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմից, և նրա կողմից կազմավորված կուսակցական երկրային բյուրոների միջոցով: Իսկ հանրապետությունների ազգային կոմկուսները, որպես ՌԿ(բ)Կ բաղկացուցիչ մասեր, իրենց հերթին ենթակա էին երկրային բյուրոներին:

Այսպիսով պետք է նշել, որ ֆեդերացիայի գաղափարն իր հիմքում թեև առաջադիմական էր և, մեր կարծիքով, կարող էր չափազանց արդյունավետ լինել խորհրդային հանրապետությունների համար թե ներքին, և թե արտաքին դրության տեսանկյունից, սակայն, միայն այն դեպքում, եթե խստորեն պահպանվեին ֆեդերացիայի հիմնարար սկզբունքները՝ այն կազմող պետությունների լիարժեք իրավական սուվերենությունը, ֆեդերացիայի մեջ մտնելու և դուրս գալու կամավորությունը: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, բոլշևիկյան վերնախավը իրականում դա բացառում էր, ուստի խորհրդային հանրապետությունների ֆեդերատիվ (դաշնային) հարաբերությունների հիմքերը ամուր լինել չէին կարող:

Խորհրդային Հայաստանում, և ընդհանրապես ամբողջ Կովկասում, ՌԿ(բ)Կ Կենտկոմի լիազոր ներկայացուցչական մարմինը՝ 1921 թ. մարտի 21-ին ստեղծված ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն էր, որի փաստացի ղեկավարն էր ՌԿ(բ)Կ Կենտկոմի անդամ Գ. Օրջոնիկիձեն: Նշենք, որ բյուրոյի իրավասության շրջանակներում էր անդրկովկասյան հանրապետությունների ոչ միայն կուսակցական, խորհրդային ու տնտեսական քնազավառների, այլև հանրապետությունների միջև միջպետական հարաբերությունների կարգավորման խնդիրները:

Անդրկովկասի հանրապետությունների և Խորհրդային Ռուսաստանի միավորման ձևերի մասին տարբեր տեսակետներ առաջ եկան ամբողջ երկրամասի խորհրդայնացումից հետո 1921 թ. գարնան սկզբին: Դրանցից կառանձնացնենք Մոսկվայում Խորհրդային Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Բ. Շահթախթինսկու տեսակետը, որը

նա շարադրել է Վ. Լենինին 1921 թ. մարտի 1-ին ուղղված զեկուցագրում:[375]

Մինչ զեկուցագրի բովանդակությանն անդրադառնալը, ընթերցողի ուշադրությունը հրավիրենք հետևյալ ուշագրավ փաստի վրա: Մեր կարծիքով, զեկուցագիրը գրելու և Լենինին ներկայացնելու ժամանակը պատահական չէր ընտրված, նախ՝ ընդամենը մի քանի օր էր, ինչ խորհրդայնացվել էր Վրաստանը, իսկ Հայաստանում, ընդհակառակը, խորհրդային իշխանությունը տապալված էր և, ամենագլխավորը, նույն օրերին Մոսկվայում ընթացող ռուս-թուրքական բանակցություններում լուրջ քննարկումների առարկա էր դարձել Հայկական հարցը:

Նշենք, որ թուրքական պատվիրակությունը Բաքվից Մոսկվա էր ժամանել հենց Շահթախթինսկու ուղեկցությամբ, իսկ զեկուցագիրն էլ «պատահական զուգադիպությամբ» հաջորդել էր Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի կողմից Վ. Լենինին 1921 թ. փետրվարի կեսերին ուղղված երկու նամակներին: Դրանցում, ինչպես նշել ենք նախորդ շարադրանքում, վերջինս «անկեղծ» խորհուրդներ է տալիս բոլշևիկների առաջնորդին՝ Հայկական հարցը Թուրքիայի և Ադրբեջանի օգտին լուծելու միջոցով ապահովել խորհրդա-թուրքական ամուր դաշինքը:[376] Կասկածից վեր է, որ նույն նպատակն էր հետապնդում նաև Շահթախթինսկու զեկուցագիրը, թեև այն խորամանկորեն շղարշված էր «անդրկովկասյան հանրապետությունների աշխատավոր տարրերի համար խաղաղ համակեցության պայմաններ ստեղծելու և նրանց՝ Ռուսաստանի Դաշնության մեջ մտնելու» անկեղծ մտահոգությամբ : «Ժամանակն է, - հուշում է Շահթախթինսկին, - որպեսզի այդ գաղափարը ստանա կոնկրետ ձև»: Այնուհետև նշելով տարածաշրջանում առկա տարածքային,[377] տնտեսական և բազմաթիվ այլ հայ-վրաց-ադրբեջանական տարածայնությունների մասին, Շահթախթինսկին հուշում է, որ դժվարին այդ խնդիրների արդարացի և նպատակահարմար լուծումը կարող է հիմք հանդիսանալ «անդրկովկասյան բոլոր հանրապետությունների (ներառյալ Դաղս-

---

[375] Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг., էջ 617- 620: Տե՛ս նաև ՀԱԱ, հավաքածու 1, գ. 3, թ. 65:

[376] Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг., էջ 614 - 617:

[377] Նշենք, որ նամակին կից Շահթախթինսկին ներկայացնում է թվով 10 (Բորչալու, Ղազախ, Ղարաբաղ, Այսայցխա, Նախիջևան և Շարուր, Զանգեզուր և այլն), իր կարծիքով, վիճելի համարվող տարածքների մասին տեղեկատվական ավյուռներ, որոնցում միտումնավոր կեղծել է բնակչության թվաքանակը՝ մուսուլմանական տարրի օգտին:

տանը լեռնականների հետ)՝ կովկասյան մեկ հանրապետության մեջ միավորվելու, և Ռուսաստանի Դաշնության կազմ մտնելու համար»: Ավելացնենք միայն, որ հետզրույցներով Շահբախիինսկին հուշում է, որ կովկասյան հանրապետության մեջ Դաղստանը մտցնելու համար ինքը չի պնդի:[378]

Շահբախիինսկու առաջարկությունները հատուկ քննարկման առարկա դարձան ՌԿ(բ)Ա Կենտկոմի 1921 թ. մարտի 16-ի պլենումի նիստում: Որոշվում է հարցի քննարկումը փոխանցել Ստալին, Վլադիմիրսկի, Չիչերին կազմով ստեղծված հանձնաժողովին, և հանձնարարել նրան կարճ ժամանակում քաղբյուրոյի հաստատմանը ներկայացնել հանձնաժողովի աշխատանքների արդյունքները:[379] Սակայն, քաղաքական իրադրության փոփոխության պատճառով, հանձնաժողովն այդպես էլ որևէ առաջարկ չներկայացրեց:

ՌԿ(բ)Ա 10-րդ համագումարին խորհրդային հանրապետությունների միջև ձևավորվող հարաբերությունների նախանշած ուղին Կովկասի հանրապետությունների համար առավել հստակեցվեց Վ. Լենինի կողմից 1921 թ. ապրիլի 14-ին շարադրված՝ «Ադրբեջանի, Վրաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» ուղղված նամակում: Ծրագրային այդ նամակիրահանգի ամբողջ շարադրանքում կարմիր թելով անցնում է Կովկասի խորհրդային հանրապետությունների միջև սերտ դաշինք հաստատելու գաղափարը:[380]

Անդրկովկասի քաղաքական և սոցիալ-տնտեսական խնդիրները մշտապես գտնվում էին Լենինի համակ ուշադրության կենտրոնում, 1921 թ. ապրիլի 9-ին Գ. Օրջոնիկիձեին ուղղված հեռագրում Լենինը պահանջում է «Ամբողջ Անդրկովկասի համար ստեղծել մարզային տնտեսական մարմին»,[381] իսկ ապրիլի 11-ին նույն հասցեատիրոջը ուղղված մեկ այլ հեռագրում՝ հուշում է մտածել «Կովկասյան հանրապետությունները տնտեսական մեկ կենտրոնի մեջ միավորելու մասին»:[382] Ապրիլի 14-ի նամակը շարադրելուց ընդամենը մի քանի օր անց, 1921 թ. ապրիլի 19-ին, դարձյալ Օրջոնիկիձեին ուղղված հեռագրում նա հետաքրքրվում է. «Միավորված են, արդյո՞ք, Վրաստանը,

---

[378] Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг., էջ 618:
[379] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 3, թ. 66:
[380] Լենին Վ.Ի., ԵԼԺ, հ. 43, էջ 237-240:
[381] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 68, թ. 1:
[382] Լենին Վ.Ի., ԵԼԺ, հ. 43, էջ 233:

Հայաստանը, Ադրբեջանը, համաձայնեցված են, արդյո՞ք, արտաքին առևտրի հարցերը»:[383]

Նշենք, որ այդ ուղղությամբ աշխատանքները 1921 թ. գարնանն արդեն իսկ սկսվել էին: Այսպես՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի, Ռուսաստանի և անդրկովկասյան հանրապետությունների համապատասխան ղեկավար մարմինների ակտիվ բանակցությունների արդյունքում 1921 թ. ապրիլի 16-ին Թիֆլիսում ստորագրվում է համաձայնագիր Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի երկաթուղիների միավորման, Ռուսաստանի երկաթուղային ընդհանուր ցանցի մեջ նրանց ընդգրկելու, և դրանից բխող այլ հարցերի մասին : Ռուսաստանի կողմից համաձայնագիրը ստորագրել է ՌՍՖԽՀ հազորդակցության փոխժողկոմ Վ. Ֆոմինը:[384] Համապատասխան համաձայնագրեր ստորագրեցին նաև Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հեղկոմների նախագահներ Մ. Օրախելաշվիլին, Մ. Հուսեյնովը և Ս. Կասյանը:[385] Համաձայնագրերը վավերացվեցին 1921 թ. օգոստոսի 8-ին Մոսկվայում՝ Գ. Չիչերինի, Մ. Ցխակայայի, Ա. Շիրվանու և Ս. Տեր-Գաբրիելյանի կողմից ստորագրված համապատասխան արձանագրությամբ:

Շուտով իրականացվեց նաև Անդրկովկասի հանրապետությունների արտաքին միացյալ առևտուրը ղեկավարող մեկ մարմին ստեղծելու մասին Լենինի ցուցումը: Ռուսաստանի իշխանությունների միջնորդությամբ 1921 թ. մայիս-հունիս ամիսներին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի միջև ստորագրվեցին համապատասխան համաձայնագրեր:[386]

* * *

Ինչպես արդեն նշել ենք, Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի միջպետական հարաբերությունների ձևավորման գործընթացը շաղկապված էր անդրկովկասյան հանրապետությունների և Ռուսաստանի միջև ձևավորվող հարաբերությունների հետ և ընթանում էր զուգահեռ:

---

[383] Լենին Վ.Ի., ԵԼԾ, հ. 52, էջ 173-174:

[384] Правда Грузии, 17 апреля, 1921, № 41. Տե՛ս նաև, История Советской Конфедерации в документах (1917-1956), Москва, 1957, с. 283-284.

[385] Կոմունիստ, Երևան, 1921, մայիսի 13, թիվ 82:

[386] Տե՛ս Правда Грузии, 25 июня, 1921, № 93: Տե՛ս նաև, Խորհրդային Հայաստան, Երևան, 1921, հուլիսի 6, թիվ 119:

Հայաստանում 1921 թ. գարնանը խորհրդային իշխանությունը վերահաստատելուց հետո Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի իշխանությունները որոշակի քայլեր ձեռնարկեցին հանրապետությունների փոխհարաբերությունները պայմանագրային իրավական հիմքի վրա կարգավորելու ուղղությամբ: Նախնական երկկողմ բանակցություններից հետո 1921 թ. մայիսի 11-ին Մոսկվայում հրավիրվում է ՀՍԽՀ քաղաքացիության հետ առնչվող հարցերին նվիրված միջգերատեսչական խորհրդակցություն՝ Մոսկվայում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանի և ՌՍՖԽՀ արտաքին ու ներքին գործերի ժողկոմատների (Լենին, Սաբանին, Զայցև), Կարմիր բանակի շտաբի (Շչերբակով) ներկայացուցիչների մասնակցությամբ: Խորհրդակցությանը միասնական և անբաժան է ճանաչվում ՀՍԽՀ և ՌՍՖԽՀ քաղաքացիությունը, ընդունվում է, որ ՀՍԽՀ քաղաքացիները զինծառայությունը պետք է անցկացնեն Ռուսաստանի քաղաքացիների համար սահմանված ընդհանուր հիմունքներով: Ի դեպ՝ հայազգի քաղաքացիներին իրավունք է վերապահվում զինծառայությունն անցկացնել Խորհրդային Հայաստանի տարածքում: Խորհրդակցության որոշումներին իր համաձայնությունը տվեց և հաստատեց Ռուսաստանի արտգործժողկոմի տեղակալ Լ. Կարախանը (խորհրդակցության եզրափակիչ արձանագրության բնագրի վրա առկա է վերջինիս համապատասխան մակագրությունը – Կ.Խ.):[387]

Մոսկվայում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանը մեծ ջանքեր էր գործադրում հայ-ռուսական միջպետական հարաբերությունների իրավական դաշտը կարգավորելու ուղղությամբ: 1921 թ. հուլիսի 27-ին Տեր-Գաբրիելյանը ՀՍԽՀ արտգործժողկոմատ է ուղարկում հայ-ռուսական «Բանվորագյուղացիական դաշնագրի» և ֆինանսատնտեսական համաձայնագրի նախագծերը: Դրանց կից գրությունում Տեր-Գաբրիելյանը հուշում է, որ պայմանագրերը «Հանդիսանում են խորհրդային բոլոր հանրապետությունների և ՌՍՖԽՀ-ի միջև արդեն ստորագրված պայմանագրերի պատճենները և, իհարկե, որևէ փոփոխության ենթակա չեն»: Հայաստանի ներկայացուցիչը հայտնում է նաև, որ մոտակա օրերին պայմանագրերը, ինչպես նաև դրանցից բխող մի շարք երկկողմանի համաձայնագրերը (փոստ-հեռագրի, տնտեսական և այլն) ստորագրելու է Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Չիչերինի հետ:[388]

---

[387] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 8, թ. 51: Տե՛ս նաև նույն տեղում, գ. 9, թ. 62:
[388] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 7, թթ. 53-55:

Նշենք, որ ռուս-հայկական դաշնագրի նախագիծը հիմնական դրույթներում չէր տարբերվում ռուս-ուկրաինական և ռուս-բելոռուսական նմանատիպ դաշնագրերից և բառ առ բառ կրկնում է Ռուսաստանի և Վրաստանի միջև 1921 թ. մայիսի 21-ին ստորագրված դաշնագիրը:[389]

Այնուհանդերձ, դաշնագրի նախագծի ներածականում կողմերը՝ Հայաստանը և Ռուսաստանը, ճանաչում էին միմյանց անկախությունը և ինքնուրույնությունը, հավաստում՝ ընդհանուր շահերի մասին: Պայմանագրի 1-ին հոդվածով ՌՍՖԽՀ-ն և ՀՍԽՀ-ն կազմում էին ռազմական և տնտեսական դաշինք, 2-րդ հոդվածում մասնավորապես նշվում է, որ ՀՍԽՀ տարածքի՝ նախկին Ռուսական կայսրության պատկանելիության փաստից, ՀՍԽՀ-ի համար որևէ պարտավորություններ չի բխում, 3-րդ հոդվածով կողմերը պարտավորվում են լրացուցիչ համաձայնագրեր կնքել՝ պայմանագրի 1-ին հոդվածը լավագույնս իրականացնելու համար : 4-րդ հոդվածը արձանագրում է, որ հանրապետությունների «Միավորված մարմինների ղեկավարումը, ինչպես նաև նրանց հսկողությունը իրականացվելու է Համառուսաստանյան բանվորագյուղացիական և կարմիրբանակային պատգամավորների խորհուրդների համագումարների, ինչպես նաև Համառուսաստանյան Կենտգործկոմի միջոցով: Վերջինում ՀՍԽՀ-ն ունենալու էր իր ներկայացուցիչներին, որոնց գործուղման կարգը պետք է ներկայացվեր Համառուսաստանյան խորհուրդների համագումարի հաստատմանը»: Վերջին, 5-րդ հոդվածով՝ պայմանագիրը ուժի մեջ էր մտնելու ստորագրման պահից: Նշենք, որ պայմանագրի նախագիծը պատրաստվել էր Մոսկվայում գործող ՀՍԽՀ ներկայացուցչությունում 1921 թ. հուլիսի 16-ին:[390]

Ռուսաստանում Խորհրդային Հայաստանի ներկայացուցչության և նրա ղեկավար Սահակ Տեր-Գաբրիելյանի հետևողական աշխատանքների արդյունքում՝ ՌՍՖԽՀ կառավարությունը 1921 թ. օգոստոսի 24-ին հավանության է արժանացնում «Փոստ-հեռագրի և ռադիոհեռագրի կառավարումը միավորելու մասին» հայ-ռուսական համաձայնագրի նախագիծը և առաջարկում Ռուսաստանի արտգործժողկոմատին կառավարության անունից ստորագրել այն: Կառավարության հավանությանն է արժանանում նաև հայ-ռուսական ֆինան-

---

[389] Տե՛ս Советское содружество народов, Москва, 1977, էջ 217-218:
[390] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թթ. 53-55:

սական համաձայնագիրը, որը ստորագրվում է Մոսկվայում 1921 թ. սեպտեմբերի 30-ին:[391]

Ինչ վերաբերվում է հայ-ռուսական «Բանվորագյուղացիական դաշնագրին», ապա այն այդպես էլ չստորագրվեց: Կարելի է ենթադրել, որ Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները նման պայմանագրի ստորագրումն ավելորդ համարեցին, այն պարզ պատճառով, որ արդեն 1921 թ. ամռան - աշնանը ինտենսիվ բանակցություններ էին ընթանում ինչպես Անդրկովկասի հանրապետությունների դաշնություն ստեղծելու, այնպես էլ այդ հանրապետությունների ու Ռուսաստանի միջև տնտեսական, վարչական և ռազմաքաղաքական մի շարք պայմանագրեր ու համաձայնագրեր ստորագրելու վերաբերյալ:

* * *

1921 թ. հուլիսի 2-3-ին տեղի ունեցած ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի միացյալ պլենումը, մի շարք հարցերի թվում, քննարկեց նաև անդրկովկասյան հանրապետությունների, վերջիններիս և Խորհրդային Ռուսաստանի միջև հաստատվելիք միջպետական հարաբերություններին առնչվող հարցերը: Պլենումի կողմից ընդունված բանաձևում թեև շեշտվեց Անդրկովկասի հանրապետությունների անկախությունը պահպանելու անհրաժեշտության մասին, սակայն, միաժամանակ, պահանջվում է խստորեն պահպանել այդ երկրների կոմկուսների Կենտկոմների և ՌԿ(բ)Կ Կենտկոմի միջև գոյություն ունեցող հարաբերությունները: Հրամայական է համարվում անդրկովկասյան հանրապետությունների և Ռուսաստանի միջև ռազմական, առևտրատնտեսական և ֆինանսական պայմանագրերի կնքումը՝ կամավորության սկզբունքի հիման վրա: ՌԿ(բ)Կ Կենտկոմին առաջարկվում է այսուհետև «ՌՍՖԽՀ ժողկոմատների լիազոր-ներկայացուցիչներին չուղարկել անդրկովկասյան հանրապետություններ, առանց վերջիններիս Կենտկոմների նախնական համաձայնության, ընդ որում, - նշվում է բանաձևում, - ներկայացուցիչներին կարելի է ուղարկել միայն ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի միջոցով»: Խնդրվում է նաև՝ վերացնել Համառուսաստանյան Արտակարգ Հանձնաժողովի (ՎՉԿ) լիազոր-ներկայացուցիչների ինստիտուտը Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում:[392]

---

[391] Տե՛ս Советское содружество народов, էջ 235, 241-243: Համաձայնագրի մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության 5-րդ գլխում:

[392] Борьба за упрочение Советской власти в Грузии, Тбилиси, 1959, с. 59-60.

Պետք է նշել, որ Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների դաշնություն հիմնելու գաղափարը քարոզվում էր ոչ միայն կուսակցական հրահանգներով, այլև հանրապետական և անդրկովկասյան կուսակցական, կոմերիտական, արհմիութենական և այլ խորհրդակցություններում ու ժողովներում: Այսպես՝ Հայկոմկուսի Երևանի կազմակերպության և արհեստակցական միությունների միացյալ հանդիսավոր նիստում (1921 թ. մայիսի 9-ին) Ալ. Մյասնիկյանը հայտարարեց. «Այսօր մենք դեռ ամբողջ Անդրկովկասը չենք կարող կառավարել իբրև մի ամբողջություն: Բայց հենց որ մենք ոտքի վրա կանգնենք, կհիմնենք Կովկասյան ֆեդերացիա»:[393]

Անդրֆեդերացիայի կազմավորման անհրաժեշտության և անխուսափելիության մասին էր Ի. Ստալինի զեկուցումը Թիֆլիսի կուսկազմակերպության ընդհանուր ժողովում 1921 թ. հուլիսի 6-ին:[394] Ծրագրային նշանակություն ուներ նաև Գ. Օրջոնիկիձեի զեկուցումը 1921 թ. օգոստոսի 12-14-ը Թիֆլիսում հրավիրված Կովկասյան երկրամասային կուսակցական առաջին խորհրդակցությունում: Անդրադառնալով Անդրկովկասում ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի խնդիրներին, Օրջոնիկիձեն մասնավորապես նշեց. դրանցից գլխավորն է՝ նպաստել «կովկասյան խորհրդային հանրապետությունների տնտեսական միավորմանը միմյանց և Խորհրդային Ռուսաստանի հետ, միաժամանակ, պահպանել այդ հանրապետությունների անկախությունը»: Նա նաև հատուկ շեշտեց, որ «Կովկասը տնտեսական տեսակետից ներկայացնում է միասնական ամբողջական և անբակտելի օրգանիզմ: Ռուսի և Կովկասի խորհրդային բոլոր հանրապետությունների տնտեսական միավորման խնդիրը հերթի դրվեց, հենց որ Կովկասում հաստատվեց խորհրդային իշխանությունը»:[395]

Անդրկովկասյան դաշնություն ստեղծելու գործընթացի արագացմանը նպաստելու էր 1921 թ. նոյեմբերի 3-ին Բաքվում կայացած ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումը, անդրկովկասյան հանրապետությունների կուսակցական ղեկավարության, ինչպես նաև ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Վ. Մոլոտովի մասնակցությամբ: Վերջինիս ներկայությունը պլենումի աշխատանքներին հուշում է, որ Մոսկվան չափազանց կարևոր նշանակություն է տալիս Անդրֆեդերա-

---

[393] *Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, էջ 338:*

[394] *Ստալին Ի.Վ., Երկեր, հ. 5, Եր., 1948, էջ 98-111:*

[395] *ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 382, թթ. 1-3: Տե՛ս նաև Օրջոնիկիձե Գ.Կ., Ընտիր հոդվածներ և ճառեր, Եր., 1950. էջ 61-63:*

ցիայի իրականացման խնդրին: Պլենումին ընդունած «Անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիայի մասին» բանաձևում, որը Գ. Օրջոնիկիձեի հանձնարարությամբ նախապատրաստել էին Ալ. Մյասնիկյանն ու Ծ. Էլիավան, և համապատասխան որոշումում՝ անհետաձգելի է համարվում անդրկովկասյան հանրապետությունների միջև ռազմաքաղաքական, տնտեսական, ֆինանսական և արտաքին քաղաքականության ոլորտների միավորման մասին դաշնային միութենական պայմանագրի ստորագրումը, միասնական վարչատնտեսական և քաղաքական կենտրոնի՝ Միութենական Խորհրդի, ստեղծումը: Դա հիմնավորվում է նրանով, որ անդրկովկասյան հանրապետությունների մեկուսի գոյությունը վնասում է նրանց տնտեսությանը, ինչպես նաև՝ թուլացնում է կապիտալիստական երկրների առջև: Իսկ հանրապետությունների միավորումը և քաղաքական սերտ միությունը, - նշվում է բանաձևում, - ամուր երաշխիք կլինի՝ տնտեսությունը զարգացնելու և արտաքին հնարավոր ոտնձգություններին դիմակայելու համար:[396]

1921 թ. հոկտեմբերին տեղի ունեցած ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումին մի խումբ խնդիրների շարքում քննարկեց նաև անդրկովկասյան հանրապետությունների և նրանց ազգային բանակների հետագա ճակատագրի հարցը, մշակվեցին միջոցառումների ծրագրեր: Խնդիրն իր վերջնական լուծումը պետք է ստանար ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի նոյեմբերի 17-ի նիստում:

Սակայն, անդրադառնալով Կովկասյան բյուրոյի պլենումի 1921 թ. նոյեմբերի 3-ի՝ Անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիա կազմավորելու մասին որոշմանը, և ընդունած համապատասխան բանաձևին, քաղբյուրոն որոշեց. նախ՝ պատգամավորներ պահանջել խնդրի վերաբերյալ (մասնավորապես՝ Անդրկովկասյան ֆեդերացիայի և ՌՍՖՍՀ-ի միջև ձևավորվելիք հարաբերությունների բնույթի մասին), և հետո միայն՝ անդրադառնալ հարցի քննարկմանը:[397]

Քաղբյուրոյի որոշման մեկ այլ կետով՝ հանձնարարվեց «ՌՍՖՍՀ փոխհարաբերությունները Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ ձևակերպել ռազմական կոնվենցիայի միջոցով»: Անդրկովկասի հանրապետություններում ռազմական գործը կազմակերպելու փաստացի իրավունքը քաղբյուրոն վերապահեց ՌՍՖՍՀ

---

[396] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1185, թթ. 52-57: Տե՛ս Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, էջ 369:
[397] Տե՛ս ՀԱԱ, հավաքածու 1, գ. 3, թ. 129:

Ռազմահեղափոխական խորհրդին, իսկ Գ. Օրջոնիկիձեին հանձնարարվեց կոնվենցիան անցկացնել անձամբ, ամենակարճ ժամանակում, իսկ որոշումները էլ՝ նախօրոք ապահովել «կուսակցական կարգով»: Որոշման մեջ քաղաքրոն առաջարկում է նաև «Անմիջապես ձեռնամուխ լինել «ազգային» և համապետական ռազմական պահեստների միավորմանը, այն նպատակով, որպեսզի առաջինները ներառվեն համապետական ռազմական մատակարարման համակարգի մեջ»: Որոշման վերջին կետով՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ազգային զորքերի և ռազմական գերատեսչությունների թվակազմը սահմանվում է 10 հազարական մարդ, ընդհանուր՝ 30 հազար, նախազգուշացվում է, որ այդ հարցում «անթույլատրելի է կամայական որևէ փոփոխություն»:[398]

Համագործակցելով անդրկովկասյան հանրապետությունների քաղաքական ղեկավարության և զինվորական հրամանատարության հետ, Գ. Օրջոնիկիձեն մեծ ջանասիրությամբ և կարճ ժամանակում իրականացնում է քաղաքրոյի որոշումը: Անդրկովկասի երեք հանրապետությունների ղեկավարները՝ Ալ. Մյասնիկյանը, Պ. Մդիվանին, Ն. Նարիմանովը, և Անդրկովկասի խորհրդային երեք հանրապետություններում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեզրանը 1921 թ. դեկտեմբերի 8-ին Թիֆլիսում ստորագրում են «Համաձայնագիր Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների կառավարությունների և ՌՍՖԽՀ կառավարության միջև ռազմածովային հարցերի վերաբերյալ»:[399]

Համաձայնագիրը, իրականում՝ ռազմական դաշինքը, բաղկացած է ներածականից և 14 հոդվածներից: Դրանցով մասնավորապես արձանագրվում է, որ Անդրկովկասի հանրապետությունների, ինչպես նաև Խորհրդային Ռուսաստանի՝ արտաքին վտանգից համատեղ պաշտպանվելու ռազմավարական շահերը հրամայաբար պահանջում են չորս հանրապետությունների զինված բոլոր ուժերի և միջոցների միավորումը մեկ միասնական հրամանատարության ներքո՝ ի դեմ Առանձին Կովկասյան բանակի ռազմահեղհորհրդի: Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ազգային բանակները, որպես առանձին ինքնուրույն միավորներ, 10 հազարից ոչ ավել թվակազմով (խաղաղ ժամանակներում), մտնելու էին Առանձին Կովկասյան բանակի կազմ և հռչակվելու էին ինտերնացիոնալ Խորհրդային Կարմիր բանակի

---

[398] Տե՛ս նույն տեղում:
[399] Նույն տեղում, էջ. 163-164:

բաղկացուցիչ մասերը: Ազգային բանակները պետք է առաջնորդվեին ՌՍՖԽՀ Կարմիր բանակի համար սահմանված զինվորական օրենսդրությամբ և նորմերով, իսկ նրանց բոլոր տեսակի կարիքները ամբողջությամբ բավարարվելու էին տվյալ հանրապետության կողմից: Համաձայնագրի համաձայն՝ հանրապետություններում թեև շարունակելու էին գործել ազգային ռազմական ժողկոմատները, սակայն նրանց ինքնուրույնությունը խիստ սահմանափակվելու էր: Ռազմական գործի հետ կապված հիմնական միջոցառումները հանրապետությունների ռազմգործժողկոմատները իրականացնելու էին Առանձին Կովկասյան բանակի ռազմհեղխորհրդի հրահանգների և ՌՍՖԽՀ համապատասխան օրենսդրական նորմատիվների համաձայն:

ՀՍԽՀ Ժողկոմխորհը համաձայնագիրը վավերացրեց 1922 թ. հունվարի 19-ին:[400] Հայաստանի համար առանձնակի նշանակություն ուներ համաձայնագրի 3-րդ հոդվածը, ըստ որի՝ «Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների պաշտպանությունն ամրապնդելու համար նրանց տարածքում տեղակայվելու են ՌՍՖԽՀ Կարմիր բանակի զորամասերը»:[401] Սա ռազմավարական կարևոր քայլ էր ոչ միայն արտաքին վտանգից, Թուրքիայի հնարավոր ոտնձգություններից Հայաստանի անվտանգությունը ապահովելու տեսանկյունից, այլև նրանով, որ Խորհրդային Ռուսաստանը մեկ անգամ ևս հուշում էր, որ անդրկովկասյան տարածաշրջանը համարում է իր ռազմավարական շահերի ոլորտը:

Այսպիսով, 1921 թ. դեկտեմբերի 8-ի ռազմական կոնվենցիան, որը ուժի մեջ էր մտնում ստորագրման իսկ պահից, վերածվում է տարածաշրջանային լուրջ և ազդեցիկ քաղաքական գործոնի, այն փաստորեն դնում էր Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների և Ռուսաստանի ռազմաքաղաքական սերտ միավորման ամուր հիմքերը:

* * *

ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումի 1921 թ. նոյեմբերի 3-ի՝ անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիա կազմավորելու մասին որոշումին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն հերթական անգամ անդրադարձավ 1921 թ. նոյեմբերի 29-ին: Քննարկումների և միաձայն քվեարկության արդյունքում ընդունված որոշման բանաձևում, որը ներկայացրել էր Վ. Լենինը, սկզբունքորեն միանգամայն

---

[400] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց.5, գ. 5, թ. 1:

[401] Տե՛ս նույն տեղում, հավելված 1, գ. 3, pp. 163-164:

ճիշտ և իրականանալի համարելով Կովկասյան բյուրոյի որոշումը, քաղբյուրոն, այնուհանդերձ, որոշման անմիջական իրագործումը համարում է վաղաժամ: Անդրկովկասյան հանրապետությունների կոմկուսների ղեկավարությանն առաջարկվեց ֆեդերացիայի հարցը դարձնել համաժողովրդական քննարկումների առարկա, և ֆեդերացիայի օգտին լայն քարոզչություն վարելով՝ խնդիրը լուծել հանրապետությունների խորհուրդների համագումարների միջոցով:[402]

Անդրֆեդերացիայի կազմավորման հարցում քաղբյուրոյի այս վերապահումները հավանաբար բխում էին այն այլակարծությունից և դիմադրությունից, որ ցուցաբերեց Վրաստանի կոմկուսի ղեկավարության մի մասը (Մ. Օկուջավա, Կ. Ցինցաձե, Լ. Դումբաձեն և այլք), հեղկոմի նախագահ Պ. Սդիվանու գլխավորությամբ: Վերջիններս կտրականապես դեմ էին Կովկասյան բյուրոյի նոյեմբերի 3-ի որոշմանը և գտնում էին, որ ֆեդերացիայի կազմավորումը վաղաժամ է, բացակայում են իրական նախադրյալները, այն պարտադրված է Կովկասյան բյուրոյի և անձամբ Գ. Օրջոնիկիձեի կողմից: Նրանք հուշում էին նաև, որ Օրջոնիկիձեն դրսևորում է վնասակար շտապողականություն, ճնշում է այլակարծության որևէ դրսևորում՝ ինչը հարվածում է հենց ֆեդերացիայի գաղափարին: Պնդելով Անդրկովկասի հանրապետությունների իրական անկախությունը պահպանելու անհրաժեշտության մասին, Սդիվանին հանդես է գալիս հանրապետությունների միջև երկկողմանի պայմանագրային հարաբերություններ հաստատելու առաջարկությամբ: Վրաց «ձախ ֆեդերալիստների» կարծիքով՝ եթե ֆեդերացիան Ադրբեջանի և, առավել ևս Հայաստանի համար ձեռնտու է, ապա Վրաստանի համար ձեռնտու չէ ոչնչով:

Սդիվանու հիմնականում ճիշտ դիրքորոշումը բոլշևիկյան կուսակցության վերնախավի կողմից որակվեց որպես ազգային թեքում, որի դեմ անզիջում պայքար ծավալեց Կովկասյան բյուրոն, Գ. Օրջոնիկիձեի, Ի. Ստալինի, ինչու չէ, նաև Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ: Այնուհանդերձ, Վրաստանի կոմկուսի Կենտկոմի 1921 թ. նոյեմբերի 14-ի և 25-26-ի պլենումները որոշեցին հավանության արժանացնել Կովկասյան բյուրոյի 1921 թ. նոյեմբերի 3-ի որոշումները և «պարտադիր ու անհապաղ իրականացնել»:[403]

---

[402] Տե՛ս նույն տեղում, թ. 157:

[403] Տե՛ս Компартия Грузии в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК, հ. 1, 1920-1931, Թբիլիսի, 1976, էջ 22-23:

Ադրբեջանի ղեկավարությունը սկզբունքորեն պաշտպանում էր Կովկասյան բյուրոյի քաղաքականությունը Անդրֆեդերացիայի շտապ կազմավորման հարցում, սակայն Ադրբեջանում նույնպես կային այլ կարծիքներ արտահայտողներ: Այսպես, 1921 թ. նոյեմբերի 22-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրո ուղղված զեկուցագրում անդրադառնալով Ադրբեջանում Նարիմանովի վնասակար գործունեության, անդրկովկասյան հանրապետություններում ազգայնական թեքումների, հանրապետությունների իշխանությունների միջև լուրջ տարաձայնությունների (որոնք վնասում են Անդրֆեդերացիայի գաղափարին) և այլ խնդիրներին, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի անդամներ Մ. Հուսեյնովն ու Ռ. Ախունդովը իրենց դիրքորոշումներն են ներկայացնում նաև Անդրֆեդերացիայի կազմավորման հարցում Կովկասյան բյուրոյի որդեգրած քաղաքականության վերաբերյալ: Նշենք, որ Հուսեյնովն ու Ախունդովը զեկուցումով հանդես էին եկել ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի նոյեմբերի 17-ի նիստում: Զեկուցագրում մասնավորապես նշվում է. «Անդրկովկասյան հանրապետությունների դաշնության ստեղծումը և այնուհետև՝ վերջինիս պաշտոնական միավորումը ՌՍՖՍՀ-ի հետ, անկասկած, մեր մոտակա խնդիրն է, սակայն այստեղ պետք է հետևել առավել քան չափավոր և զգուշավոր գործելակերպի, քանզի դաշնություն ստեղծելու գործի ձախողումն անբուլլատրելի է»: Հուսեյնովն ու Ախունդովը զեկուցագրի վերջում ներկայացնում են իրենց եզրահանգում-առաջարկությունը, այն է. «Նկատի ունենալով տնտեսական միավորման փորձի բացակայությունը, անդրկովկասյան հանրապետությունների դաշնության ստեղծումը համարել վաղաժամ: Հանձնարարել Կովկասյան բյուրոյին բոլոր ջանքերն ուղղել տնտեսական միավորման հետագա ամրապնդմանը, որը կհանդիսանա նախապատրաստական կարևոր քայլ քաղաքական միավորման համար»:[404]

Հուսեյնովի ու Ախունդովի առաջարկության հետ ոչ որ հաշվի չնստեց, ավելին՝ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմը 1921 թ. դեկտեմբերի 14-ին ողջունեց Կովկասյան բյուրոյի նոյեմբերի 3-ի որոշումը, և իր հերթին որոշեց՝ ամենալայն քարոզչություն ծավալել Անդրֆեդերացիայի շտապ իրականացման օգտին:[405]

Ինչ վերաբերվում է Հայաստանի դիրքորոշմանը, ապա պետք է նշել, որ ի տարբերություն Վրաստանի և Ադրբեջանի, Անդրֆեդերա-

---

[404] Տե՛ս ՀԱԱ, հավաքածու 1, գ. 3, pp. 135-146:

[405] Տե՛ս Компартия Азербайджана в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК, հ. 1, 1920-1937, Բաքու, 1986, էջ 66-67:

ցիայի շտապ կազմավորման հարցում Հայկոմկուսի ղեկավարությունն անվերապահորեն պաշտպանում էր Կովկասյան բյուրոյի քաղաքականությունը, քանզի համոզված էր, որ ֆեդերացիայի գաղափարը բխում է Հայաստանի և հայ ժողովրդի շահերից: Հայկոմկուսի Կենտկոմը 1921 թ. նոյեմբերի 14-ին միաձայն որոշումով անվերապահ հավանության արժանացրեց Անդրֆեդերացիայի մասին Կովկասյան բյուրոյի նոյեմբերի 3-ի որոշումը:[406]

Լինելով անդրկովկասյան հանրապետություններից տնտեսապես նվազ զարգացածը, գտնվելով սոցիալ-տնտեսական աղետալի վիճակում, չունենալով ընդհանուր սահման Ռուսաստանի հետ, Հայաստանն, ի տարբերություն Ադրբեջանի և Վրաստանի, որոնց բնական և նյութական պաշարները, աշխարհագրական նպաստավոր դիրքը զգալի առավելություններ էին, ընդգրկվելով ֆեդերացիայի մեջ կորցնելու ոչինչ չուներ: Ընդհակառակը՝ Հայաստանի իշխանությունները Անդրդաշնության մեջ էին տեսնում երկիրը և ժողովրդին սոցիալ-տնտեսական ծանր վիճակից դուրս հանելու միակ ճանապարհը:

1922 թ. հունվար-փետրվար ամիսներին տեղի ունեցած Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կոմկուսների ու խորհուրդների համագումարները՝ հակահարված տալով Անդրֆեդերացիայի հակառակորդներին, հատկապես Վրաստանում և, մասամբ, Ադրբեջանում, հաստատեցին դաշնություն կազմելու անհրաժեշտությունն ու խնդրի հրատապությունը:

ՀԿ(բ)Կ առաջին համագումարին (26-29 հունվարի 1922 թ.) հաշվետու զեկուցման մեջ շեշտելով Անդրֆեդերացիայի ստեղծման հրատապությունը Ալ. Մյասնիկյանը հայտարարեց. «Ես համոզված եմ, որ ֆեդերացիան կկայանա և այն մեզ վերջնականապես դուրս կբերի տնտեսական քայքայումից»:[407] Համագումարի կողմից ընդունված բանաձևում արձանագրվեց, որ «ֆեդերացիան ամբողջությամբ համապատասխանում է մեր երկրի շահերին»:[408]

Հայկոմկուսի քաղաքական այս դիրքորոշումը պաշտպանեց Հայաստանի խորհուրդների առաջին համագումարը (30 հունվարի – 4 փետրվարի, 1922 թ.): «Անդրֆեդերացիայի մասին» Ա. Մռավյանի զեկուցման հիման վրա ընդունած բանաձևում նշվեց, որ Անդրֆեդերա-

---

[406] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 15, թ. 39:
[407] Նույն տեղում, ց. 2, գ. 2, թթ. 22-23:
[408] Նույն տեղում, ֆ. 1, ց. 2, գ. 1, թ. 41:

ցիայի գաղափարը հասունացած է, և հարկավոր է շուտափույտ գործնական միջոցներ կիրառել՝ այն իրականացնելու համար:[409]

Անդրֆեդերացիայի օգտին արտահայտվեցին նաև Վրաստանի և Ադրբեջանի կոմկուսների, համապատասխանաբար՝ առաջին (հունվարի 23 - փետրվարի 1, 1922 թ.) և չորրորդ (փետրվարի 2 - 7, 1922 թ.) համագումարները:

Հանրապետական կոմկուսների համագումարներին հաջորդեց Անդրկովկասի կուսկազմակերպությունների առաջին համագումարը, որը կայացավ 1922 թ. փետրվարի 18-22-ին: Համագումարը հաստատեց Շալվա Էլիավայի՝ Անդրֆեդերացիայի մասին զեկուցման հիմնադրույթները, որոշեց հաստատել նաև Անդրֆեդերացիայի Միութենական պայմանագրի տեքստը և Բարձրագույն տնտեսական խորհրդի մասին Կանոնադրությունը:[410]

Համագումարին քննարկված կազմակերպչական խնդիրների շարքում պետք է առանձնացնել համագումարի որոշումը ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի լուծարման և, փոխարենը՝ Անդրկովկասի երկրամասային կոմիտե ստեղծելու մասին: Վերջինիս կազմը նույն օրերին հաստատվեց Մոսկվայում, կոմիտեի նախագահության կազմում ընդգրկվեց նաև ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը:[411]

ՌԿ(բ)Կ Կենտկոմի Անդրկովկասի երկրամասային կոմիտեի 1922 թ. փետրվարի 23-ի պլենումի առաջին իսկ նիստում որոշվեց անհապաղ կյանքի կոչել Անդրֆեդերացիան, և այդ նպատակով հրավիրել Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների Կենտգործկոմների ներկայացուցիչների լիազոր կոնֆերանս:[412]

Լիազոր կոնֆերանսն իր աշխատանքները սկսեց 1922 թ. մարտի 11-ին Թիֆլիսում: Հաջորդ օրը, մարտի 12-ին, կոնֆերանսում ընդունվեց Անդրկովկասի հանրապետությունների կողմից դաշնային միություն կազմելու մասին Միութենական պայմանագիրը և Բարձրագույն տնտեսական խորհրդի մասին Կանոնադրությունը: Այսպիսով իրականություն դարձավ Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Ֆեդերատիվ Միությունը (ԱՍԽՀՖՄ):

---

[409] Տե՛ս ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների խորհուրդների Ա համագումար, Եր., 1922:

[410] Տե՛ս Первый Закавказский съезд коммунистических организаций, Тифлис, 1922:

[411] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 10, թ. 9-ա:

[412] Տե՛ս նույն տեղում, գ. 9, թ. 2:

Խորհրդային Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը կազմում էին ռազմաքաղաքական և տնտեսական սերտ դաշինք:

Կոնֆերանսին թեև հաստատվեց հանրապետությունների լիակատար անկախությունը և ինքնուրույնությունը, սակայն իրականում՝ դաշնային պայմանագիրը նախատեսում էր Անդրկովկասի հանրապետությունների ինքնիշխանության զգալի սահմանափակումներ: Մասնավորապես՝ հանրապետություններում լուծարվելու էին պետականությունը արտահայտող մի շարք առանցքային ժողկոմատները. ռազմական և արտաքին գործերի, արտաքին առևտրի, ֆինանսների և այլն: Այդ պորտֆելների կառավարումը փոխանցվում է Անդրֆեդերացիայի գործադիր մարմնին՝ Միութենական խորհրդին, որի նախագահությունը կազմելու էին երեք հանրապետությունների ղեկավարները՝ Ալ. Մյասնիկյանը, Պ. Մդիվանին և Ն. Նարիմանովը:

Միութենական պայմանագրում հատուկ հոդվածով (13-րդ) սահմանվում է, որ «Հանրապետությունների Միությունը ՌՍՖԽՀ-ի հետ փոխհարաբերությունները կառուցում է միութենական պայմանագրի հիման վրա»:[413] Այսպիսով դժվար չէ կռահել, որ այսուհետ Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի միջպետական փոխհարաբերությունները հիմնականում միաձուլվելու էին Անդրֆեդերացիայի և Ռուսաստանի ընդհանուր փոխհարաբերությունների հետ:

2. Խորհրդային Ռուսաստանի քաղաքական ազդեցության ուժեղացումը Հայաստանի վրա

Խորհրդային Ռուսաստանը 1921 թ. ընթացքում աստիճանաբար ուժեղացնում էր քաղաքական ազդեցությունը խորհրդային հանրապետությունների, այդ թվում և Հայաստանի, թե ներքին, և թե արտաքին քաղաքականության մեջ: Եթե ներքին քաղաքականության հարցերում ազգային հանրապետությունները, այնուամենայնիվ, զգալի ինքնուրույնություն ունեին, ապա արտաքին քաղաքականության հարցերում՝ այն հետևողականորեն վերացվում էր:

Խորհրդային ազգային հանրապետությունների արտաքին գործերի գերատեսչությունների գործունեությունը խստորեն հսկվում էր Խորհրդային Ռուսաստանի արտաքին, ինչպես նաև ազգությունների գործերի ժողկոմատների կողմից: Նշենք, որ ՌՍՖԽՀ ժողկոմխոր-

[413] Советское содружество народов, с. 264-267.

ին 1920 թ. դեկտեմբերի 21-ի դեկրետով ազգային հանրապետությունների կառավարություններին առընթեր ստեղծվեցին ՌՍՖԽՀ ազգությունների ժողկոմատի հատուկ ներկայացուցչություններ, որոնք քաղաքական մեծ ազդեցություն ունեին հանրապետությունների դեկավարության վրա: Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն իր լիազոր ներկայացուցիչների միջոցով խորհրդային հանրապետությունների արտգործժողկոմատներից պահանջում էր Մոսկվա ուղարկել բոլոր որոշումների և հրահանգների պատճենները:

Նշենք, որ ՀՍԽՀ ժողկոմխորհի 1921 թ. նոյեմբերի 16-ի որոշումով լուծարվեցին խորհրդային հանրապետություններում ՀՍԽՀ արտգործժողկոմատի լիազոր ներկայացուցչությունները և հյուպատոսությունները, բացառություն արվեց միայն ՌՍՖԽՀ կառավարությանը կից Մոսկվայում հայկական ներկայացուցչության համար:[414] Վերջինս պահպանելու անհրաժեշտության մասին վճռականորեն պնդեց ներկայացուցչության դեկավար Սահակ Տեր-Գաբրիելյանը: Ալ. Մյասնիկյանին հասցեագրած նամակում Տեր-Գաբրիելյանը հուշում է, որ ներկայացուցչության լուծարումը միջազգային հանրության կողմից կդիտվի որպես «Հայաստանի քաղաքական ինքնուրույնության բուլացման փաստ»:[415]

Չգտնելով հասնել խորհրդային բոլոր հանրապետությունների արտաքին քաղաքականության միօրինակությանը, ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարն 1921 թ. դեկտեմբերի 8-ին քննարկեց ՌՍՖԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինի առաջարկությունները (դրանք ներկայացրեց արտգործժողկոմի տեղակալ Մ. Լիտվինովը)՝ խորհրդային հանրապետությունների կողմից միջազգային պայմանագրեր ստորագրելու կարգի և արտասահմանում Խորհրդային Ռուսաստանի ու խորհրդային հանրապետությունների լիազոր ներկայացուցիչների փոխհարաբերությունների մասին: Քաղբյուրոյի ընդունած համապատասխան որոշումներում արձանագրվեց. *1.* Որպես անխախտելի սկզբունք ընդունել, որ Ռուսաստանի հետ դաշնակից միութենական խորհրդային հանրապետություններն իրավունք չունեն միջազգային որևէ պայմանագիր ստորագրել՝ «առանց ՌՍՖԽՀ արտգործժողկոմատի հետ նախապես համաձայնեցնելու»: *2.* Ընդունել, որ միութենական խորհրդային հանրապետությունների արտասահմանյան բոլոր ներկայացուցիչները ենթարկվում են ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչներին, իսկ հնա-

---

[414] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 98, թ. 23:
[415] Տե՛ս նույն տեղում, գ. 9, թ. 88:

բավոր տարակարծությունների և տարաձայնությունների դեպքում՝ պարտադիր է իրականացնել ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցչի որոշումը, իսկ խնդիրը փոխանցել Մոսկվա՝ շահագրգիռ հանրապետությունների կենտրոնական գերատեսչությունների հետ համաձայնեցնելու նպատակով:[416]

Անդրկովկասում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը քաղբյուրոյի դեկտեմբերի 8-ի որոշումների մասին անմիջապես տեղեկացրեց անդրկովկասյան երեք հանրապետությունների ղեկավարներին, ինչպես նաև ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյին: Դեկտեմբերի 11-ին Թիֆլիսից ուղարկած հեռագրերում Լեգրանը խնդրում էր նաև, որպեսզի Անդրկովկասի հանրապետությունների ղեկավարությունը անհապաղ քաղբյուրոյի որոշումներից բխող համապատասխան հրահանգներ իջեցնի արտասահմանում հանրապետությունների ներկայացուցիչներին և այդ մասին տեղեկացնի իրեն:[417]

Խորհրդային Ռուսաստանի պետական և կուսակցական վերադաս մարմինները աչալրջորեն հետևում էին, որպեսզի խորհրդային հանրապետությունները չփորձեն խախտել արտաքին քաղաքականության իրականացման բնագավառում ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի 1921 թ. դեկտեմբերի 8-ի որոշումները և հրահանգները, իսկ խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ դիմում էին վճռական «պատժիչ» միջոցների: Նման քաղաքականությունը բնորոշող փաստերը քիչ չեն, դրանցից մի քանիսի վրա, որոնք առնչվում են Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի փոխհարաբերություններին, կցանկանայինք հրավիրել ընթերցողի ուշադրությունը:

Ռուսաստանում 1921-1922 թթ. տարածված սովի դեմ պայքարելու գործում խորհրդային կառավարությունը ստիպված էր մի կողմ դնել գաղափարական որոշ սկզբունքները և ընդունել բարեգործական միջազգային մի շարք կազմակերպությունների կողմից տրամադրված օգնությունը: Նորվեգիացի հայտնի բևեռախույզ և գիտնական, հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի անվան հետ էր կապված այդ տարիներին Միջազգային Կարմիր խաչի գործունեությունը Ռուսաստանում:[418]

---

[416] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 98, թթ. 23, 24:

[417] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 7, թ. 59:

[418] 1921 թ. օգոստոսի կեսերին Ժենևում տեղի ունեցած Կարմիր խաչի միջազգային կոնֆերանսը Ռուսաստանի սովյալներին օգնություն ցույց տալու գլխավոր լիազոր ընտրեց Ֆ. Նանսենին:

1921 թ. օգոստոսի 27-ին և դեկտեմբերի 10-ին Մոսկվայում համաձայնագրեր ստորագրվեցին ՌՍՖԽՀ կառավարության և Ֆ. Նանսենի միջև՝ վերջինիս գլխավորած կազմակերպության կողմից Ռուսաստանում օգնության գործը իրականացնելու, և արտասահմանից Ռուսաստան ծանրոցներ ու անձնական փաթեթներ առաքելու մասին:[419]

Նանսենյան կազմակերպության առաջարկությամբ և Մոսկվայում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանի համաձայնությամբ 1922 թ. մարտի 1-ին Մոսկվայում նրանց միջև ստորագրվում է համաձայնագիր, ըստ որի՝ բնակչությանը օգնություն հատկացնելու գործը նաև Հայաստանում կազմակերպելու և իրականացնելու համար Նանսենի և Ռուսաստանի միջև ստորագրված համաձայնագրերի դրույթները տարածվելու էին նաև Խորհրդային Հայաստանի վրա: Համաձայնագրով հատուկ սահմանվում է, որ Հայաստանում գործունեության ընթացքում Նանսենյան կազմակերպությունը պետք է անշեղորեն ղեկավարվի այն բոլոր նորմերով, որոնք դրված են Ռուսաստանի հետ ստորագրված համաձայնագրերի հիմքում:[420] Այսպիսով կողմերը, կարծես թե, լիովին ապահովագրում էին իրենց Մոսկվայի հնարավոր դժգոհություններից, և համաձայնագրի ստորագրումը չպետք է որ խնդիրներ առաջացներ: Սակայն ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչի կողմից համաձայնագրի ստորագրման փաստն իսկ արժանացավ Ռուսաստանի կենտրոնական իշխանությունների բացասական վերաբերմունքին և խիստ դժգոհությանը:

1922 թ. մարտի սկզբին ՌԿ(բ)Կ Կենտկոմը ստանում է ՌՍՖԽՀ արտգործժողկոմատի ահազանգն այն մասին, որ Տեր-Գաբրիելյանն առանց թույլտվության, խախտելով Կենտկոմի քաղբյուրոյի 1921 թ. դեկտեմբերի 8-ի որոշումները, ինքնակամ միջազգային պայմանագիր է կնքել Նանսենյան կազմակերպության հետ:[421] Կենտկոմի քարտուղարությունն անմիջապես արձագանքում է, և Կենտկոմի քարտուղար Վ. Մոլոտովի կարգադրությամբ համապատասխան բացատրություններ պահանջում Ս. Տեր-Գաբրիելյանից:[422]

Ռուսաստանի արտգործժողկոմի տեղակալ Մ. Լիտվինովը մարտի 15-ին հեռագրում է Թիֆլիս՝ անդրկովկասյան հանրապետութ-

---

[419] ДВП СССР, т. IV, М.,1960, с. 294-298. Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 10, թ. 86:
[420] ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 10, թ. 86:
[421] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 46, թթ. 26-27:
[422] Տե՛ս նույն տեղում, թ. 25:

յուններում ՌՍՖԽՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Բ. Լեզրանին. «Տեր-Գաբրիելյանն առանց մեր գիտության համաձայնագիր է կնքել Նանսենի կազմակերպության հետ: Դա հնարավորություն կտա Հայաստանը ողողել անցանկալի օտարերկրյա գործակալներով... Պնդեք, որպեսզի հայկական կառավարությունը չհաստատի Տեր-Գաբրիելյանի (ստորագրած – Կ.Խ.) համաձայնագիրը և հրահանգավորի նրան, որպեսզի առանց մեզ հետ համաձայնեցնելու այսուհետև ոչ մի տեսակի համաձայնագրեր չստորագրի»:[423]

ՌԿ(բ)Կ Կենտկոմ և ՌՍՖԽՀ արտգործժողկոմատ հղած դիմումում Ս. Տեր-Գաբրիելյանը հերքում է իրեն ներկայացրած մեղադրանքները և հուշում, որ պարզապես տեղի է ունեցել թյուրիմացություն: Դիմումից պարզ է դառնում, որ համաձայնագիրը ստորագրելու վերաբերյալ Նանսենյան կազմակերպության առաջարկության մասին Տեր-Գաբրիելյանը դեռևս 1922 թ. փետրվարի 25-ին տեղյակ է պահել Ռուսաստանի արտգործժողկոմատի պատասխանատու աշխատակիցներին և խնդրել՝ համաձայնագիրը ստորագրելու վերաբերյալ առարկություններ չլինելու դեպքում, մեքենագրել այն՝ հետագայում ստորագրելու համար: Ժողկոմատի աշխատակիցները Տեր-Գաբրիելյանին հայտնում են, որ հարցի մասին տեղյակ կպահեն Գ. Չիչերինին և մի քանի օրից կտեղեկացնեն ՌՍՖԽՀ արտգործժողկոմատի վերաբերմունքի մասին: Երկու օր անց ժողկոմատի գրասենյակից Տեր-Գաբրիելյանը վերցնում է համաձայնագրի մեքենագրած տեքստը և, «համոզված լինելով», որ համաձայնագիրն արժանացել է արտգործժողկոմատի հավանությանը (այլապես չէր մեքենագրվի)՝ մարտի 1-ին այն ստորագրում է Նանսենյան կազմակերպության հետ: Ավարտելով դիմումը, ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչը պատրաստակամություն է հայտնում՝ «Եթե համաձայնագիրը քաղաքականապես անընդունելի է», հայցել Նանսենյան կազմակերպության ներողամտությունը և խնդրել չեղյալ հայտարարել այն:[424]

Հավանաբար ստանալով ՌՍՖԽՀ իշխանությունների համապատասխան հրահանգները, Տեր-Գաբրիելյանն այդպես էլ վարվում է: Նանսենյան կազմակերպություն ուղղված դիմումում Տեր-Գաբրիելյանը հայտնում է, որ իր կողմից ստորագրված համաձայնագիրը «չի արժանացել կառավարության (ՀՍԽՀ – Կ.Խ.) հաստատմանը», ուստի՝

---

[423] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 30:
[424] Տե՛ս նույն տեղում, թ. 28:

այն պետք է չեղյալ հայտարարվի:[425] Սակայն, ինչպես երևում է Ս. Տեր-Գաբրիելյանի 1922 թ. մարտի 21-ի թիվ 496 հեռագրից՝ ուղղված ՀՍԽՀ արտգործժողկոմ Ա. Մռավյանին, համաձայնագիրը չեղյալ հայտարարելու հրահանգ Հայաստանի կառավարությունը նրան չէր տվել: Տեր-Գաբրիելյանը Մռավյանին հուշում է, որ Նանսենյան կազմակերպություն ուղղված դիմումում նա խնդրել է չեղյալ համարել մարտի 1-ի համաձայնագիրը, և «վկայակոչել է Հայաստանի կառավարությունից իբր թե ստացած մարտի 12-ի թիվ 448 հեռագիր-հրահանգը»: Այնուհետև Տեր-Գաբրիելյանը Մռավյանին խնդրում է՝ Նանսենյան կազմակերպության կողմից հնարավոր հարցապնդման դեպքում, «Հաստատել վերը նշված հրահանգի իրողությունը»:[426]

1922 թ. մարտի 22-ին Ա. Մռավյանին ուղարկելով, իր խոսքերով՝ «չարաբաստիկ համաձայնագրի» վերաբերյալ ամբողջ գրագրությունը, Տեր-Գաբրիելյանը հուշում է. «Փաստաթղթերին ծանոթանալուց հետո միայն դու կտեսնես, որ սեպարատ (առանձին – Կ.Խ.) պայմանագիր կնքելու մտադրություն ես չեմ ունեցել: Բայց չէ՞ որ դու գիտես, թե որքան հիվանդագին է վերաբերվում ընկ. Չիչերինը ամեն տեսակ այլախոհությանը»:[427] Այո, Տեր-Գաբրիելյանն իրավացի էր, Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները, կուսակցական վերադաս կենտրոնական մարմինները չէին հանդուրժում խորհրդային ազգային հանրապետությունների կողմից արտաքին քաղաքական ասպարեզում դրսևորված որևէ ինքնուրույնությունը, վճռականորեն ճնշում էին դրանք:

Նման քաղաքականության ևս մեկ ցայտուն օրինակ է հետևյալ փաստը: Հայտնի է, որ Մերձավոր Արևելքում ամերիկյան նպաստամատույց կոմիտեն, որը ձևավորվել էր դեռևս 1918 թ. և գործունեություն ծավալել նաև Հայաստանի Հանրապետությունում, 1921-1922 թթ. շարունակում էր օգնություն հատկացնել նաև Խորհրդային Հայաստանի սովյալ բնակչությանը:

Խորհրդային Հայաստանում Ամերկոմի գործունեությունը կարգավորելու նպատակով, ամերիկյան կողմի նախաձեռնությամբ, 1922 թ. օգոստոսի 7-ին Երևանում ՀՍԽՀ կառավարության և Մերձավոր

---

[425] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 29:
[426] Տե՛ս նույն տեղում, թ. 32:
[427] Տե՛ս նույն տեղում, թ. 23:

Արևելքում ամերիկյան նպաստամատույց կոմիտեի ներկայացուցչի միջև ստորագրվում է համապատասխան համաձայնագիր:[428]

24 կետից բաղկացած ծավալուն այդ փաստաթղթում նշված էին կողմերի փոխհամագործակցությունը կարգավորող բոլոր դրույթները (համաձայնագրի ռուսերեն բնագիրը ուղարկվել է ՌՍՖԽՀ արտգործժողկոմատ):[429]

Այսպիսով, ինչպես և նախորդ դեպքում, Հայաստանի իշխանությունները, կարծես թե ապահովել էին իրենց կենտրոնական իշխանությունների հնարավոր դժգոհություններից, սակայն պարզվում է, որ ոչ: Համաձայնագիրը և այն ստորագրելու փաստը մեծ դժգոհություններ է առաջացնում խորհրդային վերադաս կուսակցական մարմիններում: Հարցը լուրջ քննարկման առարկա է դառնում ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի նախագահության 1922 թ. օգոստոսի 24-ի նիստին, որոշվում է համաձայնագիրն համարել անվավեր, իսկ ՀԿ(բ)Կ Կենտկոմին մատնանշել, որ առանց Անդրերկրկոմի սանկցիայի արտաստահմանցիների հետ պայմանագրերի ստորագրումն անթույլատրելի է: Որոշման հաջորդ կետով անհրաժեշտ է համարվում Միութենական հանրապետությունների և Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի միջև նույնանման պայմանագրերի ստորագրումը՝ Անդրֆեդերացիայի Միությունների խորհրդի միջոցով, և նրա կողմից մշակված պայմանագրի հիման վրա:[430] Նշենք, որ Անդրերկրկոմի այդ ժամանակվա քարտուղարն էր Ալ. Մյասնիկյանը:

1922 թ. օգոստոսի 30-ին Անդրֆեդերացիայի Միությունների խորհուրդը, հիմք ընդունելով Անդրերկրկոմի օգոստոսի 24-ի որոշումը, չեղյալ է համարում Հայաստանի իշխանությունների կողմից ստորագրված համաձայնագիրը:[431] Փոխարենը, 1922 թ. նոյեմբերի 1-ին համաձայնագիր է ստորագրվում Ամերկոմի և ՌՍՖԽՀ կառավարության միջև:[432] Հետաքրքիր է, որ այն հիմնականում կրկնում էր Հայաստանի և Ամերկոմի միջև ստորագրված, իսկ հետո «չեղյալ համարված» համաձայնագիրը: «Օրինական» համաձայնագիրը կիրառելի էր համարվում նաև անդրկովկասյան հանրապետությունների, այդ թվում, Հայաստանի համար:

---

[428] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 10, թ. 113:
[429] Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև ֆ. 113, ց. 30, գ. 14, թթ. 8-14:
[430] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 2, գ. 10, թ. 42:
[431] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 38, գ. 27, թ. 16:
[432] Տե՛ս նույն տեղում, թթ. 187-193:

Այսպիսով, ՌՍՖԽՀ պետական և կուսակցական մարմիններն առիթը բաց չէին թողնում՝ միջամտելու խորհրդային հանրապետությունների ինքնիշխանությանը, հասկացնում էին, որ այն սահմանափակ է: Անգլիացի պատմաբան Վ. Սվոբոդան իր «Ազատ հանրապետությունների կամավո՞ր միություն (ԽՍՀՄ կազմավորման պատմությունից)» ուշագրավ հոդվածում Ռուսաստանի կողմից խորհրդային հանրապետությունների ներքին գործերին միջամտելու բազմաթիվ ցայտուն օրինակներ է բերում:[433]

Իրավացի է ռուս հետազոտող Լ. Նեժինսկին, երբ նշում է, որ խորհրդային մի շարք հանրապետությունների ձգտումը՝ դառնալ միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտ, «ստիպում էր կենտրոնական բոլշևիկյան ղեկավարությանը 1921-1922 թթ. արագացնել բոլոր առումներով խիստ կենտրոնացված ունիտար պետության ստեղծումը»:[434]

Միաժամանակ պետք է նշել նաև, որ զրկելով խորհրդային հանրապետություններին, այդ թվում և Հայաստանին, ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու իրավունքից, Խորհրդային Ռուսաստանը, այնուհանդերձ, ստանձնել էր միջազգային ասպարեզում նրանց շահերը ներկայացնելու և պաշտպանելու պարտավորությունը: Այսպես, 1922 թ. հունվարի սկզբին ստանալով Ջենովայի միջազգային տնտեսական կոնֆերանսին մասնակցելու հրավեր, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն անհրաժեշտ համարեց ստեղծել խորհրդային բոլոր հանրապետությունների (վերջիններս կոնֆերանսին մասնակցելու հրավեր չէին ստացել) միասնական դիվանագիտական ճակատ, և դրանով իսկ ամրապնդել Ռուսաստանի դիրքերը կոնֆերանսում: ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի և Համառուսաստանյան Կենտգործկոմի 1922 թ. հունվար ամսի որոշումներով հաստատվեցին խորհրդային միացյալ պատվիրակության կազմը և նրան տրվող լիազորությունները, պատվիրակության 15 անդամների թվում էր նաև ՀՍԽՀ ներկայացուցիչ Ալ. Բեկզադյանը:[435]

Խորհրդային հանրապետությունների դիվանագիտական դաշինքը ամրապնդվեց 1922 թ. փետրվարի 22-ին Մոսկվայում հրավիր-

---

[433] Տե՛ս Свобода В., Союз добровольный республик свободных? (Из истории создания СССР). Этнографическое обозрение, Москва, 1992, № 4.
[434] Нежинский Л.Н., У истоков большевистско-унитарной внешней политики (1921-1923). Отечественная история, 1994, № 1, с. 89.
[435] ДВП СССР, т. V, Москва, 1961, с. 66-68.

ված ՌՍՖԽՀ-ի և խորհրդային ութ հանրապետությունների լիազոր ներկայացուցիչների խորհրդակցությանը: Խորհրդակցությունը որոշեց առաջիկա կոնֆերանսում խորհրդային հանրապետությունները ներկայացնելու և նրանց շահերը պաշտպանելու իրավունքը հանձնարարել Խորհրդային Ռուսաստանին: Վերջինիս իրավունք վերապահվեց բոլոր հանրապետությունների անունից պայմանագրեր և համաձայնագրեր ստորագրել արտասահմանյան պետությունների հետ ինչպես կոնֆերանսին, այնպես էլ նրանից դուրս:[436]

Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը նման քաղաքականությունը շարունակեց նաև հետագայում, և խորհրդային հանրապետություններին հնարավորինս մասնակից էր դարձնում խորհրդային արտաքին քաղաքականությանը: Այսպես, ՌՍՖԽՀ դիվանագիտության առաջարկով 1922 թ. նոյեմբերի 5-ին Բեռլինում Գերմանիայի կառավարության և խորհրդային հանրապետությունների ներկայացուցիչների միջև ստորագրվում է համաձայնագիր, որով Խորհրդային Ռուսաստանի և Գերմանիայի միջև 1922 թ. ապրիլի 16-ին Ռապալոյում ստորագրված պայմանագրի դրույթները տարածվում էին խորհրդային հանրապետությունների, այդ թվում և Հայաստանի, վրա:

Հիմք ընդունելով նոյեմբերի 5-ի համաձայնագիրը, Գերմանիայի ռեյխսկանցլերը Բեռլինում ՌՍՖԽՀ դեսպան Ն. Կրեստինսկուն նույն օրը պաշտոնապես տեղեկացնում է, որ գերմանական կառավարությունը դե-յուրե ճանաչում է խորհրդային բոլոր հանրապետությունների կառավարությունները և համաձայն է նրանց հետ հաստատել դիվանագիտական և հյուպատոսական հարաբերություններ:[437]

Նշենք, որ ՀՍԽՀ Կենտգործկոմը Բեռլինի նոյեմբերի 5-ի համաձայնագիրը վավերացրեց 1923 թ. փետրվարի 1-ին:[438]

Հայաստանի համար մեծ նշանակություն ուներ նաև այն, որ Խորհրդային Ռուսաստանի արտասահմանում գործող դիվանագիտական ներկայացուցչությունները իրենց վրա էին վերցրել տարբեր երկրներում սփռված հայության շահերի պաշտպանությունը: Ռուսաստանի դիվանագիտական մեծ աջակցության շնորհիվ ՀՍԽՀ ներկայացուցչություններ հիմնվեցին Պարսկաստանի հայաշատ քաղաքներում՝ Թեհրանում և Թավրիզում, Ռուսաստանի հյուպատոսությունները մեծ

---

[436] Տե՛ս ДВП СССР, т. V, էջ 110-111:
[437] Տե՛ս նույն տեղում, с. 658-662. Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 94, թթ. 10-15:
[438] Տե՛ս նույն տեղում, թ. 16:

աշխատանք էին տանում սփյուռքահայության հայրենադարձությունը Խորհրդային Հայաստան կազմակերպելու գործում:[439]

Նշենք, որ սփյուռքահայերի հայրենադարձությունը սկսվեց Հայաստանում խորհրդային իշխանության առաջին իսկ տարիներին և փուլերով շարունակվեց խորհրդային ամբողջ ժամանակաշրջանում, մինչև 1980-ական թթ. Հարենիք վերադարձան ավելի քան 170 հազար մարդ:[440]

Խորհրդային հանրապետությունների միջև ձևավորված դիվանագիտական դաշինքը կարևոր քայլ էր՝ Խորհրդային Ռուսաստանի և խորհրդային հանրապետությունների ռազմաքաղաքական հետագա միավորման տեսանկյունից, այդ գործընթացը 1922 թ. մտավ եզրափակիչ փուլ:

2. Հանրապետությունների համագործակցությունը ԽՍՀՄ կազմավորման գործում 1922 թվականին

Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների, այդ թվում Հայաստանի, և Խորհրդային Ռուսաստանի միջև ռազմաքաղաքական ինտեգրման գործընթացում կարևոր քայլեր կատարվեցին 1921 թ. դեկտեմբերի վերջին և 1922 թ. սկզբին: Համառուսաստանյան Կենտգործկոմի նախագահ Մ. Կալինինի հրավերով Համառուսաստանյան խորհուրդների 9-րդ համագումարին հյուրի կարգավիճակով մասնակցող Անդրկովկասի հանրապետությունների ներկայացուցիչների անունից հայտարարության մեջ (26 դեկտեմբերի, 1921 թ.) Ալ. Մյասնիկյանը համագումարին առաջարկեց Համառուսաստանյան Կենտգործկոմի կազմում ընդգրկել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչներին: Առաջարկությունն ընդունվեց՝ Ադրբեջանին և Վրաստանին հատկացվեց 20-ական, Հայաստանին՝ 15 տեղ:[441]

---

[439] Մանրամասն տե՛ս Զոհրաբյան Է.Ա., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920-1922 թթ.), Եր., 1979: Նույնի՝ Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները (1920-1922 թթ.), Եր., 1985:

[440] Մանրամասն տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Եր., 1985:

[441] Девятый Всероссийский съезд Советов... Стенографический отчет, Москва, 1922, с. 186.

Խորհրդային Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի ներկայացուցիչների մասնակցությամբ դեկտեմբերի 30-ից – հունվարի 2-ը Մոսկվայում հրավիրված ՌՍՖԽՀ արտգործժողկոմատի կոլեգիայի ընդլայնված խորհրդակցությանը քննարկվեցին խորհրդային հանրապետությունների ինչպես ներքաղաքական, այնպես էլ արտաքին քաղաքականության խնդիրներին առնչվող մի խումբ հիմնահարցեր: Օրակարգում էին՝ միասնական քաղաքացիության, փոխադարձաբար հյուպատոսություններ հիմնելու, միութենական հանրապետությունների կողմից միջազգային պայմանագրեր ստորագրելու, խորհրդային հանրապետություններում արտասահմանյան ներկայացուցչությունների կանոնակարգի, արտասահմանյան անձնագրերի, ՌՍՖԽՀ-ում խորհրդային հանրապետությունների լիազոր ներկայացուցչությունների և խորհրդային հանրապետություններում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցչությունների կանոնակարգի, արտասահմանում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցչությունների և խորհրդային այլ ներկայացուցչությունների փոխհարաբերությունների, արտաքին առևտրի մասին և այլ հարցեր:[442] Նշված բոլոր խնդիրների վերաբերյալ մշակվեցին և ընդունվեցին համապատասխան որոշումներ, հիմնարար թեզիսների ձևով:

Աշխատանքների արդյունքում մշակվում և հաստատվում է «Խորհրդային Արդրեջանի, Հայաստանի, Բելոռուսիայի, Վրաստանի, ՌՍՖԽՀ-ի և Ուկրաինայի միջև միասնական քաղաքացիության մասին» պայմանագրի նախագիծ: Վերջինիս պրեամբուլայի և դրույթների համաձայն՝ խորհրդային հանրապետությունների քաղաքական ու սոցիալական նպատակների նույնությունը, նրանց պետական նմանատիպ կառուցվածքը հնարավորություն են ընձեռում ընդհանրապես վերացնելու «օտարերկրացի» հասկացությունը խորհրդային քաղաքացիների համար: Սահմանվում է, որ վերջիններս յուրաքանչյուր խորհրդային հանրապետությունում պետք է ունենան քաղաքական և քաղաքացիական հավասար իրավունքներ, կրեն նույն պարտավորությունները, ենթարկվեն վարչական, աշխատանքային, զինվորական, հարկային և այլ նույն օրենքներին ու հրամանագրերին:[443]

Խորհրդակցության կողմից ընդունված հիմնարար մյուս թեզիսների համաձայն՝ անհրաժեշտ է համարվում խորհրդային բոլոր հանրապետություններում մտցնել անձնագրերի միասնական ձև: Անձ-

---

[442] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 98, թթ. 13-14:
[443] Տե՛ս նույն տեղում, թ. 15:

նագրերը լրացվելու էին մայրենի և ռուսերեն լեզուներով, վավերական էին լինելու խորհրդային բոլոր հանրապետություններում: Խորհրդային յուրաքանչյուր հանրապետության քաղաքացուն իրավունք էր վերապահվում բնակություն հաստատել խորհրդային ցանկացած հանրապետությունում և ազատ տեղաշարժվել մեկ հանրապետությունից մյուսը: Միասնական էր համարվում զինապարտ խորհրդային քաղաքացիների հաշվառման, զորակոչման և զորացրման կարգը, այն սահմանվելու էր ՌՍՖԽՀ ռազմխորհրդի հրամաններով: Խորհրդային հանրապետությունները գործողության մեջ պետք է դնեին արտասահմանցիների մուտքը երկիր կարգավորող՝ ՌՍՖԽՀ ժողկոմխորհի դեկրետին համապատասխան դեկրետ:[444]

ՌՍՖԽՀ-ում խորհրդային հանրապետությունների լիազոր ներկայացուցիչների և խորհրդային հանրապետություններում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչների կանոնակարգի մասին խորհրդակցությանն ընդունած որոշման համաձայն՝ վերջիններս օգտվելու էին ՌՍՖԽՀ-ում արտասահմանյան ներկայացուցիչներին տրված իրավունքներից և արտոնություններից: Դրանք սահմանվել էին ՌՍՖԽՀ ժողկոմխորհի 1921 թ. հունիսի 30-ի դեկրետով: Հաստատվում է նաև, որ խորհրդային հանրապետությունների լիազոր ներկայացուցիչներին իրավունք է վերապահվում համագործակցել իրենց տեղակայման հանրապետության բոլոր գերատեսչությունների հետ:

Ինչ վերաբերում է խորհրդային հանրապետությունների կողմից փոխադարձաբար հյուպատոսություններ հիմնելու խնդրին, ապա խորհրդակցությունն ավելորդ համարեց ինչպես հյուպատոսությունների հիմնումը, այնպես էլ հյուպատոսական կոնվենցիայի կնքումը: Նշվեց, որ խորհրդային քաղաքացիների միասնական քաղաքացիության դեպքում՝ հյուպատոսությունների անհրաժեշտությունը կվերանա:[445]

Հիմնարար թեզիսներ ընդունվեցին նաև խորհրդային հանրապետություններում արտասահմանյան ներկայացուցչությունների կանոնակարգի մասին: Համաձայն դրա՝ խորհրդային հանրապետությունների տարածքում արտասահմանյան ներկայացուցչությունների հիմնումը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե տվյալ խորհրդային հանրապետության և արտասահմանյան պետության միջև առկա է միջազգային համաձայնագիր: Հանրապետություններում արտասահ-

---

[444] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 98, թ. 19:
[445] Տե՛ս նույն տեղում, թ. 16:

մանյան ներկայացուցչությունների կանոնակարգը պետք է համապատասխաներ ՌՍՖԽՀ-ում արտասահմանյան ներկայացուցչություններին համար գործող կանոնակարգին, իսկ ներկայացուցիչները պետք է ունենային այն իրավունքներն ու արտոնությունները, որոնք սահմանվել են ՌՍՖԽՀ Ժողկոմխորհի 1921 թ. հունիսի 30-ի դեկրետով: Նույն սկզբունքներն ու կանոնակարգն էր սահմանվում նաև խորհրդային հանրապետություններում արտասահմանյան հյուպատոսությունների գործունեության համար:[446]

Նշենք սակայն, որ բոլոր այս որոշումները փաստորեն ձևական էին, քանզի նույն խորհրդակցությանը ընդունված որոշման համաձայն՝ անդրկովկասյան հանրապետություններում արտասահմանյան հյուպատոսությունների գործունեությունը համարվեց «բացարձակապես ավելորդ և անգամ վնասակար», առաջարկվեց լուծարել դրանք (բացառություն էր արվում միայն Վրաստանում Գերմանիայի դիվանագիտական ներկայացուցչության և Իտալիայի հյուպատոսության համար):[447]

Միութենական խորհրդային հանրապետությունների կողմից միջազգային պայմանագրեր ստորագրելու կարգի մասին հարցը քննարկելուց հետո, խորհրդակցությունը որոշեց, որ խորհրդային հանրապետությունների կողմից իրականացվող արտաքին քաղաքականության միօրինակությունը ապահովելու համար պետք է սահմանել, որ խորհրդային հանրապետությունները պարտավոր են ՌՍՖԽՀ արտգործժողկոմատի հետ նախօրոք համաձայնեցնել իրենց կողմից ստորագրվող բոլոր միջազգային պայմանագրերը, ինչպես նաև այն դեկրետները, հրահանգները, փաստաթղթերը, որոնք առնչվում են խորհրդային հանրապետություններում արտասահմանյան ներկայացուցիչների և քաղաքացիների գտնվելու հետ, իսկ այդ ամենի մասին տեղեկացնել միմյանց:[448] Այս որոշումը, փաստորեն, կրկնում և ամրապնդում էր ՌԿ(բ)Կ Կենտկոմի բաղբյուրոյի 1921 թ. դեկտեմբերի 8-ի վերը նշված որոշումը:

Խորհրդակցությունում ընդունված որոշումները և հիմնարար թեզիսները արժանացան ՌԿ(բ)Կ Կենտկոմի հավանությանը, և 1922 թ. ամբողջ ընթացքում աստիճանաբար կյանքի էին կոչվում: Օրինակ՝ արդեն 1922 թ. փետրվարից խորհրդային քաղաքացիների տեղաշար-

---

[446] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 98, թ. 18:
[447] Տե՛ս նույն տեղում, թ. 14:
[448] Տե՛ս նույն տեղում, թ. 17:

ժը խորհրդային մեկ հանրապետությունից մյուսը ազատ էր և առանց սահմանափակումների:

Ինչ վերաբերում է միասնական քաղաքացիության մասին պայմանագրի նախագծին, ապա այն այդպես էլ չստորագրվեց, սակայն հարցը դեռ երկար ժամանակ մնում էր օրակարգում: Այսպես, երբ Ռուսաստանի արտգործժողկոմատին հայտնի է դարձնում, որ վրացական իշխանությունները Վրաստանի տարածքում պետական լեզու են ճանաչել միայն վրացերենը, արտգործժողկոմի տեղակալ Լ. Կարախանը շտապում է այդ մասին տեղյակ պահել ՌՍՖԽՀ ազգությունների գործերի ժողկոմ Ի. Ստալինին: 1922 թ. օգոստոսի 9-ին Ռ(բ)Կ Կենտկոմ ուղղված զեկուցագրում Կարախանը նշում է նաև, որ «Միասնական քաղաքացիության մասին պայմանագրի նախագիծը (որն արժանացել է Ռ(բ)Կ Կենտկոմի հավանությանը) նախատեսում է (խորհրդային հանրապետություններում – Կ.Խ.) երկու պետական լեզուների՝ մայրենիի և ռուսերենի, ճանաչում: Նկատի ունենալով, որ ենթադրվում է մոտակա ապագայում այդ պայմանագիրը կյանքի կոչել, անհրաժեշտ եմ գտնում խնդրել Ձեզ հրահանգավորել Անդրերկրկոմին, որպեսզի անդրկովկասյան հանրապետություններում պետական լեզու ճանաչվի նաև ռուսերենը՝ մոտ ապագայում նշված պայմանագիրը կյանքի կոչելու դեպքում, նոր դժվարությունների չհանդիպելու համար: Իսկ դրանք առավել քան հնարավոր են, քանզի տեղացի որոշ աշխատակիցներ ազգայնական միտումներ են դրսևորում»:[449]

Շարունակելով Ռուսաստանի և Անդրդաշնության հանրապետությունների միավորման քաղաքականությունը, ՌՍՖԽՀ կառավարությունը քայլեր ձեռնարկեց նաև հանրապետությունների միջև ֆինանսատնտեսական, սոցիալական և այլ ոլորտներում փոխհարաբերությունները կարգավորելու ուղղությամբ: Այսպես, 1922 թ. ապրիլի 11-ին ՌՍՖԽՀ և Անդրդաշնության ֆինժողկոմատները համաձայնագիր ստորագրեցին ֆինանսական փոխհարաբերությունների կարգավորման մասին, հանրապետությունների ներկայացուցիչներն այն հաստատեցին 1922 թ. հուլիսի 8-ին: Նույն թվականի մայիսի 24-ին խորհրդային հանրապետությունների միջև համաձայնագրեր կնքվեցին փոստի, հեռագրի, հեռախոսի և ռադիոհեռագրի կառավարման միավորման մասին:

Այսպիսով, Խորհրդային Ռուսաստանի կուսակցական և պետական իշխանությունները 1921-1922 թթ. աստիճանաբար կյանքի

---

[449] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 3, թ. 157:

էին կոչում ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարում որդեգրած՝ «խորհրդային հանրապետությունների պետական միավորմանը» տանող քաղաքականությունը: Սակայն, խնդիրը դնելով հիմնականում ճիշտ, բոլշևիկյան կուսակցությունը իրականում որդեգրեց ազգերի ձուլման, խորհրդային ազգային հանրապետությունների ներքին և արտաքին ինքնուրույնության իրավազրկման, դասակարգային և կուսակցական շահերը ազգային շահերից վեր դասելու քաղաքականություն, ինչը շղարշվում էր համաշխարհային սոցիալիստական հեղափոխության շահերով:

1922 թ. մարտի 12-ին Անդրդաշնության կազմավորումից հետո, որը պետահիրավական տեսանկյունից հանդիսացավ խորհրդային առաջին միութենական դաշնային պետությունը, 1922 թ. երկրորդ կեսից Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցությունը, հատկապես նրա կենտրոնամետ թևը, Ստալինի գլխավորությամբ, որոշեց վերջ տալ խորհրդային որոշ հանրապետություններում նկատվող անջատողական տրամադրություններին և այն խառնաշփոթ իրավիճակին, որ ստեղծվել էր այդ հանրապետությունների և Ռուսաստանի փոխհարաբերություններում: Ստալինը այդ կապակցությամբ հուշում է Լենինին. «Ծայրամասերի կոմունիստների երիտասարդ սերունդը *մեր կողմից անկախություն խաղալը* (ընդգծումը մերն է - Կ.Խ.) հրաժարվում է ընդունել որպես խաղ, և մեզանից համառորեն պահանջում է կյանքի կոչել անկախ հանրապետությունների սահմանադրության տառը»:

Խորհրդային Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունը 1922 թ. օգոստոսից գործնական վճռական քայլերի դիմեց Ռուսական նախկին կայսրության տարածքի վրա առաջացած խորհրդային հանրապետությունների հետ ՌՍՖԽՀ-ի միջպետական փոխհարաբերությունները վերջնականապես կարգավորելու ուղղությամբ: ՌԿ(բ)Ս Կենտկոմի քաղբյուրոն օգոստոսի 10-ին որոշում է՝ հանձնարարել Կենտկոմի կազմբյուրոյին ստեղծել հատուկ հանձնաժողով, որպեսզի վերջինս մինչև Կենտկոմի պլենումը նախապատրաստի խորհրդային անկախ հանրապետությունների և ՌՍՖԽՀ փոխհարաբերությունների հարցը:[450]

Նշենք, որ հանրապետությունների նմանատիպ (խորհրդային) պետականությունը, ներքին և արտաքին միևնույն քաղաքականությունը, զինված ուժերը (կարմիր բանակները), պատժիչ մարմինները (Չեկա, Հատուկ բաժին, Հատուկ նշանակության ջոկատներ և այն), նմա-

[450] Образование СССР. Сборник документов, Москва, 1972, с. 293-294.

նատիպ սահմանադրությունները[451] (հիմնական դրույթներում հանրապետությունների սահմանադրությունները փաստորեն կրկնում էին ՌՍՖԽՀ Սահմանադրությունը) և, ամենագլխավորը՝ հանրապետություններում իշխանության ղեկը ստանձնած կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունները, որոնք անշեղորեն ղեկավարվում էին Ռուսաստանի կոմկուսի Կենտկոմի և նրա Երկրային կոմիտեների հրահանգներով և որոշումներով,[452] հուշում էին հանրապետությունների միավորման ուղիները:

Ի կատարումն ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի օգոստոսի 10-ի որոշման՝ օգոստոսի 11-ին կազմբյուրոն ստեղծում է խորհրդային բոլոր հանրապետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հանձնաժողով (ՀՍԽՀ ներկայացուցիչն էր Ալ. Մյասնիկյանը):[453] 1922 թ. օգոստոսի վերջին հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվում հանձնաժողովի անդամ և փաստացի ղեկավար Ի. Ստալինի կողմից մշակված «ՌՍՖԽՀ և անկախ հանրապետությունների փոխհարաբերությունների մասին բանաձևի նախագիծը»: Վերջինիս համաձայն՝ Խորհրդային Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Բելոռուսիան և Ուկրաինան պետք է պաշտոնապես մտնեին ՌՍՖԽՀ կազմ՝ ավտոնոմ (ինքնավար) հանրապետությունների կարգավիճակով:[454]

Այսպիսով, նախագծի համաձայն, որը հետագայում ստացավ ստալինյան «ավտոնոմիզացիայի ծրագիր» անվանումը՝ խորհրդային ազգային հանրապետությունները կորցնելու էին իրենց ինքնիշխանությունը, որը, թեկուզև ձևական, ղեռ պահպանում էին: Բանաձևի 6-րդ կետի համաձայն՝ այն համարվում էր խիստ գաղտնի և հրապարակման ենթակա չէր: Եթե ՌԿ(բ)Կ Կենտկոմը հավանություն տար բանաձևին, ապա այն չէր հրապարակվելու, այլ որպես շրջաբերական

---

[451] Խորհրդային Հայաստանի Սահմանադրությունն ընդունվեց 1922 թ. փետրվարի 3-ին ՀՍԽՀ իշխանությունների առաջին համագումարին: Նրանով Խորհրդային Հայաստանը հռչակվում էր միջազգային սոցիալիստական հեղափոխության մի հատվածը և կոչված էր ծառայելու վերջինիս շահերին: Այնուհանդերձ, ՀՍԽՀ Սահմանադրությունն առաջինն էր հայոց պետականության պատմության մեջ:

[452] Օրինակ՝ Հայկոմկուսի Կենտկոմի 1922 թ. հունիսի 6-ի պլենումին կուսշինարարության մասին ընդունված բանաձևում հաստատվեց, որ «Հայաստանի կոմկուսը հանդիսանում է Ռուսաստանի կոմկուսի մի մասը, ջոկատը... քաղաքականապես և կազմակերպչական հարցերում հաշվետու է նրան ու գործում է ՌԿ(բ)Կ համագումարների, կուսակցական բարձրագույն մարմինների կողմից ընդունված բանաձևերով» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 3; թ. 11):

[453] Образование СССР, с. 295.

[454] ՀԱԱ , ֆ. 1. ց. 2, գ. 177, թ. 62:

հրահանգ փոխանցվելու էր ազգային հանրապետությունների Կենտկոմներին՝ «խորհրդային կարգով հիշյալ հանրապետությունների Կենտգործկոմների կամ խորհուրդների համագումարների միջոցով անցկացնելու համար: Դա պետք է իրականացվեր մինչև խորհուրդների Համառուսաստանյան համագումարի հրավիրումը, որտեղ այն պաշտոնապես հայտարարվելու էր որպես այդ հանրապետությունների ցանկություն»:[455]

Բանաձևի նախագիծը թեզիսների տեսքով ուղարկվում է ազգային Կենտկոմների քննարկմանը, սակայն, ինչպես երևում է բանաձևի 6-րդ կետից, Ստալինն ակնկալում էր ոչ թե քննարկում, այլ թեզիսների միանշանակ հավանություն և «անցկացում»՝ «խորհրդային կարգով»:

1922 թ. սեպտեմբերի 10-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում է պաշտպանել ՌՍՖԽՀ-ի հետ Անդրկովկասի հանրապետությունների քաղաքական և տնտեսական ավելի սերտ միավորման գաղափարը:[456] Սեպտեմբերի 8-11-ը տեղի ունեցած ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումում Անդրֆեդերացիայի քաղաքական և տնտեսական դրության մասին զեկուցման մեջ (սեպտեմբերի 11-ին) Կենտկոմի քարտուղար Սարգիս Լուկաշինը քննադատեց Անդրֆեդերացիայի միութենական մարմինների կազմակերպչական թուլությունը, նշեց Անդրֆեդերացիայի շրջանակներում հանրապետությունների համագործակցության ու փոխօգնության չնչին ձեռքբերումների մասին: Եզրակացնելով, որ տնտեսական համագործակցության հարցերում ստեղծված խառնաշփոթից դուրս գալու միակ ելքն այն է, որ Հայաստանը քաղաքական և տնտեսական ավելի սերտ կապերի մեջ գտնվի ոչ միայն Վրաստանի և Ադրբեջանի, այլև Ռուսաստանի հետ, Լուկաշինը հուշում է, որ հարցը գտնվում է քննարկման մեջ և իր «վերջնական լուծումը կստանա կուսակցական կարգով Մոսկվայի խորհրդակցությանը, իսկ այնուհետև՝ հավանության կարժանանա խորհուրդների միջոցով»:[457]

Անդրադառնալով հարցի քաղաքական կողմին, Լուկաշինը հուշում է, որ անդրկովկասյան հանրապետությունների պետական ինքնուրույնությունը մինչ այժմ ուներ միայն արտաքին միջազգային քաղաքական նշանակություն, և «Անդրֆեդերացիայի կես տարվա

---

[455] Из истории образования СССР. "Известия ЦК КПСС", Москва, 1989, № 9, с. 193.
[456] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 3, թ. 26:
[457] Նույն տեղում, թթ. 33-34:

վորձը հուշեց, որ հարկավոր է վերջ տալ ձևական ինքնուրույնությամբ պարծենալուն»: Նշելով, որ Ռուսաստանի հետ միավորվելուց հետո խորհրդային հանրապետությունների, այդ թվում և Հայաստանի, ինքնիշխանությունը զգալիորեն կսահմանափակվի, ինչը անդրկովկասյան վտարանդիությանը հնարավորություն կտա միջազգային ասպարեզում հակակոմունիստական և հակախորհրդային ահավոր աղմուկ բարձրացնել, Լուկաշինը շեշտում է, որ «Միավորման արդյունքում առաջացած քաղաքական մինուսը կփոխհատուցվի տնտեսական մեծ առավելություններով»:[458]

Այսպիսով, Հայաստանի ղեկավարությունը պաշտպանում էր ՌՍՖՍՀ-ի հետ պետական միավորման գաղափարը, և ինչպես Անդրֆեդերացիայի կազմավորման, այնպես էլ Ռուսաստանի հետ միավորման հարցում՝ առաջին հերթին կարևորում էր Հայաստանի տնտեսական շահերը, պատրաստ էր հանուն դրանց զնալ Հայաստանի ինքնիշխանության զգալի սահմանափակումների:

Աղրբեջանի կոմկուսի Կենտկոմի պլենումը 1922 թ. սեպտեմբերի 11-ին պաշտպանեց ստալինյան թեզիսները,[459] իսկ Վրաստանի կոմկուսի Կենտկոմը սեպտեմբերի 15-ի նիստում ձայների մեծամասնությամբ մերժեց դրանք, և պնդեց հանրապետությունների անկախությունը պահպանելու անհրաժեշտության մասին:[460] Նշենք, որ կանխատեսելով վրաց կոմունիստների նման դիրքորոշումը, Գ. Օրջոնիկիձեն ջանքեր չէր խնայում, որպեսզի կանխի Վրաստանի կոմկուսի Կենտկոմի կողմից թեզիսների մերժումը, այս հարցում ակնկալում էր Հայկոմկուսի Կենտկոմի օժանդակությունը: Սեպտեմբերի 14-ին Օրջոնիկիձեն Թիֆլիսից համապատասխան բովանդակությամբ հեռագիր է ուղարկում Երևան՝ Ս. Լուկաշինին:[461] Վերջինս անմիջապես արձագանքում է և հաջորդ օրն իսկ հեռագրում Թիֆլիս՝ Անդրերկրկոմ. «ՀԿԿ Կենտկոմի և Երևանի պլենումն ու պատասխանատու աշխատակիցների խորհրդակցությունը միաձայն արտահայտվեցին խորհրդային հանրապետությունների քաղաքատնտեսական թեզիսների օգտին և կայուցրեցին որոշակի հիմնավորված բանաձև: Բանաձևը կուղարկվի:

---

[458] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 3, թ. 35:
[459] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 2, գ. 177, թ. 65:
[460] Տե՛ս նույն տեղում, թ. 66:
[461] Из истории образования СССР, "Известия ЦК КПСС", № 9, с. 196.

Թիվ 3145»:[462] Սակայն Լուկաշինի «օժանդակությունը» չօգնեց Օրջոնիկիձեին՝ վերջինիս ջանքերն ապարդյուն անցան:

Բելոռուսիայի կոմկուսի Կենտկոմի պլենումը սեպտեմբերի 16-ին արտահայտվեց անկախ հանրապետությունների միջև պայմանագրային հարաբերությունները պահպանելու օգտին,[163] իսկ Ուկրաինայի կոմկուսի Կենտկոմը հարցն ընդհանրապես չքննարկեց:

1922 թ. սեպտեմբերի 22-ին Վ. Լենինին ուղղված նամակում ներկայացնելով իր կողմից մշակված բանաձևի էությունը, Ստալինը բացում է բոլոր փակագծերը և հարցերը դնում է կտրուկ. «Ընկ. Լենին... Երկուսից մեկը՝ կամ իսկապես (խորհրդային ազգային հանրապետությունների - Կ.Խ.) անկախություն, և այդ դեպքում՝ կենտրոնի չմիջամտություն՝ իրենց արտգործժողկոմատ, իրենց արտաքին առևտուր..., ընդ որում՝ ընդհանուր հարցերը լուծվում են հավասարը հավասարի հետ՝ բանակցությունների միջոցով, ըստ պայմանագրի... կամ՝ խորհրդային հանրապետությունների իրական միավորում մեկ տնտեսական ամբողջության մեջ՝ ՌՍՖՍՀ ժողկոմխորհի, ԱՊԽ-ի և Կենտգործկոմի իշխանության պաշտոնական տարածումը անկախ հանրապետությունների ժողկոմխորհների, Կենտգործկոմների և տնտեսական խորհուրդների վրա: Այսինքն՝ հանրապետությունների շինծու անկախության փոխարինումը իրական ներքին ինքնավարությամբ՝ լեզվի, մշակույթի, արդարադատության, ներքին գործերի, հողագործության և այլ իմաստով»:[464] Այնուհետև քննադատելով «ազգայնականներին», որոնք պահանջում են պահպանել հանրապետությունների իրական անկախությունը, Ստալինը հուշում է, որ եթե մենք հենց հիմա չկարողանանք կարգավորել կենտրոնի և ծայրամասերի փոխհարաբերություններն այնպես, որպեսզի վերջիններս բոլոր հիմնական հարցերում անվերապահորեն ենթարկվեն կենտրոնին, «այսինքն՝ եթե մենք հենց հիմա ձևական (ֆիկտիվ) անկախությունը չփոխարինենք պաշտոնական (իրական) ինքնավարությամբ, ապա մեկ տարի անց անհամեմատ դժվար կլինի պաշտպանել խորհրդային հանրապետությունների փաստացի միասնությունը»:[465]

---

[462] ՀԱԱ , ֆ. 1. ց. 2, գ. 177, թ. 67: Նշենք, որ ոչ խորհրդակցության արձանագրությունը և ոչ էլ նրա ընդունած բանաձևը մեզ հայտնաբերել չհաջողվեց, հավանական է թվում, որ Լուկաշինը սույն հեռագիրն ուղարկել է հենվելով ՀԿԿ Կենտկոմի պլենումի սեպտեմբերի 10-ի նիստի վերը նշված որոշման հիման վրա:

[463] Из истории образования СССР, "Известия ЦК КПСС", № 9, с. 197.

[464] Նույն տեղում. էջ 198-199:

[465] Նույն տեղում. էջ 199-120:

Ուսումնասիրելով Ստալինի նամակ-զեկուցումը, Լենինը ցանկություն է հայտնում ծանոթանալ նաև հանձնաժողովի կողմից պատրաստված նյութերին: Ստալինի կարգադրությամբ սեպտեմբերի 25-ին դրանք ուղարկվում են Գորկի, որտեղ Լենինը գտնվում էր երկարատև բուժման մեջ:

Նշենք, որ ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոյի հանձնաժողովը նախօրերին (սեպտեմբերի 23-24-ին) տեղի ունեցած նիստերում արդեն իսկ հասցրել էր քննարկել և աննշան ուղղումներով ու լրացումներով սեպտեմբերի 24-ին ընդունել ստալինյան «ավտոնոմիզացիայի ծրագիրը»:[466] Ի տարբերություն Բելոռուսիայի, Ուկրաինայի, Ադրբեջանի և, հատկապես Վրաստանի ներկայացուցիչների,[467] որոնք բանաձևի քննարկման ընթացքում պնդում էին հանրապետությունների իրավունքներն այս կամ այն չափով ընդլայնելու օգտին, և խնդրում էին թույլատրել հանձնաժողովի որոշումները քննարկել հանրապետությունների կուսակազմակերպություններում, Հայաստանի ներկայացուցիչ Ալ. Մյասնիկյանն անվերապահորեն պաշտպանում էր ստալինյան բանաձևը:

Ծանոթանալով հանձնաժողովի նյութերին, և խնդրի վերաբերյալ խորհրդակցելով հանձնաժողովի մի շարք անդամների, այդ թվում և Ստալինի հետ, Վ. Լենինը վճռականորեն մերժում է վերջինիս կողմից ներկայացված «ավտոնոմիզացիայի ծրագիրը»: ՌԿ(բ)Կ Կենտկոմի բաղբյուրոյի անդամներին սեպտեմբերի 26-ին ուղղված նամակում շեշտելով հարցի չափազանց կարևորությունը, և քննադատելով Ստալինի կողմից դրսևորված շտապողականությունը, Լենինը առաջարկում է խորհրդային հանրապետությունների միավորումը անցկացնել սկզբունքորեն այլ հիմքի վրա՝ ՌՍՖՍՀ կազմ մտնելու փոխարեն, ազգային հանրապետությունները և Ռուսաստանը միավորել նոր պետականության՝ «Եվրոպայի և Ասիայի խորհրդային հանրապետությունների միության» մեջ, խստորեն պահպանելով նրանց իրավահավասարությունն ու անկախությունը, միությունից դուրս գալու իրավունքը:[468]

Ատամների կրճտոցով ընդունելով Լենինի առաջարկությունները, Ստալինը արմատապես վերամշակում է հանձնաժողովի կողմից

---

[466] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 177, թթ. 69-72:

[467] Վրաստանի ներկայացուցիչ Պ. Մդիվանին դեմ էր բլեսարկում բանաձևի հիմնական դրույթներին, իսկ նրա բոլոր առաջարկությունները ձայների մեծամասնությամբ մերժվեցին:

[468] Լենին Վ.Ի., ԵԼԺ, հ. 45, էջ 252-254:

արդեն իսկ ընդունված բանաձևը, և սեպտեմբերի վերջին Կենտկոմի անդամների և թեկնածուների քննարկմանն է ներկայացնում իր. Գ. Օրջոնիկիձեի, Ալ. Մյասնիկյանի և Վ. Մոլոտովի ստորագրությամբ սկզբունքորեն նոր նախագիծ:

Վերջինիս նախնական քննարկումը տեղի ունեցավ ՌԿ(բ)Կ Կենտկոմի սեպտեմբերի 28-ի նիստում: Նիստի ընթացքում տեղեկանալով Լ. Կամենևից, որ Լենինը մտադիր է նոր առաջարկություններ անել հանրապետությունների անկախությունը պաշտպանելու օգտին, Ստալինը նրան առաջարկում է հաստատակամություն դրսևորել Լենինի նկատմամբ: Սակայն, ստանալով Կամենևի բացասական պատասխանը, Ստալինը Լենինի հասցեին հեգնում է. «Ծող անի իր հայեցողությամբ»:[469] Ավելացնենք, որ Կենտկոմի անդամներին ներկայացնելով նոր նախագիծը, հեղինակները թաքցնում էին, որ այն արմատապես վերամշակվել է Լենինի դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

1922 թ. հոկտեմբերի 6-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը անհնշան ուղղումներով և լրացումներով ընդունում է հանձնաժողովի 4 անդամների կողմից ներկայացված բանաձևի նոր նախագիծը՝ որպես Կենտկոմի հրահանգ:[470] Բանաձևի համաձայն՝ անհրաժեշտ է համարվում Ուկրաինայի, Բելոռուսիայի, Անդրդաշնության և ՌՍՖԽՀ-ի միջև «Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության» մեջ միավորվելու մասին պայմանագրի ստորագրումը: Հանրապետություններից յուրաքանչյուրին «Միության» կազմից ազատ դուրս գալու իրավունք է վերապահվում: Պլենումը որոշում է հանձնարարել Ստալինի նախագահությամբ կազմավորված նոր հանձնաժողովին (խորհրդային բոլոր հանրապետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ) Կենտկոմի հրահանգի հիման վրա նախապատրաստել ԽՍՀՄ կազմավորման մասին օրենքի նախագիծը՝ այն խորհուրդների համագումարի միջոցով անցկացնելու համար:[471]

---

[469] Из истории образования СССР. "Известия ЦК КПСС", № 9, с. 208-209.

[470] Վ. Լենինը, այդ հիվանդության պատճառով չէր մասնակցում պլենումի աշխատանքներին, նույն օրը Լ. Կամենևին ուղղված երկառողում վերստին ընդգծեց Միության մեջ մտնող հանրապետությունների իրավահավասարությունը պաշտպանելու մասին, շեշտեց, որ «Վելիկոռուսական շովինիզմին հայտարարում եմ ոչ թե կյանքի, այլ մահվան կռիվ» (տե՛ս Լենին Վ.Ի., Եվ.Ժ, հ. 45, էջ 255):

[471] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 177, թ. 75: Տե՛ս նաև "Известия ЦК КПСС", № 9, с. 205-206, 214-215:

Խորհրդային հանրապետությունների միավորման գործընթացի գաղտնիության քողը թեև բացվում էր, և գործընթացն իրականացվելու էր հանրապետությունների բարձրագույն օրենսդիր մարմինների միջոցով, սակայն բոլշևիկյան կուսակցության վերնախավը ակնկալում էր ոչ թե հարցի համաժողովրդական քննարկում, այլ՝ միանշանակ հավանություն և անցկացում «կուսակցական կարգով»:

Եթե ստալինյան «ավտոնոմիզացիայի ծրագրի» համաձայն՝ Խորհրդային Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը մտնելու էին ՌՍՖԽՀ-ի կազմ որպես առանձին միավորներ, ապա ՌԿ(բ)Կ Կենտկոմի կողմից հոկտեմբերի 6-ին ընդունված բանաձևով նրանք միավորվելու էին Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելոռուսիայի հետ Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Հանրապետության միջոցով:

1922 թ. դեկտեմբերի 10-13-ը Բաքվում հրավիրված Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը Խորհրդային Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ֆեդերատիվ Միությունը՝ ԱՍԽՀՖՄ-ը, վերափոխեց Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Ֆեդերատիվ Հանրապետության՝ ԱՍՖԽՀ-ի, ընդունեց նրա Սահմանադրությունը և որոշեց, որ Անդրկովկասյան Հանրապետությունը պետք է միավորվի ՌՍՖԽՀ-ի, Ուկրաինայի և Բելոռուսիայի հետ՝ ԽՍՀՄ կազմում:

ԽՍՀՄ կազմավորման գործընթացը պաշտոնապես ավարտվեց 1922 թ. դեկտեմբերի վերջին: Խորհրդային չորս հանրապետությունների կողմից լիազորված պատվիրակությունների կոնֆերանսը դեկտեմբերի 29-ին հաստատեց ԽՍՀՄ կազմավորման մասին Հռչակագրի և Միութենական պայմանագրի նախագծերը: Դրանք հաջորդ օրը՝ դեկտեմբերի 30-ին, կնքվեցին ՌՍՖԽՀ-ի, ԱՍՖԽՀ-ի, Խորհրդային Ուկրաինայի և Բելոռուսիայի ներկայացուցիչների կողմից և հաստատվեցին ԽՍՀՄ խորհուրդների առաջին համագումարում: ԽՍՀՄ-ի կազմավորման մասին Հռչակագրում արձանագրվեց, որ ԽՍՀՄ-ը բաց է խորհրդային բոլոր հանրապետությունների համար, և նրա կազմավորումը վճռական քայլ է՝ մոտ ապագայում «Համաշխարհային Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն ստեղծելու ճանապարհին»:[472]

Թեև, ի տարբերություն ստալինյան «ավտոնոմիզացիայի ծրագրի» ԽՍՀՄ-ի կազմավորումը որակապես առաջընթաց քայլ էր, այնուհանդերձ՝ նրա ստեղծումը, կարծում ենք, հասունացած չէր: Պատահական չէ, որ ԽՍՀՄ կազմավորման առթիվ դեկտեմբերի 31-ի՝

[472] Советское содружество народов, с. 302-303, 307-314.

«Ազգությունների կամ «ավտոնոմիզացիայի» հարցի մասին», նամակում Լենինը մեղադրեց Ստալինին հանրապետությունների միավորման հարցում դրսևորած շտապողականության, հապճեպության և վարչարարության համար, այդ գործընթացի ընթացքում թույլ տրված սխալների համար ամբողջ պատասխանատվությունը դրեց վերջինիս՝ որպես Կենտկոմի գլխավոր քարտուղարի, վրա: Արտահայտվելով ԽՍՀՄ-ը ամրապնդելու օգտին, և շեշտելով, որ նրա կազմում հանրապետությունների իրավահավասարությունը պետք է լինի ոչ թե ձևական, այլ իրական, Լենինը հակված էր այն կարծիքին, որ ԽՍՀՄ-ը պետք է թողնել «միայն ռազմական և դիվանագիտական տեսակետից, իսկ մյուս բոլոր տեսակետներից պետք է վերականգնել (հանրապետությունների – Կ.Խ.) առանձին ժողկոմատների լիարժեք ինքնուրույնությունը»: Լենինը դարձյալ վճռականորեն հանդես եկավ վելիկոռուսական մեծապետական շովինիզմի դեմ:[473]

Սակայն հիվանդության կտրուկ սրման հետևանքով 1923 թ. սկզբից Լենինն այլևս ի վիճակի չէր հետամուտ լինելու իր ծրագրերի իրականացմանը: Պետական և կուսակցական գործերից Լենինի հեռացումը, իսկ այնուհետև և նրա մահը, հնարավորություն տվեցին Ստալինին և իր շրջապատին ԽՍՀՄ-ի քողի տակ աստիճանաբար և հետևողականորեն անցկացնել «ավտոնոմիզացիայի ծրագիրը»:

Խորհրդային Միությունը, որը բոլշևիկները համարում էին ազգային հարցի լուծման լավագույն ձևը, իրականում միաձույլ կենտրոնացված պետություն էր՝ կոմունիստական կուսակցության վերնախավի դիկտատուրայով, որտեղ վճռականորեն և ամենայն խստությամբ ճնշվում էր այլախոհության յուրաքանչյուր դրսևորումը:

Այնուհանդերձ՝ չանտեսելով խորհրդային հասարակարգում գոյություն ունեցող բացասական երևույթները, կոմունիստական կուսակցության ամենատիրությունը, նրա կողմից կազմակերպված բռնությունները, այլախոհության հետապնդումը և այլն, ԽՍՀՄ կազմում խորհրդային հանրապետությունները, այդ թվում Հայաստանը, պահպանելով ազգային պետականությունը, ունեին տարածքային ինքնավարության իրական կարգավիճակ, պաշտպանված էին արտաքին սպառնալիքներից, ստացան տնտեսական զարգացման լայն հնարավորություններ: Ինչ վերաբերում է կրթությանը, գիտությանը և մշակույթին, ապա այդ ոլորտներում խորհրդային տասնամյակներում արձանագրվեցին վիթխարի հաջողություններ:

---

[473] Լենին Վ.Ի., ԵԼԺ. հ. 45, էջ 423-428:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀՍԽՀ ԵՎ ՌԱՖԽՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920-1922 ԹԹ.: ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

1. Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը խորհրդային իշխանության առաջին ամիսներին և Ռուսաստանի օգնության հարցը

Հայաստանի առաջին Հանրապետության կարճատև գոյության գրեթե ամբողջ ընթացքում արտաքին քաղաքական ոչ բարենպաստ դրությունը, ներքաղաքական լարված իրավիճակը խոչընդոտում էին Հայաստանում սոցիալ-տնտեսական բարեփոխումների որևէ ծրագրի իրականացմանը և վերջնական ավարտին, երկրի բնականոն զարգացմանը: Հայաստանի իշխանություններն առավելապես զբաղված էին արտերկրից ֆինանսական վարկեր և օգնություն ստանալու, պարեն, առաջին անհրաժեշտության ապրանքներ ձեռքբերելու և երկիր ներմուծելու խնդիրներով:

Հայաստանի դրությունն էլ ավելի վատթարացավ 1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմում կրած ծանր պարտության հետևանքով: Թուրքական զինագրավման տակ հայտնվեցին գյուղատնտեսական տեսակետից առավել զարգացած հայկական տարածքները, այդ իսկ պատճառով Հայաստանի խորհրդայնացման պահին երկիրը և ժողովուրդը հայտնվել էին կործանման վտանգի առջև: Հանրապետության տարածքում խմբվել էին ցեղասպանությունից մազապուրծ եղած, անօթևան և ապրուստի որևէ միջոցներից զրկված բազմահազար արևմտահայ գաղթականները, երկրում համատարած սով էր, համաճարակային զանազան հիվանդությունների զոհ էին դառնում օրեկան հարյուրավոր մարդիկ:

1919-1920 թվականներին ծնելիության մակարդակը Հայաստանում կազմում էր ընդամենը՝ 8.7, իսկ մահացությանը՝ 204.2 մարդ 1000-ից, այսինքն՝ բնակչության նվազումը անցել էր բոլոր տեսակի ընդունված չափանիշները և կազմում էր 195.5 մարդ 1000-ից: Եվ սա այն դեպքում, երբ երկրի բնակչության թիվը հասնում էր ընդամենը 720 հազարի:

Կաթվածահար վիճակում էր երկրի տնտեսությունը, գյուղացին կտրված էր հողից, բանվորը՝ արտադրությունից և արդյունաբերությունից: Հումքի և ֆինանսական ներդրումների իսպառ բացակա-

յության պայմաններում դրանք փլուզման վիճակում էին: Ցանքատարածությունները կրճատվել էին մոտ 4 անգամ, գրեթե չէր գործում ոռոգման համակարգը, վերացման եզրին էր ծխախոտի, բամբակի աճեցումը, մի քանի անգամ կրճատվել էր գյուղմթերքների արտադրությունը, պարապուրդի մեջ էին գինու, կոնյակի, պահածոների արտադրությունները, սրա հետ մեկտեղ՝ չէր գործում երկաթուղին, բացակայում էր արտահանումը: Նախապատերազմյան 1913 թ. համեմատությամբ 1920 թ. վերջին էլեկտրաէներգիայի արտադրումը նվազել էր՝ 3, արդյունաբերության արտադրանքը՝ շուրջ 12, իսկ գյուղատնտեսությանը՝ 6 անգամ:[474]

«Համաշխարհային տնտեսական, ֆինանսական և քաղաքական ժողովածուի» տվյալների համաձայն՝ Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին պարտքը կազմում էր 17.4 մլն. դոլար, որից 13.0 մլն.՝ ԱՄՆ-ին, իսկ 4.4՝ Անգլիային:[475]

Նման անմխիթար իրավիճակում ստանձնելով իշխանությունը Հայաստանում հայ կոմունիստները գիտակցում էին, որ երկրում խորհրդային կարգերը հաստատելու գործընթացի հաջողությունն ամբողջությամբ կախված է լինելու Խորհրդային Ռուսաստանի կողմից տրամադրվելիք օգնության չափերից, դա էր դիտվում Հայաստանի խորհրդային հանրապետության կայացման և գոյության միակ երաշխիքը:

1920 թ. նոյեմբերի 29-ի Հոչակագրում Հայհեղկոմը հայտարարում է. «Խորհրդային Ռուսաստանը մեզ եղբայրական օգնություն ցույց կտա, հնարավորին չափով հաց և ճոթեղեն հասցնելով (Հայաստան-Կ.Խ.)»:[476] 1920 թ. դեկտեմբերի 5-ին Երևանից ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղղված հեռագրում հայ կոմունիստները օգնության կոչով դիմեցին Ռուսաստանի ղեկավարությանը, նրանում նշվում է. «Պայքարը Խորհրդային Հայաստանի համար դեռ ամենևին էլ ավարտված չէ, այդ պայքարի բարեհաջող ավարտը մենք չենք պատկերացնում... առանց Ձեր առավելագույն օժանդակության:... Խնդրում ենք շտապ միջոցներ ձեռնարկել մեզ անհրաժեշտ ամեն ինչով մատակարարելու

---

[474] Социалистическое строительство Арм. ССР (1920-1940), Ереван, 1940, с. 23, 24, 47.

[475] Всемирный экономический, финансовый и политический сборник, Москва, 1923.

[476] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրսկ 1, էջ 3:

համար»:[477] Իրավացի է Բ. Բորյանը երբ նկատում է, որ Խորհրդային Ռուսաստանից օգնություն չստանալու դեպքում՝ «Հայաստանի խորհրդային իշխանությունը չէր պատկերացնում իր քաղաքական գոյությունը»:[478]

Խորհրդային Հայաստանի առջև ծառացած խնդիրները քննարկելու նպատակով ՌՍՖԽՀ Ժողկոմխորհի նախագահ Վ. Լենինը 1920 թ. դեկտեմբերի 13-ին Կրեմլում ընդունեց Հայհեղկոմի անդամներ Ա. Մռավյանին և Ս. Տեր-Գաբրիելյանին, վերջիններիս խնդրանքով: Մռավյանն ու Տեր-Գաբրիելյանը գեկուցեցին Խորհրդային Հայաստանի առաջնահերթ խնդիրների մասին, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական: Արձագանքելով օգնության խնդրանքներին Լենինը հուսադրեց. «Խորհրդային Հայաստանին կօգնենք ամեն կերպ», միաժամանակ հուշեց, որ «ինքներս էլ դժվարին կացության մեջ ենք»:[479]

1920 թ. վերջին Ռուսաստանը հայտնվել էր սոցիալ-տնտեսական խորը ճգնաժամում, այն ամբողջական էր, համընդհանուր: Չորս տարի տևած համաշխարհային պատերազմը և երեք՝ քաղաքացիական կռիվները ծանր հարված էին հասցրել Ռուսաստանի տնտեսությանը, հումքի և վառելիքի բացակայության պայմաններում կանգնած էր արդյունաբերական համալիրի մեծ մասը, նվազել էր գյուղատնտեսական մթերքների, հացահատիկի արտադրումը: Պատերազմների ընթացքում երկիրը կորցրել էր ազգային հարստության ավելի քան քառորդ մասը: Արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը նվազել էր 7 անգամ, խիստ կրճատվել էր ածխի և նավթի արդյունահանումը: Նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ՝ 1920 թ. վերջին գյուղատնտեսության արտադրանքը նվազել էր 2.5 անգամ:[480]

Երկրի ներքաղաքական կյանքում շարունակում էին լարված մնալ սոցիալ-քաղաքական հարաբերությունները, 1920 թ. վերջերից մեծ թափ հավաքած բազմաթիվ գյուղացիական հակախորհրդային ապստամբությունները վերածել էին իսկական պատերազմի իշխանությունների դեմ: 1921 թ. ձմռան-գարնանը պայքարի մեջ մտան նաև Ռուսաստանի խոշոր քաղաքների բանվորությունը, ռուսական նավա-

---

[477] Бакинский рабочий, Баку, 5 декабря, 1920, № 24. Տե՛ս նաև ԲՀԱ, հատոր 3, Երևան,1965, էջ 3-4:
[478] Борьян Б., նշվ.աշխ., էջ 317:
[479] Մռավյան Ա., Հոդվածներ և ճառեր, Եր., 1961, էջ 222:
[480] История Отечества. 20-ый век, Москва, 1997, с. 151-153.

տորմի և բանակի առանձին զորամասերը: Ապստամբությունները ճնշելու համար Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները ահռելի ջանքեր էին գործադրում, առանձնացնում մեծ բանակի մարդկային և նյութական ռեսուրսներ: Այս ամենը չէր կարող չանդրադառնալ խորհրդային քաղաքականության վրա, նվազեցնում էր Ռուսաստանի առանց այն էլ սակավ հնարավորությունները խորհրդային հանրապետություններին, այդ թվում Հայաստանին, բավարար չափով օգնություն տրամադրելու խնդրում:

Հայաստանի պատվիրակության հետ հանդիպումից անմիջապես հետո Վ. Լենինի ցուցումով ՌՍՖԽՀ Ժողկոմխորհուրդը դեկտեմբերի 14-ի որոշումով Հայաստանին տրամադրում է 3 միլիարդ ռուբլի վարկ՝ արդյունաբերական ապրանքներ և հացահատիկ գնելու համար:[481] Սակայն պետք է նշել, որ որոշումը թեև ընդունվեց, սակայն օգնությունը դեռ երկար ժամանակ Հայաստան չհասավ: Պատճառներից մեկն այն էր, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո վրացական իշխանությունները արհեստական վթարներ էին առաջացնում դեպի Հայաստան գնացող երկաթգծի վրացական հատվածում:

Հայաստանի իշխանությունների ահազանգով Ռուսաստանի կառավարությունը վրացական իշխանություններից պահանջեց ապահովել երկաթգծի անխափան աշխատանքը և «Հայաստանի սովյալ բնակչությանն օգնություն հասցնելու համար Ռուսաստանին տրամադրել ազատ տարանցման իրավունք»: Ռուսաստանի կառավարության դիմումում մատնանշվում է Վրաստանի կողմից 1920 թ. մայիսի 7-ի ռուս-վրացական պայմանագրի դրույթներն անշեղորեն կատարելու անհրաժեշտության մասին: Խնդրի վերաբերյալ նշվում է նաև Վրաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Ա. Շեյնմանի՝ վրացական իշխանություններին 1920 թ. դեկտեմբերի 6-ին, 10-ին և 11-ին պարբերաբար հղած հուշագրերում:[482]

Հայաստանի շրջափակման հարցով մտահոգված էր նաև Լենինը, Հայհեղկոմի անդամների հետ դեկտեմբերի 13-ի հանդիպումից հետո նա ընդունում է Ռուսաստանում Վրաստանի լիազոր ներկայացուցիչ Գ. Մախարաձեին և բացատրություններ պահանջում Հայաստանի շրջափակման փաստի վերաբերյալ: Լենինը հուշում է նրան, որ վրացական իշխանությունների անբարյացակամ վերաբերմունքը

---

[481] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը... Հայաստանում, էջ 425-426:
[482] ՀԱԱ, ֆ. 4033. ց. 2, գ. 1158, թթ. 10,13:

Խորհրդային Հայաստանի հանդեպ հավասարապես վերաբերվում է և նրա դաշնակցին՝ Խորհրդային Ռուսաստանին, զգուշացնում՝ որ Ռուսաստանը Խորհրդային Աղրբեջանի հետ միասին կձեռնարկեն վճռական պատասխան միջոցներ, մասնավորապես՝ կդադարեցնեն նավթի առաքումները Վրաստանի հանրապետություն:[483] Բանվորագյուղացիական պատգամավորների Մոսկվայի խորհրդի պլենումի 1921 թ. փետրվարի 28-ի նիստին անդրադառնալով Վրաստանի կողմից Հայաստանի շրջափակման հարցին, Լենինը նշում է. «Ոչ ոք համբերություն չի ունենա կարդալու այն հեռագրերը, հայտարարություններն ու բողոքները, որ մենք այդ առթիվ փոխանակել ենք Վրաստանի հետ»:[484]

Հայաստանի շրջափակումը վերացնելու կոչով Վրաստանի բանվորներին և գյուղացիներին դիմեց նաև Բաքվի խորհուրդը: Վերջինիս կողմից 1920 թ. դեկտեմբերի 18-ին ընդունված դիմումում նշվում է, որ վրացական կառավարությունը խոչընդոտում է հացով բեռնված գնացքների երթևեկությանը դեպի Հայաստան, դրանով իսկ սովի մատնում Հայաստանի ժողովրդին, «Ստանձնում է նրա դահիճի դերը»: Դիմումում խորհուրդը հուշում է նաև, որ առաջարկել է իր կառավարությանը վերանայել Վրաստանի հետ կնքված առևտրական այն պայմանագիրը, որի համաձայն Աղրբեջանը նավթ է արտահանում Վրաստան:[485]

Ռուսաստանի իշխանությունների վճռականությունն ի վերջո ներգործեց վրացական կողմի վրա: Շեյնմանը 1920 թ. դեկտեմբերի 15-ին հեռագրում է Մոսկվա՝ Չիչերինին, Բաքու՝ Հուսեյնովին և Օրջոնիկիձեին, Երևան՝ Հայիեղկոմի նախագահին. «Միայն նավթի առաքումը (Վրաստան - Կ.Խ.) դադարեցնելուց հետո վրացական կառավարությունը պաշտոնապես հայտնեց ինձ, որ սույն ամսի 14-ից հանրապետության երկաթուղային ճանապարհներով դեպի Հայաստան ազատ տարանցման իրավունք է տրամադրում ՌՍՖԽՀ-ին և Ադր. ՍԽՀ-ին»:[486]

Վրաստանի կողմից Հայաստանի երկաթուղային շրջափակումը չէր միայն Խորհրդային Հայաստան օգնություն չհասնելու պատճառը: Ռուսաստանում Վրաստանի լիազոր ներկայացուցիչ Գ. Մա-

---

[483] Տե՛ս Хармандарян С., Ленин и становление Закавказской федерации (1921-1923), с. 52:
[484] Լենին, ԵԼԺ, հ. 42, էջ 440:
[485] Տե՛ս ԲՀԱ, Երևան , 1965, թիվ 3, էջ 4-5:
[486] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1158, թ. 20:

խարաձեին ուղղված հեռագրում Վրաստանի արտգործնախարար Սաբախտարաշվիլին հայտնում է, որ դեպի Հայաստան տարանցիկ և, մասնավորապես, պարենային ու վառելիքային բեռներ փոխադրելու վերաբերյալ Ռուսաստանի կողմից մինչև դեկտեմբերի 18-ը որևէ միջնորդություն չի ներկայացվել: Այնուհետև Սաբախտարաշվիլին հուշում է, որ նման միջնորդություն ներկայացվեց միայն դեկտեմբերի 18-ին, որն էլ «անմիջապես բավարարվել է, սակայն ուղերեռը... մինչ օրս մեր սահմանին չի հասել»:[487]

Այսպիսով կարելի է փաստել, որ 1920 թ. դեկտեմբերին Հայաստան օգնություն չմտնելու իրական պատճառը դրա բացակայությունն էր, քանզի Ռուսաստանն ինքն էլ «ոչվարին դրության մեջ էր»: Բաքվի կուսկազմակերպության 1921 թ. հունվարի 25-ի համաքաղաքային կոնֆերանսին Գ. Օրջոնիկիձեն հուշում էր, Խորհրդային Ադրբեջանի և Հայաստանի «դրությունը հիմնականում կախված է Խորհրդային Ռուսաստանի դրությունից: Եվ դա այդպես էլ պետք է լինի: Բնական է, որ վերջինիս դրությունը... շատ հարցերում որոշում է առանձին խորհրդային անկախ հանրապետությունների դրությունը»:[488]

Քանի որ Ռուսաստանից ակնկալվող օգնությունը «ուշանում էր», Հայաստանի նոր իշխանություններին այլ ելք չէր մնում, քան պարեն հայթայթել երկրի ներսում՝ չքավորության եզրին հայտնված հայ գյուղացուց: Խնդիրը խիստ հրատապ էր՝ խորհրդային իշխանությունները խոստովանում էին, որ ոչ միայն բնակչությունը, այլև Կարմիր բանակի զորամասերը պարզապես սովի են մատնված:

1920 թ. դեկտեմբերի 8-ին հրապարակվում է Հայհեղկոմի՝ «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին հրամանը»,[489] իսկ արդեն դեկտեմբերի 10-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը կոչ է անում հայ գյուղացիությանը «առանց հապաղելու հաց տրամադրել Կարմիր բանակին», և այն փոխադրել «սեփական միջոցներով»:[490]

Հայ ժողովուրդը օգնության ծարավով էր լցված դեպի նոր իշխանությունները և Խորհրդային Ռուսաստանը, իսկ նրանից պահանջում էին վերջին ունեցվածքը՝ «Կարմիր բանակին», «Ընկեր Լենինին»,

---

[487] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1158, թ. 28:
[488] Նույն տեղում, ֆ. 1022, ց. 5, գ. 373, թ. 1:
[489] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, էջ 8:
[490] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը...Հայաստանում, էջ 421:

«Պիտերի և Մոսկվայի պրոլետարիատին» որպես «եղբայրական օգնություն» տրամադրելու համար:

Ասպասելով ժողովրդի «պրոլետարական» ըմբոստանը, հրամանները հրապարակելուց անմիջապես հետո, Հեղկոմը բռնում է գյուղացիության կողոպուտի ոտին: Հեղկոմի օրինակին են հետևում նաև կարմիրբանակայինները, օգտվելով տեղական իշխանությունների թուլությունից, նրանք կամայականորեն թալանում են ժողովրդի վերջին ունեցվածքը: Ապօրինություններն այնպիսի ծավալներ են ընդունում, որ դրանք կանխելու նպատակով ՀՍԽՀ ռազմգործժողկոմ Ավիս Նուրիջանյանը ստիպված է լինում դեկտեմբերի 28-ին հրապարակված հատուկ հրամանով պահանջել, որպեսզի «բռնագրավումները կատարվեն միայն տեղական Հեղկոմների միջոցով»:[491] Այսպիսով, հրամանը միտված էր ոչ թե աշխատավոր ժողովրդի շահերը պաշտպանելուն, այլ միայն՝ բռնագրավումները «օրինականացնելուն»:

Հայաստանում կիրառելով ռուսական փորձը, ՀՍԽՀ իշխանությունները հարձակման անցան նաև մասնավոր սեփականության, կապիտալի դեմ՝ անկանոն կերպով ազգայնացնելով և պետականացնելով երկրի բնական հարստությունները. հողերը, ջրերը, անտառները, ինչպես նաև դրամատները, գործարանները, խանութները, դեղատները, հոգևոր հաստատություններին պատկանող կրթամշակութային օջախները և այլն: Նոր իշխանությունները ռազմական դրության մեջ հայտարարեցին երկաթուղին, ավտոտրանսպորտը, ռադիոկայանները, փոստ-հեռագիրը, հեռախոսը և այլն:[492]

1920 թ. դեկտեմբեր - 1921 թ. հունվար ամիսներին Հայհեղկոմի կողմից ընդունված մի շարք դեկրետներով ու հրամաններով Խորհրդային Հայաստանում փաստորեն հաստատվեց «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, որը դեռևս շարունակվում էր կիրառվել Խորհրդային Ռուսաստանում: Եվ դա միանգամայն սպասելի էր՝ տնտեսական քաղաքականության մեջ նույնպես հայ բոլշևիկների համար ուղեցույց էր լինելու Ռուսաստանի փորձը:

Հայհեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 21-ի դեկրետով Խորհրդային Հայաստանում պարտադիր են հռչակվում ՌՍՖՍՀ օրենքները՝ «Այն փոփոխություններով ու լրացումներով, որ կմտցնի Հայաստանի Հեղկոմը և այլ իրավասու իշխանությունները»:[493] Սակայն, ինչպես ճիշտ

---

[491] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ I, էջ 31:
[492] Տե՛ս նույն տեղում:
[493] Նույն տեղում, էջ 25:

նկատում է խորհրդային պատմաբան Բ. Բորյանը, լավատեղյակ չլինելով այդ օրենքներին, Հեղկոմը փաստորեն անց էր կացնում սեփական «հեղափոխական և չգրված օրենքները» և, ըստ էության՝ դեկտեմբերի 21-ի դեկրետը «ուներ ավելի շուտ քաղաքական, քան թե գործնական նշանակություն»:[494]

Հեղկոմի վարած «անկանոն» և առանց «դասակարգային որևէ սկզբունքի» բռնագրավումների քաղաքականությունը վերը նշվածի հետևանքն էր: Հայաստանի խորհրդային իշխանությունները ռազմական կոմունիզմի քաղաքականության «ռուսական շաբլոնը» մեխանիկորեն կրկնեցին Հայաստանում, այն ոչ միայն չէր համապատասխանում երկրի սոցիալ-տնտեսական պայմաններին, չէր բխում ժողովրդի շահերից, այլև՝ կիրառվեց հապճեպ, բազմաթիվ թերություններով և կոպիտ սխալներով, առանց նկատի առնելու Հայաստանի առանձնահատկությունները, ակնառու տարբերությունները տարածքային, մարդկային ներուժով և նյութական պաշարներով անհամեմատ հարուստ և առավել զարգացած Ռուսաստանից: Խորհրդային Հայաստանում ռազմական կոմունիզմի քաղաքականությունն արտահայտվեց սոսկ պետականացումներով, բռնագրավումներով, ժողովրդի կողոպուտով: Այն էլ ավելի խորացրեց ճգնաժամային իրավիճակը Հայաստանում, վարկաբեկեց ինչպես խորհրդային իշխանությունը, այնպես էլ Խորհրդային Ռուսաստանը ժողովրդի աչքում:

Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը դարձավ բոլշևիկների կողմից իրականացվող առաջին լայնամասշտաբ կոմունիստական փորձարկումը, որը ծանր հետևանքներ ունեցավ խորհրդային հանրապետությունների, այդ թվում և Հայաստանի, տնտեսության և բնակչության համար:

Խորհրդային Հայաստանում մտածված, երկրի առանձնահատկություններից բխող քաղաքականություն կենսագործելու, մասնավորապես, պետական կառավարման նոր համակարգը ձևավորելու խնդիրը կախված էր կուսակցական փորձառու կադրերի և արհեստավարժ մասնագետների առկայությունից: Գիտակցելով, որ այդպիսիք Հայաստանում շատ քիչ են, իսկ առանց որակյալ կադրերի անհնար է իրականացնել լուրջ վերափոխումներ պետական շինարարության ասպարեզում՝ իր իշխանության առաջին իսկ օրերից Հայհեղկոմը Ռուսաստանի իշխանություններին է դիմում Հայաստան կուսակցական հմուտ կադրեր ուղարկելու խնդրանքով: Նման կոչով հանդես եկավ

---

[494] Տե՛ս Борьян Б., նշվ. աշխ., էջ 128, 158:

նաև Գ. Օրջոնիկիձեն, դեկտեմբերի 4-ին Մոսկվա ուղարկած հեռագրում նա նշում է. «Անհրաժեշտ է հայ կոմունիստներին Մոսկվայից ուղարկել Հայաստան: Անմիջապես ուղարկեք Տեր-Գաբրիելյանին»:[495]

Արագ արձագանքելով խնդրանքներին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն 1920 թ. դեկտեմբերի 4-ին հանձնարարում է Կենտկոմի Կազմակերպչական բյուրոյին Հայաստան գործուղելու համար անհապաղ հավաքագրել առավելագույն քանակի հայ կոմունիստների:[496] Կենտկոմի Կազմբյուրոյի 1920 թ. դեկտեմբերի 10-ի որոշումով Խորհրդային Հայաստան են գործուղվում պետական և կուսակցական հայազգի մի շարք գործիչներ:[497] Սակայն պետք է նշել, որ վերջիններիս հոսքը «աշխարհից կտրված գաղթականների հանրապետություն» ընթանում էր շատ դանդաղ: 1921 թ. հունվարի 15-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմ ուղղված նամակում անդրադառնալով հարցին, Մոսկվայում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանը ցավով հուշում է. «Այդ պատվամոլ հասարակությունը ցանկանում է ունենալ (Հայաստանում – Կ.Խ.) «ժողկոմից» ոչ ցածր պաշտոն և զգալով, որ հազիվ թե իրենց հաջողվի «ժողկոմներ» դառնալ, տարբեր հիմնարկություններում իրենց համար ապահովել են ամրացագրեր (броня)»: Տեր-Գաբրիելյանը միաժամանակ նշում է, որ «այդպիսիների շարքին, իհարկե, չեն պատկանում ընկ. ընկ. Մյասնիկյանը, Լուկաշինը և Կարինյանը»: Շարունակելով իր միտքը, Տեր-Գաբրիելյանը հայտնում է, որ շատերին, իհարկե, հնարավոր է շատ հեշտությամբ ամրակազերծել (разбронировать) և գործուղել Հայաստան, սակայն գտնում է, որ դա անել հարկավոր չէ, քանզի ստիպողաբար Հայաստան ուղարկված լինելով, նրանք կարող են էլ ավելի շիկացնել Հայաստանի կոմկուսի ղեկավարության ներսում տիրող անհաշտ մթնոլորտը:[498] Կարծում ենք, որ այս հարցում Տեր-Գաբրիելյանը միանգամայն ըրջախոհ էր և իրավացի:

Ս. Տեր-Գաբրիելյանի ղեկավարած Հայաստանի լիազոր ներկայացուցչությունը Մոսկվայում մեծ աշխատանք էր կատարում Ռուսաստանի կառավարությունից ֆինանսական միջոցներ և այլ օգնություն ձեռք բերելու և Հայաստան հասցնելու գործում: Հիշատակված

---

[495] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 368, թ. 1:
[496] Նույն տեղում, հավաքածու 1, գ. 2, թ. 178:
[497] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը... Հայաստանում, էջ 421-422:
[498] ՀԱԱ, ֆ. 4049, ց. 1, գ. 7, թ. 5:

նամակում Տեր-Գաբրիելյանը տեղեկացնում է, որ ՌԿ(բ)Կ Կենտկոմից Հայաստանի համար պահանջել է 2 մլն. արշին մանուֆակտուրա, դեղորայք, 1 մլն. ռուբլի արժողությամբ արտարժույթ, և հուշում, որ պահանջները մասամբ բավարարվել են: Միաժամանակ, Տեր-Գաբրիելյանը ՀԿ(բ)Կ Կենտկոմի ուշադրությունն է հրավիրում այն փաստի վրա, որ Աղրբեջանին չվիրավորելու համար «Կենտկոմը որոշել է մանուֆակտուրա մատակարարել նաև նրան», և խորհրդային երկու հանրապետություններին ընդհանուր հաշվով տրամադրել՝ 3.5 մլն. արշին: Նկատի ունենալով Հայաստանի առավել թշվառ դրությունը, որոշվում է օգնությունը բաշխել հետևյալ չափերով. Հայաստանին՝ 2, Աղրբեջանին՝ 1.5 մլն.: «Տեղեկանալով այդ մասին և ձգտելով չառաջացնել աղրբեջանցիների դժգոհությունը, - շարունակում է Տեր-Գաբրիելյանը, - ընկ. Ստալինը բողոքարկեց նման բաշխումը Կենտկոմի Կազմբյուրոյում»: Ստալինը հասնում է իր նպատակին՝ Կազմբյուրոն վերանայում է նախկին որոշումը և Հայաստանին հատկացնում՝ 1.5, իսկ Աղրբեջանին՝ 2 մլն. արշին մանուֆակտուրա:[499] Չթաքցնելով իր զայրույթը և հուշելով, որ «այդքան էլ հաճելի չէ թալանել այնտեղ, որտեղ յուրաքանչյուր թելիկ հաշվառման է ենթարկված», Տեր-Գաբրիելյանը միանշանակ և անկեղծորեն հայտարարում է. «Բայց չէ՞ որ Հայաստանի մատակարարումը ոչ թե բարերարություն է, այլ քաղաքական հայտնի հաշվարկ: Խորհրդային Հայաստանի դերը Արևելքում թեև ոչ այդքան, բայց, այնուամենայնիվ, այստեղ ընդունվում է»:[500]

Վերոնշյալ նամակից տեղեկանում ենք նաև, որ Հայաստանի լիազոր ներկայացուցիչը ցանկանում էր ապրանքաշրջանառություն կազմակերպել Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև: Տեր-Գաբրիելյանը Հայաստանի իշխանություններից փորձում էր պարզել, թե «Հայաստանն ի՞նչ քանակությամբ հումք ունի, և ի՞նչ կարելի է այնտեղից արտահանել»: Նա խորհուրդ է տալիս՝ հնարավորության դեպքում, Հայաստանից Ռուսաստան վերադարձվող դատարկ վագոններով ուղարկել «բամբակով, սպիրտով և այլ ապրանքներով բեռնված գոնե մեկ գնացք»:[501]

Սակայն իրականացնել Տեր-Գաբրիելյանի այդ մտահղացումը Հայաստանի իշխանություններն անկարող էին, քանզի 1921 թ. ձմռանը նրանք բացառապես մտահոգված էին երկրի ներքաղաքական լար-

---

[499] ՀԱԱ, ֆ. 4049, ց. 1, գ. 7, թթ. 1-2:
[500] Նույն տեղում. թ. 3:
[501] Նույն տեղում:

ված իրավիճակով, խորհրդային բանակի կարիքները գոնե մասամբ հոգալու բարդ խնդրով: 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Ա. Գեկկերին 1921 թ. փետրվարի 1-ին ուղղված զեկուցագրում ՀՍԽՀ կարմիր զորքերի հրամանատար Մ.Վ. Մոլկաչանովը հայտնում է, որ «Խորհրդային իշխանությունը Հայաստանում ստացել է ոչ միայն շարքային, այլև տնտեսական կողմից բայբայված բանակ», և նրա «վերակազմավորման հաջողությունը, նրա նյութական բարեկեցության բարձրացումը կախված է նրանից, թե որքան օգնություն կտրամադրի 11-րդ Կարմիր բանակը»:[502]

Խորհրդայնացումից հետո առաջին օգնությունը Հայաստան հասավ միայն 1921 թ. հունվարի սկզբին, այն տրամադրված էր 11-րդ Կարմիր բանակի կողմից և գրեթե ամբողջությամբ սպառվեց ինչպես նրա, այնպես էլ հայկական Կարմիր բանակի զորամիավորումների կարիքները հոգալու համար: Այդ մասին տեղեկանում ենք Վրաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Ա. Շեյնմանի և ՀՍԽՀ արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանի միջև տեղի ունեցած հետևյալ երկխոսությունից: Հեռագրակապի միջոցով Շեյնմանից ստացած այն հարցին, թե «ու՞մ եք պատրաստվում տրամադրել ստացած ութ վագոն հացահատիկը», Ալ. Բեկզադյանը պատասխանում է. «Մեր պարենավորման կազմակերպությունը դեռևս բացառապես աշխատում է նրա (բանակի - Կ.Խ.) համար, բնակչությանը մենք ոչինչ չենք մատակարարում»:[503]

Հարկ է նշել, որ 11-րդ Կարմիր բանակի կողմից տրամադրված օգնությամբ բեռնված գնացքը մեծ դժվարություններով հասավ հասցեատիրոջը: Ալեքսանդրապոլի գավառային հեղկոմի նախագահ Մ. Տեր-Գրիգորյանցի (Արծվիկ) 1920 թ. դեկտեմբերի 29-ին հեռագրից, ուղղված ՀՍԽՀ ներքին գործերի ժողկոմին, տեղեկանում ենք, որ թուրքական բանակի կողմից զինագրավված Ալեքսանդրապոլ քաղաք դեկտեմբերի 28-ին ժամանած գնացքին թուրքերը չեն թույլատրել ուղևորել դեպի Երևան: Տեր-Գրիգորյանցը հայտնում է, որ դժվարին բանակցություններից հետո միայն թուրքական հրամանատարությունը համաձայնվեց թույլատրել գնացքի երթևեկությունը՝ այն էլ պայմանով, որ պետք է ստուգման ենթարկի բոլոր վագոնների պարունակությունը: Ըստ Տեր-Գրիգորյանցի, նա ընդդիմանում է սանձարձակ այդ պահանջին և հայտարարում, որ «նման իրավունքով օժտված է միայն

---

[502] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 197, թ. 1:
[503] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 50, թթ. 6-7:

ՌՍՖԽՀ 11-րդ բանակի ներկայացուցիչը»: Հանդիպելով Տեր-Գրիգորյանցի կողմից դրսևորված համառությանը, թուրքական զինվորական հրամանատարությունը հրաժարվում է ստուգումից, փոխարենը՝ պահանջում իրենց թողնել մեկ ցիստեռն նավթ: Այս պահանջը նույնպես մերժվում է, բայց թուրքերն այնուամենայնիվ բռնագրավում են նավթի ցիստեռնը և հայտարարում, որ «դա կատարվում է համաձայն ընկ. Մդիվանու կարգադրության»: Տեր-Գրիգորյանցի զեկուցագրից հետևում է, որ նա պահանջել է թույլատրել իրեն հեռախոսով կապվել Մդիվանու հետ և պարզել, թե վերջինս արդյո՞ք նման կարգադրություն է իջեցրել: Թուրքերը կտրուկ մերժում են Տեր-Գրիգորյանցի պահանջը և լկտիաբար պատասխանում, «որ իրենք վերցնում են, իսկ հետո միայն, Մդիվանին ուր որ պետք է ուղարկում է իր կարգադրությունը»: Զեկուցագրի վերջում Ալեքսանդրապոլի հեղկոմի նախագահը իր վճռական բողոքն է հայտնում թուրքերի կողմից գավառում իրականացվող կողոպուտի և վայրագությունների դեմ:[504]

Դեպի Խորհրդային Հայաստան երկաթուղային բեռների անարգել փոխադրմանը շարունակում էին խոչընդոտել վրացական իշխանությունները: Այդ մասին տեղեկանում ենք Վրաստանում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյանի 1921 թ. հունվար ամսով թվագրված հեռագրից Հայհեղկոմին: Շահվերդյանը հայտնում է, որ պատրաստակամություն հայտնելով պարենով բեռնված մեկ գնացք Աղրբեջանից բաց թողնել Հայաստան, վրացական իշխանությունները «կտրականապես մերժում են» բաց թողնել վառելիքով բեռնված ցիստեռները: Հայաստանի լիազոր ներկայացուցիչը հուշում է, որ Վրաստանի արտգործնախարար Սաբախտարաշվիլին դա կապում է «Աղրբեջանի կողմից Վրաստանին վառելանյութ չտրամադրելու խնդրի հետ»:[505]

Արխիվային փաստաթղթերից պարզ է դառնում, որ առկա էր ևս մեկ հանգամանք, որ բացահայտվելու դեպքում՝ կարող էր հնարավորություն ընձեռել վրացական կողմին խոչընդոտելու իր տարածքով գնացքների տարանցմանը դեպի Հայաստան: 1921 թ. փետրվարի 7-ին Դ. Շահվերդյանը Ա. Շեյնմանի ուշադրությունն է հրավիրում հետևյալի վրա. «Այն դեպքում, երբ վրացական իշխանություններից ես պահանջում եմ բեռների անարգել փոխադրման իրավունք Հայաստանի բնակչության համար», պարզվում է, որ Հայաստան ուղևորվող վերջին

---

[504] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թ. 15:
[505] Տե՛ս ԲՀԱ, Երևան,1965, թիվ 3, էջ 5-6:

բեռնատար գնացքի փաստաթղթերը ձեռակերպված էին 11-րդ Կարմիր բանակի կողմից: «Եթե վրացական իշխանություններին հայտնի դառնա, որ Հայաստանի բնակչությանը պարեն մատակարարելու պատրվակով ես իրականում հոգում եմ 11-րդ բանակի համար, - հուշում է Ծահվերդյանը, - ապա վերջիններս օրինական հիմք կունենան վերջնականապես հաստատել Հայաստանի շրջափակումը»: Ծահվերդյանը թախանձագին խնդրում է միջոցներ ձեռնարկել՝ նման դեպքերը հետագայում կանխելու և բացառելու համար:[506]

Այսպիսով, այն չնչին օգնությունը, որ խորհրդային իշխանության առաջին ամիսներին (մինչև փետրվարյան ապստամբությունը) մեծ դժվարություններով հասնում էր Հայաստան, հիմնականում տրամադրվում էր Կարմիր բանակին, բանզի նրա մատակարարումը համարվում էր հարվածային և կատարվում առաջին հերթին: Արդարության համար պետք է նշել, որ խորհրդային իշխանությունները մտահոգված էին նաև Հայաստանի բնակչության համար օգնություն հասցնելու խնդրով: Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին 1921 թ. փետրվարի 6-ին ուղղված հեռագրում Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Չիչերինը հուշում է, որ իրենք խորը հուզմունքով են հետևում Հայաստանի ծանր դրությանը, և չնայած նրան, որ «կապի անբավարարությունը ծանր է անդրադառնում հայկական խորհուրդներին բոլոր տեսակետներից լիակատար ու բազմակողմանի օգնություն և աջակցություն ցույց տալու վրա՝ կանենք ամեն բան, որքան ներում են մեր ուժերը՝ Խորհրդային Հայաստանի եղբայրական աշխատավոր մասսաներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար»:[507] Իսկ հաջորդ օրը, փետրվարի 7-ին, հայտնելով Ի. Ստալինին, որ Բ. Լեզրանից ստացած հավաստի տեղեկությունների համաձայն՝ Հայաստանի համար հնարավոր է պարեն գնել Իրանի Մակուի խանությունից, Գ. Չիչերինը հույժ անհրաժեշտ է համարում «խորհրդային հանրապետության փրկության համար բռնել այդ ճանապարհը»:[508] Փետրվարի 8-ին հաղորդելով այդ մասին նաև ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի քարտուղար Գ. Օրջոնիկիձեին, Չիչերինը հուշում է. «Մեզ համար Խորհրդային Հայաստանի պարենավորման հարցն առաջին տեղում է»:[509]

---

[506] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 42, թ. 30:
[507] ДВП СССР, т. III, с. 508.
[508] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 7, թ. 31:
[509] Նույն աղբյուր, ֆ. 1022, ց. 3, գ. 330, թ. 2:

Օրջոնիկիձեի դրական արձագանքը չի հապաղում, բայց նա միաժամանակ հուշում է, որ Իրանից գնումներ կատարելու համար անհրաժեշտ կլինի ոսկի: Փետրվարի 11-ին Օրջոնիկիձեին ուղարկած հեռագրում Չիչերինը հուշում է խնդրի լուծման ճանապարհը. «Իսկ ինչո՞ւ չօգտագործել Ձեզ մոտ եղած արծաթյա կրոնները և թումաններ-ը: Դատասխանեք անմիջապես»:[510] Փետրվարի 12-ին դարձյալ Օրջոնիկիձեին ուղղված հեռագրում մեկ անգամ ևս շեշտելով Մակուի խանությունից Հայաստանին մատակարարելու կարևորությունը, Չիչերինը նշում է, որ եթե դա հաջողվի՝ ապա Վրաստանից դեպի Հայաստան ազատ տարանցման իրավունք ստանալու հարցը կկորցնի իր հրատապությունը: Չիչերինը հուշում է նաև, որ «Այդ պատճառով էլ մենք խնդրով այդքան մտահոգված ենք»:[511]

Սակայն Հայաստանում 1921 թ. փետրվարի կեսերին տեղի ունեցած ապստամբությունը և խորհրդային իշխանության տապալումը բացառեցին Մակուի խանությունից Հայաստանի բնակչության համար հացահատիկ և պարենամթերք գնելու՝ Ռուսաստանի իշխանությունների մտահոգացման գործնական իրականացումը:

Փաստերը վկայում են, որ Ռուսաստանի իշխանությունները մտահոգ էին Խորհրդային Հայաստանին պարենամթերք և առաջին անհրաժեշտության ապրանքներ մատակարարելու խնդրով, այլ հարց է, թե որքանով էր դա նրանց հաջողվում:

Այսպիսով, եթե Հայաստանի խորհրդայնացումով հայ ժողովրդի մի հատվածը փրկվեց ֆիզիկական բնաջնջման թուրքական սպառնալիքից, ապա խորհրդային իշխանության առաջին ամիսներին նրա սոցիալ-տնտեսական դրությունն էլ ավելի վատթարացավ: Խորհրդային իշխանությունների կողմից խոստացված տնտեսական առատ օգնության փոխարեն Հայաստան մտավ վատ հանդերձավորված և ընչաքաղց Կարմիր բանակը, իսկ կոմունիստ հայերը Խորհրդային Հայաստանում հաստատեցին բռնությունների և բռնազրավումների վրա հիմնված բոլշևիկյան մենատիրություն:

---

[510] ՀԱԱ, ֆ. 1022. ց. 3, գ. 330, թ. 4:
[511] Նույն տեղում, թ. 5:

2. Հայ-ռուսական տնտեսական հարաբերությունները և Խորհրդային Ռուսաստանի օգնությունը 1921-1922 թվականներին

1921 թ. փետրվարյան ապստամբության արդյունքում Հայաստանում խորհրդային կարգերի տապալումը, բազմաթիվ զինված հակախորհրդային ելույթները Ռուսաստանում, որոնք նույնպես սպառնում էին խորհրդային իշխանության գոյությանը, սթափ ներգործություն ունեցան Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության ղեկավարության վրա, հարկադրեցին առավել մտահոգվել քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումներ իրականացնելու, աշխատավոր ժողովրդի ուսերի վրա դրված ծանր բեռը թեթևացնելու, «ազգային ծայրամասերի հետամնացությունը վերացնելու» խնդիրներով:

1921 թ. մարտի 8-ից - 16-ը Մոսկվայում հրավիրված ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարը մի շարք արմատական որոշումներ ընդունեց նշված խնդիրների վերաբերյալ: Համագումարը հավանության արժանացրեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղաքական հաշվետվության և Վ. Լենինի՝ «Պարենմասնատրումը պարենհարկով փոխարինելու», ծրագրային զեկուցման հիման վրա մշակած նոր տնտեսական քաղաքականությունը (ՆԷՊ-ը), և ընդունեց համապատասխան որոշում: ՆԷՊ-ով նախատեսված տնտեսական բարեփոխումների առանցքն էր կազմում պարենմասնատրումը ֆիքսված պարենային հարկով փոխարինելը, սահմանվում էր առևտրի և գների ազատականություն: Փաստորեն՝ գյուղացուն հնարավորություն էր տրվում պետությանը հարկ վճարելուց հետո սեփական բերքի մնացորդը տնօրինել սեփական հայեցողությամբ՝ վաճառել, փոխանակել արդյունաբերական ապրանքների հետ և այլն: Տնտեսական այս նոր համակարգը կարգավորելու և խթանելու էր ապրանքադրամային հարաբերությունները գյուղի և քաղաքի միջև, շուկայական հարաբերությունների հիման վրա շահագրգռելու էր գյուղացու անձնական հետաքրքրությունը սեփական տնտեսությունը զարգացնելու գործում: Ինչպես նշված միջոցառումները, այնպես էլ նախատեսվող հողային ռեֆորմը, կոոպերացիայի արմատավորումը վերջ էին դնելու ռազմական կոմունիզմի քաղաքականությանը, հնարավորություն էին տալու կասեցնել տնտեսության անկումը և անցնել նրա ամրողջական վերականգնմանն ու զարգացմանը:

ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարը ընդարկեց նաև «Ազգային հարցը»: Կենտկոմի անունից զեկուցումով հանդես եկավ ՌՍՖԽՀ ազգությունների գործերի ժողկոմ Ի. Ստալինը: Զեկուցման մեջ արձանագրելով, որ ներկայումս գոյություն ունի տարբեր ազգությունների զարգաց-

ման ակնառու «անհավասարություն», Ստալինը շեշտեց, որ այն «պետք է հաղթահարվի հետամնաց ազգություններին տնտեսական, քաղաքական և մշակութային օգնություն ցույց տալու ճանապարհով»:[512] Արձանագրվեց նաև, որ «ՌՍՖԽՀ տնտեսական քաղաքականությունն իրականացնելիս պարտադիր կերպով հարկավոր է նկատի ունենալ տնտեսական դրության այն բոլոր առանձնահատկությունները, որոնց մենք հանդիպեցինք ծայրամասերում»:[513]

Ստալինի զեկուցման հիման վրա համագումարի կողմից ընդունված՝ «Ազգային հարցում կուսակցության ընթացիկ խնդիրների մասին», բանաձևում նշվեց, որ «Ներկայումս կուսակցության խնդիրն է՝ օգնել ոչ-վելիկոռուսական ժողովուրդների աշխատավոր զանգվածներին հասնել առաջ անցած կենտրոնական Ռուսաստանին»:[514] Կարծում ենք, որ չափազանց կարևոր այս թեզը, և նրա գործնականում իրականացումը մեծ դեր խաղաց խորհրդային բոլոր հանրապետությունների սոցիալ-տնտեսական զարգացման գործում խորհրդային ամբողջ ժամանակաշրջանում:

1921 թ. գարնանից Ռուսաստանի կառավարությունը գործուն միջոցներ ձեռնարկեց Խորհրդային Հայաստանին օգնություն հատկացնելու ուղղությամբ: Հայաստանին ֆինանսական միջոցներ բաց թողնելու հարցը լայն քննարկման առարկա դարձավ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի մարտի 29-ի նիստում: Որոշվեց ստեղծել Հայաստանին պարենամթերքով մատակարարելու հատուկ լիազորություններով օժտված հանձնաժողով, և հանձնարարել նրան համագործակցել Կովկասյան բյուրոյի և Աղբրեջանի հետ՝ «Հայաստանի սովյալ բնակչությանը պարեն հասցնելու նպատակով»:[515] Հաջորդ օրը՝ մարտի 30-ին, հանձնաժողովն իր անդրանիկ նիստում քննարկում է հանձնաժողովում Հայաստանի ներկայացուցիչներ Ս. Տեր-Գարրիելյանի և Ալ. Բեկզադյանի գրավոր զեկուցումը, ինչպես նաև վերջինիս լրացուցիչ հայտարարությունը՝ Հայաստանի կարիքների մասին: Որոշվում է մասամբ բավարարել ներկայացրած պահանջները և խնդրել ՌՍՖԽՀ պարենժողկոմատին Հայաստանին ապահովել ամսական 50 հազար փութ հացով: Որոշվում է նաև՝ Իրանի Մակուի խանությունում հացահատիկի գնումներ կատարելու համար Հայաստանին հատկացնել կես

---

[512] Десятый съезд РКП(б). Стенографический отчет, с. 182.
[513] Նույն տեղում, էջ 185:
[514] Նույն տեղում, էջ 603:
[515] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 3, թ. 63:

միլիոն ռուբլի (ոսկով): Այնուհանդերձ, հանձնաժողովի հայ ներկայացուցիչները դժգոհ մնացին Հայաստանին հատկացված օգնության չափերից և բողոքարկեցին հանձնաժողովի կողմից ընդունված որոշումը: Հուշելով, որ կատարյալ աղետի եզրին հասած Հայաստանի համար տրամադրված օգնությունը չնչին է., Տեր-Գարրիելյանը և Բեկզադյանը հանդես եկան բավականին համարձակ մեղադրանքով, նրանք հայտարարեցին, որ հանձնաժողովի որոշումն «ունի *ավելի շուտ անհանդուրժելի կեղծ բարեգործության* (ընդգծումը մերն է - Կ.Խ.), քան թե՝ իրական օգնության բնույթ»:[516]

Տեղեկանալով հանձնաժողովի որոշումների մասին, Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Չիչերինը նույն օրը (մարտի 30-ին) նամակ է հղում Վ. Լենինին: Մտահոգություն հայտնելով Հայաստանի պարենավորման վերաբերյալ, նա Լենինին հուշում է, որ հենց պարենի «պակասը հայկական զանգվածներին նորից շրջեց դեպի դաշնակները (նկատի ունի 1921 թ. փետրվարյան ապստամբությունը – Կ.Խ.)», իսկ «Հայաստանի քաղաքական նշանակությունը պարզվեց Թուրքիայի հետ մեր վերջին բանակցությունների ժամանակ»: Չիչերինը հայտնում է նաև, որ Հայաստանում զանգվածային սովամահության դեպքերը կարող են հանգեցնել համաճարակային հիվանդությունների բռնկմանը, ինչը «վտանգավոր է նաև Կարմիր բանակի համար, եթե ոչ ավելին»: Տեղեկացնելով Լենինին, որ հանձնաժողովը որոշել է Հայաստանին հատկացնել ամսական ընդամենը 50 հազար փուդ հացահատիկ (չերաշխավորելով որոշման հստակ կատարումը), այն դեպքում, երբ Հայաստանի ներկայացուցիչները խնդրել են 275 հազար, ինչը Հայաստանի համար կազմում է նվազագույն ամսական չափաբաժին, Ռուսաստանի արտգործժողկոմը Լենինի ուշադրությունն է հրավիրում Հայաստանի մատակարարման հարցի լրջության և հույժ կարևորության վրա:[517]

Վ. Լենինին ուղղված Չիչերինի այս նամակը նպաստում է, որպեսզի Հայաստանին տրամադրվելիք ֆինանսական օգնության չափերը ավելացվեն: 1921 թ. ապրիլի 3-ին հանձնաժողովը որոշում է կես միլիոնի փոխարեն՝ Հայաստանին բաց թողնել 1.5 մլն. ռուբլի (ոսկով) և հարցի վերջնական լուծումը փոխանցել Կենտկոմի քաղբյուրո: Նշենք, որ հանձնաժողովի ապրիլի 3-ի նիստին մասնակցում էր նաև Ալեքսանդր Մյասնիկյանը:

---

[516] ՀԱԱ, հավաքածու 1, գ. 3, թ. 71:
[517] Տե՛ս նույն տեղում, գ. 7, թ. 33:

Հանձնաժողովի զեկուցումը քաղաքականը քննարկում է ապրիլի 8-ին և հավանություն տալիս նրա ընդունած որոշումներին, Կենտկոմի քարտուղար Վ. Մոլոտովին հանձնարարվում է վերահսկել որոշման կատարումը:[518]

Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների քաղաքական և սոցիալ-տնտեսական դրության բարելավման դժվարին խնդիրը մշտապես գտնվում էր ՌՍՖՍՀ կառավարության նախագահ Վ. Լենինի ուշադրության կենտրոնում: 1921 թ. ապրիլի 9-ին տեղեկացնելով Դ. Օրջոնիկիձեին, որ «Մի քիչ ոսկի ենք տվել Հայաստանին, հաստատել ենք պարենժողկոմին տրվող ամեն տեսակ հանձնարարությունները», Ռուսաստանի կառավարության նախագահը միաժամանակ հուշում է. «Բայց ես պետք է նախազգուշացնեմ, որ այստեղ մենք մեծ կարիքի մեջ ենք և անվերջ օգնել չենք կարող»:[519] Ռոստովում ՌՍՖՍՀ պարենժողկոմատի լիազոր Ֆրունկինին ապրիլի 11-ին ուղղված հեռագրում Լենինը պահանջում է «Ամենավճռական միջոցները ձեռնարկել Աղրբեջանին, Վրաստանին, Հայաստանին մատակարարելու ուղղությամբ, և մեկ օր անց զեկուցել նրանց մատակարարման ընթացքի ու փաստացի առաքումների մասին»:[520]

«Աղրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Լեռնականների հանրապետությունների կոմունիստ ընկերներին» 1921 թ. ապրիլի 14-ի նամակում Լենինը հանգամանալից անդրադարձավ Կովկասյան հանրապետությունների տնտեսությունը արագ վերականգնելու և զարգացնելու խնդիրներին: Նա խորհուրդ է տալիս տեղի կոմունիստներին «Հասկանալ իրենց հանրապետությունների դրության յուրահատկությունը, ի տարբերություն ՌՍՖՍՀ-ի դրության ու պայմանների, հասկանալ մեր տակտիկան նույնությամբ չընդօրինակելու, այլ մտածված կերպով կոնկրետ պայմաններին համապատասխան այն ձևավորելու անհրաժեշտությունը»: «Ավելի դանդաղ, ավելի զգույշ, ավելի սիստեմատիկ անցում դեպի սոցիալիզմ»: Լենինը խորհուրդ է տալիս ժողովրդի նկատմամբ դրսևորել «ավելի մեղմություն, զգուշություն, զիջողականություն»:[521] Ցավալի է, բայց Հայաստանում խորհրդային իշխանության առաջին ամիսներին կոմունիստ հայերն այս ամենն անտեսել էին, և տնտեսական ոլորտում նույնպես մեխանիկորեն կիրառեցին Խորհր-

---

[518] ՀԱԱ, հավելված 1. գ. 3. թթ. 72-73:
[519] Լենին Վ.Ի., ԵԼԺ, հ. 52, էջ 156:
[520] Նույն տեղում, էջ 447:
[521] Նույն տեղում, հ. 43, էջ 237-240:

դային Ռուսաստանի փորձը, առանց հաշվի առնելու Հայաստանի դրության բազում «յուրահատկությունները»:

Հայաստանում խորհրդային իշխանությունն ամրապնդելու նպատակով 1921 թ. գարնանը ՌԿ(բ)Կ Կենտկոմը Հայաստան գործուղեց մի շարք փորձառու և հեղինակավոր պետական և կուսակցական հայազգի գործիչների՝ Ալեքսանդր Մյասնիկյանի և Սարգիս Լուկաշինի (Սրապիոնյան) գլխավորությամբ: Հետաքրքիր է վերջինիս Հայաստան գործուղելու որոշման հետ կապված հետևյալ միջադեպը:

Սարգիս Լուկաշինը կուսակցական հմուտ գործչի մեծ համբավ էր վայելում Ռուսաստանում, և նրան Հայաստան գործուղելու որոշումը դժգոհություն էր առաջացրել ՌԿ(բ)Կ Կենտկոմի Հարավ-Արևելյան կուսակցական կազմակերպությունում: 1921 թ. ապրիլի սկզբին Կենտկոմի Հարավ-Արևելյան բյուրոյի անունից բյուրոյի քարտուղար Ալ. Բելոբորոդովը հեռագրում է Մոսկվա՝ Վ. Մոլոտովին, որպեսզի չեղյալ հայտարարվի Լուկաշինի գործուղման որոշումը: Բյուրոն դա պատճառաբանում է նրանով, որ Լուկաշինը մեծ ջանասիրությամբ կարգի է բերում իր նախորդների կողմից երկրամասում կազմալուծված աշխատանքը, և դժվար է նրան համարժեք փոխարինում գտնելը: Խնդրանքի մերժման դեպքում՝ բյուրոն պնդում է, որ հարցը փոխանցվի Կենտկոմի քաղբյուրոյի քննարկմանը: ՌԿ(բ)Կ Կենտկոմի Հարավ-Արևելյան բյուրոյի խնդրանքը մերժվում է. ապրիլի 12-ին քաղբյուրոն վերահաստատում է Լուկաշինին՝ Հայաստան գործուղելու մասին որոշումը:[522]

Ներկայացրած փաստը վկայում է, թե որքան կարևոր էր Սարգիս Սրապիոնյան-Լուկաշինին և Ալեքսանդր Մյասնիկյանին Հայաստան գործուղելու մասին որոշումը: ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոյի որոշմամբ Մյասնիկյանը մտցվում է Կովկասյան և ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոների կազմ, նշանակվում Հայհեղկոմի նախագահ: 1921 թ. մայիսի 21-ին հրապարակված՝ Հայհեղկոմը ՀՍԽՀ Ժողովրդական կոմիսարների խորհուրդ վերակազմավորելու մասին, որոշումով Մյասնիկյանը նշանակվում է Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհրդի՝ կառավարության, նախագահ և, միաժամանակ, ռազմական գործերի ժողկոմ, իսկ Սրապիոնյան-Լուկաշինը՝ ՀՍԽՀ Ժողովրդական տնտեսության խորհրդի նախագահ:[523] Վերջինս ընտրվում է նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար:

---

[522] ՀԱԱ, հավելված 1, գ. 3, pp. 76-77:

[523] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը... Հայաստանում, էջ 528-529: Տե՛ս նաև Հեղկոմները Հայաստանում, էջ 60-61:

Ստանձնելով երկրի պետական ու կուսակցական ղեկավար բարձր պաշտոնները, և առաջնորդվելով ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարի որոշումներով ու Վ. Լենինի ցուցումներով, Ալ. Մյասնիկյանը և Ս. Լուկաշինը անցնում են հայրենանվեր աշխատանքի: Նրանք փորձելու էին կենտրոնական իշխանությունների կողմից հռչակված սոցիալ-տնտեսական նոր քաղաքականությունը համապատասխանեցնել Հայաստանի առանձնահատկություններին: Առաջ անցնելով նշենք, որ Ալեքսանդր Մյասնիկյանի և Սարգիս Սրապիոնյան-Լուկաշինի դերը Խորհրդային Հայաստանի կայացման և զարգացման գործում, կարծում ենք, անգնահատելի է:

Հայաստանում իր առաջին իսկ ծրագրային ելույթում, Հայկոմկուսի Երևանի կուսկազմակերպության և արհեստակցական միությունների միացյալ հանդիսավոր նիստում (1921 թ. մայիսի 9-ին), Ալ. Մյասնիկյանը ներկաներին համառոտ ծանոթացնում է ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարի հանգուցային որոշումների էությանը, նշում, որ «Մեր նոր գիծը ավելի շեշտակի պետք է ընդգծենք Հայաստանի համար: Մենք պետք է աշխատենք ավելի մեղմ միջոցներով»: Անդրադառնալով Ռուսաստանի օգնության խնդրին, Մյասնիկյանը շեշտում է. «Քաղցած Ռուսաստանը մեզ ինչ որ կարողանում է, տալիս է: Բայց այդ օգնությունը չի լրացնի մեր պետքերի 5 տոկոսը, մնում է մեր ներքին ուժերով հոգալ: Նույնը շեշտեց ընկեր Լենինը նրա հետ ունեցած վերջին խոսակցությանս մեջ»:[524] Մյասնիկյանն իրավացի էր, Ռուսաստանի օգնությունը չէր կարող անընդհատ լինել, ամբողջությամբ բավարարել Հայաստանի պահանջները, հարկավոր էր զարկ տալ սեփական արտադրության ծավալմանը:

Խորհրդային Հայաստանի ավերված տնտեսության վերելքն ապահովելու գործում նշանակալի դեր էր խաղալու նոր տնտեսական քաղաքականությունը, անցումը որին Հայաստանում տեղի ունեցավ աստիճանաբար: Նախ հարկավոր էր ապաքինել պատերազմների և քաղաքացիական կռիվների հետևանքով ժողովրդին ու տնտեսությանը հասցրած խորը վերքերը, և դրանից հետո միայն հարմարեցնել տնտեսական նոր քաղաքականությունը Հայաստանի առանձնահատկություններին:

Հայհեղկոմի 1921 թ. ապրիլի 10-ի և 16-ի դեկրետներով Խորհրդային Հայաստանում արգելվեցին բոլոր տեսակի բռնագրավումները,

---

[524] Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, էջ 332-338:

սահմանվեց առևտրի և գների ազատականացում:[525] Ինչ վերաբերում է հարկային նոր քաղաքականությանը, ապա անցումը նրան Հայաստանում կատարվեց որոշ ժամանակ անց՝ ՀՍԽՀ Ժողկոմխորհի 1921 թ. հունիսի 24-ի պարենհարկի մասին դեկրետով:[526] Ավելի քան երկամսյա ընդմիջումը պայմանավորված էր նրանով, որպեսզի գյուղացիությանը հնարավորություն տրվի շունչ քաշել, հարմարվել նոր իրավիճակին և անցնել խաղաղ աշխատանքի:

Այսպիսով, հետևելով Ռուսաստանի օրինակին, Հայաստանի իշխանությունները նույնպես հրաժարվեցին ռազմական կոմունիզմի անհեռատես քաղաքականությունից, որը, սակայն, հասցրել էր քայքայել երկրի տնտեսությունը: Անդրադառնալով ՆԷՊ-ի դերին Խորհրդային Հայաստանի տնտեսության վերականգնման և զարգացման ճանապարհին, Ալ. Մյասնիկյանն իրավացիորեն նշում է. «Եթե այսօր Ռուսաստանի քաղաքականությունը համարվում է նոր, այդ քաղաքականությունը հենց սկզբից պիտի կիրառվեր Հայաստանում»:[527]

Ինչպես նշվեց, Ռուսաստանի տրամադրած օգնությունը Հայաստան հասնում էր ընդհատումներով և չէր կարող լիովին բավարարել Հայաստանի պահանջները: Մտահոգված խնդրով, ՀՍԽՀ իշխանությունները ձգտում էին Խորհրդային Ռուսաստանի կառավարության տրամադրած ոսկով և Խորհրդային Աղրբեջանից ստացած նավթամթերքներով առևտուր և ապրանքափոխանակություն ծավալել արտասահմանի հետ: Նշենք, որ ապրիլի 14-ի նամակում Վ. Լենինն անդրադառնում էր նաև այդ հարցին, շեշտելով, որ Կովկասի հանրապետություններին անհրաժեշտ է «տնտեսապես միանգամից հենվել կապիտալիստական արտասահմանի հետ ապրանքափոխանակության վրա»:[528]

Հայաստանի համար պարենամթերք ձեռք բերելու գործում նպատակահարմար էր գնումներ և ապրանքափոխանակություն կատարել Իրանում՝ Մակուի խանությունում: Պետք է նշել, որ ինչպես անդրկովկասյան հանրապետությունները, այնպես էլ 11-րդ Կարմիր բանակի պարենավորման կազմակերպությունը Իրանի շուկաներում գործում էին առանձին-առանձին և հաճախ՝ իրենց իսկ շահերին ոչ ձեռնտու մրցակցություն ստեղծում, ինչն էլ խոչընդոտում էր հաջող և

---

[525] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պոսակ 2, էջ 12-13, 17:
[526] Նույն տեղում, էջ 61-62:
[527] Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, էջ 394:
[528] Լենին Վ.Ի., ԵԼԺ, հ. 43, էջ 239:

շահավետ առևտրին: Չգտնելով վերացնել նման իրավիճակը, ՌՍՖԽՀ 11-րդ բանակի պարենավորման պետը 1921 թ. մայիսի 12-ին հեռագրում է Հայաստանի հեղկոմին, պատճենը՝ 11-րդ բանակի պարենավորման լիազոր Ս. Բալանդինին. «Կրկին հաստատելով, որ Մակուի խանությունում մեր կողմից մթերված ամբողջ հացը սպառվելու է Հայաստանի սահմաններում՝ 11-րդ բանակի զորամասերին, հայկական բանակին, ինչպես նաև բնակչությանը մատակարարելու համար, և որ բնակչության մատակարարումը դրված է մեր վրա: Մակուի շուկայում զուգահեռ գործելուց և վնասակար մրցակցությունից խուսափելու համար խնդրում եմ՝ հացի մթերումը միավորել Բալանդինի ընդհանուր ղեկավարության ներքո: Ներկայիս պարենային դրության պայմաններում հարցի այլ լուծում լինել չի կարող»:[529]

Նշված նկատառումներից ելնելով, 1921 թ. հունիսի 1-ին Շախթախթի կայարանում առևտրական պայմանագիր է ստորագրվում մեկ կողմից՝ Կովկասյան ռազմաճակատի Ռազմհեղխորհրդի և ՌՍՖԽՀ կոոպերատիվների Յենտրոսոյուզի հատուկ լիազոր Ս. Բալանդինի, ՀՍԽՀ արտաքին առևտրի ժողկոմատի լիազոր ներկայացուցիչ Մ. Ղազարյանցի, մյուս՝ Մակուի խանության սարդար Մուրթազ-Ղուլի խանի միջև՝ Մակուի խանությունում հացահատիկի, անասունների և այլ ապրանքների գնումներ կատարելու մասին:[530] Պայմանագիրը թեև ստորագրվեց, բայց, առաջ անցնելով նշենք, որ սկսկսվող լայնածավալ առևտուրը միջոցների բացակայության և այլ պատճառներով ծավալում չստացավ: Հայ ժողովրդի հույսը դարձյալ մնում էր Խորհրդային Ռուսաստանի օգնության վրա:

Վերջինիս ծավալները գնալով ավելանում էին: 1921 թ. ապրիլ-հունիս ամիսներին Ռուսաստանի կողմից տրամադրված տնտեսական և ֆինանսական օգնությունը «Հայաստանի կառավարությանը հնարավորություն տվեց, - նշվում է 1921 թ. հունիսին հրապարակված ՀՍԽՀ Ժողկոմխորհի ամփոփագրում, - համեստ չափերով նախնական հարվածային աշխատանքներ սկսել ոռոգման համակարգը բարելավելու, որոշ ձեռնարկություններում աշխատանքները վերսկսելու, առավել տուժած գյուղական չքավորությանը հաց, սերմացու, գյուղատնտեսական գործիքներ և մանուֆակտուրա մատակարարելու ուղղությամբ: Մեր ներկայիս քաղաքականությունը բնակչության մեջ

---

[529] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 58, թ. 8:

[530] Восстановление народного хозяйства Арм.ССР. Материалы и документы за 1921-1929гг., Е., 1958, с. 413-414. Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 128, ց.1, գ. 1420, թթ. 20-21:

վստահություն է առաջացնում վաղվա օրվա նկատմամբ և մղում նրան ավերված տնտեսությունները վերականգնելուն ուղղված խաղաղ աշխատանքի»:[531]

Երկրի լավ ապագայի նկատմամբ վստահությունն օր օրի ամրապնդվում էր ոչ միայն Հայաստանի ղեկավարության և բնակչության, այլև օտար ափերում դեգերող և Հայրենիքի կարոտը զգող շատ հայերի մոտ: Հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը 1921 թ. հուլիսի 1-ին Վենետիկից Հովհաննես Թումանյանին ուղարկած մի նամակում գրում է. «Ինձ թվում է, որ այժմ Կովկասի վիճակը ավելի լավ պիտի լինի, քան անցյալ տարի, մանավանդ թշվառ Հայաստանի. գոնե հիմա դրությունը կայուն է... և թվում է, թե արտաքին վտանգը անցած է. ռուսական ուժի ներկայությունը կսանձե թշնամու ախորժակները»: Այնուհետև դառնությամբ արտահայտվելով Եվրոպայի մասին, որը, ըստ Իսահակյանի՝ «չի օգնի մեզ», Վարպետը շարունակում է. «պետք է մոտենալ Ռուսաստանին, ինչ ձևի տակ էլ որ նա ներկայանա... Ըստ իս, Հայաստանը և հայ ժողովուրդը կարող է միայն ապրել Ռուսաստանի հետ, կամ բնավ չի կարող ապրել: Մնացածը հիմարությունից վեր բան է: Մնում է հիմա, որ ռուսների և մեր միջև ծագած թյուրիմացությունները հարթել, և հայ ժողովրդի ապագան ապահովելու համար ընդլայնել նրա երկրի սահմանները, և ապա լծվել կուլտուրական աշխատանքի. ես սպասում եմ այդ ժամին...»:[532]

Ինչպես Վարպետը, այնպես էլ շատ ու շատ հայ տարագիրները, Հայաստան վերադառնալու հույսերը կապում էին երկրի շուտափույթ վերականգնման հետ:

1921 թ. երկրորդ կեսից Խորհրդային Ռուսաստանի օգնության ծավալներն էլ ավելի ընդլայնվեցին: ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի և ՌՍՖԽՀ պարենժողկոմատի կոլեգիայի անդամ Արտաշես Խալաթովի մասնակցությամբ հուլիսի 30-ին Թիֆլիսում տեղի ունեցած խորհրդակցությանը քննարկվեց Ռուսաստանի կողմից Հայաստանին հատկացվելիք ապրանքների ինչպես ամսական, այնպես էլ տարեկան չափաքանակների հարցը: Խորհրդակցությանը որոշվեց նաև, անհետաձգելի միջոցներ ձեռնարկել և 1921 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Ռուսաստանից Հայաստան ներմուծել առնվազն 30 հազար փութ հաց, հազար փութ կարագ, 20 վագոն ձուկ (այդ թվում 2 վագոն բարձր որակի), որոշ քանակությամբ թեյ, օճառ, ծխա-

---

[531] Советское содружество народов, с. 222.

[532] Տե՛ս Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 6, Երևան, 1979:

խոտ, լուցկի, դիետիկ մթերքներ և այլն: Ավելացնենք, որ խորհրդակցությանը քննարկվեց և դրական որոշման արժանացավ հայկական կողմի առաջարկը՝ Հայկոոպը ՌՍՖԽՀ կոոպերատիվների Յենտրոսոյուզի կազմ մտցնելու մասին:[533] Սա ևս մեկ կարևոր քայլ էր երկու երկրների տնտեսական համագործակցության և հետագա ինտեգրման ճանապարհին:

Բացի նշվածից, 1921 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՌՍՖԽՀ պարենժողկոմատի կարգադրությամբ Խորհրդային Հայաստան ուղարկվեց լրացուցիչ 20 հազար փութ ձուկ, 500 փութ կարագ, 4500 փութ աղ, 2 հազար փութ շաքար, 16 հազար ֆունտ սուրճ և այլ ապրանքներ:[534]

ՌՍՖԽՀ կառավարության կարգադրությամբ Հայաստանին օգնություն են տրամադրում նաև Խորհրդային Ուկրաինան և Աղրբեջանը: Վերջինս Հայաստանին տրամադրում է նավթամթերք, իսկ Ուկրաինան՝ հացահատիկ, շաքար, յուղ և այլն: 1921 թ. սեպտեմբերի 25-ին Ս. Կիրովին Օրջոնիկիձեի կողմից ուղղված հեռագրից տեղեկանում ենք, որ Մոսկվայի որոշումով Անդրկովկասի հանրապետություններին ամսական լրացուցիչ հատկացվելու էր 125 հազար փութ հացահատիկ, որից 25 հազարը՝ Հայաստանին, հացահատիկի ամբողջ քանակությունը ներկրվելու էր Խորհրդային Ուկրաինայից:[535] Ի կատարումն այս որոշման, Ուկրաինայի պարենժողկոմին 1921 թ. հոկտեմբերի 19-ին ուղղված հեռագրում ՌՍՖԽՀ պարենի բաշխման ժողկոմ Վիշինսկին խնդրում է Հայաստան ուղարկվելիք 75 հազար փութ հացահատիկից բացի, լրացուցիչ ուղարկել ևս 25 հազար փութ:[536]

Ընդհանուր առմամբ, 1921 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Ուկրաինայից Հայաստան ներմուծվեց 100 հազար փութ հացահատիկ, 3700 փութ շաքար, 1300 փութ բուսական յուղ, 2 հազար փութ կարագ:[537] Եվ սա այն դեպքում, երբ Խորհրդային Ուկրաինան նույնպես գտնվում էր պարենային սուր ճգնաժամի մեջ:

---

[533] ՀԱԱ, ֆ. 102, ց. 1, գ. 100, թ. 29, ֆ. 114, ց. 2, գ. 20, թթ. 151, 151-շրջերես:

[534] Տե՛ս նույն տեղում, ֆ. 102, ց. 1, գ. 114. թթ. 7, 9, ֆ. 114, ց. 2, գ. 96[III], թ. 613: Տե՛ս նաև Совместная борьба братских республик с разрухой и голодом в 1921-1922 гг. (документы), ԲՀԱ, Երևան, 1972, թիվ 2, էջ 50-52:

[535] Советское содружество народов, с. 240.

[536] ՀԱԱ, ֆ. 102, ց. 1, գ. 134, թթ. 10, 11:

[537] Վարդապետյան Ա., Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանին (1920-1925 թթ.), Եր., 1959, էջ 83:

* * *

1921 թ. ծանր դրության մեջ էր հայտնվել ՀՍԽՀ դրամաֆինանսական համակարգը, ինչը լուրջ խոչընդոտ էր երկրի տնտեսությունը ճգնաժամից դուրս բերելու համար: Խորհրդային Հայաստանում դրամային շրջանառության մեջ էին գտնվում արժեթղթերկված հայկական չեկերը, Հայհեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 20-ի դեկրետով պարտադիր վճարամիջոց հայտարարված ՌՍՖԽՀ դրամանիշները:[538] 1921 թ. հունիսից շրջանառության մեջ մտցվեցին նաև հայկական խորհրդային դրամանիշները: Սա, ինչ խոսք, խառնաշփոթ էր ստեղծում երկրի ֆինանսական համակարգում և արգելակում տնտեսության զարգացմանը: ՀՍԽՀ ֆինանսների ժողկոմատի 1921 թ. զեկուցագրերից մեկում նշվում է, որ ժողկոմատի տարբեր բաժինները հայտնվել են փակուղում, և նրանց աշխատանքը կազմալուծված է: Պատճառաբանվում է, որ Ռուսաստանից դեռևս չեն ստացվել նոր հրահանգներ, իսկ հները՝ չեղյալ են հայտարարված: Փակուղուց դուրս գալու և ժողկոմատի աշխատանքները կարգավորելու համար առաջարկվում է համակարգ ներմուծված նոր օրենքներին և հրահանգներին ծանոթանալու համար Մոսկվայից Հայաստան գործուղել փորձառու հրահանգչի, կամ էլ՝ Հայաստանից մասնագետ ուղարկել Մոսկվա՝ վերապատրաստվելու համար: «Հակառակ դեպքում, - զեկուցագրում նախազգուշացվում է, - դեռ երկար ժամանակ կազմալուծված վիճակում կմնա ՀՍԽՀ ֆինժողկոմատը»:[539] Այսպիսով, այս խնդրում նույնպես ակնկալվում էր Խորհրդային Ռուսաստանի օգնությունը:

Խորհրդային Հայաստանի ֆինանսական համակարգի կարգավորմանն ուղղված Ռուսաստանի ջանքերն ավելի նպատակային դարձնելու, հանրապետությունների միջև ապրանքափոխանակությունը կարգավորելու, ֆինանսական ոլորտում սերտ համագործակցություն հաստատելու նպատակով 1921 թ. սեպտեմբերի 30-ին Մոսկվայում ֆինանսական հարցերի վերաբերյալ համաձայնագիր ստորագրվեց Ռուսաստանի և Հայաստանի կառավարությունների միջև: Համաձայնագրով հաստատվում է, որ ՀՍԽՀ ֆինանսական քաղաքականության հետ առնչվող բոլոր հարցերը՝ սկսած բյուջեի հաստատումից և վերջացրած կաղրային քաղաքականությամբ (ի դեպ՝ Հայաստանի ֆինժողկոմը համարվում է Ռուսաստանի ֆինժողկոմատի մշտական լիա-

---

[538] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, էջ 22: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 17, թ. 14:
[539] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 57, թ. 29:

զոր ներկայացուցիչը Հայաստանում և նշանակվում Ռուսաստանի ֆինժողկոմի համաձայնությամբ) պետք է համաձայնեցվեին ՌՍՖԽՀ ֆինժողկոմատի հետ և հաստատվեին վերջինիս կողմից:[540]

Այսպիսով, սեպտեմբերի 30-ի հայ-ռուսական համաձայնագրով Խորհրդային Հայաստանը փաստորեն զրկվում էր ինքնուրույն ֆինանսական քաղաքականություն վարելու իրավունքից, երկրի էկոնոմիկան էլ ամբողջությամբ կախման մեջ էր ընկնում ՌՍՖԽՀ ֆինանսավարկային քաղաքականությունից: Չնայած դրան, այնուամենայնիվ՝ համաձայնագիրը մեծ նշանակություն ուներ Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսությունը վերականգնելու և խորհրդային իշխանությունն ամրապնդելու համար: Բ. Ռորյանը միանգամայն ճիշտ և դիպուկ նկատում է, որ «Համաձայնագիրը վերածվեց քաղաքական գործոնի՝ տնտեսական բովանդակությամբ»:[541]

Շատ շուտով հայ-ռուսական համաձայնագիրը տվեց իր առաջին գործնական արդյունքները. ՌՍՖԽՀ ֆինժողկոմատի անմիջական աջակցությամբ Հայաստանում հիմնվեց ՀՍԽՀ Պետական բանկը, իսկ 1922 թ. հոկտեմբերի 10-ին բացվեց ՌՍՖԽՀ Պետբանկի երևանյան բաժանմունքը:[542] Հետաքրքիր է, որ վերջինիս կառավարիչ նշանակվեց վտարանդիությունից Խորհրդային Հայաստան վերադարձած Հայաստանի 1-ին հանրապետության տարիներին ֆինանսների նախարար Գ. Ջաղեթյանը:

Խորհրդային Ռուսաստանը Հայաստանին հատկացնում էր կանխիկ դրամ, բարենպաստ պայմաններով փոխառություններ, վարկեր, դոտացիաներ: 1921 թ. նոյեմբերի 8-ին Ս. Տեր-Գաբրիելյանը ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանին հաղորդում է, որ Ռուսաստանի կառավարության կողմից Հայաստանին հատկացված լրացուցիչ երկու միլիարդ ռուբլի վարկն ինքն օգտագործելու է Հայաստանի համար տարբեր ապրանքներ ձեռք բերելու համար և միաժամանակ հուշում, որ սպասվում է նոր վարկերի հատկացում Հայաստանին:[543]

Այդպես էլ եղավ, ՌՍՖԽՀ ժողկոմխորհի 1921 թ. նոյեմբերի 11-ի որոշումով Խորհրդային Հայաստանին տրամադրվեցին լրացուցիչ ֆինանսական վարկեր. 15 միլիարդ ռուբլի՝ Հայաստանի կողմից

---

[540] Советское содружество народов, с. 241-243.
[541] Տե՛ս Борьян Б., նշվ. աշխ, էջ 311:
[542] Խորհրդային Հայաստան, Երևան, հոկտեմբերի 13, 1922:
[543] Տե՛ս ԲՀԱ, Երևան, 1972, թիվ 2, էջ 50:

արդեն իսկ իրականացված գործառնությունների, և 10 միլիարդ՝ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար: Վարկեր հատկացվեցին նաև Խորհրդային Վրաստանին ու Ադրբեջանին:[544]

Խորհրդային Ռուսաստանի կառավարության տրամադրած վարկերով Հայաստանի համար անհրաժեշտ պարենամթերք, տնտեսական և արդյունաբերական տարբեր ապրանքներ ձեռք բերելու գործում, ինչպես արդեն նշել ենք, մեծ աշխատանք էր կատարում ՌՍՖՍՀ կառավարությանը կից ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությունը՝ Սահակ Տեր-Գաբրիելյանի ղեկավարությամբ: Ներկայացուցչությունը միջնորդի դեր էր կատարում Հայաստանի և Ռուսաստանի իշխանությունների միջև, այնտեղ էին ուղարկվում նաև ՀՍԽՀ տարբեր ժողկոմատների հայտերը՝ Ռուսաստանից այս կամ այն ապրանքները ձեռք բերելու նպատակով: Նշենք, որ այս հարցում ներկայացուցչությունը որոշակի դժվարությունների էր հանդիպում, որոնց մասին շտապում է տեղյակ պահել Հայաստանի ղեկավարությանը: Ալ. Մյասնիկյանին և Ս. Լուկաշինին 1921 թ. սեպտեմբերի 14-ին ուղղված զեկուցագրում ներկայացուցչությունը հուշում է, որ ՀՍԽՀ ժողկոմատների կողմից ստացվող գրեթե բոլոր հայտերը թերի են, «տառապում են անորոշությամբ», շատ դեպքերում՝ նրանց չեն կցվում պահանջվող ապրանքների անհրաժեշտության, տեսականու և քանակի մասին բացատրական գրություններ, իսկ երբեմն՝ այդ հայտերը անգամ պահանջի բնույթ են կրում: «Այնինչ՝ նյութական պաշարները Ռուսաստանում այնքան չնչին են, - նշվում է զեկուցագրում, - որ բավարարվում է ընդհանուր պահանջների միայն 2-10%»: Այդ իսկ պատճառով՝ կենտրոնական մատակարարող կազմակերպությունները մանրակրկիտ ուսումնասիրում են բոլոր հայտերը՝ անողոքաբար կրճատում հայցվող նյութերի պահանջվող քանակը, և դրանից հետո միայն՝ որոշում ընդունում հայտերի մի մասը բավարարելու կամ՝ ամբողջությամբ մերժելու մասին: Հուշելով, որ «Նման պայմաններում հիմք չկա բացառություն անելու Խորհրդային Հայաստանի համար», ներկայացուցչությունը խնդրում է ի գիտություն ընդունել վերը նշվածը և տեղյակ պահել բոլոր ժողկոմատներին:[545] Մոսկվայում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչության խնդրանքը հարգվում և կատարվում է: Կառավարության հատուկ գրությունով ժողկոմատներից պահանջվում է այսուհետ հայտերը

---

[544] Տե՛ս Хармандарян С., Ленин и становление Закавказской федерации (1921-1923), с. 150:
[545] ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 9, թ. 94:

կազմելիս նկատի ունենալ ներկայացուցչության կողմից հնչեցված ահազանգը: Ավելին, որոշ ժամանակ անց, ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահի տեղակալի կարգադրությամբ առաջարկվում է բոլոր ժողկոմատներին և կենտրոնական հիմնարկություններին արտգործժողկոմատի միջոցով Մոսկվա՝ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը տեղեկատվության համար, ուղարկել «բոլոր նիստերի օրագիրների պատճենները, որոնք կարող են ծառայել որպես նյութ՝ ներկայացուցչության տնտեսական աշխատանքի բարելավման, և Ռուսաստանի կենտրոնից Հայաստանի մատակարարումը հաջողացնելու համար»:[546]

Ամփոփ տվյալներով՝ 1921 թ. ընթացքում Խորհրդային Ռուսաստանն իր սուղ միջոցներից Խորհրդային Հայաստանին հատկացրեց 2 մլն. 545 հազար ռուբլի (ոսկով), 1 մլն. 172 հազար փութ վառելանյութ (այդ թվում՝ 1 մլն. 65 հազար փութ մազութ, 90 հազար փութ նավթ, 12 հազար փութ բենզին, 5 հազար փութ մեքենայի քսայուղ), 1.5 մլն. արշին մանուֆակտուրա (այդ թվում՝ 18 հազար կոմպլեկտ զինվորական հագուստ, 36 հազար զույգ ներքնազգեստ, 1 մլն. ռուբլի արժողությամբ գործվածքեղեն), 336 հազար փութ հացահատիկ և ալյուր, 7 վագոն բրինձ, 11 հազար փութ աղ, 7 հազար փութ շաքար, մեծ քանակությամբ հնդկացորեն, թեյ, սուրճ, 70 հազար փութ ձկնեղեն, 1500 գլուխ անասուն (հիմնականում ձիեր), 10 սավառնակ, 10 ավտոմոբիլ, 2 տպագրական մեքենա, 1 լիտոգրաֆ, 1 ցինկոգրաֆ, 2 կազմարար մեքենա, 173 երկրագործական գործիքներ, 10 հազար գերանդի և մանգաղ, 10 հազար սլայտ, հեռագրի և հեռախոսի հարյուրավոր ապարատներ, 100 հազարից ավելի կտոր գիրք, 100 հազարավոր փութ թուղթ, մեծ թվով նկարներ, 10 վագոն դեղորայք, մեծ քանակությամբ թել, ասեղ, կոճակ, օճառ, լուցկի և այլն:[547] Ընդհանուր առմամբ՝ մինչև 1922 թ. սկիզբը Հայաստանը Խորհրդային Ռուսաստանից ստացավ 3.5 մլն. ռուբլի (ոսկով) և 2 մլն. 895 հազար փութ կենսամթերք ու այլ ապրանքներ:[548]

Ահա թե ինչու՝ ՀՍԽՀ խորհուրդների 2-րդ համագումարին 1922 թ. նոյեմբերի 30-ին Խորհրդային Հայաստանի կառավարության հաշ-

---

[546] ՀԱԱ, ֆ. 123, ց. 1, գ. 40, թ. 14:

[547] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 125, թ. 1: Տե՛ս նաև Вестник московского комитета помощи, Москва, 1923, № 1, с. 13-16, Խորհրդային Հայաստան, Երևան, դեկտեմբերի 4, 1921, թիվ 238:

[548] Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Եր., 1967, էջ 102: Տե՛ս նաև Խորհրդային Հայաստան, Երևան, փետրվարի 5, 1922, թիվ 29:

վետվությունը ներկայացնող ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինը հայտարարեց. «Մենք անցյալ տարի ապրել ենք Ռուսաստանի օգնությամբ, այնտեղից ստանալով 5 մլն. ոսկի արժողությամբ ապրանքներ, այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ Ռուսաստանում սով էր, բառիս բուն նշանակությամբ»:[549]

* * *

Խորհրդային Հայաստանում 1921 թ. տիրող սոցիալ-տնտեսական անկայուն իրավիճակը տարվա վերջերից սկսեց վատանալ: Վրա հասած սովի հետ մեկտեղ, Հայաստանի մի շարք շրջաններում (Լոռի, Ղարաքիլիսա, Ալեքսանդրապոլ և այլն) բռնկվեց խոշոր եղջերավոր անասունների մեծ համաճարակ: Այն սպառնում էր լուրջ հարված հասցնել երկրի անասնապահությանը, իսպառ վերացնել անասունների գլխաքանակը: Ստեղծված իրավիճակից դուրս գալու միակ հույսը՝ դարձյալ Ռուսաստանից ակնկալվող օգնությունն էր:

1921 թ. դեկտեմբերի 8-ին ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմատն ահազանգ է ստանում հողժողկոմատից, որ անասունների համաճարակը կասեցնելու և հաղթահարելու համար անհրաժեշտ է մեծ քանակությամբ հակաժանտախտային շիճուկ ներկրել Ռուսաստանից, քանզի Հայաստանում դրա պաշարները չնչին են և սպառման եզրին:[550] Դեկտեմբերի 10-ին արտգործժողկոմատն այդ մասին հաղորդում է Մոսկվա՝ Ս. Տեր-Գաբրիելյանին, և խնդրում՝ դիմել ՌՍՖՍՀ հողժողկոմատ՝ Հայաստանին 1000 լիտր շիճուկ բաց թողնելու խնդրանքով:[551]

Ռուսաստանի հողժողկոմատը անմիջապես արձագանքում է Տեր-Գաբրիելյանի միջնորդությանը և դեկտեմբեր ամսին Հայաստան ուղարկում 400 լիտր շիճուկ:[552] Բայց քանի որ Հայաստանին անհրաժեշտ էր 1000 լիտր, ուստի Տեր-Գաբրիելյանը խնդրում է լրացուցիչ հատկացնել ևս 600 լիտր: Տեղյակ պահելով իր երկրորդ խնդրանքի մասին Հայաստանի իշխանություններին, Տեր-Գաբրիելյանը միաժամանակ տեղեկացնում է, որ ՌՍՖՍՀ հողժողկոմատի Կենտրոնական անասնաբուժական վարչությունը դիմել է ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրո՝ Ադրբեջանի տարածքում գտնվող Զուրնաբադի լաբորա-

---

[549] Լուկաշին (Սրապիոնյան) Ս., Հոդվածներ, զեկուցումներ, ճառեր, Եր., 1986, էջ 127:
[550] ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 9, թ. 100:
[551] Տե՛ս նույն տեղում, թ. 98:
[552] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 96[01], թ. 640:

տորիան վերաշահագործելու առաջարկով: Տեր-Գաբրիելյանը հուշում է, որ այդ դեպքում լաբորատորիան կարող է շիճուկով մատակարարել կովկասյան ամբողջ տարածաշրջանը:[553]

1922 թ. հունվարի 9-ին Կովկասյան բյուրո ուղղված այդ դիմումում ՌՍՖԽՀ հողժողկոմատի վարչությունը վերաշահագործման անհրաժեշտությունը հիմնավորում է նրանով, որ համաճարակ է բռնկվել ոչ միայն Հայաստանում, այլև Աղրբեջանում, Դաղստանում և այլուր, և «Ռուսաստանն ի վիճակի չէ կանոնավոր կերպով շիճուկով մատակարարել ամբողջ Կովկասը»:[554]

Այնուամենայնիվ, Ռուսաստանի հողժողկոմատը ընդառաջում է հայկական կողմի նաև երկրորդ խնդրանքին և 1922 թ. հունվարին Հայաստանին հատկացնում ևս 500 լիտր շիճուկ, միաժամանակ զգուշացնում, որ Ռուսաստանում շիճուկի պաշարների սղության պատճառով դրա սառաքումը Հայաստան այսուհետ դադարեցվելու է:[555]

1921-1922 թթ. ձմռանը Խորհրդային Ռուսաստանից ստացած հակաժանտախտային շիճուկը հնարավորություն տվեց կասեցնել Հայաստանում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի նվազումը, փրկել անասնապահության ոլորտը, հետևաբար՝ մսամթերքի և կաթնամթերքի արտադրումը:

Սերմացուի բացակայության պատճառով մեծ վտանգի տակ էր նաև Հայաստանում 1922 թ. գարնանացանի հաջող անցկացումը, ինչը միակ երաշխիքն էր՝ Հայաստանի բնակչության մեծ մասն ընդգրկող սովը տարվա ընթացքում հաղթահարելու համար: Անհետաձգելի այս խնդրի լուծումը Հայաստանի իշխանությունները դարձյալ կապում էին Խորհրդային Ռուսաստանից ակնկալվող օգնության հետ: Հայաստանի կառավարությունը և նրա նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը 1922 թ. սկզբներից բազմիցս դիմեցին Ռուսաստանում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանին, հանձնարարելով նրան միջնորդելու Ռուսաստանի կառավարության առջև՝ Հայաստանին 100 հազար փութ սերմացու տրամադրելու և շտապ Հայաստան առաքելու խնդրանքով:[556]

Տեր-Գաբրիելյանը մեծ ջանասիրությամբ հետամուտ է լինում խնդրի լուծմանը, սակայն արդյունքի չի հասնում: 1922 թ. փետրվարի

---

[553] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 123, ց. 1, գ. 290, թ. 29:
[554] Տե՛ս նույն տեղում, թ. 30:
[555] Տե՛ս նույն տեղում, թ. 28:
[556] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 96[III], թ. 770: Տե՛ս նաև Ալ. Մյասնիկյանի 1922 թ. փետրվարի 3-ի և 9-ի նամակները Ս. Տեր-Գաբրիելյանին, ԲՀԱ, Երևան, 1966, թիվ 2, էջ 75:

կեսերին նա Մյասնիկյանին տեղեկացնում է, որ Ռուսաստանի կառավարությունը որոշել է Հայաստանին հատկացնել 10 միլիարդ ռուբլի (75 հազար ոսկով) վարկ, միաժամանակ ցավով հուշում, որ «Սերմացուի խնդիրը դժվարանում է: Համառուսաստանյան Կենտգործկոմին ուղղված իմ դիմումը մերժվեց»:[557]

1922 թ. հունվարի 23-ին Համառուսաստանյան Կենտգործկոմի նախագահությունը հաստատեց Խորհրդային Հայաստանին 10 միլիարդ ռուբլի վարկ հատկացնելու՝ ՌՍՖՍՀ ժողկոմխորհի որոշումը: Վարկը տրամադրվելու էր Միջագետքից Հայաստան ներգաղթած հայ հայրենադարձներին օգնություն ցույց տալու համար:[558] ՀՍԽՀ ժողկոմխորհի 1922 թ. փետրվարի 8-ի որոշումով Ռուսաստանի տրամադրած օգնությունը փոխանցվեց կառավարությանը կից «Սովյալներին օգնելու հանձնաժողովի բացարձակ տնօրինությանը»:[559]

Նշենք, որ Ռուսաստանի օգնությունը ճիշտ ժամանակին էր, քանի որ Միջագետքի հայ գաղթականության տեղավորման, աշխատանքով ապահովելու խնդրի լուծումը խիստ առաջնահերթ էր: Նրանց առաջին խումբը, շուրջ 3000 մարդ, Խորհրդային Հայաստան էր ժամանել 1921 թ. դեկտեմբերի վերջին, իսկ 1922 թ. սկզբներին հայրենադարձների թիվը հասավ շուրջ 9 հազարի:[560]

Մոսկվայում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանի և Խորհրդային Ռուսաստանի կառավարության համատեղ ջանքերի շնորհիվ ի վերջո իր դրական լուծումն է ստանում նաև Հայաստանին սերմացու հատկացնելու հարցը: ՌՍՖՍՀ հողժողկոմ Վ. Իզյումովը 1922 թ. մարտի 8-ին հրահանգավորում է Նովոռոսիյսկում ժողկոմատի լիազոր ներկայացուցչին, որպեսզի վերջինս արտասահմանից սպասվող ցորենի սերմացուից Հայաստանին հատկացնի 100 հազար փութ:[561] Թեև որոշված 100 հազարի փոխարեն Հայաստան է ուղարկվում 80 հազար փութ սերմացու, ինչի մասին տեղեկանում ենք Օրջոնիկիձեի կողմից Նովոռոսիյսկից մարտի 26-ին Մյասնիկյանին ուղղված հեռագրից,[562] սակայն դա էլ բավարար էր, որպեսզի գարնանացանը Հայաստանում հաջողությամբ իրականացվի:

---

[557] Տե՛ս ԲՀԱ, Երևան, 1972, թիվ 2, էջ 55:
[558] Նույն տեղում, էջ 54-55:
[559] ՀԱԱ, ֆ. 113, ց. 5, գ. 5, թ. 1:
[560] Տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը 1920-1980 թթ., Եր., 1985:
[561] Восстановление народного хозяйства Арм. ССР, с. 96.
[562] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 361, թ. 68:

Այնուհանդերձ, 1922 թ. աշնանը Հայաստանը դարձյալ հացի և առաջին անհրաժեշտության ապրանքների մեծ պահանջարկ էր զգում: Սեպտեմբերի 8-ին ՌՍՖՍՀ պարենժողկոմատ ուղղված ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինի (այդ պաշտոնում նա փոխարինել էր Ալ. Մյասնիկյանին) դիմումում նշվում է, որ Հայաստանի տնտեսության մեջ թեև որոշ աշխուժացում է նկատվում, սակայն պարզ է, որ ինչպես անցյալ, այնպես էլ ընթացիկ տարում՝ առանց Ռուսաստանի բազմակողմանի օգնության Հայաստանը չի կարող ապրել: ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահը հայտնում է, որ որոշվել է Խորհրդային Ռուսաստանից Հայաստան ներմուծել 600 հազար փութ հաց, Լուկաշինը խնդրում է նաև, որպեսզի Հայաստանն այսուհետ պլանային կարգով մատակարարվի Ռուսաստանի կողմից:[563]

Հայաստանի Ժողկոմխորհի նախագահի դիմումը, մի շարք օրակարգային այլ հարցերի հետ միասին, քննարկվում է Ռուսաստանի և Անդրֆեդերացիայի պարենժողկոմատների ներկայացուցիչների համատեղ խորհրդակցությանը, որին մասնակցում էին նաև Գ. Օրջոնիկիձեն, Ալ. Մյասնիկյանը, Ա. Մռավյանը և Ս. Տեր-Գաբրիելյանը: Խորհրդակցությունը սեպտեմբերի 28-ին որոշում է, 1922-1923 թթ. դեկտեմբեր-հունվար ամիսների համար Հայաստանին հատկացնել 650, Վրաստանին՝ 350 և Նախիջևանին՝ 100 հազար փութ հացահատիկ: Խորհրդակցությունն ի գիտություն է ընդունում նաև Ռուսաստանի պարենժողկոմատի ներկայացուցիչ Ա. Խալաթովի հաղորդումն այն մասին, որ Հայաստանում աշնանացանն իրականացնելու համար առաքվել է 100 հազար փութ հացահատիկի սերմացու:[564]

Այսպիսով կարելի է փաստել, որ Խորհրդային Ռուսաստանի կենտրոնական մարմինները աջակցում էին ՀՍԽՀ իշխանություններին նրանց կողմից բարձրացված սոցիալ-տնտեսական բնագավառի գրեթե բոլոր հարցերում, և հնարավորինս օգնություն տրամադրում Հայաստանի բնակչությանը: Եվ եթե 1921 թ. Խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանին տրամադրված օգնությունը գրեթե ամբողջությամբ հատկացվում էր երկրի սպառողական պահանջները բավարարելու, ժողովրդին կերակրելու համար, ապա՝ հատկապես 1922 թ. աշնանից, երբ որոշ չափով վերակենդանացավ և ոտքի էր կանգնում գյուղատնտեսությունը, հաղթահարվում էր սովը, Ռուսաստանի օգնությունն ուղղվեց Հայաստանի արդյունաբերական համալիրի վերա-

---

[563] Восстановление народного хозяйства Арм. ССР, с. 96-97.
[564] Տե՛ս նույն տեղում, էջ 97-98:

կանգնմանը, նոր արտադրամասերի կառուցմանը, հետևաբար՝ աշխատատեղերի ստեղծմանը, ինչը մեծ նշանակություն ունեցավ երկրի առաջընթացն ապահովելու համար:

1922 թ. հունվարին Ռուսաստանի Ռոստով քաղաքից 10 վագոնով Հայաստան են ուղարկվում կաթնամթերքների արտադրման գործարանի սարքավորումներ:[565] Տարվա ընթացքում Ռուսաստանից Հայաստան տեղափոխվեցին նաև մանվածքային ֆաբրիկայի սարքավորումներ: Ռուսաստանից ժամանած փորձառու մասնագետները, ճարտարագետները ղեկավարում են Ալեքսանդրապոլում ֆաբրիկայի կառուցման աշխատանքները: Ի դեպ՝ ֆաբրիկայի համար ստացված սարքավորումները Ռուսաստանի Իվանովո-Վոզնեսենսկ քաղաքի աշխատավորության նվերն էր հայ ժողովրդին: ՌՍՖՍՀ հաղորդակցության ժողկոմի կարգադրությամբ սարքավորումները Հայաստան տեղափոխվեցին ապառիկ:[566] Ավելացնենք, որ վերջինիս կարգադրությամբ՝ Հայաստանում շնորհակալ գործունեություն ծավալած Մերձավոր Արևելքում ամերիկյան և անգլիական նպաստամատույց կոմիտեների կողմից Խորհրդային Հայաստանի բնակչությանը տրամադրվող օգնությունը նույնպես փոխադրվում էր անվճար, առանց փոխադրավարձի գանձման:[567]

Նշենք, որ Ամերկոմի և Անգլկոմի օգնության ծավալները բավականին մեծ էին՝ Ամերկոմի Կովկասյան բաժանմունքի 1922 թ. առաջին կիսամյակի տվյալներով՝ Ամերկոմը Հայաստան է ներմուծել 24 հազար 974 փութ բրինձ, 140 հազար 55 փութ ձավարեղեն, 21 հազար 857 փութ լոբի, 6418 փութ հացահատիկ, 1402 տուփ կաթ, 7 փութ կակաո, 649 փութ բանջարեղեն, 4 փութ շաքար, 84 փութ յուղ, 412 փութ այլ մթերքներ: Ավելին, նկատի ունենալով Զանգեզուրի բնակչության առավել ծանր վիճակը, նրան օգնություն էր հատկացվում առանձին՝ ամենամսյա նպաստ էր ստանում ավելի քան 100 հազար մարդ:[568]

ՀՍԽՀ իշխանությունները բարձր էին գնահատում այդ օգնության փաստը, պատահական չէ, որ Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը 1922 թ. մայիսի 10-ին հայ ժողովրդի անունից շնորհակալական բաց նամակ ուղղեց ԱՄՆ նախագահ Ուորրեն Հարդինգին,

---

[565] Տե՛ս ԲՀԱ, Երևան, 1972, թիվ 2, էջ 55: Տե՛ս նաև Խորհրդային Հայաստան, հունվարի 6, 1922:
[566] Տե՛ս ԲՀԱ, Երևան, 1972, թիվ 2, էջ 57:
[567] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 39, գ. 160, թ. 36-ի շրջերես:
[568] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 2, գ. 22, թ. 111:

որում մասնավորապես նշեց. «Ձեզ՝ իբրև ամերիկյան ժողովրդի ներկայացուցչի, ես հայտնում եմ շնորհակալություն ինչպես իմ, այնպես էլ իմ ժողովրդի անունից բոլոր այն զոհողությունների համար, որ կատարեց Ամերիկան Հայաստանի համար: Տասնյակ հազարավոր հայեր այսօր իրենց կյանքով պարտական են վերջին մի քանի տարիներին Ամերիկայից ստացված օգնությանը: Այս բանը մենք երբեք չենք մոռանա:

Երեսուն հազար հայ որբուկներ Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի ջանքերով դարձան ամերիկացիների սաներ: Այդ երեսուն հազար որբերը այժմ էլ ապրում և դաստիարակվում են այն միջոցներով, որոնք մշտապես տրամադրում են ամերիկացիները»:

Նամակում այնուհետև հուշելով, որ դարձյալ խնդիրներ են ծագել հայ որբերին սննդով ապահովելու համար, իսկ հանրապետության վիճակը դեռևս շարունակում է անմխիթար մնալ, ՀՍԽՀ կառավարության նախագահը հայցում է ամերիկյան ժողովրդի օգնության շարունակումը:

Նամակը ավարտվում է Մյասնիկյանի հետևյալ խոսքերով. «Ես գիտեմ, սըր, որ Դուք մեզ հետ եք հոգով և սրտով: Ես գիտեմ, որ Ձեր ժողովուրդը մեզ բարիք է կամենում: Մենք կաշխատենք արժանի լինել Ձեր օգնությանն ու լավ վերաբերմունքին՝ անելով հնարավոր ամեն ինչ: Երեսուն հազար որբերը, որոնց ամերիկացիները ապաստան տվին, մեր երկու երկրների միջև բարեկամական ամուր կապերի մշտական զրավականը կլինեն»:[569]

Խորհրդային Հայաստանում գործող օտարերկրյա նպաստամատույց կոմիտեների կողմից բնակչությանը տրամադրվող օգնությունն, իհարկե, որոշ չափով մեղմում էր բնակչության սոցիալական ծանր դրությունը, սակայն այն չէր կարող համեմատվել Ռուսաստանից ստացվող օգնության ծավալների հետ:

* * *

1922 թ. Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները մեծ ուշադրություն են հատկացնում Հայաստանում բամբակագործությունը վերականգնելու և զարգացնելու գործին: Դրանում հավասարապես շահագրգռված էին ինչպես Ռուսաստանը, այնպես էլ Հայաստանը: Ռուսաստանն էժան բամբակի մեծ կարիք ուներ, իսկ Հայաստանում

[569] ՀԱԱ, ֆ. 113, ց. 38, գ. 7, թթ. 26-27:

կստեղծվեին նոր աշխատատեղեր, կբարելավվեր ոռոգման համակարգը, կընդարձակվեին ցանքատարածությունները:

Ռուսաստանի Բամբակագործության գլխավոր կոմիտեի և Հայաստանի իշխանությունների ներկայացուցիչների մասնակցությամբ 1922 թ. ապրիլի 10-ին Մոսկվայում հրավիրված խորհրդակցությանը որոշվեց Հայաստանում բամբակագործությունը վերականգնելու համար 1922 թ. ընթացքում վերջինիս հատկացնել 25 միլիարդ ռուբլի:[570] Հարցը քննարկման առարկա է դառնում նաև ՌՍՖԽՀ ֆինժողկոմատի բյուջետային կոմիտեի 1922 թ. հոկտեմբերի 21-ի նիստում: Նիստին հրավիրված Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանը միջնորդում է Հայաստանին 800 հազար ռուբլի (ոսկով) վարկ բաց թողնելու մասին, այն նախատեսվում է օգտագործել Արազդայանի տարածքում բամբակագործությունը կազմակերպելու համար ծեռնարկվող նախնական մելիորատիվ-շինարարական աշխատանքները սկսելու համար:

Հայաստանի ներկայացուցչի միջնորդությունը քննարկելուց հետո, նկատի ունենալով, որ Ռուսաստանը բամբակի մեծ կարիք ունի, և, որն առավել հրատապ է, «Արարատյան դաշտավայրում կուտակված արևմտահայ բազմաթիվ գաղթականները փող վաստակելու հնարավորություն կստանան», կոմիտեն որոշում է բավարարել միջնորդությունը, և Հայաստանին տրամադրել 620 հազար ռուբլի (ոսկով) վարկ: Այն պետք է օգտագործվեր Հայաստանում մելիորատիվ-շինարարական աշխատանքները սկսելու, արտասահմանից տրակտորներ, գյուղգործիքներ, լծկան անասուններ և սերմացու գնելու համար: Նշենք, որ վարկի դիմաց Հայաստանը պարտավորվում էր Ռուսաստան արտահանել մեծ քանակությամբ բամբակ, և վարկն ամբողջությամբ մարել 1924 թ. հունվարի 1-ից ոչ ուշ:[571]

Կոմիտեի որոշումը 1922 թ. հոկտեմբերի 24-ին հաստատում է ՌՍՖԽՀ ֆինժողկոմի բյուջետային կոմիտեի նախագահությունը,[572] իսկ հոկտեմբերի 27-ին՝ ՌՍՖԽՀ Աշխատանքի և Պաշտպանության խորհուրդը: Վերջինս խոստանում է նաև բազմակողմանի աջակցություն:[573]

---

[570] ՀԱԱ, ֆ. 115, ց. 1, գ. 68, թ. 205:
[571] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 39, գ. 260, թթ. 3-4:
[572] Տե՛ս նույն աեղում, թ. 5:
[573] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 361, թ. 70: Տե՛ս նաև Խորհրդային Հայաստան, Երևան, հոկտեմբերի 31, 1922:

Խորհրդային Հայաստանի մատակարարման խնդրով մշտապես հետաքրքրվով Վ. Լենինը 1922 թ. հոկտեմբերի 28-ին Վ. Մոլոտովին հղած երկտողում նշում է. «Գրեք, ուղարկված է արդյո՞ք Հայաստան ոսկի (կարծեմ, որոշված է 1.5 միլիոն ռուբլի): Իսկ հայերին օգնելու մյուս միջոցառումնե՞րը: Հարկավոր է արագացնել և ստուգել»:[574]

Հայաստանում բամբակագործությունը խթանելու և զարգացնելու գործում արմատական բեկում սկսվեց 1923 թվականից: ՌՍՖՍՀ Բամբակագործության գլխավոր կոմիտեի և ՀՍԽՀ ժողկոմխորհի (ի դեմ՝ Ս. Տեր-Գաբրիելյանի) միջև հունվարի 18-ին Մոսկվայում ստորագրված պայմանագրով հիմնադրվում է «Ռուս-հայկական պետական բամբակագործական ընկերությունը» (ГРАХТ): Վերջինիս սահեստային կապիտալ է սահմանվում 500 հազար ռուբլի (ոսկով):[575]

Ընկերությունը մեծ աշխատանք է իրականացնում, նրա ջանքերով Թուրքեստանից Հայաստան ներմուծվեց մոտ 17 հազար փութ բամբակի ընտիր սերմացու, գումարներ տրամադրվեցին Հայաստանում բամբակագործությունը զարգացնելու համար: Ռուսաստանի տրամադրած խոշոր վարկերի շնորհիվ հնարավոր դարձավ կարճ ժամանակում վերականգնել Արազդայանի ջրանցքները, կառուցել նորերը, նախկինում ճահճի վերածված Արազդայանի հողերը դարձնել բարեբեր:

Ոռոգման ցանցի վերականգնումը վճռական նշանակություն ունեցավ ինչպես բամբակագործությունը, այնպես էլ Հայաստանի գյուղատնտեսությունը զարգացնելու համար: Ավելացան ցանքատարածությունները՝ 1919 թ. 82.7 հազարի փոխարեն՝ 1922 թ. վերջին նրանք ընդգրկեցին ավելի քան 97 հազար հեկտար տարածություն:[576]

1922 թ. ՌՍՖՍՀ կառավարությունը Հայաստանին ֆինանսական վարկեր տրամադրեց երկրի տնտեսության նաև մյուս ճյուղերը. ծխախոտագործությունը, կաշվի արդյունաբերությունը, պոլիգրաֆ արդյունաբերությունը վերականգնելու և զարգացնելու համար: Տրամադրված վարկերի, տարբեր սարքավորումների, այլ նյութերի շնորհիվ Հայաստանում վերանորոգվեցին հին գործարանները, հիմնադրվեցին նոր արտադրամասեր, երկիրը աստիճանաբար դուրս էր գալիս սոցիալ-տնտեսական խորը ճգնաժամից:

---

[574] Տե՛ս Հայաստանը... փաստաթղթերում, էջ 528:
[575] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 123, ց. 1, գ. 83, թ. 32:
[576] Տե՛ս ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր. Եր., 1923, էջ 24:

1921-1922 թթ. ՌՍՖՍՀ-ից ստացած ֆինանսական վարկերի, հացահատիկի, սերմացուի, վառելանյութի, շինանյութի, կտորեղենի, պարենային և արդյունաբերական այլ ապրանքների դիմաց, Հայաստանից Ռուսաստան արտահանվում էր պղինձ, հանքաքար, ծծմբաթթու, բամբակ, կաշի, մորթի, դոշաբ, չորացրած մրգեր, գինի, կոնյակ և այլն: 1922 թ. Մոսկվայում բացվեց «Արարատ» գինու-կոնյակի կոմբինատի բաժանմունքը:

Հայաստանի միջոցով տեղի էր ունենում նաև ապրանքաշրջանառություն Ռուսաստանի և Իրանի միջև: Ընդհանուր առմամբ՝ Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի, ինչպես նաև Հայաստանի միջոցով Ռուսաստանի և Իրանի միջև կատարվող ապրանքաշրջանառությունը 1921-1922 թթ. կազմում էր 35-ից 40 միլիոն ռուբլի (ոսկով):[577]

1921-1922 թթ. Խորհրդային Ռուսաստանը Հայաստանին օգնություն ցույց տվեց նաև մշակույթի, լուսավորության, գիտության, բժշկության և այլ բնագավառներում՝ փորձառու մասնագետներ, մեծ բանակությամբ օժանդակ գրականություն, բժշկական սարքավորումներ, դեղորայք և այլ նյութեր ուղարկելով Հայաստան: Համառուսաստանյան Կենտգործկոմի նախագահության 1921 թ. սեպտեմբերի 29-ի որոշումով՝ Լազարյան ճեմարանը վերանվանվում է «Խորհրդային Հայաստանի Մշակույթի տան», և «Իր ամբողջ նյութական ու մշակութային արժեքներով», փոխանցվում Խորհրդային Հայաստանի կառավարության տնօրինությանը:[578] 1922 թ. մայիսին Հայաստան է վերադարձվում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մոսկվա փոխադրված Էջմիածնի գրադարանի գույքը՝ 140 արկղով, թանգարանային թանկարժեք իրեր:[579]

Պետք է նշել, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո մեծ թափ առավ Խորհրդային Ռուսաստանի տարբեր շրջաններում, հիմնականում Հյուսիսային Կովկասի և Մերձսևծովյան տարածաշրջանի հայահոծ երկրամասերում և քաղաքներում (Կրասնոդար, Ստավրոպոլ, Վլադիկովկաս, Ռոստով, Սոչի, Սիմֆերոպոլ, Սևաստոպոլ, Կերչ և այլն), հայկական կրթամշակութային օջախների հիմնումը: Միայն Կրասնոդարի երկրամասում միչև 1921 թ. գարունը բացվեցին հինգ տասնյակից ավելի հայկական դպրոցներ, իսկ մարտի 13-ին հանդիսավոր պայմաններում բացվում է Ստեփան Շահումյանի անվան հայ-

---

[577] Բեկզադյան Ալ., Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, էջ 49-50:
[578] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 68, թ. 103:
[579] Խորհրդային Հայաստան, Երևան, մայիսի 13, 1922:

կական ժողովրդական համալսարանը:[580] Սրանից մի քանի օր անց, մարտի 20-ին, Ռոստով-Նախիջևանում իր դռներն է բացում Մարտիրոս Սարյանի նախաձեռնությամբ ստեղծված հայկական թանգարանը, բացման պատիվը տրվում է հայ մնծանուն նկարչին:[581]

1921-1922 թթ. ընթացքում Ռուսաստանում բացվեցին կամ վերանորոգվեցին մի քանի տասնյակ հայկական նախակրթարաններ և դպրոցներ, թանգարաններ, մշակույթի այլ օջախներ: Իսկ նույն ժամանակահատվածում Խորհրդային Հայաստանում «դպրոցների և աշակերտների թիվը ավելացավ երկու անգամ: Արդեն 1922 թ. վերջին հանրապետությունում գործում էր 500 դպրոց, համալսարան, 5 տեխնիկում, կարճատև դասընթացներում պատրաստվեցին 520 ուսուցիչ»:[582]

«Խորհրդային Հայաստանի առաջին երկու տարիները մի կտոր հացի համար մղվող պայքարի տարիներ էին»,[583] - իրավացիորեն նշում է ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինը: Մեր կողմից ավելացնենք, որ այդ «պայքարում» մեծ և անգնահատելի էր Ռուսաստանի և ռուս ժողովրդի եղբայրական օգնության դերը: 1922 թ. դեկտեմբերի 11-ին Բաքվում կայացած անդրկովկասյան խորհուրդների առաջին համագումարին Գ. Օրջոնիկիձեն հայտարարեց. Անդրկովկասի հանրապետությունները «Ռուսաստանից՝ այս ընդհանուր շտեմարանից, ստանում են այն ամենն, ինչ հնարավոր է»:[584] Եվ դա, բնավ, այդպես էր:

ՀՍԽՀ Խորհուրդների երկրորդ համագումարին 1922 թ. նոյեմբերի 30-ին Հայաստանի կառավարության հաշվետվությունը ներկայացնելիս Ս. Լուկաշինը հայտարարեց. «Խորհրդային Ռուսաստանից օր օրի վրա բավականաչափ օգնություն է հասնում Հայաստան, և մեր պաշարները հետզհետե ավելանում են, բայց և այնպես, դրանք շատ հեռու են Հայաստանին ամբողջությամբ բավարարելու համար»:[585]

Նախապատերազմյան 1913 թ. մակարդակի համեմատությամբ՝ 1922 թ. վերջին Հայաստանի ժողովրդական տնտեսության մակարդակը թեև մոտենում էր միայն 50 %-ոց արդյունքի, այնուամենայնիվ՝ 1921-1922 թթ. Ռուսաստանի կողմից տրամադրված բազմակող-

---

[580] Տե՛ս Սարգսյան Ս.Հ., Սովետական Ռուսաստանի հայ մամուլը (1918-1921թթ.), Եր., 1968, էջ 159, 163-164:
[581] Տե՛ս նույն տեղում, էջ 176-177:
[582] Жизнь национальностей, Москва, 1923, книга I, с. 167.
[583] Լուկաշին (Սրապիոնյան) Ս., Հոդվածներ, զեկուցումներ, ճառեր, էջ 77:
[584] Օրջոնիկիձե Գ.Կ., Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 111:
[585] Լուկաշին (Սրապիոնյան) Ս., Հոդվածներ, զեկուցումներ, ճառեր, էջ 139:

մանի օգնության շնորհիվ 1922 թ. վերջերին Հայաստանում հաղթահարվեց շուրջ 250 հազար բնակչություն ընդգրկող սովը, անցյալում էին մնում համաճարակային հիվանդությունները, աշխուժանում էր երկրի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, աստիճանաբար բարձրանում էր ժողովրդի կենսամակարդակը: Նշված ժամանակահատվածում փաստորեն դրվեցին այն հիմքերը, որի վրա զարգացավ և աննախադեպ հաջողությունների հասավ Հայաստանի ժողովրդական տնտեսությունը, գիտությունն ու մշակույթը խորհրդային ամբողջ ժամանակաշրջանում:

3. Հայ ժողովրդի օգնությունը Ռուսաստանի մերձվոլգյան շրջանների սովյալներին

1921 թ. գարնան-ամռանը Ռուսաստանի հացահատիկային կուլտուրաներով առավել հարուստ մի շարք շրջաններում երաշտի, ինչպես նաև բոլշևիկների վարած կործանարար տնտեսական քաղաքականության (հացի պաշարների կենտրոնացում, բազմաթիվ գյուղացիական տնտեսությունների ավերում, հակակուլակային արշավ և այլն) հետևանքով Ռուսաստանի բնակչության մի զգալի մասը հայտնվել էր սովի ճիրաններում: Այն առավել մեծ չափերի հասավ Ռուսաստանի հատկապես մերձվոլգյան շրջաններում, և 1921-1922 թթ. ընդգրկեց մոտ 15 միլիոն մարդ:

Սովյալներին օգնելու գործի կազմակերպումը դարձավ Խորհրդային Ռուսաստանի իշխանությունների առաջնահերթ խնդիրներից մեկը: 1921 թ. հուլիսի 18-ին Համառուսաստանյան Կենտգործկոմին կից ստեղծվում է սովյալներին օգնելու հանձնաժողով՝ Կենտգործկոմի նախագահ Մ. Կալինինի նախագահությամբ: Ռուսաստանի ամբողջ տարածքում հիմնվում են տեղական հանձնաժողովներ:

Ինչպես աշխարհի մի շարք պետությունները, այնպես էլ Ռուսաստանին դաշնակից խորհրդային հանրապետությունները շտապեցին օգնության ձեռք մեկնել Ռուսաստանի սովյալներին: Շնորհակալ այդ գործին անմասն չմնաց նաև հայ ժողովուրդը, որը բաց գիտեր, թե ինչ է սովը, և չէր ուրանում ռուս ժողովրդի եղբայրական օգնությունը: Հայաստանի բնակչության անխտիր բոլոր խավերը շտապեցին իրենց սուղ միջոցներից բաժին հատկացնել Ռուսաստանի սովյալներին՝

նրանց օգտին փոխանցելով աշխատավարձի, մթերային օրապահիկների մի մասը, գյուղմթերքներ, կանխիկ դրամ և այլն:

Հայաստանի տարբեր շրջաններում կազմակերպվում են շաբաթօրյակներ, բարեգործական հանդիսություններ, ներկայացումներ, որոնցից ստացված ամբողջ հասույթը նույնպես ուղարկվում է սովյալներին: Այսպես՝ 1921 թ. օգոստոսի 9-ին նախաձեռնող խմբի կողմից Ալեքսանդրապոլում հրավիրվում է պետական մի շարք հիմնարկությունների պետծառայողների ընդհանուր ժողով, որտեղ որոշվում է. մերձվոլգյան սովյալների օգտին փոխանցել մեկ ամսվա աշխատավարձը և 18 օրվա մթերային օրապահիկը, կազմակերպել բարեգործական երեկույթներ և ամբողջ հասույթը փոխանցել սովյալներին:[586]

Օգնության գործը Հայաստանում պետական մակարդակով կազմակերպելու և անցկացնելու նպատակով, ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1921 թ. օգոստոսի 22-ի նիստի որոշմամբ, ՀՍԽՀ պարենժողկոմ Իվանյանի նախագահությամբ ստեղծվում է սովյալներին օգնելու հանձնաժողով:[587] ՀՍԽՀ Ժողկոմխորհի համապատասխան դեկրետը հրապարակվում է սեպտեմբերի 1-ին: Ինչպես ճիշտ արձանագրում է «Խորհրդային Հայաստան» օրաթերթը՝ «Դեկրետը գալիս է միայն կազմակերպչական հունի մեջ դնելու հայ ժողովրդի սկսած մեծ գործը»:[588]

Երևանի կուսկազմակերպության 1921 թ. սեպտեմբերի 1-ի ժողովում հայ կոմունիստները միաձայն որոշում են սեպտեմբերի 1-ից սկսած 4 ամսվա ընթացքում սովյալների օգտին փոխանցել աշխատավարձի և մեկ ամսվա հացի օրապահիկի 25 %-ը, 1 ամսվա ալյուրը և 3 ամսվա հարվածային օրապահիկի բոլոր մթերքները: Մայրաքաղաքում կազմակերպվում են բարեգործական ներկայացումներ, տարբեր միջոցառումներ, որոնց ընթացքում հանգանակած գումարները փոխանցվում են սովյալների օգտին:

Օգնության գործին անմասն չէին նաև Հայաստանի շրջանները: Սեպտեմբերի 7-ին Դիլիջանում հրավիրված պետծառայողների և բանվորների ընդհանուր ժողովում որոշվում է սովյալների օգտին փոխանցել հացի օրապահիկի մի մասը և մեկ ամսվա աշխատավարձը: Շրջանի քաղաքներում և գյուղերում ստեղծվում են սովյալներին օգնելու հանձնաժողովներ:[589] Ղարաքիլիսայում (Վանաձոր) սեպտեմբերի

---

[586] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 94, թթ. 34-35:
[587] Տե՛ս նույն տեղում. ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 30:
[588] Խորհրդային Հայաստան, Երևան, սեպտեմբերի 1, 1921, թիվ 163:
[589] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114. ց. 2, գ. 94, թթ. 73, 89, 102:

14-ին կազմակերպված երեկույթում հանգանակվում է 2 մլն. հայկական խորհրդային ռուբլի, իսկ սեպտեմբերի 29-ին՝ 5 մլն.: Ալեքսանդրապոլում (Գ-յումրի) կայացած կուսակցական խորհրդակցությանը որոշվում է. սովյալների օգտին փոխանցել սեպտեմբեր ամսվա աշխատավարձի՝ 50, հետագա 5 ամիսների՝ 25 %-ը:[590]

Ռուսաստանի սովյալներին օգնելու գործին անմասն չէր մնում նաև ՀՍԽՀ Կարմիր բանակը: Հայկական 2-րդ հրաձգային գունդը սեպտեմբերի 28-ին Համամլու գյուղում կազմակերպում է. ներկայացում, որից ստացած ամբողջ հասույթը՝ 1 մլն. 20 հազար հայկական խորհրդային ռուբլի, փոխանցվում է սովյալների օգտին, փոխանցվում է. նաև ամբողջ գնդի օգոստոս-սեպտեմբեր ամիսների աշխատավարձը:[591] Նման տեղեկությունների շարքը կարելի է շարունակել, սակայն նշվածն էլ բավական է, որպեսզի պարզ դառնա, թե որքան սրտացավ էր վերաբերվում Ռուսաստանի սովյալներին օգնելու գործին հայ ժողովուրդը:

Սակայն, ինչպես երևում է. ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921 թ. սեպտեմբեր ամսվա շրջաբերականից, կենտրոնական իշխանություններն այդքան էլ գոհ չէին կովկասյան հանրապետություններում սովյալներին օգնելու գործի կազմակերպումից և հանգանակած օգնության չափերից: Շրջաբերականում նշվում է, որ հանրապետությունների կոմկուսի Կենտկոմների կողմից ներկայացված արձանագրություններից երևում է, որ «գեկավար կուսկազմակերպությունները շատ քիչ ուշադրություն են հատկացնում այդ կարևոր և անհետաձգելի գործին»: Կովկասյան բյուրոն առաջարկում է առավել մեծ ուշադրություն հատկացնել սովյալներին օգնելու գործին և մեկ շաբաթվա ընթացքում մի շարք տեղեկություններ ներկայացնել իրեն: Մասնավորապես. ե՞րբ են կազմակերպվել սովյալներին օգնելու հանձնաժողովները, որքա՞ն օգնություն է արդեն իսկ հավաքվել և ուղարկվել սովյալներին, ինչպե՞ս են վերաբերվում այդ կարևոր գործին բնակչության տարբեր խավերը և Կարմիր բանակի զորամասերը: Շրջաբերականի վերջում Կովկասյան բյուրոն հույս է հայտնում, որ հանրապետությունների Կենտկոմներն ամենայն լրջությամբ կվերաբերվեն բարձրացրած հարցերին:[592]

---

[590] ՀԱԱ, ֆ. 162, ց. 1, գ. 2, թթ. 23, 192, 195:
[591] Կարմիր Շիրակ, Ալեքսանդրապոլ, հոկտեմբերի 6, 1921, թիվ 21:
[592] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 126, թ. 4:

Ի պատասխան նշված «մեղադրանքների», Ռուսաստանի սովյալներին օգնելու ՀՍԽՀ Կենտրոնական հանձնաժողովը 1921 թ. սեպտեմբերի 24-ին շտապում է հեռագրել Մոսկվա՝ Ռուսաստանի Կենտրոնական հանձնաժողովին: Ձեկուցագրում նշվում է, որ հանձնաժողովը հիմնվել է ՀՍԽՀ Ժողկոմխորհի սեպտեմբերի 1-ի դեկրետով և անմիջապես անցել աշխատանքի, տեղեկացվում է, որ սովյալներին օգնելու գործին մասնակցում է ամբողջ հայ ժողովուրդը, որը փորձում է հնարավորինս շատ օգնություն հավաքել և ուղարկել եղբայրական ռուս ժողովրդին:[593]

1921 թ. սեպտեմբերի վերջին ՀՍԽՀ Կենտրոնական հանձնաժողովը զեկուցագիր է ներկայացնում նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմ, ուր տեղեկություններ է հայտնում Հայաստանի տարբեր շրջաններում, Երևանի, Էջմիածնի, Նոր-Բայազետի, Լոռու, Դիլիջանի նահանգներում հանգանակած բնամթերային և դրամական օգնության մասին: Նշելով, որ կապի անբավարարության պատճառով դժվար է ներկայացնել առավել ամբողջական և ամփոփ տվյալներ, հանձնաժողովը հուշում է, որ օգնության գործին թեև լծվել են ինչպես տեղական կուսակցական, արհմիութենական մարմինները, այնպես էլ անկուսակցականները և բանակային զորամասերը, սակայն դեռ լուրջ աշխատանք է հարկավոր կատարել, որպեսզի խորությամբ ընկալվի օգնության գործի կարևորությունը և դրան ընդգրկվեն անխտիր բոլորը: Հանձնաժողովը նշում է, որ մեծ հույսեր է կապում նախատեսվող «Օգնության շաբաթի» անցկացման հետ, և պարտավորվում է այսուհետ պարբերաբար ամբողջական տեղեկություններ ներկայացնել ՀԿ(բ)Կ Կենտկոմին:[594]

Հետևելով Ռուսաստանի օրինակին, ուր 1921 թ. սեպտեմբերի 26-ից - հոկտեմբերի 2-ը հայտարարվել էր Համառուսաստանյան օգնության շաբաթ, ՀԿ(բ)Կ Կենտկոմը հոկտեմբերի 3-ին որոշում է «Օգնության շաբաթը» անցկացնել նաև Հայաստանում, և լայն քարոզարշավ հայտարարել մամուլում:[595]

1921 թ. աշնան-ձմռանը Խորհրդային Հայաստանի կենտրոնական և տեղական մամուլում բազմաթիվ կոչեր, հոդվածներ, տեղեկություններ և հաղորդագրություններ են տպագրվում: «Օգնեցեք Ռուսաստանի սովյալներին» առաջնորդող հոդվածում «Կարմիր Լոռի» թերթը գրում է. «Լոռու գյուղացիությունն իր օգնությամբ եղբայրական

---

[593] Советское содружество народов, с. 239-240.
[594] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 126, թ. 7: Տե՛ս նաև ԲՀԱ, Երևան, 1972, թիվ 2, էջ 47-48:
[595] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 40:

վերաբերմունք պետք է արտահայտի դեպի Խորհրդային Ռուսաստան», «Անտարբերությունը՝ հանցանք է»: Նմանատիպ կոչեր տպագրվեցին թերթի մի շարք համարներում, թերթը պարբերաբար հաղորդումներ է գետեղում նաև Լոռու տարբեր բնակավայրերում հանգանակած օգնության մասին:[596]

Լայն քարոզարշավ ծավալեցին նաև «Խորհրդային Հայաստան», «Կարմիր Շիրակ», «Կարմիր Զինվոր» և այլ թերթերը:

ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահությունը 1921 թ. հոկտեմբերի 13-ին որոշում է հոկտեմբերի 23-ից նոյեմբերի 1-ը հայտարարել «Մերձվոլգայի սովյալներին օգնելու շաբաթ», կազմակերպման և անցկացման ղեկավարությունը դրվում է Կենտրոնական Եռյակի վրա, վերջինիս աշխատանքը հայտարարվում է հարվածային: ՀՍԽՀ բոլոր հիմնարկություններին և կազմակերպություններին առաջարկվում է ամեն տեսակի օժանդակություն ցույց տալ Կենտրոնական Եռյակին:[597] Վերջինս անմիջապես գործի է անցնում, նրա նախագահ Ալ. Խաչակյանի ստորագրությամբ շրջաբերականում նշվում է. որ հայտարարված «Օգնության շաբաթը» հետապնդում է մեկ գլխավոր նպատակ՝ հնարավորինս շատ փող, կենսամթերք և այլ ապրանքներ հանգանակել ու փոխանցել Մերձվոլգայի սովյալների օգտին: Կենտրոնական Եռյակի նախագահը կոչ է անում ամենուրեք հիմնել տեղական եռյակներ և բարձր մակարդակով անցկացնել «Օգնության շաբաթը»:[598]

Մերձվոլգայի սովյալներին օգնելու գործը Հայաստանում շարունակվեց նաև 1921-1922 թթ. ձմռանը: Շնորհակալ այդ գործին միացան նաև արևմտահայ զանգվածները, այսպես՝ Վրաստանում ՀՍԽՀ Արևմտահայ բյուրոյի նախագահը 1922 թ. հունվարի 12-ին Ալ. Մյասնիկյանին տեղեկացնում է, որ հունվարի 15-ին Կոնսերվատորիայի դահլիճում կազմակերպվելու է բարեգործական համերգ, որից ստացած հասույթի 10 %-ը գումարվելու է արևմտահայերի կողմից հանգանակված այլ միջոցներին, և փոխանցվելու է Մերձվոլգայի սովյալներին: Բյուրոյի նախագահը խնդրում է Մյասնիկյանին ներկա գտնվել բարեգործական համերգին:[599]

---

[596] Կարմիր Լռի, Զապալոցկի, սեպտեմբերի 22, 29, հոկտեմբերի 2, 16, 30, նոյեմբերի 13, 1921, թիվ 15, 17, 18, 22, 25, 27:
[597] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 97, թ. 44:
[598] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 126, թ. 9: Տե՛ս նաև ԲՀԱ, Երևան, 1972, թիվ 2, էջ 46-47:
[599] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 136, թ. 142:

Այսպիսով, գտնվելով սոցիալական ծանր կացության մեջ, հայ ժողովուրդը, այնուհանդերձ, իր սրտացավ վերաբերմունքը ցուցաբերեց Ռուսաստանի սովյալներին, և իր օգնության լուման ներդրեց եղբայրակից ռուս ժողովրդին օգնելու համընդհանուր գործում: «Ճիշտ է, այդ օգնությունը մեծ չէր, բայց այն կարևոր և ուսանելի էր խորհրդային ժողովուրդների բարեկամության, նրանց եղբայրական ամուր կապերի առումով»:[600]

[600] Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, էջ 192-193:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի և Ռուսաստանի 1920-1922 թթ. հարաբերությունների պատմության հանգամանալից ուսումնասիրման արդյունքում կարելի է հանգել հետևյալ եզրահանգումների.

- Հայաստանը խորհրդայնացնելու խնդիրը Խորհրդային Ռուսաստանի իշխանություններն առաջին հերթին կարևորում էին տարածաշրջանային շահերի տեսանկյունից, Անդրկովկասյան ամբողջ տարածաշրջանը խորհրդայնացնելու և խորհրդային ազդեցության ոլորտում պահելու, քեմալական Թուրքիայի հետ անմիջական հարևանակցության ցամաքային կապ հաստատելու անհրաժեշտությամբ:

Քեմալաբոլշևիկյան ռազմաքաղաքական ուժգին ճնշումների տակ 1920 թ. վերջին դադարեց գոյություն ունենալ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, նրան փոխարինեց Հայաստանի Երկրորդ՝ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը: Ժամանակի միջազգային հարաբերություններում և տարածաշրջանում ստեղծված քաղաքական բարդ իրավիճակում՝ Հայաստանի արևմտյան դաշնակիցների դատապարտելի անգործության, Խորհրդային Ռուսաստանի որդեգրած արևելյան քաղաքականության, որը հիմնված էր քեմալական Թուրքիայի հետ սերտ համագործակցության վրա, Խորհրդային Ադրբեջանի՝ թշնամական, Վրաստանի հանրապետության՝ ոչ բարեկամական տրամադրվածության պայմաններում, Հայաստանի խորհրդայնացումն անխուսափելի էր:

- Խորհրդային Հայաստանում իշխանության առաջին ամիսներին հայ բոլշևիկները մեխանիկորեն կրկնեցին Խորհրդային Ռուսաստանում 1918-1920 թթ. բոլշևիկների կիրառած կառավարման ձևերը, և փորձում էին իրականացնել նույն քաղաքականությունը: Ինչպես խորհրդային մյուս հանրապետություններում, Հայաստանում նույնպես հաստատվեց կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության մենիշխանությունը:

Բոլշևիկների կողմից Հայաստանում գործադրված բռնությունների քաղաքականությունը հանգեցրեց ներքաղաքական իրադրության կտրուկ սրմանը: Հայաստանի խորհրդայնացումից ընդամենը երկուս ու կես ամիս անց, 1921 թ. փետրվարի կեսերին երկրում ապստամբություն բռնկվեց, որի արդյունքում խորհրդային իշխանությունը Հայաստանի մի մասում տապալվեց:

Փետրվարյան ապստամբության պարտությունը և խորհրդային իշխանության վերահաստատումը Հայաստանում անխուսափելի էր, քանի որ խորհրդային իշխանության թիկունքին կանգնած էր Խորհրդային Ռուսաստանը և Կարմիր բանակը:

Փետրվարյան ապստամբությունը սթափեցնող ներգործություն ունեցավ խորհրդային իշխանությունների վրա, ստիպեց առավել զգուշորեն իրականացնել խորհրդային իշխանությունը Հայաստանում:

- Ռուսաստանի և Հայաստանի խորհրդային իշխանությունների նկատմամբ հայ ժողովրդի վերաբերմունքը և վստահության հարցը կապված էր ՀՍԽՀ սահմանների հարցի արդարացի լուծման հետ:

Հայաստանի խորհրդայնացումով ռազմաքաղաքական նպաստավոր իրավիճակ ստեղծվեց հայ-վրացական տարածքային վիճելի խնդիրներից մեկը՝ Լոռու չեզոք գոտու խնդիրը, Հայաստանի օգտին լուծելու համար: Եթե Խորհրդային Ռուսաստանի համար Լոռու չեզոք գոտում վրացական զինագրավման դեմ բարձրացրած ապստամբությունը նախևառաջ կարևորվում էր Վրաստանի խորհրդայնացման հեռանկարներով, ապա վրացական զինագրավումից Լոռին ազատագրելը և Խորհրդային Հայաստանին միացնելը նրա բնակչության միահամուռ ցանկությունն էր:

Լոռու ազատագրումը վրացական զինագրավումից և Հայաստանին միացնելը հանդիսացավ խորհրդային երկու հանրապետությունների՝ Ռուսաստանի և Հայաստանի ռազմաքաղաքական համագործակցության առաջին արդյունքը:

- Հայաստանի խորհրդայնացումը նոր հունի մեջ դրեց նաև Զանգեզուրի և Լեռնային Ղարաբաղի հարցը: Եթե հայ ժողովրդի մեծ զավակ Գարեգին Նժդեհի գլխավորած հերոսական պայքարի շնորհիվ Զանգեզուրը կազմեց Խորհրդային Հայաստանի անբաժան մասը, ապա Լեռնային Ղարաբաղը ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի պլենումի ոչ օրինական որոշումով միացվեց Խորհրդային Ադրբեջանին: Դրանով իսկ կոպտորեն խախտվեց միջազգային իրավունքի հիմնարար՝ ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը, ոտնահարվեցին Ղարաբաղի հայ բնակչության իրավունքները, անտեսվեցին Խորհրդային Հայաստանի շահերը:

- Հայաստանի խորհրդայնացումով դարձյալ առաջին պլան մղվեց խորհրդաթուրքական նոր կոնֆերանս հրավիրելու հարցը: Հայ-թուրքական սահմանի որոշման հարցը Ռուսաստանի իշխանությունները շարունակում էին կապել խորհրդաբեմալական հակահմպերիա-

լիստական դաշինք ստեղծելու խնդրի հետ, այն կազմում էր բոլշևիկների արևելյան քաղաքականության առանցքը: Թուրքիան և «ամբողջ Արևելքը» խորհրդայնացնելու բոլշևիկյան ծրագրերը դեռևս շարունակում էին օրակարգում մնալ, թեև դրանց մասին չէր բարձրաձայնվում:

1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը ճանաչեց թուրքական «Ազգային ուխտը», Թուրքիային զիջեց Կարսի մարզը, Սուրմալուի գավառը (հայոց խորհրդանիշ Արարատ լեռով), որը երբեք նրա կազմում չէր եղել, Նախիջևանի երկրամասը (Շարուր-Դարալագյազի շրջանի հարթավայրային մասով), ինքնավար տարածքի կարգավիճակով փոխանցվեց Խորհրդային Ադրբեջանի խնամակալությանը:

Ռուս-թուրքական «դավադիր գործարքով» Հայաստանից խլվեցին և Թուրքիային ու Խորհրդային Ադրբեջանին նվիրաբերվեցին նրա պատմական տարածքների մեծ մասը: Ո՛չ Խորհրդային Ռուսաստանը, և ո՛չ էլ քեմալական Թուրքիան որևէ իրավասություն չունեին տնօրինելու հայ ժողովրդի ճակատագիրը, ուստի տարածքային սահմանազատման հարցերում Մոսկվայի, ինչպես նաև նրանից անմիջականորեն բխող Կարսի պայմանագրերի նկատմամբ Հայաստանն իրավական պարտավորություն կրել չի կարող:

Մոսկվայի և Կարսի ոչ օրինական պայմանագրերով Խորհրդային Հայաստանը դարձավ խորհրդային արևելյան քաղաքականության «փրկագինը», շղթայվեց «համաշխարհային հեղափոխության» սնանկ գաղափարախոսության շղթաներով:

Մյուս կողմից՝ Ալեքսանդրապոլի թուրք-հայկական պայմանագրի առկայությունը, հայկական տարածքների՝ քեմալական զորքերի զինագրավման տակ գտնվելու փաստը, Խորհրդային Ռուսաստանի թե ներքին, և թե արտաքին ծանր դրությունը, դրան հակառակ՝ քեմալական Թուրքիայի համար բարենպաստ միջազգային իրադրությունը, հնարավորություն չտվեցին խորհրդային դիվանագիտությանը Մոսկվայի և Կարսի կոնֆերանսներում իր կամքը թելադրել Թուրքիային, և փոփոխություններ կատարել Ալեքսանդրապոլի պայմանագրով գծված թուրք-հայկական սահմանում: Հայաստանի համար միակ դրականը թերևս կարելի է համարել այն, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Թուրքիան ճանաչեց Հայաստանի ինքնիշխանությունը, զրկվեց նրա ներքին գործերին միջամտելու հնարավորությունից:

Հայաստանի սահմանների որոշման հարցում Խորհրդային Ռուսաստանը չպաշտպանեց հայ ժողովրդի շահերը, դրանք զոհաբե-

րեց քեմալական Թուրքիայի հետ համագործակցության վրա հիմնված իր արևելյան քաղաքականության հեռանկարներին: Ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանի պատմական տարածքների զգալի մասը մնաց Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի կազմում, դրանով իսկ տարածաշրջանում ուժեղացավ թուրք-ադրբեջանա-վրացական գործոնը, թուլացավ՝ հայկականը:

• Խորհրդային հանրապետությունների պաշտպանության, տնտեսության վերականգնման, փոխօգնության, ռազմաքաղաքական սերտ հարաբերություններ հաստատելու ընդհանուր շահերը «Հրամայաբար թելադրում էին առանձին խորհրդային հանրապետությունների պետական միավորումը»:

Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի միջպետական հարաբերությունների ձևավորման գործընթացը սերտորեն շաղկապված էր անդրկովկասյան հանրապետությունների և Ռուսաստանի միջև ձևավորվող հարաբերությունների հետ, և ընթանում էր զուգահեռ:

Ի տարբերություն Վրաստանի և Ադրբեջանի, Անդրֆեդերացիայի շտապ կազմավորման հարցում Հայաստանի ղեկավարությունն անվերապահորեն պաշտպանում էր Կովկասյան բյուրոյի քաղաքականությունը, բանզի համոզված էր, որ ֆեդերացիայի գաղափարը բխում է Հայաստանի և հայ ժողովրդի շահերից: Հայաստանի իշխանությունները դրանում էին տեսնում երկիրը և ժողովրդին սոցիալ-տնտեսական ծանր վիճակից դուրս հանելու միակ ճանապարհը:

• 1921 թ. ամբողջ ընթացքում Խորհրդային Ռուսաստանի իշխանություններն աստիճանաբար ուժեղացնում էին իրենց քաղաքական ազդեցությունը խորհրդային հանրապետությունների, այդ թվում և Հայաստանի, թե ներքին, և թե արտաքին քաղաքականության մեջ: Եթե ներքին քաղաքականությանն առնչվող հարցերում ազգային հանրապետությունները, այնուամենայնիվ, զգալի ինքնուրույնություն ունեին, ապա արտաքին քաղաքականության հարցերում՝ այն հետևողականորեն աստիճանաբար իսպառ վերացվեց:

Սակայն զրկելով խորհրդային հանրապետություններին, այդ թվում և Հայաստանին, ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու իրավունքից, Խորհրդային Ռուսաստանը միաժամանակ ստանձնել էր միջազգային ասպարեզում նրանց շահերը ներկայացնելու և պաշտպանելու պարտավորությունը:

• Խորհրդային Ռուսաստանի կուսակցական և պետական իշխանությունները 1921-1922 թթ. աստիճանաբար կյանքի էին կոչում ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարում որդեգրած՝ «խորհրդային հանրապետությունների պետական միավորմանը» տանող քաղաքականությունը: Սակայն, խնդիրը դնելով հիմնականում ճիշտ, բոլշևիկյան կուսակցությունը իրականում որդեգրեց ազգերի ձուլման, խորհրդային ազգային հանրապետությունների ներքին և արտաքին ինքնուրույնության իրավազրկման, դասակարգային և կուսակցական շահերը ազգային շահերից վեր դասելու քաղաքականություն, ինչը շղարշվում էր համաշխարհային սոցիալիստական հեղափոխության շահերով:

1922 թ. երկրորդ կեսից Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցությունը, հատկապես նրա կենտրոնամետ թևը, Ստալինի գլխավորությամբ, որոշեց վերջ տալ խորհրդային որոշ հանրապետություններում նկատվող անջատողական տրամադրություններին, և այն խառնաշփոթ իրավիճակին, որ ստեղծվել էր այդ հանրապետությունների և Ռուսաստանի փոխհարաբերություններում:

Կոմունիստական կուսակցությունը օգոստոսից գործնական քայլերի դիմեց Ռուսական նախկին կայսրության տարածքի վրա առաջացած խորհրդային հանրապետությունների հետ ՌՍՖԽՀ-ի միջպետական փոխհարաբերությունները վերջնականապես կարգավորելու ուղղությամբ:

Հայաստանի ղեկավարությունը պաշտպանում էր ՌՍՖԽՀ-ի հետ պետական միավորման գաղափարը և ինչպես Անդրֆեդերացիայի կազմավորման, այնպես էլ Ռուսաստանի հետ միավորման հարցում առաջին պլան էր դնում տնտեսական շահերը, պատրաստ էր հանուն դրանց գնալ Հայաստանի ինքնիշխանության զգալի սահմանափակումների:

ԽՍՀՄ կազմավորման գործընթացը պաշտոնապես ավարտվեց 1922 թ. դեկտեմբերի վերջին: Խորհրդային չորս հանրապետությունների կողմից լիազորված պատվիրակությունների կոնֆերանսը դեկտեմբերի 29-ին հաստատեց ԽՍՀՄ կազմավորման մասին Հռչակագրի և Միութենական պայմանագրի նախագծերը: Հռչակագրում արձանագրվեց, որ ԽՍՀՄ-ը բաց է խորհրդային բոլոր հանրապետությունների համար, և նրա կազմավորումը վճռական քայլ է՝ մոտ ապագայում «Համաշխարհային Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն ստեղծելու ճանապարհին»:

Թեև, ի տարբերություն ստալինյան «ավտոնոմիզացիայի ծրագրի» ԽՍՀՄ-ի կազմավորումը որակապես առաջընթաց քայլ էր, այնուհանդերձ՝ նրա ստեղծումը, կարծում ենք, հասունացած չէր:

Չանտեսելով խորհրդային հասարակարգում գոյություն ունեցող բացասական երևույթները, կոմունիստական կուսակցության ամենատիրությունը, նրա կողմից կազմակերպված բռնությունները, այլախոհության հետապնդումը և այլն, ԽՍՀՄ կազմում խորհրդային հանրապետությունները, այդ թվում Հայաստանը, պահպանելով ազգային պետականությունը, ունեին տարածքային ինքնավարության իրական կարգավիճակ, պաշտպանված էին արտաքին սպառնալիքներից, ստացան տնտեսական զարգացման լայն հնարավորություններ:

- Ստանձնելով իշխանությունը Հայաստանում հայ կոմունիստները գիտակցում էին, որ երկրում խորհրդային կարգեր հաստատելու գործընթացի հաջողությունն ամբողջությամբ կախված է լինելու Խորհրդային Ռուսաստանի կողմից տրամադրվելիք սոցիալ-տնտեսական օգնության չափերից, դա էին դիտում Հայաստանի խորհրդային հանրապետության կայացման և գոյության միակ երաշխիքը:

Սակայն, 1920 թ. վերջին Ռուսաստանը հայտնվել էր սոցիալ-տնտեսական խորը ճգնաժամում: Համաշխարհային և քաղաքացիական պատերազմների հետևանքով երկիրը կորցրել էր ազգային հարստության ավելի քան քառորդ մասը: Այս ամենը նվազեցնում էր Ռուսաստանի առանց այն էլ սակավ հնարավորությունները խորհրդային հանրապետություններին, այդ թվում Հայաստանին բավարար չափով օգնություն տրամադրելու խնդրում:

Այն չնչին օգնությունը, որ խորհրդային իշխանության առաջին ամիսներին (մինչև փետրվարյան ապստամբությունը) մեծ դժվարություններով հասնում էր Հայաստան, հիմնականում տրամադրվում էր Կարմիր բանակի զորամասերին: Սակայն պետք է նշել, որ խորհրդային իշխանությունները մտահոգ էին նաև Հայաստանի բնակչության համար օգնություն հասցնելու խնդրով, այլ հարց է, թե որքանով էր դա նրանց հաջողվում: Եթե Հայաստանի խորհրդայնացումով հայ ժողովրդի մի հատվածը փրկվեց ֆիզիկական բնաջնջման թուրքական սպառնալիքից, ապա խորհրդային իշխանության առաջին ամիսներին նրա սոցիալ-տնտեսական դրությունն էլ ավելի վատթարացավ:

- 1921 թ. գարնանից Ռուսաստանի կառավարությունը գործուն միջոցներ ձեռնարկեց Հայաստանին մեծածավալ օգնություն հասցնելու ուղղությամբ: Խորհրդային Հայաստանի ավերված տնտե-

սության վերելքն ապահովելու գործում նշանակալի դեր էր խաղալու նոր տնտեսական քաղաքականությունը, որը մշակվել էր Ռուսաստանում և կիրառվեց նաև Հայաստանում՝ հարմարեցված Հայաստանի առանձնահատկություններին:

1921 թ. երկրորդ կեսից Խորհրդային Ռուսաստանի օգնության ծավալներն ընդլայնվեցին: Խորհրդային Ռուսաստանի կառավարության տրամադրած վարկերով Հայաստանի համար անհրաժեշտ պարենամթերք, տնտեսական և արդյունաբերական տարբեր ապրանքներ ձեռք բերելու գործում մեծ աշխատանք էր կատարում ՌՍՖԽՀ կառավարությանը կից ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությունը՝ Ս. Տեր-Գաբրիելյանի ղեկավարությամբ:

Ռուսաստանի կենտրոնական մարմինները աջակցում էին ՀՍԽՀ իշխանություններին նրանց կողմից բարձրացված սոցիալ-տնտեսական բնագավառի գրեթե բոլոր հարցերում, և հնարավորինս օգնություն տրամադրում Հայաստանի բնակչությանը: Եվ եթե 1921 թվականին Խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանին տրամադրված օգնությունը գրեթե ամբողջությամբ հատկացվում էր երկրի սպառողական պահանջները բավարարելու, ժողովրդին կերակրելու համար, ապա՝ հատկապես 1922 թ. աշնանից, երբ որոշ չափով վերակենդանացավ և ոտքի էր կանգնում գյուղատնտեսությունը, հարթահարվում էր սովը, Ռուսաստանի օգնությունն ուղղվեց Հայաստանի արդյունաբերական համալիրի վերականգնմանը, նոր արտադրամասերի կառուցմանը, հետևաբար՝ աշխատատեղերի ստեղծմանը, ինչը մեծ նշանակություն ուներ երկրի առաջընթացն ապահովելու համար:

1921-1922 թթ. Խորհրդային Ռուսաստանը Հայաստանին օգնություն ցույց տվեց նաև մշակույթի, լուսավորության, գիտության, բժշկության և այլ բնագավառներում՝ փորձառու մասնագետներ, մեծ քանակությամբ օժանդակ գրականություն, բժշկական սարքավորումներ, դեղորայք և այլ նյութեր ուղարկելով Հայաստան: Ռուսաստանի կողմից տրամադրված բուզմակողմանի օգնության շնորհիվ 1922 թ. վերջերին Հայաստանում հաղթահարվեց շուրջ 250 հազար բնակչություն ընդգրկող սովը, անցյալում էին մնում համաճարակային հիվանդությունները, աշխուժանում էր երկրի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, աստիճանաբար բարձրանում էր ժողովրդի կենսամակարդակը: Նշված ժամանակահատվածում փաստորեն դրվեց այն հիմքը, որի վրա զարգացավ և աննախադեպ հաջողությունների հասավ Հայաստանի ժողովրդական տնտեսությունը, գիտությունն ու մշակույթը խորհրդային ամբողջ ժամանակաշրջանում:

• 1921-1922 թթ. Խորհրդային Ռուսաստանի բնակչության մի զգալի մասը հայտնվել էր սովի ճիրաններում: Այն առավել մեծ չափերի հասավ Ռուսաստանի հատկապես մերձվոլգյան շրջաններում և ընդգրկեց մոտ 15 միլիոն մարդ:

Սովյալներին օգնելու գործի կազմակերպումը դարձավ Խորհրդային Ռուսաստանի իշխանությունների առաջնահերթ խնդիրներից մեկը: Ինչպես աշխարհի մի շարք պետությունները, այնպես էլ Ռուսաստանին դաշնակից խորհրդային հանրապետությունները շտապեցին օգնության ձեռք մեկնել Ռուսաստանի մերձվոլգյան շրջանների սովյալներին: Շնորհակալ այդ գործին անմասն չմնաց նաև հայ ժողովուրդը, որը քաջ գիտեր թե ինչ է սովը, և չէր ուրանում ռուս ժողովրդի եղբայրական օգնությունը: Հայաստանի բնակչության անխտիր բոլոր խավերը շտապեցին իրենց սուղ միջոցներից բաժին հատկացնել Ռուսաստանի սովյալներին՝ նրանց օգտին փոխանցելով աշխատավարձի, մթերային օրապահիկների մի մասը, զյուղմթերքներ, կանխիկ դրամ և այլն: Գտնվելով սոցիալական ծանր կացության մեջ, հայ ժողովուրդը, այնուհանդերձ, իր սրտացավ վերաբերմունքը ցուցաբերեց Ռուսաստանի սովյալներին, և իր օգնության լուման ներդրեց եղբայրակից ռուս ժողովրդին օգնելու համընդհանուր գործին:

• Հայաստանի և Ռուսաստանի 1920-1922 թթ. փոխհարաբերությունների պատմության հանգամանալից ուսումնասիրման արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը որպես անկախ ու ինքնիշխան պետություններ, միջազգային հանրության լիիրավ անդամներ, շարունակում են զարգացնել երկու երկրների և ժողովուրդների միջև պատմականորեն ձևավորված բարեկամական սերտ հարաբերությունները: Դրանք, ի տարբերություն 1920-1922 թթ. հարաբերությունների, կաշկանդված չեն կոմունիստական կուսակցության գաղափարական կապանքներով, հիմնվում են իրավահավասարության սկզբունքի վրա:

Երկու պետությունների միջպետական փոխհարաբերությունները կառուցվում են թե երկկողմանի, և թե բազմակողմանի պայմանագրերի և համաձայնագրերի հիման վրա: Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների մեծ մասի հետ միասին Ռուսաստանը և Հայաստանը հանդիսանում են Խորհրդային Միության փլուզումից հետո 1991 թ. դեկտեմբերին կազմավորված Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) հիմնադիր անդամներ և ակտիվորեն մասնակցում

են ԱՊՀ շրջանակներում տեղի ունեցող ռազմաքաղաքական և տնտեսական ինտեգրման գործընթացներին: Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև երկկողմանի առաջին պայմանագիրը՝ «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության» մասին, ստորագրվեց 1991 թ. դեկտեմբերի 29-ին Մոսկվայում: Հետագա տարիներին Հայաստանի և Ռուսաստանի միջև ստորագրվեցին տարբեր բնագավառներում համագործակցելու մասին տասնյակ համաձայնագրեր և պայմանագրեր: Ռուսաստանի ակտիվ և վճռական միջնորդության շնորհիվ ԼՂՀ - Ադրբեջան հակամարտության գոտում 1994 թ. զարնանը հաստատված հրադադարից հետո հայ-ռուսական ռազմաքաղաքական հարաբերություններում արմատական քեկում կատարվեց. անշեղորեն զարգանալով, դրանք վերածեցին ռազմաքաղաքական սերտ դաշինքի: 1995 թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրվեց Հայաստանի տարածքում ռուսական ռազմակայան հիմնելու մասին հայ-ռուսական համաձայնագիր, որը ԱՊՀ երկրների միջպետական հարաբերությունների մեջ աննախադեպ փաստաթուղթ է: Համաձայնագիրը, որ ուղղված չէ որևէ երրորդ պետության դեմ, և կոչված է նպաստելու ԱՊՀ արտաքին սահմանների անվտանգության ապահովման գործին, ամրապնդեց ռուսական զորակազմի Հայաստանում գտնվելու իրավական կարգավիճակը, կարգավորեց հայ-թուրքական և հայ-իրանական սահմանները համատեղ պաշտպանելու խնդիրը: Մարտի 16-ի հայ-ռուսական համաձայնագիրը, որի ստորագրման օրն իսկ խորհուրդ է պարունակում (հիշենք 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը), վկայեց ռազմական ոլորտում երկու երկրների միջև փոխվստահության և սերտ համագործակցության մասին: Հայ-ռուսական ռազմական համաձայնագրին հաջորդեց երկու ժողովուրդների համար քաղաքական և բարոյական բացառիկ մեծ նշանակություն ունեցող ևս մեկ պատմական իրադարձություն՝ Հայոց ցեղասպանության 80-ամյակի նախօրեին (1995 թ. ապրիլի 14-ին) Ռուսաստանի Դաշնության Պետական Դուման հատուկ որոշումով դատապարտեց 1915-1922 թթ. Օսմանյան Թուրքիայում հայերի բնաջնջման կազմակերպիչներին և, արտահայտելով իր խոր կարեկցանքը հայ ժողովրդին, ապրիլի 24-ը ճանաչեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Պետդումայի հայտարարության մեջ (որն ընդունվեց միաձայն) իրատեսորեն արձանագրվեց. «Իր պատմական հայրենիքում եղբայրական հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը կատարվել է Ռուսաստանի քայքայման համար պայմաններ ստեղծելու նպատակով»:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջպետական փոխհարաբերությունները հիմնվում են 1997 թ. օգոստոսի 29-ին Մոսկվայում երկու հանրապետությունների նախագահների կողմից ստորագրված «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» հիրավի պատմական պայմանագրի վրա: Հայ-ռուսական «Մեծ պայմանագիրը» որոշում է երկու պետությունների և քաղաքական, և տնտեսական, և մարդասիրական, և ռազմատեխնիկական համագործակցությունը: Նրանում ամրագրված է, որ Ռուսաստանը և Հայաստանը պարտավորվում են, կողմերից մեկին սպառնացող վտանգի դեպքում՝ փոխօգնության մասին: Հայ-ռուսական պայմանագրի, ինչպես նաև «Ռուս-հայկական համատեղ Հռչակագրի» ստորագրման կապակցությամբ ՌԴ նախագահ Բորիս Ելցինը հայտարարեց. պայմանագիրը ստորագրվել է «ռուս և հայ ժողովուրդների կամքով» և «համապատասխանում է երկու պետությունների կենսական և երկարաժամկետ շահերին, դա երկկողմանի հարաբերությունների որակապես նոր փուլ է, հարաբերությունների, որոնք հասել են ռազմավարական գործակցության մակարդակի»: 1997 թ. օգոստոսի 29-ին և 30-ին Մոսկվայում ստորագրված հայ-ռուսական պայմանագրերը հուժկու ազդակ հաղորդեցին Հայաստանի և Ռուսաստանի քաղաքական և տնտեսական հարաբերությունների զարգացմանը:

Նոր հազարամյակի սկզբին Հայաստանը և Ռուսաստանը շարունակում են սերտ համագործակցել քաղաքական և ռազմական, սոցիալ-տնտեսական և գիտամշակութային ոլորտներում, ռազմավարական շահերից բխող միևնույն մոտեցումներն ու դիրքորոշումներն ունեն միջազգային հարաբերությունների, տարածաշրջանային բազմաբնույթ հիմնախնդիրների նկատմամբ, հանդիսանում են ռազմավարական դաշնակիցներ:

РЕЗЮМЕ

В монографии на общем историческом фоне исследуемого периода рассматриваются проблемы взаимоотношений Советской России и Армении. Показывается, что защищая свои геополитические интересы большевистская Россия уже весной 1920 года предприняла военно-политические действия для советизации Закавказья и возвращения региона в сферу своего геополитического влияния.

Осенью 1920 г. потерпев тяжелое поражение в развязанной кемалистами, при поддержке большевиков, турецко-армянской войне, и попав под военно-политическое давление кемалистской Турции и Советской России, Армения была советизирована, провозглашена независимой советской республикой.

После советизации Армении до образования Закавказской федерации и СССР в конце декабря 1922 г., Советская Армения по сути являлась самостоятельной республикой, между ней и Советской Россией установились межгосударственные, военно-политические, социально-экономические и культурные тесные отношения. В этом союзе большевики видели спасение Армении от турецкой опасности и тяжелого экономического кризиса.

В работе освещены следующие основополагающие вопросы армяно-российских отношений.

Армения и процесс ее советизации в контексте восточной политики Советской России и большевистско-кемалистских отношений весной-осенью 1920 г.; армяно-российское соглашение от 2-го декабря 1920 г. о советизации Армении, и ее внутреннее и внешнее военно-политическое значение.

Политика военного коммунизма в Советской Армении и ее тяжелые социально-политические последствия; февральское вооруженное восстание 1921 г. в Армении, ее подавление силами Красной Армии и восстановление советской власти.

Вопрос армянских территорий и армяно-турецкой границы в сфере восточной политики Советской России в 1921 г. (Моссковская и Карсская советско-турецкие конференции); армяно-российское военно-политическое сотрудничество в деле освобождения Лорийской нейтральной зоны от грузинской оккупации; советизация Грузии; советизация Зангезура; отторжение большевиками Нагорного Карабаха от Армении на основе незаконного решения Кавбюро от 5-го июля 1921 г..

Установление и развитие межгосударственных отношений Советской Армении и России; армяно-российское сотрудничество в процессе государственно-правового объединения советских республик Закавказья, и последующего образования СССР.

Социально-экономическое положение Армении в первые месяцы советской власти и вопрос помощи Советской России; армяно-российские экономические связи и многосторонняя помощь Советской России в 1921-1922 гг.; помощь армянского народа голодающим Поволжья России во второй половине 1921 - начале 1922 гг.

Выводы и обобщения, исторический опыт армяно-российских отношений полезны для понятия сути сегодняшних отношений Армении и России, которые после распада СССР продолжают неуклонно развиваться.

29-го декабря 1991 г., сразу после образования СНГ, в Москве между Российской Федерацией и Республикой Армения был подписан первый двусторонний договор "О дружбе, сотрудничестве и взаимной безопасности".

В последующие 1992-1994 гг. были подписаны десятки взаимовыгодных соглашений о сотрудничестве в различных отраслях деятельности, торгово-экономический большой договор.

Благодаря активному и решительному посредничеству России в зоне Карабахско-азербайджанского конфликта весной 1994 г. было достигнуто долгожданное перемирие.

16-го марта 1995 г. в Москве было подписано российско-армянское военно-политическое соглашение о дислокации вооруженных сил Российской Федерации на территории Армении. Соглашением, которое не направлено против какой-либо третьей стороны, был решен также важнейший вопрос совместной охраны армяно-турецкой и армяно-иранской границ. Военно-политическому соглашению, день подписания которого таил в себе некоторый смысл (вспомним большевистско-кемалистский захватнический договор 16-ого марта 1921 года), последовало не менее важное историческое событие, имевшее для наших народов исключительное значение.

Накануне 80-летия чудовищного геноцида армянского народа в Османской Турции, 14-го апреля 1995 г. Государственная Дума Российской Федерации от имени русского народа осудила организаторов истребления армян в 1915-1922 гг., выразила свое глубокое сожаление всему армянскому народу, и признала "24-ое апреля" Днем памяти жертв геноцида. В заявлении Госдумы, которое было принято единогласно, справедливо и прозорливо отмечено, "что физическое уничтожение братского армянского народа на его исторической родине было совершено с целью создания благоприятных условий для разрушения России".

Параллельно с успешным военно-политическим сотрудничеством из года в год расширяются и укрепляются торгово-экономические, научные и культурные отношения Армении и России.

Исторически сложившиеся дружественные союзнические отношения наших республик и народов, подписанием армяно-российского Большого договора от 29-го августа 1997 г. "О дружбе, сотрудничестве и взаимопомощи" поднялись на уровень стратегического партнерства. При подписании договора президент России Борис Ельцин заявил, что договор подписан по воле армянского и российского народов, соответствует жизненным и долговременным интересам обоих государств.

Мощный военно-политический, экономический союз Армении и России, основанный на общности их интересов, может и должен обеспечить надежную гарантию региональной стабильности, обуздать Турцию и идеологов пантюркизма. Союз двух государств может открыть новые перспективы для исправления вопиющих ошибок, допущенных большевиками в решении Армянского вопроса, и обеспечить мир и коллективную безопасность в регионе.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սկզբնաղբյուրներ

I. Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ)

1.1. Ֆ. 1, ց. 1, զզ. 5, 39, 45-47, 58, 85, 86, 105, 125, 126, ց. 2, զզ. 2-5, 10, 22, 48, 49, 115, 177:
1.2. Ֆ. 37, ց. 1, զզ. 3, 5, 9, 10, 28:
1.3. Ֆ. 38, ց. 1, զ. 5:
1.4. Ֆ. 102, ց. 1. զզ. 100, 114, 134:
1.5. Ֆ. 112, ց. 1, զ. 10:
1.6. Ֆ. 113, ց. 1, զզ. 9, 96^3, ց. 2, զ. 96^3, ց. 3, զզ. 7, 11, 14, 21, 23, 46, 61, 94, ց. 5, զ. 5, ց. 38, զ. 21, ց. 39, զ. 124, 160, 260, ց. 43, զ. 30, ց. 44, զ. 6:
1.7. Ֆ. 114, ց. 1, զզ. 4, 8, 9, 16, 42, 65, 68, 85, 97, 98, 126, 136, 158, 204, 221, 268, ց. 2, զզ. 3, 12, 15, 17, 18, 20, 31, 33, 35, 50, 57, 59, 63, 68, 70, 73, 74, 79, 94, 95, 96^3, 132, 138, 166:
1.8. Ֆ. 115, ց. 1, զզ. 1, 167,168:
1.9. Ֆ. 122, ց. 1, զզ. 55, 60:
1.10. Ֆ. 123, ց. 1, զզ. 40, 83, 290:
1.11. Ֆ. 128, ց. 1, զ. 1420:
1.12. Ֆ. 162, ց. 1, զ. 2, ց. 2, զ. 162:
1.13. Ֆ. 178, ց. 1, զ. 24:
1.14. Ֆ. 200, ց. 1, զզ. 42, 290, 427, 529, 581, 597, 602, ց. 2, զզ. 90, 94:
1.15. Ֆ. 298, ց. 1, զ. 38:
1.16. Ֆ. 1022, ց. 2, զ. 202, ց.3. զզ. 197, 270, 272, 275, 276, 290, 320, 325, 330, 335, 339, ց. 4, զզ. 71, 82, 368, ց. 5, զզ. 361, 367, 368, 373, 375, 382, 432, ց. 8, զզ. 117, 164, 197, 201, 218, 239, 251, 268, 273, 302, 304, 330:
1.17. Ֆ. 4001, ց. 1, զզ. 34, 35:
1.18. Ֆ. 4004, ց. 1, զզ. 42, 67:
1.19. Ֆ. 4033, ց. 2, զզ. 1154, 1158, 1185, 1187, 1194, 1309, 1330:
1.20. Ֆ. 4045, ց. 1, զզ. 241, 245:
1.21. Ֆ. 4047, ց. 1, զզ. 188, 190-192, 194:
1.22. Ֆ. 4049, ց. 1, զզ. 4, 6, 7, 35:
1.23. Ֆ. 4050, ց. 1, զզ. 6, 8:
1.24. Ֆ. Հավաքածու (միկրոժապավենների) 1, զ. 2, 3, 7:

2. Տպագիր սկզբնաղբյուրներ և փաստաթղթերի ժողովածուներ

ա) Հայերեն

2.1. Խորհրդային Հայաստան: Հինգ տարի (1920-1925), Երևան, 1926:
2.2. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), կազմողներ՝ Ջ.Ս. Կիրակոսյան, Ռ.Գ. Սահակյան, Եր., 1972:
2.3. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.: Քաղաքական պատմություն (Փաստաթղթերի ժողովածու), կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ.Ղազախեցյան, Վ.Մելիքյան, Ս.Միրզոյան, Ա.Վիրաբյան, Եր., 2000:
2.4. Հեղափոխական կոմիտեները Հայաստանում (1920 թ. նոյեմբեր - 1922 թ. հունվար), (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Եր., 1974:
2.5. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (Փաստաթղթերի ժողովածու), խմբ. Ա. Մնացականյան, Եր., 1960:
2.6. Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Պատասխանատու խմբագիր և կազմող Վ.Ն. Ղազախեցյան, Եր., 1999:
2.7. ՀՍԽՀ արտգործժողկոմատ, բյուլետեն Ա, Եր., 1921-1922:
2.8. ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների խորհուրդների Ա համագումարը, Եր., 1922:
2.9. ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, սյրակ 1-ին և 2-րդ, Էջմիածին, 1921:
2.10. ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր (1920-1922), Եր., 1923:
2.11. Սարգսյան Ե., Աբեղյան Խ., Սարգսյան Ա., Բ. Լեզրանի միսիան, (Փաստաթղթեր և նյութեր), «ԲՀԱ», Եր., 1967, թիվ 3:
2.12. Փաստաթղթեր և նյութեր ԽՍՀՄ կազմավորման մասին, «ԲՀԱ», Եր., 1972, թիվ 2:

բ) Ռուսերեն

2.13. Борьба за победу Советской власти в Грузии (1917-1921), Тбилиси, 1958.
2.14. Восстановление народного хозяйства Арм. ССР (1921-1929), Ереван, 1958.

2.15. Восьмой Всероссийский съезд Советов... Стенографический отчёт, Москва, 1921.
2.16. Всемирный экономический, финансовый и политический сборник, Москва, 1923.
2.17. Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества (Документы и комментарий), отв. ред. Ю.Г. Барсегов, т. 1, Москва, 2002, т. 2, Москва, 2005.
2.18. Девятый Всероссийский съезд Советов... Стенографический отчёт, Москва, 1922.
2.19. Девятый съезд РКП(б). Стенографический отчёт, Москва, 1963.
2.20. Документы внешней политики СССР, тт. II-VI, Москва, 1958-1962.
2.21. Из истории образования СССР. "Известия ЦК КПСС", Москва, 1989, № 9.
2.22. Из новых документов 1922 г. по истории образования СССР. Отечественная история, Москва, 1992, № 4.
2.23. Ключников Ю., Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, часть III, Москва, 1929.
2.24. Ленин В.И., Неизвестные документы. 1891-1922 гг., Москва, 1999.
2.25. Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, отв. ред. В.А. Микаелян, Ереван, 1992.
2.26. Образование СССР, Москва, 1972.
2.27. Освободительная миссия 11-ой Красной Армии, "Вестник архивов Армении", Ереван, 1980, № 2.
2.28. Первый съезд народов Востока. Стенографический отчёт, Баку, 1920.
2.29. Под знаменем Ленинской дружбы народов, "Вестник архивов Армении", Ереван, 1965, № 3.
2.30. РСФСР и ГДР (Грузинская Демократическая Республика), их взаимоотношения, Москва, 1922.
2.31. Сборник действующих договоров, Москва, 1922, № 79.
2.32. Севр и Лозанна, Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, Москва, 1927.

2.33. Советское содружество народов, объединительное движение и образование СССР. (Сборник документов, 1917-1922 гг.), Москва, 1977.
2.34. Совместная борьба братских республик с разрухой и голодом в 1921-1922 гг., "Вестник архивов Армении", Ер., № 2.
2.35. Социалистическое строительство Арм. ССР (1920-1940), Ереван, 1940.
2.36. Шесть лет национальной политики Советской власти и Наркомнац. 1917-1923 гг., Москва, 1923.

3. Մենագրություններ և աշխատություններ

ա) Հայերեն

3.1. Ալիխանյան Ս.Տ., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921 թթ.), Եր., 1958:
3.2. Ալիխանյան Ս.Կ. Օրջոնիկիձեն և խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում, Եր., 1974:
3.3. Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Բոստոն, 1943:
3.4. Աղայան Ծ.Պ., Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Եր., 1982:
3.5. Ավետիսյան Հ.Ա., Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997:
3.6. Արզումանյան Մ.Վ., Արհավիրքից վերածնունդ, Եր., 1973:
3.7. Բեկզադյան Ալ., Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, Եր., 1981:
3.8. Գալոյան Գ.Ա., Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության կեղծարարության դեմ, Եր., 1961:
3.9. Գալոյան Գ.Ա., Հերոսական մայիսից - հաղթական նոյեմբեր, Եր., 1980:
3.10. Գալոյան Գ.Ա., Պատմության քառուղիներում, Եր., 1982:
3.11. Գալոյան Գ.Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999:
3.12. Գալոյան Գ.Ա., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (16-րդ դարից մինչև 1917թ.), Եր., 2004:
3.13. Գեղամյան Գ.Մ., Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում ՆԷՊ-ի տարիներին (1921-1936), Եր., 1978:

3.14. Գրիգորյան Զ.Տ., Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը (հետհոկտեմբերյան շրջան), Եր., 1967:
3.15. Գևորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Եր., 1991:
3.16. Դալլաքյան Կ.Լ., Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության, (1920-ական թթ.), Եր., 1994:
3.17. Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890թ.ն 1940), Եր., 2003:
3.18. Եսայան Ա.Ա., «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Եր., 1965:
3.19. Եսայան Ա.Ա., Հայաստանի միջազգային-իրավական դրությունը (1920-1922 թթ.), Եր., 1979:
3.20. Զոհրաբյան Է.Ա., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920-1922 թթ.), Եր., 1979:
3.21. Զոհրաբյան Է.Ա., Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները (1920-1922 թթ.), Եր., 1985:
3.22. Զոհրաբյան Է.Ա., 1920 թվականի թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997:
3.23. Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային իրավունքը, Բեյրութ, 1976:
3.24. Իրազեկ Հ., Մոտիկ անցյալից. պատմական դեպքեր և ապրումներ. 1917-1922, Պեյրութ, 1956:
3.25. Լազեան Գ., Հայաստան և Հայ դատը. հայ և ռուս հարաբերությունների լույսին տակ, Եր., 1991:
3.26. Լենին Վ.Ի., ԵԼԺ, հհ. 41-45, 51, 52:
3.27. Լեո, Անցյալից (Հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, 1925:
3.28. Լուկաշին (Սրապիոնյան) Ս., Հոդվածներ, զեկուցումներ, ճառեր, Եր., 1986:
3.29. Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968:
3.30. Խուրշուդյան Լ.Ա., Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Եր., 1977:
3.31. Խուրշուդյան Լ.Ա., Հայկական հարցը, Եր., 1995:
3.32. Խուրշուդյան Լ.Ա., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Եր., 2002:
3.33. Կասյան Ս., Ընտիր երկեր, Եր., 1974:
3.34. Կարապետյան Հ.Մ., Մեծ պայքարի մարդիկ, գիրք 1-2, Եր., 1962, 1967:

3.35. Կարապետյան Հ.Մ., Սևրի պայմանագիրը Հայոց ճակատագրում, Եր., 2004:
3.36. Կարինյան Ա., Երկերի ժողովածու, հ.1, Եր., 1934:
3.37. Հակոբյան Ա.Մ., Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թվականին, Եր., 1948:
3.38. Հակոբյան Ա.Մ., Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921-1925 թթ.), Եր., 1955:
3.39. Հակոբյան Հ.Վ., Տարազիր հայության Հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Եր., 2002:
3.40. Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, ՀՀ ԳԱԱ, Եր., 1967:
3.41. Հայկական հարցը: Հանրագիտարան (Խմբ. Կ.Ս. Խուդավերդյան), Եր., 1996:
3.42. Հարությունյան Հ.Մ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Եր., 1996:
3.43. Հարությունյան Կ.Ա., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Եր., 2002:
3.44. Հարությունյան Ա.Բ., Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը, Եր., 1960:
3.45. Հովհաննիսյան Ա.Գ., Համազգային կրիզիսը, Եր., 1926:
3.46. Հովհաննիսյան Ա.Գ., Հուշեր և բնութագրումներ, Եր., 1969:
3.47. Ղազախեցյան Վ.Ն., Նժդեհը Զանգեզուրում, Եր., 2001:
3.48. Ղազախեցյան Վ.Ն., Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը (1920-1929), Եր., 1975:
3.49. Ղազախեցյան Վ.Ն., Հայաստանը 1920-1940 թթ., Եր., 2006:
3.50. Ղարիբջանյան Գ.Բ., Լենինը և Անդրկովկասը, գիրք Ա (1917-1924), Եր., 1975:
3.51. Մանուկյան Ա., Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Եր., 2002:
3.52. Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Եր., 1985:
3.53. Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Եր., 2003:
3.54. Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, Եր., 1957:
3.55. Մռավյան Ա., Հոդվածներ և ճառեր, Եր., 1961:
3.56. Մսըրյան Զ., Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի դաշնագրերը, 1920-1921 թթ.), Բեյրութ, 1979:

3.57. Ներկարարյան Վ.Ն., Հայաստանի կոմպարտիան ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում, Եր., 1956:
3.58. Ներսիսյան Մ.Գ., Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում, Եր., 1935:
3.59. Շահան Նաբալի, Երևանի համաձայնագիրը, Բոստոն, 1941:
3.60. Շիրինյան Լ.Ղ., Շիրինյան Տ.Լ., Ճանապարհ դեպի Թուրան (Պատմահրավական և ռազմաքաղաքական տեսանկյուններ), Եր., 2004:
3.61. Ջաղեթյան Գ.Ա., Մոտիկ անցյալից, Եր., 1967:
3.62. Սահակյան Ռ., Խորհրդաթուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, Եր., 1964:
3.63. Սահրադյան Ս.Մ., Ռազմահեղափոխական կոմիտեները Հայաստանում (1917-1922), Եր., 1961:
3.64. Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը (1921 թ.), Պէյրութ, 1970:
3.65. Սարգսյան Ե.Ղ., Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Եր., 1994:
3.66. Սարգսյան Ս.Հ., Սովետական Ռուսաստանի հայ մամուլը (1918-1921), Եր., 1968:
3.67. Սարդարյան Կ., Պատմություն և իրականություն, Եր., 1991:
3.68. Սիմոնյան Ա.Հ., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Եր., 2000:
3.69. Սիմոնյան Հ.Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991:
3.70. Ստալին Ի.Վ., Երկեր, հտ. 4-6, Եր., 1948-1949:
3.71. Վարդապետյան Ա.Վ., Հայաստանի օգնության կոմիտե (1921-1937), Եր., 1960:
3.72. Վարդապետյան Ա.Վ., Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանին (1920-1925), Եր., 1959:
3.73. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1994:
3.74. Տեր-Գաբրիելյան Ս., Հոդվածներ, ճառեր, փաստաթղթեր, Եր., 1979:
3.75. Փիրումյան Ռ., Հայաստանը Հ.Յ.Դ. - բոլշևիկ հարաբերությունների ոլորտում (1917-1921), Եր., 1997:
3.76. Քաջազնունի Հ., Հ.Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Եր., 1994:

3.77. Օհանջանյան Բ., Խորհրդային Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921-1925), Եր., 1982:
3.78. Օրջոնիկիձե Գ.Կ., Ընտիր հոդվածներ և ճառեր, Եր., 1950:

բ) Ռուսերեն

3.79. Аветисян Г.А., Комсомол Закавказья в борьбе за победу и упрочение советской власти (1917-1921), Ереван, 1964.
3.80. Аветисян Г.А., Под знаменем пролетарского интернационализма, Ереван, 1982.
3.81. Агаян Ц.П., Победа советской власти и возрождение армянского народа, Москва, 1981.
3.82. Аралов С.И., Воспоминания советского дипломата, Москва, 1960.
3.83. Армянский вопрос. Энциклопедия, под ред. К.С. Худавердяна, Ереван, 1991.
3.84. Багиров Ю.А., Из истории советско-турецких отношений в 1920-1922 гг. (по материалам Азер. ССР), Баку, 1965.
3.85. Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, часть II, Москва-Ленинград, 1929.
3.86. Галоян Г.А., Рабочее движение и национальный вопрос в Закавказье (1917-1922), Ереван, 1969.
3.87. Зограбян Э.А., РСФСР и становление международных отношений Советской Армении (1920-1922 гг.). Автореферат докторской диссертации, Ереван, 1987.
3.88. История внешней политики СССР, т. I, Москва, 1986.
3.89. История России. 20-ый век, Москва, 1996.
3.90. Казанджян Р., К предыстории самоопределения Нагорного Карабаха (с приложением новых документов), М., 1997.
3.91. Карр Э., Русская революция от Ленина до Сталина: 1917-1929, Москва, 1990.
3.92. Кемаль М., Путь новой Турции, т. III, Москва, 1932.
3.93. Киров С.М., Статьи, речи, документы, Москва, 1936.
3.94. Кузнецова С.И., Установление советско-турецких отношений, Москва, 1961.
3.95. Махмурян Г.Г., Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг.,(Бремя белого человека), Ер., 2002.

3.96. Милюков П.Н., Россия на переломе, т. 1, Париж, 1927.
3.97. Мнацаканян А.Н., Посланцы Советской России в Армении, Ереван, 1959.
3.98. Мясников (Мясникян) А.Ф., Избранные произведения, Ереван, 1965.
3.99. О'Коннор Т.Э., Г.В. Чичерин и советская внешняя политика (1918-1930 гг.), пер. с англ., Москва, 1991.
3.100. Орджоникидзе Г.К., Статьи и речи, т. I (1910-1926), Москва, 1956.
3.101. Орджоникидзе Г.К., Избранные статьи, Москва, 1957.
3.102. Орджоникидзе Г.К., Избранные произведения, Ереван, 1986.
3.103. Рубинштейн Н.Л., Внешняя политика Советского государства в 1921-1925 гг., Москва, 1953.
3.104. Таирян И.А., 11-ая Красная Армия в борьбе за установление и упрочение Советской власти в Армении, Ереван, 1971.
3.105. Ушаков А., Феномен Ататюрка. Турецкий правитель, творец и диктатор, Москва, 2002.
3.106. Хармандарян С.В., Армянская ССР в I-ый год НЭП-а (1921-1922), Ереван, 1955.
3.107. Хармандарян С.В., Ленин и становление Закавказской федерации (1921-1923), Ереван, 1969.
3.108. Хейфец А.Н., Советская Россия и сопредельные страны Востока в годы гражданской войны (1918-1920), Москва, 1964.
3.109. Хейфец А.Н., Советская дипломатия и народы Востока (1921-1927), Москва, 1968.
3.110. Худавердян К.С., Культурная революция в Советской Армении (1920-1940), Ереван, 1966.
3.111. Хуршудян Л.А., Истина единственный критерий исторической науки, Ереван, 1989.
3.112. Чичерин Г.В., Статьи и речи по вопросам международной политики, Москва, 1961.

4. Հոդվածներ և հոդվածների ժողովածուներ

ա) Հայերեն

4.1. Ավետիսյան Հ.Ա., Ազգային պետական շինարարության լենինյան քաղաքականությունը: ԽՍՀՄ կազմավորումը, «Միասնական ընտանիքում (Հոդվածների ժողովածու)», Եր., 1982:
4.2. Բաղալյան Ա., Լեռնահայաստանի հերոսամարտը, «Դրոշակ», 1998, թիվ 5:
4.3. Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922 թթ.), (Հոդվածների ժողովածու), խմբ. Լ.Ա. Խուրշուդյան, Ս.Ս. Ամիրյան, ԵՊՀ, Եր., 1987:
4.4. Հայոց պատմություն (Նյութերի ժողովածու, 1900-1939), Ավետիսյան Հ., Ղազախեցյան Վ., Գասպարյան Ռ., Սահակյան Ռ., Եր., 1994:
4.5. Հայոց պատմության հարցեր (Հոդվածների ժողովածու), խմբ. Վ.Ն. Ղազախեցյան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Եր., 1997:
4.6. «Հայ-ռուսական և հայ-արաբական հարաբերությունները (Գիտական նստաշրջանի նյութեր)», ՀՀ ԳԱԱ - Հայք, Եր., 1992:
4.7. Հակոբյան Ա.Մ., Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի լուսաբանումը հայ պատմագրության մեջ, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 2006, թիվ 3, էջ 36-56:
4.8. Հակոբյան Ա., Ռուս մեծ ժողովրդի մշտական օգնությունը Սովետական Հայաստանին սոցիալիստական շինարարության տարիներին, «Տեղեկագիր», Եր., 1953, թիվ 3:
4.9. Հարությունյան Շ.Ռ., Սովետական Ռուսաստանի օգնությունը հայ ժողովրդին 1917-1922 թթ., «Մեծ հոկտեմբերի դրոշի ներքո (Հոդվածների ժողովածու)», Եր., 1957:
4.10. Մեծ հոկտեմբերի դրոշի ներքո (Հոդվածների ժողովածու), Եր., 1957:
4.11. Միասնական ընտանիքում (Հոդվածների ժողովածու), խմբ. Ղազախեցյան Վ., Խուրշուդյան Լ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Եր., 1982:
4.12. Խաչատրյան Կ.Հ., Հայաստանը խորհրդաքեմալական հարաբերությունների ոլորտում 1920 թ., «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1997, թիվ 3, էջ 45-56:
4.13. Խաչատրյան Կ.Հ., ՌՍՖԽՀ և ՀՍԽՀ ռազմաքաղաքական համագործակցությունը 1921 թ. փետրվարին Լոռու չեզոք գոտին ազա-

տագրելու գործում, «Հայոց պատմության հարցեր (Հոդվածների ժողովածու)», Եր., 1997, պրակ 1, էջ 88-105:
4.14. Խաչատրյան Կ.Հ., ՌՍՖԽՀ օգնությունը Խորհրդային Հայաստանին 1921-1922 թթ., «Հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցեր (Նյութերի ժողովածու)», Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 1998, էջ 139-150:
4.15. Խաչատրյան Կ.Հ., Էջեր հայ սպաների աքսորի պատմությունից (1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. փետրվար), «Գիտական աշխատությունների ժողովածու», Եր., 2000, էջ 72-77:
4.16. Խաչատրյան Կ.Հ., Քեմալականների հայաջինջ քաղաքականությունը 1920-1923 թթ., «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր (Գիտական աշխատություններ)», Եր., 2001, թիվ 4, էջ 13-20:
4.17. Խաչատրյան Կ.Հ., 1921 թ. փետրվարյան ապստամբությունը Հայաստանում և Խորհրդային Ռուսաստանը, «Պատմագիտական հետազոտություններ (Գիտական հոդվածների ժողովածու)», Վանաձոր, 2001, էջ 147-163:
4.18. Խաչատրյան Կ.Հ., Հայաստանը Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ կազմավորման գործընթացում 1921-1922 թթ., «Հայոց պատմության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու)», Եր., 2006, հ. 7, էջ 179-198:
4.19. Խաչատրյան Կ.Հ., Հայոց ցեղասպանության իրականացման թուրքական քաղաքականության շարունակականությունը 1919-1922 թթ., «Մեծ Եղեռն – 90 (Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր)», Գյումրի, 2005, էջ 29-33:
4.20. Խուրշուդյան Լ.Ա., Հայոց ցեղասպանության պատճառները և պատմական դասերը, «Հայոց ցեղասպանությունը (Ուսումնասիրություններ)», Եր., 2001, էջ 11-34:
4.21. Ղազախեցյան Վ.Ն., Հայ-ռուսական հարաբերությունները Մոսկվայի և Կարսի կոնֆերանսների ժամանակաշրջանում (1920 թ. դեկտեմբեր - 1921 թ. հոկտեմբեր), «Հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցեր (Նյութերի ժողովածու)», Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 1998:
4.22. Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում (Գիտաժողովի նյութեր), Եր., 2001:
4.23.Նժդեհ Գ., Հայ-բոլշևիկյան կռիվները, «Հայրենիք»,1923, թիվ 1,12:

4.24. Սարգսյան Ե., Քեմալականների 1920-1921 թթ. արշավանքը Անդրկովկաս և 1921 թ. մարտի 16-ի մոսկովյան պայմանագիրը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1992, թիվ 1:
4.25. Սիմոնյան Հր., Վերջին փորձը. Դաշնակ-բոլշևիկյան բանակցությունները Ռիգայում 1921 թ., «Armenian Review», 1991, հատոր 44, թիվ 2/174:
4.26. Տերտերյան Հ., Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի բանակցությունները - Լևոն Շանթի պատվիրակությունը, «Հայրենիք», 1954, թիվ 1-5:

բ) Ռուսերեն

4.27. Гарибджанян Г., Саркисян Е., К вопросу о характере национально-освободительной войны в Турции в 1919-1922 гг., "Вестник архивов Армении", Ереван, 1982, № 3.
4.28. Зограбян Э., Территориально-разграничительные вопросы на Второй московской русско-турецкой конференции (февраль-март 1921 г.), "Вестник общественных наук", Ереван, 1989, № 2.
4.29. Казанджян Р., К вопросу о датировке московского советско-турецкого договора 1921 г., "Вестник общественных наук", Ереван, 1999, № 1.
4.30. Казанджян Р., К вопросу об оценке московского русско-турецкого договора 1921 г., "Страны и народы Ближнего и Среднего Востока", Ереван, 2001, Вып. 20.
4.31. Казанджян Р., Советско-кемалистские отношения в 1920 г. и вопрос Армении в свете секретных документов московских архивов, "Страны и народы Ближнего и Среднего Востока", Ереван, 2002, Вып. 21.
4.32. Нежинский Л.Н., У истоков большевистско-унитарной внешней политики (1921-1923). "Отечественная история", Москва, 1994, № 1.
4.33. Саркисян Е., Из истории советско-армянских дипломатических отношений, "Вестник общественных наук", Ереван, 1993, № 3.
4.34. Свобода В., Союз добровольный республик свободных ? (Из истории создания СССР). "Этнографическое обозрение", Москва, 1992, № 4.

4.35. Скачко А., Армения и Турция на предстоящей конференции, "Жизнь национальностей", Москва, 4 марта, 1921 г.
4.36. Хармандарян С.В., Карсская конференция 1921 года и ее предыстория, "Вестник архивов Армении", Ереван, 1969, № 3.
4.37. Хейфец А.Н., Влияние СССР на угнетенные народы Востока. Сборник "Великий октябрь и народы Востока", Москва, 1957.

5. Մամուլ

ա) Հայերեն

5.1. Խորհրդային Հայաստան, Երևան, 1921-1922:
5.2. Կարմիր զինվոր, Երևան, 1921-1922:
5.3. Կարմիր Լոռի, Ջալալօղլի, 1921-1922:
5.4. Կարմիր Շիրակ, Ալեքսանդրապոլ, 1921:
5.5. Կոմունիստ, Բաքու, 1920-1921:
5.6. Կոմունիստ, Երևան, 1920-1921:

բ) Ռուսերեն

5.7. Бакинский рабочий, Баку, 1920-1921.
5.8. Жизнь национальностей, Москва, 1921-1923.
5.9. Известия Кавбюро, Тифлис, 1922.

5.10. Коммунист, Баку, 1920-1921.

5.11. Коммунист, Ереван, 1920-1921.

5.12. Красная звезда, Тифлис, 1921.

5.13. Наша правда, Ереван, 1921-1922.

5.14. Правда, Москва, 1920-1922.

5.15. Правда Грузии, Тифлис, 1921-1922.

ԿԱՐԵՆ ՀԱՄԼԵՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ: Ծնվել է 1969 թ. մայիսի 25-ին Երևանում: 1986 թ. միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Բելոռուսական պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1987-1989 թթ. ծառայել է Խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո 1989 թ. տեղափոխվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, որն էլ ավարտել է 1993 թ.:

1994 թ. Կ. Խաչատրյանը ձևակերպվել է որպես հայցորդ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, 1995 թ. փետրվարից աշխատանքի է անցել նույն ինստիտուտում, նախ՝ որպես ավագ լաբորանտ, ապա՝ կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող, ավագ գիտաշխատող: 1999 թվականից պատմության ինստիտուտի գիտական քարտուղարն է: 2003-2005 թթ. գլխավորել է պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Հայոց պատմության» մասնագիտական խորհրդի գիտական քարտուղարի պաշտոնը:

1998 թ. Կ. Խաչատրյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Հեղինակ է մոտ երկու տասնյակ գիտական հոդվածների: «Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ.» մենագրությունը հեղինակի երկրորդ աշխատությունն է, առաջինը՝ "Великий друг армянского народа — Н.И. Рыжков", հրատարակվել է 2004 թ.:

Գիտական գործունեությանը զուգահեռ՝ Կ. Խաչատրյանը զբաղվում է դասախոսական աշխատանքով: Նա Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանի Միջազգային հարաբերությունների և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ է, դասավանդում է «Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմություն», «Աշխարհի քաղաքական քարտեզը» մասնագիտական դասընթացները: 2003 թվականից Կ. Խաչատրյանը համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանն է:

Ամուսնացած է, ունի մեկ որդի և մեկ դուստր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ. 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ... 10

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ 48

1. 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը: Համաձայնագրի դրույթների խախտումը նոր իշխանությունների կողմից և բռնությունների ծավալումը 48
2. 1921 թ. փետրվարյան ապստամբությունը Հայաստանում և Խորհրդային Ռուսաստանը 65

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՄԽՀ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ 1921 ԹՎԱԿԱՆԻՆ 79

1. Հանրապետությունների ռազմաքաղաքական համագործակցությունը Լենինի Չեզոք գոտին ազատագրելու գործում: Վրաստանի խորհրդայնացումը..79
2. Խորհրդային Ռուսաստանը և Զանգեզուրի խորհրդայնացումը: Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Ադրբեջանին 96
3. Հայկական հարցը խորհրդա-թուրքական հարաբերությունների ոլորտում: Մոսկվայի ու Կարսի կոնֆերանսները 111

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.
ՀՄԽՀ ԵՎ ՌՍՖԽՀ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1921-1922 ԹԹ.: ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 146

1. Հայ-ռուսական միջպետական հարաբերությունները խորհրդային հանրապետությունների պետական միավորման գործընթացի համատեքստում: Անդրդաշնության կազմավորումը 146
2. Խորհրդային Ռուսաստանի քաղաքական ազդեցության ուժեղացումը Հայաստանի վրա 164
3. Հանրապետությունների համագործակցությունը ԽՍՀՄ կազմավորման գործում 1922 թվականին 173

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.
ՀՍԽՀ ԵՎ ՌՍՖԽՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920-1922 ԹԹ.: ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ 187

1. Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը խորհրդային իշխանության առաջին ամիսներին և Ռուսաստանի օգնության հարցը ... 187
2. Հայ-ռուսական տնտեսական հարաբերությունները և Խորհրդային Ռուսաստանի օգնությունը 1921-1922 թթ. 201
3. Հայ ժողովրդի օգնությունը Ռուսաստանի մերձվոլգյան շրջանների, սովյալներին 225

ԱՄՓՈՓՈՒՄ 231

РЕЗЮМЕ 241

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ... 245

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ 259

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 260

ԿԱՐԵՆ ՀԱՄԼԵՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920-1922 ԹԹ.

КАРЕН ГАМЛЕТОВИЧ ХАЧАТРЯН

АРМЯНО-РОССИЙСКИЕ ОТНОШЕНИЯ В 1920-1922 ГГ.

Տեխնիկական խմբագիր՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՐՈՒԽՅԱՆ
Համակարգչային շարվածքը՝ ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆԻ
Տպագրիչ՝ ԼԵՎՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հանձնվել է տպագրության 3.03.2007թ.: 16,25 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 250 օրինակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24^{գ}

ЦЕНА
А 11
92069